HUMAN RIGHTS DEFENDER
OF THE REPUBLIC OF ARMENIA

UNDP

# ՏԱՐԵԿԱՆ ԶԱԿՈՒՅՑ 2006

## ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ 2006թ. ԶԵԿՈՒՅՑԸ

# ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ 2006 Թ. ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑԸ

# ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

# 2006 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ
# ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
# ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ
# ԵՐԿՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ
# ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
# ԽԱԽՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ, 2007 Թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 5
ԲԱԺԻՆ 1. ..... 8
ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 8
1.1. Դիմում-բողոքների և դիմումատուների հետ աշխատանք ..... 8
1.1.1. Դիմում-բողոքների վիճակագրական վերլուծություն ..... 8
1.1.2. Խորհրդատվություն ..... 13
1.1.3. Ընդունելություն ..... 18
1.1.4. Այցելություններ և ուսումնասիրություններ ..... 20
1.1.5. Արագ արձագանքում ..... 22
1.2. Մարդու իրավունքների վերականգնմանն ուղղված գործունեություն ..... 24
1.2.1. Մարդու իրավունքների պաշտպանի կողմից կիրառվող ներգործության միջոցները ..... 24
1.2.2. Դրական արդյունքներով ավարտված գործերի մասին ..... 26
1.3. Օրենսդրության բարելավմանն ուղղված գործունեություն ..... 27
1.4. Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի զարգացում ..... 33
1.5. Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն ..... 39
1.6. Միջազգային համագործակցություն ..... 41
1.7. Փորձագիտական խորհուրդ ..... 49
ԲԱԺԻՆ 2. ..... 52
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ..... 52
2.1. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ ..... 52
2.1.1. Աշխատանքի ընտրության ազատության իրավունք ..... 52
2.1.2. Կրթության իրավունք ..... 56
2.1.3. Սեփականության իրավունք ..... 60
2.1.4. Սոցիալական ապահովության իրավունք ..... 65
2.1.5. Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ..... 73
2.1.6. Բավարար կենսամակարդակի իրավունք ..... 76
2.1.7. Իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունք ..... 78
2.2. Քաղաքացիական և քաղաքական իրավունքներ ..... 81
2.2.1. Խոշտանգումների արգելում ..... 81
2.2.2. Արդար դատաքննության իրավունք ..... 84
2.2.3. Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ..... 88
2.2.4. Այլ անձանց հետ միավորումներ կազմելու իրավունք ..... 91
2.2.5. Խոսքի ազատության իրավունք ..... 94
2.2.6. Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք ..... 96
2.2.7. Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք ..... 98
ԲԱԺԻՆ 3. ..... 100
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ..... 100
3.1. Ոստիկանություն ..... 102
3.2. Դատախազություն ..... 112
3.3. Դատարաններ ..... 119
3.4. ՀՀ արդարադատության նախարարության համակարգի մարմիններ ..... 125
3.4.1. Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ..... 125
3.4.2. Քրեակատարողական հիմնարկներ ..... 129
3.5. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե ..... 133
3.6. ՀՀ պաշտպանության նախարարություն ..... 136
3.7. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ ..... 138
3.8. ՀՀ առողջապահության նախարարություն և առողջապահության համակարգ ..... 144
3.9. ՀՀ կրթության և գիտության նախարարություն, կրթության համակարգ ..... 149

3.10. Երևանի քաղաքապետարան ........................................................................................ 151
3.11. Երևանի թաղապետարաններ ......................................................................................... 171
3.12. Մարզպետարաններ և տեղական ինքնակառավարման մարմիններ.............................. 176
3.13. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման այլ մարմիններ ........ 186
ԲԱԺԻՆ 4. ............................................................................................................................... 191
ՀԱՏՈՒԿ ԵՎ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ .............................................................. 191
4.1. Փախստականների իրավունքներ.......................................................................... 191
4.2. Ազգային փոքրամասնությունների իրավունքներ .............................................. 196
4.3. Հաշմանդամների իրավունքներ ............................................................................ 199
4.4. Կանանց իրավունքներ............................................................................................... 201
4.5. Երեխայի իրավունքներ .............................................................................................. 204
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ .................................................................................................................... 208

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում Պաշտպանը ՀՀ Նախագահին, օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմիններին է ներկայացնում նախորդ տարվա ընթացքում իր գործունեության մասին և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին զեկույց, իսկ ՀՀ Ազգային ժողովի գարնանային նստաշրջանի ընթացքում զեկույցը ներկայացվում է Ազգային ժողովի նիստում: Պաշտպանը զեկույցը ներկայացնում է նաև զանգվածային լրատվամիջոցներին և համապատասխան հասարակական կազմակերպություններին:

Մարդու իրավունքների պաշտպանի 2006թ. զեկույցի բովանդակությունը և կառուցվածքը պայմանավորված է նրա գործունեության մասին, ինչպես նաև պետությունում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների խախտումների վերաբերյալ հանրությանը հնարավորինս ամբողջական պատկերացում տրամադրելու ձգտումով: Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է նորանկախ պետություն, որում բացակայում են ձևավորված ժողովրդավարական ավանդույթները, մարդու իրավունքների պաշտպանության և պահպանության իրավիճակի ամենամյա վերլուծությունը ձեռք է բերում առանձնակի կարևորություն:

Զեկույցի 1-ին բաժնում ներկայացված են 2006թ. ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից կատարված աշխատանքներն ըստ իր գործունեության հիմնական ուղղությունների՝ դիմում-բողոքների և դիմումատուների հետ աշխատանք, մարդու իրավունքների վերականգնմանն ուղղված գործունեություն, օրենսդրության բարելավմանն ուղղված գործունեություն, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի զարգացում, հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն, միջազգային համագործակցություն, փորձագիտական խորհրդի գործունեության ապահովում:

Զեկույցի հաջորդ բաժիններում ներկայացվում է մարդու իրավունքների և հիմնարար ազատությանների խախտումներին վերաբերող տեղեկատվությունը և փորձ է կատարվում բացահայտել ու համակողմանի վերլուծել այդպիսի խախտումների հիմնապատճառները: Նման վերլուծությունը հիմք է տալիս առանձնացնել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց /այսուհետ՝ հանրային մարմիններ/ կողմից մարդու իրավունքների խախտումների երկու հիմնապատճառներ :

Առաջինը՝ դա հանրային մարմինների կողմից իրավաստեղծ գործունեության ընթացքում թույլ տրված բացթողումների, այդ թվում՝ ենթաօրենսդրական ակտերը ուշացումով ընդունելու հետևանքով գործող օրենսդրության մեջ առկա թերություններն են՝

նորմատիվ-իրավական ակտերում տեղ գտած բացերը, ոչ հստակ կամ հակասական ձևակերպումները:

2005թ. նոյեմբերի 27-ի սահմանադրական փոփոխությունները մեծ չափով նպաստեցին ՀՀ-ում մարդու և քաղաքացու սահմանադրաիրավական կարգավիճակի ամրապնդմանը, քաղաքացիների համար ստեղծեցին բարենպաստ պայմաններ իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտում: Սակայն ակնհայտ է, որ չնայած սահմանադրական նորմերը գործում են անմիջականորեն, դրանց իրագործման արդյունավետությունը մեծ չափով պայմանավորված է ընթացիկ օրենսդրության մեջ այդ նորմերի պահանջների փոխակերպման որակից: Ուստի այս կամ այն իրավունքների սահմանադրական ամրագրումն ինքնին դեռևս բավականաչափ երաշխիք չէ հասարակական պրակտիկայում դրանց իրացման համար:

Փորձը ցույց է տալիս, որ եզակի չեն դեպքերը, երբ հանրային մարմինը գործում է իրավական ակտերի դրույթներին լրիվ համապատասխան, սակայն նման գործողությունների արդյունքում մարդու իրավունքները խախտվում են: Եզակի չեն նաև այնպիսի դեպքերը, երբ նորմատիվ իրավական ակտերի առանձին դրույթների ոչ հստակ  կամ հակասական ձևակերպումները, առկա բացերը հանրային մարմիններին հնարավորություն են տալիս իրենց համար նախընտրելի ձևով մեկնաբանել այդ դրույթները, ինչը նույնպես հանգեցնում է մարդու իրավունքների խախտումների: Այս ոլորտում պատկերը ամբողջական կդառնա, եթե ավելացնենք, որ գործող օրենսդրության անկատարությունը հանգեցնում է մարդու իրավունքների զանգվածային խախտումների:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները` Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցում առաջին անգամ առանձնացվել է մարդու իրավունքների խախտումների հանգեցնող նորմատիվ-իրավական ակտերի և դրանց առանձին դրույթների վերլուծությանը նվիրված հատուկ բաժին /2-րդ բաժին/, որտեղ ներկայացվել են նաև գործող օրենքների և ենթաօրենսդրական ակտերի հետագա կատարելագործմանն ուղված Պաշտպանի գործողությունները:

Պատճառների երկրորդ խումբը կապված է իրավակիրառ պրակտիկայում տեղ գտած թերությունների հետ: Նախորդ տարիների օրինակով զեկույցի այս բաժնում /3-րդ բաժին/ մարդու իրավունքների մասին տեղեկատվությունը ներկայացվում է ըստ հանրային մարմինների առանձին խմբերի: Այդպիսի մոտեցումը հնարավորություն է ընձեռում ոչ միայն համակարգված ձևով ներկայացնել մարդու առանձին իրավունքների պահպանության և պաշտպանության վիճակը, այլ նաև որաշակիորեն գնահատել հանրային մարմինների գործունեությունը համապատասխան ոլորտներում, ինչպես նաև բացահայտել մարդու իրավունքների առավել տիպական խախտումները, դրանց պատճառներն ու նպաստող պայմանները:

Զեկույցի 4-րդ բաժնում ներկայացվում է տեղեկատվություն հասարակության առավել խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության և պահպանության վիճակի մասին: Այս ոլորտներում համապատասխան օրենսդրական դրույթները վերլուծվում են իրավակիրառ պրակտիկայի հետ անմիջական կապի մեջ:

# ԲԱԺԻՆ 1.
# ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## 1.1. Դիմում-բողոքների և դիմումատուների հետ աշխատանք

### 1.1.1. Դիմում-բողոքների վիճակագրական վերլուծություն

2006թ. փետրվարի 20-ից մինչև դեկտեմբերի 30-ը ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը 6567 անձանցից ստացել է 2687 դիմում-բողոք, որից 1247-ը՝ գրավոր (դրանցից 103-ը կազմում են կոլեկտիվ դիմում-բողոքները՝ ներկայացված 3983 դիմումատուի կողմից), իսկ 1440-ը՝ բանավոր:

Աղյուսակ 1-ում ներկայացված է 2005թ. և 2006թ. Պաշտպանին ուղղված դիմում-բողոքների քանակական համեմատությունը՝ համաձայն միջին ամսական թվերի:

Աղյուսակ 1

**Դիմում-բողոքների քանակական պատկերը**

| | ընդամենը | | միջին ամսական | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2005թ. /12 ամիս/ | 2006թ. /10 ամիս/ | 2005թ. | 2006թ. | տարբերություն | % հարաբերություն |
| ընդամենը | 2640 | 2687 | 220 | 269 | +49 | 122,2% |
| այդ թվում՝ գրավոր | 1551 | 1247 | 129 | 125 | -4 | 96 % |
| այդ թվում՝ բանավոր | 998 | 1440 | 83 | 144 | +61 | 173% |
| անձանցից | 4264 | 6567 | 355 | 656 | +301 | 184% |

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում 2004-2005թթ. ընթացքում քննարկման ընդունված բողոքների զգալի մասը կազմել են ոչ հանրային մարմինների դեմ ուղղված բողոքները: 2006 թ. նման բողոքները քննարկման չեն ընդունվել, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Մարդու իրավունքների պաշտպանն իրականացնում է բացառապես պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը /ՀՀ Սահմանադրության 83.1 հոդվածի 2-րդ մաս/:

Աղյուսակ 1-ում բերված համեմատությունը ցույց է տալիս, որ 2006թ. Պաշտպանին ուղղված դիմում-բողոքների ընդհանուր թվի միջին ամսական տոկոսային հարաբերակցությունը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 22,2 տոկոսով, գրավոր դիմում-բողոքների թիվը նվազել է 4 տոկոսով, իսկ բանավորներինը 73 տոկոսով աճել է: 84 տոկոսով աճել է նաև Պաշտպանին դիմող անձանց թիվը:

2006 թ. ընթացքում մարդու իրավունքների խախտման վերաբերյալ դիմում-բողոքներ ստացվել են Հայաստանի բոլոր մարզերի բնակիչներից, ինչի մասին վկայում է աղյուսակ 2-ում ներկայացված գրավոր դիմում-բողոքների քանակական պատկերը՝ ըստ ՀՀ վարչատարածքային միավորների:

Աղյուսակ 2

**Գրավոր դիմում-բողոքների քանակական և տոկոսային պատկերը՝ ըստ ՀՀ վարչատարածքային միավորների**

| | | **2005 թ.** /01.03-31.12՝ 10 ամսվա կտրվածքով/ | | **2006 թ.** /10 ամսվա կտրվածքով/ | |
|---|---|---|---|---|---|
| | մարզի անվանում | քանակ | % | քանակ | % |
| 1. | Երևան | 798 | 60.6 | **772** | **61.9** |
| 2. | Շիրակ | 94 | 7.1 | **96** | **7.7** |
| 3. | Լոռի | 93 | 7.1 | **83** | **6.7** |
| 4. | Կոտայք | 56 | 4.3 | **62** | **5.0** |
| 5. | Գեղարքունիք | 54 | 4.1 | **46** | **3.6** |
| 6. | Արարատ | 57 | 4.3 | **40** | **3.2** |
| 7. | Արմավիր | 46 | 3.6 | **33** | **2.6** |
| 8. | Սյունիք | 29 | 2.2 | **29** | **2.3** |
| 9. | Տավուշ | 27 | 2.1 | **27** | **2.2** |
| 10. | Արագածոտն | 20 | 1.5 | **22** | **1.8** |
| 11. | Վայոց ձոր | 19 | 1.4 | **16** | **1.3** |
| 12. | Անհայտ[1] | 23 | 1.7 | **21** | **1.7** |
| ընդամենը | | **1316** | 100 | **1247** | 100 |

Պաշտպանին հասցեագրված գրավոր դիմում-բողոքների թվաքանակի համեմատությունը ցույց է տալիս, որ ինչպես 2005թ., այնպես էլ 2006թ., գերակշռում են Երևան քաղաքից ստացվող դիմում-բողոքները: Աղյուսակից նաև երևում է, որ 2006թ. Երևան քաղաքից, Շիրակի, Կոտայքի, Սյունիքի, Տավուշի և Արագածոտնի մարզերից, 2005թ. համեմատությամբ, ստացված դիմում-բողոքների տոկոսային հարաբերակցությունն աճ է

[1] Այստեղ նկատի են ունեցվել այն դիմում-բողոքները, որոնք ներկայացրած անձինք չեն ցանկացել նշել իրենց բնակության վայրը:

արձանագրել: Միևնույն ժամանակ 2006թ. նվազել է Լոռու, Գեղարքունիքի, Արարատի, Արմավիրի, Վայոց ձորի մարզերից ստացված դիմում-բողոքների քանակը:

Ինչպես Պաշտպանի հաստատության գործունեության նախորդ տարիներին, այնպես էլ 2006թ. մարզերից ստացված դիմում-բողոքների սակավությունը, Երևան քաղաքից ստացվածների համեմատությամբ, վկայում է ոչ թե մարզերում մարդու իրավունքների պաշտպանվածության բարձր մակարդակի մասին, այլ մարդու իրավունքների պահպանության և պաշտպանության հանդեպ հանրային մարմինների կողմից ցուցաբերվող անտարբերության արդյունքում հատկապես մարզերի բնակչության շրջանում օրենքի և իրավունքի հանդեպ մերժողական վերաբերմունքի առկայության, ինչպես նաև Պաշտպանի հաստատության դժվարամատչելիության մասին: Դրանից զատ, ակնհայտ է, որ աղյուսակ 2-ում բերված վիճակագրական տվյալները հաստատում են մարզերում Պաշտպանի հաստատության ներկայացուցչությունների ստեղծման անհրաժեշտությունը:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ Պաշտպանը ծանոթանում է բոլոր դիմում-բողոքներին և ուսումնասիրության արդյունքներով մեկամսյա ժամկետում որոշում է ընդունում՝ բողոքը քննարկման ընդունելու, դիմողին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները ներկայացնելու, դիմումատուի համաձայնությամբ բողոքն այն հանրային մարմիններին փոխանցելու մասին, որոնց իրավասությանն է պատկանում բողոքի ըստ էության լուծումը կամ բողոքը չքննարկելու մասին:

Աղյուսակ 3-ում ներկայացված են 2006թ. ստացված գրավոր դիմում-բողոքների առնչությամբ ընդունված որոշումների, ինչպես նաև դիմումատուի խնդրանքով քննարկումը դադարեցված և ուսումնասիրության ընթացքում գտնվող դիմում-բողոքների մասին վիճակագրական տվյալները:

Աղյուսակ 3

Գրավոր դիմում-բողոքների առնչությամբ ընդունված որոշումները

| | | 2006թ. /10 ամսվա կտրվածքով/ | |
|---|---|---|---|
| | որոշում | քանակ | % |
| 1. | ընդունվել են քննարկման | 455 | 36.5 |
| 2. | ներկայացվել են իրավունքի պաշտպանության հնարավորությունները | 171 | 13.7 |
| 3. | փոխանցվել են այլ մարմինների քննարկմանը | 85 | 6.8 |
| 4. | քննարկման չեն ընդունվել | 490 | 39.3 |
| 5. | քննարկումը դադարեցվել է դիմումատուի խնդրանքով | 15 | 1.2 |
| 6. | ուսումնասիրության ընթացքում են առ 31.12.2006թ. դրությամբ | 31 | 2.5 |

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն` Պաշտպանը չի քննարկում այն բողոքները, որոնք պետք է լուծվեն միայն դատական կարգով, ինչպես նաև դադարեցնում է բողոքի քննարկումը, եթե քննարկումն սկսելուց հետո շահագրգիռ անձը հայց կամ բողոք է ներկայացրել դատարան: Օրենքի նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն` Պաշտպանը կարող է չքննարկել անանուն բողոքները և այն բողոքները, որոնք տրվել են մեկ տարուց ավելի ուշ այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքների և ազատությունների խախտման մասին, ինչպես նաև այն բողոքները, որոնք իր կարծիքով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման մասին չեն վկայում կամ պահանջ չեն ներկայացնում:

Եթե բողոքում բարձրացված հարցն իր բնույթով կարող է լուծել նաև պետական այլ մարմինը կամ պաշտոնատար անձը, և եթե այդ անձը նախապես չի քննարկել տվյալ գործը, Պաշտպանը բողոքը ներկայացնողի համաձայնությամբ կարող է բողոքը քննարկման նպատակով փոխանցել նրան` վերահսկողություն սահմանելով դրա քննարկման նկատմամբ: Այս դեպքում դիմողը տեղեկացվում է, որ բողոքն այլ պաշտոնատար անձի է փոխանցվել /Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մաս/:

Բողոքը չքննարկելու մասին որոշում ընդունելիս դիմողին բացատրվում է այդ բողոքի քննարկման` օրենքով նախատեսված կարգը:

2006թ. ընթացքում Պաշտպանին ուղղված դիմում-բողոքների մոտ կեսը կազմել են բանավորները: Դրանք ստացվել են Պաշտպանի կամ նրա աշխատակազմի լիազոր անձանց կողմից մարզեր, պետական հիմնարկներ և կազմակերպություններ կատարած այցելությունների ընթացքում, ինչպես նաև Պաշտպանի աշխատավայրում կամ հեռախոսով քաղաքացիներին բանավոր խորհրդատվության տրամադրման կապակցությամբ աշխատանքների կազմակերպման արդյունքում:

Փորձը ցույց է տալիս, որ ինչպես Պաշտպանի հաստատության գործունեության նախորդ տարիներին, այնպես էլ 2006թ. բանավոր դիմում-բողոքներ ներկայացնողների մի մասը խուսափում են գրավոր բողոք ներկայացնելուց, ինչպես նաև իրենց անունը, ազգանունը, հասցեն արձանագրելուց` պատճառաբանելով, որ դիմում ներկայացնելը կարող է բացասաբար անդրադառնալ իրենց վրա:

2006 թ. ընթացքում Պաշտպանը ստացել է գրեթե բոլոր հանրային մարմինների դեմ ուղղված գրավոր դիմում-բողոքներ: Աղյուսակ 4-ում ներկայացված են համապատասխան վիճակագրական տվյալները:

Աղյուսակ 4

Գրավոր դիմում-բողոքներն ըստ հանրային մարմինների

| | Հանրային մարմնի անվանում | 2006թ. /10 ամսվա կտրվածքով/ քանակը |
|---|---|---|
| 1. | Դատարաններ | 159 |
| 2. | Երևանի քաղաքապետարան | 120 |
| 3. | Ոստիկանություն | 114 |
| 4. | ՀՀ արդարադատության նախարարություն | 88 |
| 5. | Երևանի թաղապետարաններ | 78 |
| 6. | Դատախազություն | 76 |
| 7. | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 76 |
| 8. | Մարզպետարաններ | 51 |
| 9. | ՀՀ պաշտպանության նախարարություն | 41 |
| 10. | Քաղաքապետարաններ (բացի Երևանից) | 40 |
| 11. | ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 39 |
| 12. | Գյուղապետարաններ | 27 |
| 13. | ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ | 23 |
| 14. | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | 22 |
| 15. | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 21 |
| 16. | ՀՀ առողջապահության նախարարություն | 16 |
| 17. | ՀՀ կառավարություն | 14 |

Աղյուսակ 4-ից երևում է, որ 2006թ. առավել շատ թվով դիմում-բողոքներ ստացվել են դատարանների, Երևանի քաղաքապետարանի, ոստիկանության դեմ:

ՀՀ Նախագահի աշխատակազմի, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի, ՀՀ ազգային անվտանգության ծառայության, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի, բնապահպանության, տրանսպորտի և կապի, առևտրի և տնտեսական զարգացման, մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունների, ինչպես նաև մաքսային պետական կոմիտեի, պետական գույքի կառավարման վարչության, հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովի, ջրային տնտեսության պետական կոմիտեի, հարկային պետական ծառայության, բանկերի, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու հարցերով հանձնաժողովի դեմ գրանցվել է 1-8-ական դիմում-բողոք: 2006 թ. ընթացքում վերոնշյալ և այլ մարմինների դեմ Պաշտպանը ստացել է 242 գրավոր դիմում-բողոք:

Անհրաժեշտ է նշել, որ, ինչպես ցույց է տալիս հետագա վերլուծությունը, գրեթե չկան այնպիսի իրավունքներ, որոնց խախտման առնչությամբ բողոքներ արձանագրված չլինեն:

### 1.1.2. Խորհրդատվություն

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղղություններից մեկը քաղաքացիներին խորհրդատվություն տրամադրելն է: Պաշտպանի գործունեությունում տարբերակվում են խորհրդատվության երկու տեսակ. պարտադիր և Պաշտպանի նախաձեռնությամբ իրականացվող: Առաջինն իրականացվում է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում ու ձևերով: Երկրորդն իրականացվում է Պաշտպանի կողմից սահմանված դեպքերում ու ձևերով՝ քաղաքացիների իրավական նիհիլիզմի հաղթահարման և մարդու իրավունքների մասին գիտելիքների տարածման նպատակով:

2006թ. ընթացքում պարտադիր խորհրդատվության տրամադրումն իրականացվել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված հետևյալ ձևերով.

1. խորհրդատվություն՝ դատարանի որոշման, վճռի կամ դատավճռի հիմնավորվածությունը բողոքարկելու վերաբերյալ (Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերություն),

2. դիմողին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունների ներկայացում (Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ),

3. բողոքը չքննարկելու մասին որոշում ընդունելիս դիմողին այդ բողոքի քննարկման՝ օրենքով նախատեսված կարգի բացատրում (Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մաս):

Օրենքով նախատեսված խորհրդատվության ձևերից յուրաքանչյուրն ունի իր իրականացման ինչպես ընթացակարգային, այնպես էլ բովանդակային առանձնահատկությունները: Սակայն, դրանց միավորում է այն, որ դրանք բոլորն իրենցից ներկայացնում են Պաշտպանի պարզաբանումները՝ հանրային մարմինների գործողություններով (անգործությամբ) դիմողի իրավունքների ու ազատությունների իրական կամ ենթադրյալ խախտումների վերաբերյալ:

1. Համաձայն Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության՝ Պաշտպանն իրավասու չէ միջամտել դատական վարույթին: Սակայն նա իրավասու է դիմողին տալ առաջարկություններ կամ խորհրդատվություն՝ դատարանի որոշման, վճռի կամ դատավճռի հիմնավորվածությունը բողոքարկելու վերաբերյալ:

Դատական որոշումը հիմնավորված է լինում, երբ նրանում արտացոլվում են տվյալ գործի համար նշանակություն ունեցող փաստերը, որոնք հաստատվում են դատարանի կողմից ստուգված՝ վերաբերելիության և թույլատրելիության պահանջները բավարարող ապացույցներով կամ ապացուցման կարիք չունեցող հանրահայտ հանգամանքներով, ինչպես նաև, երբ այն պարունակում է դատարանի՝ հաստատված փաստերից բխող սպառիչ հետևությունները:

Անհրաժեշտ է նկատել, որ հիմնավորվածությունը դատական որոշմանը ներկայացվող հիմնական պահանջներից միայն մեկն է, որի հետ անխզելիորեն կապված է դատական ակտին ներկայացվող՝ օրինականության պահանջը: Այս հատկանիշի էությունն այն է, որ դատական ակտը պետք է կայացվի տվյալ իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի դատավարական և նյութական իրավունքի նորմերի ճշգրիտ պահպանմամբ կամ պետք է հիմնվի համանման հարաբերություններ կարգավորող օրենքի վրա կամ ելնի օրենսդրության ընդհանուր սկզբունքներից և նպատակներից:

Վերոշարադրյալի հաշվառմամբ, Պաշտպանը համապատասխան դեպքերում խորհրդատվություն է տրամադրել դատական ակտերի ոչ միայն հիմնավորվածության, այլև օրինականության բողոքարկման վերաբերյալ:

**Դատարանի որոշման, վճռի կամ դատավճռի հիմնավորվածությունը բողոքարկելու վերաբերյալ խորհրդատվությունը ներառել է.**

– դիմումատուին դատական որոշման բողոքարկման կարգը սահմանող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթների բովանդակության պարզաբանում,

– ստեղծված որոշակի իրավիճակի վերլուծություն և դատական ակտի որոշման բողոքարկման հնարավոր ելքի կանխատեսում:

2. Օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ ստացվող բողոքների կապակցությամբ Պաշտպանի կողմից ընդունվող որոշումներից մեկը դիմողին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները ներկայացնելու մասին որոշումն է:

**Դիմողին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունների ներկայացումը ներառել է.**

– դիմողին դիմումի հետ կապված վիճելի հարաբերությունը կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթների բովանդակության պարզաբանում,

– ստեղծված կոնկրետ վիճելի իրադրության վերլուծություն և վեճի կարգավորման հնարավոր տարբերակների քննարկում:

3. Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է, որ բողոքը չքննարկելու մասին որոշում ընդունելիս Պաշտպանը պարտավոր է դիմողին բացատրել այդ բողոքի քննարկման՝ օրենքով նախատեսված կարգը:

Եթե դիմողին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունների ներկայացման վերաբերյալ որոշումը կայացվում է այն դեպքում, երբ դիմումատուն չի կողմնորոշվել իր կողմից հանրային մարմիններին ներկայացվելիք նյութաիրավական պահանջների բուն բովանդակության մեջ, ապա բողոքի քննարկման՝ օրենքով նախատեսված կարգի պարզաբանումը՝ ներպետական և Հայաստանի համար պարտադիր միջազգային իրավական փաստաթղթերով նախատեսված մարդու և

քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների իրացման ընթացակարգերին վերաբերող խորհրդատվությունն է:

**Բողոքի քննարկման՝ օրենքով նախատեսված կարգի պարզաբանումը ներառել է.**

– մարդու իրավունքների և ազատությունների իրացման ընթացակարգերն ամրագրող իրավական ակտերի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության ապահովում,

– հանրային մարմինների գործողությունների (անգործության) դեմ ուղղված բողոքների քննության կարգի հարցերով շահագրգիռ անձանց խորհրդատվության տրամադրում:

2006թ. ընթացքում Պաշտպանին ուղղված դիմումները (դատարանի որոշման, վճռի կամ դատավճռի հիմնավորվածությունը բողոքարկելու վերաբերյալ խորհրդատվություն ստանալու դիմումները, հանրային մարմինների դեմ ուղղված բողոքները) ըստ դրանցում բարձրացվող հարցերի բնույթի կարելի է բաժանել երեք խմբի:

Առաջին խումբը վերաբերել է քաղաքացիական, քաղաքական և սոցիալ-տնտեսական իրավունքների ապահովման խնդիրներին, որոնց կապակցությամբ տրվել են Պաշտպանի պարզաբանումները:

Երկրորդ խումբը կազմել են զինծառայողների, ինչպես նաև քրեական դատավարության ոլորտում անձանց իրավունքների ապահովման հիմնահարցերը, որոնց վերաբերյալ դիմումատուներին տրամադրվել են անհրաժեշտ տեղեկություններ:

Երրորդ խմբի մեջ ներառվել են մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային-իրավական եղանակների վերաբերյալ պարզաբանման ենթակա հարցերը:

**Զգալի թիվ են կազմել դիմումատուների սոցիալ-տնտեսական իրավունքների պաշտպանության հարցերին վերաբերող խորհրդատվությունները:**

Դիմումներում մատնանշված սոցիալական իրավունքները առավելապես կրում են «արժեքային» բնույթ, հետևաբար, դրանց իրացումը հաճախ կապված է լինում պետության տնտեսական հնարավորությունների հետ: Միայն մարդու քաղաքացիական և քաղաքական իրավունքներն են կրում իրական սուբյեկտիվ բնույթ և երաշխավորված են համապարփակ ու լիակատար դատական պաշտպանությամբ:

2006 թ. ընթացքում արձանագրվել է քաղաքացիներին՝ կենսաթոշակային ապահովման իրավունքի հարցերով տրամադրված խորհրդատվությունների թվի աճ: Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված որոշ դիմում-բողոքներում քաղաքացիները հայտնել են, որ չեն կարողանում ստանալ իրենց ծնողների կողմից չստացված կենսաթոշակները:

Կենսաթոշակային հիմնախնդիրների կապակցությամբ քիչ չեն նաև Պաշտպանին հացեագրած դիմում-բողոքները, որոնցում քաղաքացիները հայտնել են իրենց՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստանալու իրավունքի խախտումների մասին:

Որոշ դիմումներում քաղաքացիները խնդրել են Պաշտպանի աջակցությունը Հայրենական պատերազմի մասնակիցներին տրամադրվող պատվովճարները ստանալու հարցում: Իրենց դիմումներում նրանք մասնավորապես հայտնել են, որ թեև չեն հանդիսանում պատերազմի մասնակիցներ, սակայն կարգավիճակով հավասարեցված են նրանց, ուստի ըստ իրենց պնդման իրավունք ունեն ստանալ հասանելիք պատվովճարները:

Որպես առանձին ենթախումբ կարելի է առանձնացնել սեփականության իրավունքի վերաբերյալ տրամադրված խորհրդատվությունները: Պաշտպանը քաղաքացիներից ստացել է նաև դիմումներ, որոնցով դիմումատուները բողոքել են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումների (այսուհետ՝ Կադաստր), դրանց պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության դեմ: Դրանք վերաբերել են ինչպես Կադաստրի կողմից իրավունքների պետական գրանցումը քաղաքապետի կողմից համապատասխան որոշում կայացնելուց հետո մերժելուն, այնպես էլ ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացմանը: Ընդ որում, վերջին դեպքում խնդիրը վերաբերել է գրանցման՝ օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելուն:

Պաշտպանին հասցեագրած դիմում-բողոքների մի ստվար մասը վերաբերել է ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակներում չընդգրկելուն:

Պաշտպանի կայացրած որոշումներով քաղաքացիներին տրամադրվել են անհրաժեշտ տեղեկություններ, որոնցում զգալի են կրթության իրավունքի իրականացմանը վերաբերողները:

Այս խմբում ինքնուրույն տեղ են զբաղեցնում փախստականների իրավունքների վերաբերյալ խորհրդատվությունները:

Վերոգրյալ հարցերի կապակցությամբ Պաշտպանի կողմից քաղաքացիներին տրվել են անհրաժեշտ պարզաբանումներ:

**Զինծառայողների, ինչպես նաև քրեական դատավարության ոլորտում անձի իրավունքների ապահովման վերաբերյալ խորհրդատվությունները** ըստ իրենց բնույթի, կարելի է դասակարգել որոշակի ենթախմբերի:

Առաջինում կարող ենք նշել այն դեպքերը, որոնցով դիմումատուներին պարզաբանվել են իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները՝ կապված հանցագործության մասին հաղորդման առնչությամբ քրեական գործի հարուցումը, դիմումատուների հիմնավորմամբ անհիմն մերժելու հետ:

Երկրորդ ենթախմբում ընդգրկվել են այն պարզաբանումները, որոնք կապված են եղել քրեական գործերի մինչդատական վարույթի ընթացքում ինչպես քրեական հետապնդման մարմինների, այնպես էլ դատարանի կողմից (խոսքը վերաբերում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությանը) անձի իրավունքների և ազատությունների խախտման հետ:

Երրորդ ենթախումբը կազմող խորհրդատվությունները կապված են եղել Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով ՀՀ Նախագահի հրամանագրով ստեղծված անկախ հանձնաժողովի գործունեության հետ:

Մի շարք դիմումներով էլ պարզաբանումները վերաբերել են ՀՀ զինված ուժերում ծառայությանն առնչվող խնդիրներին, ՀՀ զինվորական դատախազության, զինկոմիսարիատների գործողություններին կամ անգործությանը, զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքներին և ազատություններին:

Վերոգրյալից բացի, դիմումատուներին խորհրդատվություններ են տրամադրվել քաղաքացիություն ձեռք բերելու, անձնագիր ստանալու, ինչպես նաև արտասահմանում գտնվող ՀՀ քաղաքացիների զինվորական հաշվառման կապակցությամբ իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունների մասին:

**2006թ. ընթացքում Պաշտպանի նախաձեռնությամբ խորհրդատվությունն իրականացվել է հետևյալ ձևերով.**

1. քաղաքացիների բանավոր խորհրդատվություն՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ընդունելության ժամանակ,

2. քաղաքացիների բանավոր խորհրդատվություն հեռախոսով,

3. քաղաքացիների բանավոր խորհրդատվություն, որն իրականացվում է Պաշտպանի կամ նրա լիազոր անձանց կողմից աշխատանքային գործուղումների ժամանակ, տեղերում:

Խորհրդատվության այս տեսակը դրսևորվել է դիմողներին բանավոր, ինչպես նաև այլ եղանակներով իրավաբանական օգնություն ցուցաբերելու մեջ:

Քաղաքացիների ընդունելությունն ու խորհրդատվությունն իրականացվել է աշխատանքային օրերին՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում: Տեղերում քաղաքացիների խորհրդատվությունն իրականացվել է Պաշտպանի կողմից հաստատված գործուղումների ժամանակացույցի համաձայն:

2006թ. ընթացքում Պաշտպանի նախաձեռնությամբ խորհրդատվություն իրականացվել է.

– քաղաքացիական և քաղաքացիական դատավարական օրենսդրության,

– աշխատանքային օրենսդրության,

– սոցիալական ապահովության օրենսդրության,

– ընտանեկան օրենսդրության,

– ֆինանսական և հարկային օրենսդրության,

– քրեական և քրեական դատավարական օրենսդրության,

– ներման և համաներման, պայմանական վաղաժամկետ ազատվելու, կատարողական վարույթի, ինչպես նաև այլ հարցերով:

### 1.1.3. Ընդունելություն

2006թ. ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից հատուկ ուշադրություն է հատկացվել քաղաքացիների անձնական ընդունելության կազմակերպման կատարելագործման հարցերին՝ այն առավելագույնս իր հետևյալ նպատակներին ծառայեցնելու համար.

ա) բնակչության հետ Պաշտպանի անմիջական շփումների օժանդակում,

բ) Պաշտպանի աշխատակազմի կողմից քաղաքացիների դիմումներին արագ արձագանքում:

2006թ. ընթացքում Պաշտպանի աշխատակազմում քաղաքացիների անձնական ընդունելության կազմակերպումն իր մեջ ներառել է հետևյալ հիմնական խնդիրների լուծումը.

– ընդունարանի աշխատանքի կազմակերպում և քաղաքացիների դիմումների ընդունում՝ սահմանված պահանջներին համապատասխան,

– պատշաճ իրավաբանական օգնության ցուցաբերում,

– Պաշտպանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից քննարկման ընդունված դիմումների պատշաճ ու ժամանակին քննարկում, Պաշտպանի որոշումների նախագծերի նախապատրաստում՝ ըստ ստորաբաժանումների իրավասության,

– իրենց դիմումների վերաբերյալ ընդունված որոշումների մասին քաղաքացիների իրազեկում,

– ընդունված որոշումների իրականացման ողղությամբ միջոցների գործադրում և որոշումների կատարման նկատմամբ հսկողության ապահովում,

– աշխատակազմի աշխատակիցներին ընդունելության համար դիմած քաղաքացիների բողոքների պարբերական վերլուծություն՝ քաղաքացիների իրավունքների խախտումները ծնող պատճառները հայտնաբերելու ու վերացնելու նպատակով:

2006թ. ընթացքում ընդունելությունն իրականացվել է քաղաքացիների կամ հենց իր՝ Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ կամ նրա հանձնարարությամբ՝ աշխատակազմի ղեկավարի, համապատասխան հարցերի լուծման որոշումների նախագծերը Պաշտպանի քննարկմանը ներկայացնելու իրավասությամբ օժտված աշխատակազմի մյուս աշխատակիցների կողմից:

Անմիջականորեն Պաշտպանի կողմից քաղաքացիների անձնական ընդունելությունն իրականացվել է հետևյալ դեպքերում.

– դիմումատուի խնդրանքով.
– տեղեր այցելություններ կատարելու ժամանակ.
– Պաշտպանի նախաձեռնությամբ.
– առկա գործի վերաբերյալ մասնագետի զեկուցման համաձայն:

Քաղաքացիների ընդունելությունն իրականացնելու համար Մարդու իրավունքների պաշտպանի նոր աշխատավայրում հատկացված է հատուկ տեղ՝ ընդունարան, որը կահավորված է անհրաժեշտ գույքով և ապահովված է կապի միջոցներով: Առանձին դեպքերում քաղաքացիների ընդունելությունը կատարվել է ընդունելությունն իրականացնող պատասխանատու անձանց ծառայողական աշխատասենյակներում:

Հարցերը, որոնցով դիմել են քաղաքացիները, հնարավորության դեպքում լուծվել են հենց ընդունելության ժամանակ պատշաճ իրավաբանական օգնություն ցուցաբերելու միջոցով:

Առաջնորդվելով «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի պահանջներով՝ ընդունելությունն իրականացնող աշխատակիցները՝

– ընդունել են գրավոր դիմումները, եթե այցելուների կողմից առաջադրված հարցերը պահանջել են լրացուցիչ ուսումնասիրություններ կամ ստուգումներ: Աշխատակազմի աշխատակիցները բացատրել են այցելուներին, թե ինչ պատճառներով խնդրանքը չէր կարող բավարարվել ընդունելության ընթացքում, պարզաբանել են դիմումների քննարկման կարգն ու ժամկետը: Եթե այցելուները ինչ-ինչ պատճառներով չեն կարողացել գրավոր ձևով ինքնուրույն շարադրել իրենց խնդրանքը, ընդունելությունն իրականացնող անձինք նրանց անհրաժեշտ օգնություն են ցուցաբերել.

– եթե դիմումների բովանդակությունն այնպիսին է եղել, որ դրանցում բարձրացված հարցերի քննարկումը գտնվել է Պաշտպանի լիազորությունների շրջանակից դուրս, ապա ընդունելությունն իրականացնող աշխատակիցները բացատրել են դիմումատուներին, որ դիմումներն ընդունելու դեպքում հնարավոր է կայացվի դրանք չքննարկելու մասին որոշում, իսկ եթե, այնուամենայնիվ, դիմումատուները պնդել են, որպեսզի դիմումներն ընդունվեն, ընդունել են դրանք:

2006թ. ընթացքում աշխատակազմում քաղաքացիների ընդունելության կազմակերպման նպատակով Պաշտպանն ապահովել է քաղաքացիների ընդունելության և նամակների բաժնի կողմից հետևյալ հիմնական խնդիրների իրականացումը.

– Պաշտպանին աջակցության ցուցաբերումը այն հարցերում, որոնք գտնվում են նրա իրավասության շրջանակներում,

– քաղաքացիների անձնական ընդունելության կազմակերպումն ու անցկացումը,

– Պաշտպանին հասցեագրված քաղաքացիների գրավոր դիմումների ընդունումը,

– քաղաքացիների՝ Պաշտպանին դիմելու կարգի պարզաբանումը,

– մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության միջոցների և ձևերի պարզաբանումը դիմումատուին,

– մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների զանգվածային կամ կոպիտ խախտումների մասին տեղեկատվության, այդ թվում զանգվածային լրատվության միջոցներում տեղ գտած հրապարակումների վերլուծության անցկացումը, Պաշտպանին այդ խախտումների մասին տեղյակ պահելը:

Իր աշխատավայրում ընդունելությունից զատ, 2006թ. ընթացքում Պաշտպանն ընդունելություն է կազմակերպել նաև հանրապետության մարզկենտրոններում:

## 1.1.4. Այցելություններ և ուսումնասիրություններ

2006թ. ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից հանրային մարմինների գործունեության վերահսկողությունն իրականացվել է այդ թվում՝ պետական հիմնարկներ և կազմակերպություններ այցելություններ և ուսումնասիրություններ կատարելու միջոցով: Վերահսկողության արդյունքները որոշ դեպքերում դրդել են հանրային մարմիններին ոչ միայն վերանայել ձևավորված իրավակիրառ պրակտիկան, այլ նաև օրենսդրության կատարելագործմանն ուղղված միջոցներ ձեռնարկել:

Իրավունքների և ազատությունների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված է պետական հիմնարկներ և կազմակերպություններ այցելությունների անցկացման երկու հիմնական ձևերի օգտագործման հնարավորություն.

– իրավունքների և ազատությունների խախտման մասին բողոքի հիման վրա,

– Պաշտպանի սեփական նախաձեռնությամբ:

Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ բողոքը քննարկման ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո Պաշտպանը բողոքում բարձրացված հարցերի ուսումնասիրման նպատակով իրավասու է՝ անարգել այցելել ցանկացած պետական հիմնարկ կամ կազմակերպություն, ներառյալ՝ զորամիավորում, անձանց հարկադրական պահման վայրեր, այդ թվում՝ նաև նախնական կալանքի և ազատազրկման վայրեր:

Օրենքով նախատեսված է նաև, որ Պաշտպանը կամ նրա ներկայացուցիչն իրավունք ունի իր նախաձեռնությամբ անարգել այցելել զորամիավորումներ, ձերբակալման վայրեր, նախնական կալանք կամ քրեական պատիժ իրականացնող հիմնարկներ, ինչպես նաև հարկադրական պահման այլ վայրեր՝ դրանցում գտնվող անձանց դիմումներն ընդունելու համար /Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերություն/:

Այցելության անցկացման վերոնշյալ երկու ձևերից առաջինն ուղղված է մեկանգամյա վերահսկիչ միջոցառում անցկացնելուն՝ մարդու իրավունքների խախտման վերաբերյալ բողոքի առկայության դեպքում:

Երկրորդ ձևն ուղղված է պետական կազմակերպությունների և հիմնարկների գործունեության պարբերական ծրագրային ուսումնասիրությունների կատարման նպատակին, ինչպես նաև ոչ ծրագրային ուսումնասիրություններ կատարելուն՝ մարդու իրավունքների խախտման մասին տեղեկատվության առկայության դեպքում:

2006թ. ընթացքում Պաշտպանի կամ նրա ներկայացուցիչների կողմից կատարված այցելությունների արդյունքների հիման վրա կազմվել են տեղեկանքներ: Տեղեկանքները բովանդակել են.

– նշումներ իրավունքների և ազատությունների կոնկրետ խախտումների մասին,

– առաջարկություններ՝ ուսումնասիրության ընթացքում հայտնաբերված մարդու իրավունքների և ազատությունների խախտման դեպքերը վերացնելու և հայտնաբերված փաստերի կրկնումը կանխելու վերաբերյալ,

– առաջարկություններ Պաշտպանին՝ մարդու իրավունքների և ազատությունների խախտման մեջ մեղավոր պաշտոնատար անձանց Օրենքով նախատեսված կարգով պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու մասին:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից քննարկվել են վերահսկողության իրականացման բոլոր ձևերի արդյունքները:

Ծրագրային վերահսկողություն իրականացնելու դեպքում մշակվել է վերահսկողական միջոցառումների անցկացման ծրագիր, որտեղ ներկայացվել են դրանց անցկացման ժամանակացույցը և մասնակից անձանց կազմը: Ոչ ծրագրային ուսումնասիրություններ կատարելու համար Պաշտպանի աշխատակազմի պատասխանատու անձինք վերահսկողության ենթակա հաստատության ղեկավարությանը տեղյակ են պահել այն հանգամանքների մասին, որոնք վերահսկողական միջոցառում անցկացնելու պատճառ են դարձել:

Ոչ ծրագրային վերահսկողություն անցկացնելու ժամանակ վերահսկողության ծրագիր չի մշակվել: Պաշտպանի ներկայացուցիչները համապատասխան անձանց ներկայացնում են վերահսկողական միջոցառում անցկացնելու անհրաժեշտության դրդապատճառը՝ մատնանշելով վերահսկողական միջոցառումների ծավալը, ինչպես նաև ուսումնասիրություն կատարելու հիմնավորումը՝ մարդու իրավունքների խախտումների փաստերը, այդ փաստերի մասին տեղեկություններ ստանալու աղբյուրները:

2006թ. Մարդու իրավունքների պաշտպանն ու նրա ներկայացուցիչները պարբերաբար այցելել են քրեակատարողական հիմնարկներ, ձերբակալված անձանց

պահման վայրեր, զորամասեր, հոգեբուժարաններ, ծերանոցներ, մանկատներ, այլ պետական հիմնարկներ և կազմակերպություններ:

Նշված հաստատություններում Պաշտպանի ուշադրության կենտրոնում եղել են.

– մարդու իրավունքների խախտումների փաստերը,

– ղեկավարության ու անձնակազմի կողմից չարաշահումների դեպքերը,

– մարդու հիմնական անկապտելի իրավունքների իրականացման սահմանափակումները,

– պետության կողմից երաշխավորված սոցիալական ծառայությունների նվազագույն ծավալի պահպանումը,

– պետության կողմից երաշխավորված սոցիալական ծառայություններ ստանալու հարցում հիմնարկությունների «խնամակալության» տակ գտնվողների նկատմամբ խտրական վերաբերմունքի առկայությունը,

– հիմնարկության կողմից իր գործառույթների իրականացման արդյունավետության մյուս ցուցանիշները:

Ընդհանուր առմամբ, բոլոր այցելությունները նպատակաուղղված են եղել մարդու իրավունքների խախտումների փաստերի բացահայտմանը: Միևնույն ժամանակ, Պաշտպանի, կամ նրա ներկայացուցիչների կողմից կատարված այցելությունները հնարավորություն են ընձեռել որաշակիորեն գնահատել հանրային մարմինների գործունեությունը համապատասխան ոլորտներում, ինչպես նաև բացահայտել մարդու իրավունքների առավել տիպական խախտումները, դրանց պատճառներն ու նպաստող պայմանները:

## 1.1.5. Արագ արձագանքում

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղղությունների թվում ինքնուրույն դեր ունի արագ արձագանքումը՝ իբրև կարևոր երաշխիք Պաշտպանի լիազորությունների բնականոն իրականացումն ապահովելու գործում: Այն նպատակ է հետապնդում վեր հանել, նախազգուշացնել և կանխել հանրային մարմինների կողմից մարդու իրավունքների և ազատությունների հնարավոր խախտումները կամ այդպիսի խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները (անգործությունը):

Արագ արձագանքումն իրականացվում է անձի իրավունքների և ազատությունների խախտման մասին վկայող, հետաձգում չհանդուրժող ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր դիմում-բողոքներ ստանալու դեպքում: Վերը նշված նպատակով Պաշտպանի կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան կատարվում են նաև սեփական նախաձեռնությամբ այցելություններ այն վայրեր, ուր առավել վտանգված են անձի

իրավունքներն ու ազատությունները (քրեակատարողական հիմնարկներ, ձերբակալված անձանց պահման վայրեր, զորամասեր, հոգեբուժարաններ, ծերանոցներ, մանկատներ, այլ պետական հիմնարկներ և կազմակերպություններ):

Գործնական աշխատանքի վերլուծությունը վկայում է, որ արագ արձագանքումն իր նպատակներին իրապես ծառայում է միայն այն դեպքերում, երբ որոշակի մարմին այցելությունը կատարվում է առանց այդ մասին տվյալ մարմնի պաշտոնատար անձանց նախապես զգուշացնելու:

Ընդ որում, արագ արձագանքման կարգով այցելությունն իրականացվում է Պաշտպանի աշխատակազմի ինչպես քրեադատավարական և զինծառայողների իրավունքների վերականգնման, այնպես էլ քաղաքացիական և քաղաքական իրավունքների վերականգման խմբերի կողմից: Յուրաքանչյուր այցելության արդյունքների ամփոփման կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմում կատարվում են նպատակային քննարկումներ՝ Պաշտպանի գլխավորությամբ:

Քրեակատարողական հիմնարկներ, ձերբակալվածների պահման վայրեր կատարված այցելությունների ընթացքում ուսումնասիրվել են ձերբակալված անձանց, նախնական կալանքի տակ գտնվող, ինչպես նաև ազատազրկման դատապարտված անձանց պահման, վերջիններիս իրավունքների և ազատությունների ապահովման պայմանների համապատասխանությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, քրեակատարողական օրենսգրքի, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին: Ուսումնասիրվել են նաև նրանց վերաբերյալ կազմված անձնական գործերի նյութերը: Առանձին խորհրդատվական հանդիպումներ են կազմակերպվել Մարդու իրավունքների պաշտպանին ինչպես նախօրոք բողոք ներկայացրած, այնպես էլ այցելության ընթացքում Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների հետ հանդիպելու ցանկություն հայտնած ձերբակալված, կալանավորված ու դատապարտված անձանց հետ: Այցելության ավարտին, բացահայտված խնդիրները ներկայացվել են հիմնարկի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, պահանջվել համապատասխան պարզաբանումներ: Անհրաժեշտության դեպքում տեղում կազմակերպվել են համատեղ քննարկումներ առկա խնդիրների լուծման եղանակների շուրջ:

Ոստիկանության բաժիններ կատարված այցելությունները պայմանավորված են եղել դատավարական գործողություններ կատարելու պատրվակով բերման ենթարկված անձանց՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված իրավունքների և ազատությունների ապահովումը պարզելու անհրաժեշտությամբ: Խախտումներ հայտնաբերելու դեպքում դրանք վերացնելու ուղղությամբ ձեռնարկվել են անհապաղ միջոցներ:

Զորամասեր այցելելությունների ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել ինչպես դրանց հրամանատարական կազմի, այնպես էլ ժամկետային զինծառայողների հետ: Վերջիններիս պարզաբանվել են իրենց իրավունքներն ու պարտականությունները, իսկ ցանկության դեպքում նրանցից յուրաքանչյուրի հետ առանձին հանդիպման ընթացքում տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն՝ իրենց հուզող այլ հարցերի վերաբերյալ:

Այսպիսով, վերոգրյալի հիման վրա կարելի է արձանագրել, որ արագ արձագանքումն իրապես կարևոր դեր ու նշանակություն ունի Մարդու իրավունքների պաշտպանի բնականոն գործունեության ապահովման համար՝ նպաստելով մեր երկրում անձի իրավունքների և ազատությունների ապահովման ոլորտում օրենսդրական կառուցակարգերի անշեղ կատարմանը, ինչպես նաև սոցիալական արդարության սկզբունքների գերակայության հաստատմանը:

## 1.2. Մարդու իրավունքների վերականգնմանն ուղղված գործունեություն

### 1.2.1. Մարդու իրավունքների պաշտպանի կողմից կիրառվող ներգործության միջոցները

Պաշտպանի կողմից կիրառվող՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված հիմնական ներգործության միջոցը՝ **գրավոր որոշում՝ առաջարկությունն է,** որն ընդունվում է Պաշտպանի կողմից՝ քննարկված բողոքի արդյունքներով: Այս իր որոշմամբ Պաշտպանն Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ առաջարկում է այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ դրա պաշտոնատար այն անձին, որի որոշումների կամ գործողությունների (անգործության) մեջ նա տեսնում է մարդու իրավունքների և ազատությունների խախտում, վերացնելու թույլ տրված խախտումները՝ նշելով մարդու իրավունքների և ազատությունների վերականգնման համար անհրաժեշտ և կատարման ենթակա հնարավոր միջոցառումները: 2006թ. ընթացքում խախտում հայտնաբերելու վերաբերյալ կայացված բոլոր որոշումներում առկա են նման առաջարկություններ:

Վերոնշյալ որոշումը Պաշտպանի կողմից կիրառվող միակ ներգործության միջոցը չէ: Իր իրավապաշտպան գործունեության ընթացքում, այն դեպքում, երբ խոսքը գնում է քաղաքացիների իրավունքների և ազատությունների զանգվածային խախտման մասին, Մարդու իրավունքների պաշտպանի սեփական նախաձեռնությամբ համապատասխան **դիմումներ են** ուղարկվում հանրային մարմիններին:

Մարդու իրավունքների պաշտպանը հանրային մարմիններին հասցեագրում է նաև **պաշտոնական նամակներ,** որոնք արտահայտում են քաղաքացիների շահերը շոշափող տարբեր հարցերի նկատմամբ Պաշտպանի դիրքորոշումը (տե՛ս, օրինակ, հավելված 6):

Պաշտպանի կողմից կիրառվող ներգործության կարևոր միջոց կարելի է համարել նրան վերապահված՝ իրավասու մարմիններին **միջնորդությամբ դիմելու իրավունքը՝** պաշտոնատար այն անձին կարգապահական կամ վարչական տույժի ենթարկելու կամ քրեական պատասխանատվության կանչելու վերաբերյալ, որի որոշումներով կամ գործողություններով (անգործությամբ) խախտվել են մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, և (կամ) որը խախտել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի պահանջները (Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ):

2006թ. ընթացքում Պաշտպանի կողմից կայացված՝ խախտում հայտնաբերելու և այն կատարած պաշտոնատար անձին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առաջարկ ներկայացնելու մասին որոշումներում նշված փաստերի հիման վրա ՀՀ ոստիկանության համակարգի մի շարք աշխատակիցներ ենթարկվել են կարգապահական տույժի:

Նման միջնորդության անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ բողոքի քննարկման ընթացքում Պաշտպանի կողմից կարող են հայտնաբերվել վարչական, կարգապահական, քրեական իրավախախտումների տարրեր: Ընդ որում, դիմումատուներն այդ մասին կարող են չիմանալ, կարող են խուսափել ինքնուրույն դիմել համապատասխան մարմիններին կամ իրավախախտումը կարող է լինել մարդու իրավունքների զանգվածային խախտումների արդյունք: Պաշտպանի կողմից միջամտությունը, հատկապես վերջին դեպքում, կրում է առավել հրատապ բնույթ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին տրված է նաև ՀՀ սահմանադրական դատարան դիմելու իրավունք: 2006 թ. ընթացքում Պաշտպանն երկու անգամ կիրառել է ներգործության այս միջոցը (տե՛ս, հավելվածներ 8, 9): Պաշտպանի երկու դիմումն էլ Դատարանի կողմից բավարարվել է:

Օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ Պաշտպանն իրավասու է մարդու իրավունքների և ազատությունների մասին տեղեկատվության ուսումնասիրության և վերլուծության արդյունքների հիման վրա, ուսումնասիրության արդյունքների ամփոփման նպատակով հանրային մարմիններին ուղարկել խորհրդատվական բնույթի պարզաբանումներ և առաջարկություններ: 2006 թ. ընթացքում Պաշտպանը կիրառել է նաև այս ներգործության միջոցը:

Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պաշտպանն իրավունք ունի ներկա լինելու Հայաստանի Հանրապետության կառավարության, ինչպես նաև պետական այլ մարմինների նիստերին և ելույթ ունենալ, եթե քննարկվում են մարդու իրավունքներին և

հիմնարար ազատություններին վերաբերող հարցեր, ինչպես նաև այդ նիստերի քննարկմանը ներկայացնել այդ կամ դրանց ենթակա մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, ինչպես նաև «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման վերաբերյալ հարցեր:

Նույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված է, որ Պաշտպանն իրավունք ունի ներկա լինել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նիստերին, ելույթ ունենալ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, երբ քննարկվում են մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին վերաբերող հարցեր:

2006 թ. ընթացքում Պաշտպանը օգտագործել է իրավախախտումներին հակազդելու նաև այս միջոցները:

### 1.2.2. Դրական արդյունքներով ավարտված գործերի մասին

Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտն իր գործունեությամբ չի փոխարինում քաղաքացիների իրավունքների պաշտպանության մյուս հաստատություններին: Պաշտպանի որոշումները չեն դադարեցնում հանրային մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերի գործողությունը: Պաշտպանն իր զինանոցում չունի հարկադրանքի մեթոդներ: Լինելով միջնորդ՝ քաղաքացու և իշխանության միջև՝ հանձինս հանրային մարմինների, Պաշտպանը հանդես է գալիս որպես «միջնորդ դատավոր», որի հանձնարարականները կարող են կատարվել միայն նրա բարձր հեղինակության շնորհիվ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հարկ է ընդգծել, որ Պաշտպանի գործունեության ամբողջական արդյունավետության մասին վկայում են.

1. պաշտոնատար անձանց կողմից Պաշտպանի հանձնարարականների ընդունումը և դրանց խիստ և անշեղ իրագործումը,

2. քաղաքացիների կողմից այն հարցերի վերաբերյալ կրկնակի դիմումների բացակայությունը, որոնց առնչությամբ արդեն անց են կացվել համապատասխան ստուգումներ և խախտված իրավունքների վերականգնման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցներ,

3. քաղաքացիների իրավունքների վերականգնման և մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հանրային մարմինների կողմից կոնկրետ գործողությունների իրագործումը՝ որպես Պաշտպանի ամենամյա և հատուկ զեկույցների պատասխան,

4. Պաշտպանի ինստիտուտի նկատմամբ քաղաքացիների վստահելի վերաբերմունքը՝ արտահայտված դիմում-բողոքների քանակի ամենամյա աճով,

5. զանգվածային լրատվության միջոցների կողմից Պաշտպանի գործունեության պարբերաբար լուսաբանումը,

6. Պաշտպանի արդյունավետ, կանխարգելիչ գործունեությունը՝ մարդու իրավունքների խախտման դեպքեր չթույլատրելու նպատակով,

7. մարդու և քաղաքացու խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման հարցում Պաշտպանի հաստատակամությունը,

8. հասարակական կազմակերպությունների, միջազգային կառույցների հետ կառուցողական համագործակցության հասնելը,

9. քաղաքացիների իրավագիտակցության բարձրացումը որպես Պաշտպանի լուսավորչական ակտիվ գործունեության արդյունք:

Այդուհանդերձ, Պաշտպանի գործունեության արդյունավետության հիմնական ցուցանիշները՝ հենց մարդու և քաղաքացու իրավունքների վերականգնման փաստերն են:

2006թ. 10 ամսվա ընթացքում Պաշտպանի գործունեության արդյունքում արձանագրվել է իրավունքների վերականգնման 243 դեպք: Այս դեպքերը ընդգրկում են դիմում-բողոքները, որոնցում նշված խախտված իրավունքները վերականգնվել են ինչպես Պաշտպանի կողմից իրավունքի խախտման մասին որոշում ընդունելուց առաջ՝ հանրային մարմինների հետ համագործության արդյունքում, այնպես էլ նման որոշում ընդունելուց հետո, երբ այն ներկայացվել է պատկան մարմնի՝ իրավունքի խախտում թույլ տված ներկայացուցչին և/կամ նրա վերադասին:

## 1.3. Օրենսդրության բարելավմանն ուղղված գործունեություն

Պաշտպանի գործունեության կարևոր բնագավառներից է Հանրապետության օրենսդրության բարելավմանն ուղղված գործունեությունը: Մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին առնչվող օրենքների և այլ իրավական ակտերի բացերը, անորոշությունները, հաճախակի նաև հակասությունները, իրավական ակտի կիրառման ընթացքում հանգեցնում են իրավունքի խախտման՝ օրենքի բացն անհնարին է դարձնում իրավունքի արդյունավետ պաշտպանությունը, օրենքի, իրավական այլ ակտի անորոշություններն ու հակասությունները տեղիք են տալիս կամայական մեկնաբանությունների ի վնաս իրավունք հայցողի:

Մեր պայմաններում, երբ ընթանում է իրավական համակարգն ամբողջացնելու, միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին և սահմանադրական փոփոխություններին համապատասխանեցնելու գործընթաց, երբ այս կամ այն օրենքի, իրավական ակտի ընդունումը կամ փոփոխումը հաճախակի դառնում է հրատապ և այն

ընդունվում է ավելորդ շտապողականությամբ, դրանում տեղ են գտնում նաև բացթողումներ, անորոշություններ, նաև հակասություններ:

Պաշտպանի կողմից օրենսդրական խնդիրներին անդրադարձ կատարվում է՝ օրենսդրական դաշտի ուսումնասիրման և համեմատական վերլուծությունների միջոցով, ինչպես նաև ստացված բողոքներով բարձրացված խնդիրները իրավական դաշտում քննարկելու միջոցով: Կարևորում ենք նաև օրենքների նախագծերի վերաբերյալ նախաձեռնողի հետ քննարկումների կազմակերպումը և Պաշտպանի կարծիքի ներկայացումը:

Այսպես՝

1. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը հասունացել էր ինչպես Սահմանադրական փոփոխությունների թելադրանքով, այնպես էլ օրենքի կիրառման ընթացքում ի հայտ եկած բացերը լրացնելու անհրաժեշտությամբ:

Պաշտպանի կողմից նախապատրաստվել և ՀՀ արդարադատության նախարարություն են ներկայացվել նման փոփոխությունների և լրացումների վերաբերյալ օրենքի նախագիծ, ինչպես նաև օրենքների նախագծեր քրեական և քրեական դատավարության, վարչական իրավախախտումների մասին օրենսգրքերում, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին:

Առաջարկված այդ փոփոխությունները և լրացումները ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են 01.06.06թ. և ստորագրվել են ՀՀ Նախագահի կողմից 24.06.06թ.:

2. Հաշվի առնելով, որ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման գործընթացը կարգավորող իրավական նորմերը չեն ապահովում սեփականատերերի և օտարվող սեփականության նկատմամբ այլ գույքային իրավունք ունեցողների իրավունքների լիարժեք պաշտպանությունը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218-րդ, Հողային օրենսգրքի 104-րդ, 106-րդ, 108-րդ հոդվածների, ՀՀ կառավարության 2002թ. օգոստոսի 8-ի թիվ 1151 որոշման սահմանադրականության հարցը որոշելու համար Պաշտպանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան:

ՀՀ սահմանադրական դատարանի 18.04.06թ. որոշմամբ այդ իրավական նորմերը ճանաչվել են ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածին հակասող:

3. Գտնելով, որ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, որոնցով թույլատրելի է համարված կուսակցության լուծարումը Ազգային ժողովի ընտրություններում անհրաժեշտ քանակով ձայն չհավաքելու կամ Ազգային ժողովի ընտրություններին չմասնակցելու դեպքերում, սահմանափակում է միավորումներ կազմելու և դրանց անդամակցելու մարդու սահմանադրական իրավունքը, Պաշտպանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ այդ դրույթների սահմանադրականությունն որոշելու հարցով:

ՀՀ սահմանադրական դատարանի 22.12.2006թ. որոշմամբ այդ դրույթները ճանաչվել են հակասահմանադրական:

Սահմանադրական դատարանն անդրադարձել է նաև հիշյալ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասին, ըստ որի «Կուսակցության դատական կարգով լուծարումից հետո մնացած գույքը փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը»: Օրենքի այդ դրույթը նույնպես ճանաչվել է հակասահմանադրական:

4. Կոնդ և Կոզեռն թաղամասերի մի քանի տասնյակ բնակիչների կողմից որպես սեփականություն օգտագործվող տարածքների և բնակարանների նկատմամբ նրանց իրավունքները ճանաչելու հարցով համապատասխան առաջարկներ են ներկայացվել ՀՀ կառավարություն և Երևանի քաղաքապետին:

Երևանի քաղաքապետի որոշումներով խնդիրը լուծվել է դրական՝ կազմվել է հանձնաժողով, որը տեղում անց է կացրել անհրաժեշտ ուսումնասիրություններ և ուսումնասիրության արդյունքներով բնակիչների սեփականության իրավունքը հիմնականում ճանաչվել է: Կոզեռն թաղամասում առկա են դեռ վիճելի խնդիրներ, որոնց հետ կապված գործընթացը շարունակվում է:

5. Պետական նպաստների տրամադրման հետ կապված բողոքների ուսումնասիրության ընթացքում Պաշտպանը հանգել է այն հետևության, որ կենսաթոշակների բարձրացման արդյունքում մեծ թվով նպաստառուների նյութական վիճակը վատթարացել է այն առումով, որ կենսաթոշակի 1000-1500 դրամի ավելացման պայմաններում իջել է նրանց աղքատության ցուցանիշը և նրանք զրկվել են 7000 դրամ ընտանեկան նպաստ սանալու իրավունքից:

Խնդիրը ներկայացվել է ՀՀ կառավարություն ու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

6. Աշխատանքային խեղման արդյունքում հաշմանդամ դարձած անձանց կորցրած աշխատավարձի դիմաց փոխհատուցում տվող գործատուի լուծարման դեպքում նման անձինք զրկվում են այդ փոխհատուցումները ստանալու հնարավորությունից: ՀՀ կառավարության 15.11.1992 թվականի թիվ 579 որոշմամբ հաստատված կանոններով սահմանվում էր, որ «Կազմակերպության լուծարման կամ վերակառուցման հետևանքով նրա գործունեության դադարեցման դեպքում վնասը հատուցում է /վնասի փոխհատուցումը շարունակում է/ նրա իրավահաջորդը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ սոցիալական ապահովման մարմինը՝ պետական բյուջեի հաշվին» / կետ. 16/: ՀՀ կառավարության 22.07.2004թ. թիվ 1094-Ն որոշմամբ կանոնների 16-րդ կետն ուժը կորցրած է ճանաչվել: Դրա փոխարեն գործում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1086-րդ հոդվածի 2-րդ կետը, ըստ որի «Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման դեպքում

համապատասխան վճարներն օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կանոններով կապիտալացվում են՝ դրանք տուժողին վճարելու համար»: Նման կապիտալացման մասին դրույթ ամրագրված է նաև «Անվճարունակության /սնանկության/ մասին» ՀՀ օրենքում:

Նախատեսվող վճարների կապիտալացման կանոններ որևէ օրենքով կամ այլ իրավական ակտով առայժմ սահմանված չեն և հարցը մնում է բաց:

Խնդիրը ներկայացվել է ՀՀ կառավարություն:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից Պաշտպանին տեղեկացվել է, որ իրենց կողմից նախապատրաստվում է «Աշխատանքի վայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» օրենքի նախագիծ, որով լուծում պետք է տրվի նաև այդ խնդրին:

7. Վիճահարույց է նաև «Առողջության քայքայմամբ պատճառված վնասը հատուցելու ծավալը և բնույթը» սահմանող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1078-րդ հոդվածի կիրառման պրակտիկան: Հոդվածի իմաստից հետևում է, որ քաղաքացուն հաշմություն կամ նրա առողջությանն այլ վնաս պատճառելու հետևանքով, աշխատունակության կորստի հետ կապված կորցրած աշխատավարձի դիմաց տրվող փոխհատուցումը պետք է լինի ցմահ: Սակայն առկա է փաստը, երբ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ նման փոխհատուցում ստացող քաղաքացու տարիքային կենսաթոշակի անցնելը դիտվել է որպես տրվող փոխհատուցումը դադարեցնելու հիմք:

8. ՀՀ կառավարութան ուշադրությունն է հրավիրվել այն հանգամանքներին, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, ըստ որի «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի /պատճենի/ տրամադրումն իրականացվում է ՀՀ կառավարության սահմանած կարգով», չի կատարված՝ կառավարությունը նման կարգ չի սահմանել, ինչն էլ օգտագործվում է տեղեղեկություններ տնօրինող մարմինների կողմից և մերժվում է տեղեկության տրամադրումն այն հիմնավորմամբ, որ կառավարությունը կարգ չի սահմանել :

ՀՀ արդարադատության նախարարությունից տեղեկացրել են, որ իրենց կողմից մշակված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծը ՀՀ Ազգային ժողովի կողմից չի ընդունվել:

Հարցն առայժմ մնում է բաց:

9. ՀՀ կառավարության ուշադրությունն է հրավիրվել «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի այն բացին, որը վերաբերում է 14-18 տարեկան երեխաների քաղաքացիության

որոշման հարցին այն դեպքերում, երբ նրանց փախստական ծնողները ձեռք են բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Պաշտպանի կողմից նախապատրաստվում է «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկ:

10. Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարմանը վերաբերող իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելու հարցով ՀՀ սահմանադրական դատարան դիմելով՝ Պաշտպանը նպատակ է հետապնդել հասնել օտարվող գույքի սեփականատերերի և դրանց նկատմամբ այլ գույքային իրավունքներ ունեցողների իրավունքների օրենքով առավելագույնս պաշտպանվածությանը, իրականացված գործընթացում խախտված իրավունքների վերականգնմանը:

«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկումների ընթացքում Պաշտպանի առաջնային պահանջն է եղել՝ նախագծում որոշակիացնել բացառիկ՝ գերակա հանրային շահի չափանիշները:

Պաշտպանն առարկել է նաև նախագծի սկզբնական տարբերակով «շահառու», իսկ այնուհետև՝ «ձեռք բերող» հասկացությունների ներմուծման, ինչպես նաև օտարվող սեփականության գնահատման նախատեսվող կարգի դեմ:

Պաշտպանի առաջարկներից որոշներն ընդունվել են, իսկ մյուսները չեն ընդունվել (տե՛ս, հավելված 7):

11. «Լոբբիստական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագծի կապակցությամբ Պաշտպանը կարծիք է հայտնել, որ այն պարունակում է մի շարք անորոշություններ և հակասություններ, որ այն նաև կարող է հանգեցնել քննարկվող հարցի վերաբերյալ կարծիք հայտնելու, իր կարծիքն ազատորեն տարածելու մարդու սահմանադրական իրավունքների հակաիրավական սահմանափակումների:

Օրենքի նախագիծն առայժմ շրջանառությունից հանված է:

12. «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման պետական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի նախագիծը մեր կողմից գնահատվել է որպես անկատար և ՀՀ Ազգային ժողովին ներկայացնելու համար անպատրաստ:

Այդ նախագիծը նույնպես հանվել է շրջանառությունից:

13. Անհամաձայնություն է հայտնվել նաև «Էթնիկ փոքրամասնությունների և այլ էթնիկ քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի նախագծի մի շարք էական դրույթների վերաբերյալ:

Նախագծի հեղինակները մասամբ համաձայնվել են ներկայացված առարկությունների հետ: Նախագիծը լրամշակվում է:

14. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն» ծրագրի կապակցությամբ մեր կողմից արվել են մի շարք խմբագրական առաջարկներ, որոնք հիմնականում ընդունվել են:

15. Պաշտպանի կողմից դրական կարծիք է հայտնվել «Հաշմանդամների մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ: Նախագիծը ներառված է ՀՀ Ազգային ժողովի օրակարգում:

16. Քննարկումների փուլում են ՀՀ դատական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերի նախագծերը, որոնց վերաբերյալ կներկայացվեն Պաշտպանի նկատառումները:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2 և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2 հոդվածներով նախատեսվել են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հետևյալ լրացուցիչ պայմանները՝

ա) վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար,

բ) ստորադաս դատարանի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի խախտման արդյունքում հնարավոր դատական սխալը կարող է առաջացնել ծանր հետևանքներ:

Պաշտպանի կարծիքով, այս նորմերը չեն համապատասխանում իրավական որոշակիության պահանջներին, քանի որ «էական նշանակություն» և «ծանր հետևանքներ» հասկացությունները մշտապես կարող են կիրառվել սուբյեկտիվ գնահատականներով: Այնուամենայնիվ խնդիրը ոչ այնքան իրավական ձևակերպումների մեջ է, որքան իրավակիրառ պրակտիկայի, որն ընթացել է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու պայմանների առավել խստացման ուղղությամբ, ինչի վկայությունն են ստացված մեկ տասյակից ավելի բողոքները: Քանի որ իրավակիրառ պրակտիկան այդպիսին է, կարիք կա օրենքի առավել հստակեցման:

Պաշտպանի կողմից ընդունվել է ի գիտություն, որ այդ իրավական նորմերի սահմանադրականությունն որոշելու հարցով ՀՀ գլխավոր դատախազը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան:

18. Քննարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված այն սկզբունքը, որով թույլատրվում է հեռախոսային խոսակցությունների գաղտնալսում առանց դատարանի որոշման՝ եթե կողմերից մեկը գաղտնալսման համաձայնություն է տվել: Պաշտպանի նախնական կարծիքն այն է, որ այդ սկզբունքը հակասում է ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասին: Խոսքն այն մասին է, որ հեռախոսային խոսակցությանը մասնակցող կողմերից մեկի համաձայնության առկայության դեպքում, անտեսվում է մյուս մասնակցի իրավունքը:

19. Քրեական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածներ, որոնք վերաբերում են տուժողի և քաղաքացիական հայցվորի իրավունքներին, նույնպես քննարկվում են՝ դրանցում համապատասխան լրացումներ կատարելու մասին առաջարկ ներկայացնելու նպատակով:

### 1.4. Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի զարգացում

Հասարակայնության հետ կապերի զարգացման հիմնական ուղին՝ Պաշտպանի սերտ համագործակցությունն է զանգվածային լրատվամիջոցների հետ: Այս ոլորտում կառուցողական երկխոսության հասնելն անհրաժեշտ է մի շարք պատճառներով: Առաջին՝ հենց զանգվածային հաղորդակցության միջոցներն են ձևավորում որոշակի պատկերացում հանրային մարմինների, ինչպես նաև Պաշտպանի գործունեության մասին: Երկրորդ՝ զանգվածային հաղորդակցության միջոցները, տեղեկատվություն տարածելով մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների վիճակի մասին, որոշակի ներգործություն են ունենում անձի իրավագիտակցության ձևավորման վրա: Արդյունավետ համագործակցության հաստատումը կարող է նպաստել Պաշտպանի գործունեության լայն քարոզչությանը:

2006 թ. ընթացքում Պաշտպանն ապահովել է հասարակայնության հետ կապերի ամրապնդմանն ուղղված գործունեության իրականացումը հետևյալ ուղղություններով՝

1. հայաստանյան և արտերկրյա ԶԼՄ–ներում տեղ գտած մարդու իրավունքներին վերաբերող նյութերի ամենօրյա մոնիտորինգ,

2. Պաշտպանի գործունեությանը վերաբերող տեղեկատվական նյութերի, հաղորդագրությունների, հայտարարությունների պատրաստում և տարածում,

3. մամուլի ասուլիսների, Պաշտպանի և նրա աշխատակազմի աշխատակիցների հետ հարցազրույցների կազմակերպում,

4. մարդու իրավունքների հանրային իրազեկության և բնակչության իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն ուղղված գործունեություն,

5. Պաշտպանի գործունեությունը լուսաբանող, ինչպես նաև հայաստանյան և արտերկրյա մամուլում մարդու իրավունքներին առնչվող հրապարակումների հավաքագրում և արխիվավարում,

6. Պաշտպանի կայքէջի վարում,

7. վիճակագրական տվյալների պատրաստում և տարածում:

**1. Հայաստանյան և արտերկրյա ԶԼՄ–ներում տեղ գտած մարդու իրավունքներին վերաբերող նյութերի ամենօրյա մոնիտորինգը:**

2006թ. ընթացքում տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի զարգացմանն ուղղված գործունեության նպատակներից մեկը եղել է հայաստանյան և արտերկրյա մամուլում ու տարբեր իրավապաշտպան կազմակերպությունների զեկույցներում տեղ գտած, հասարակական հնչեղություն ունեցող, ինչպես նաև Պաշտպանի լիազորությունների տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության ուսումնասիրությունը, դրա հավաստիության ստուգումը և վերլուծությունը: Այս նպատակի իրագործմանն ուղղված գործունեությունը Պաշտպանին և նրա աշխատակազմին հնարավորություն է տալիս մշտապես իրազեկված լինել ինչպես հայաստանյան, այնպես էլ արտերկրյա մամուլում հրապարակված նորություններին, նշանակալից իրադարձություններին և այլ երկրների Օմբուդսմանների և միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների հայտարարություններին: Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև հետխորհրդային բոլոր այն պետությունների համար, որոնք գտնվում են ժողովրդավարական և իրավական պետության կայացման փուլում, շատ կարևոր է արդեն կայացած ժողովրդավարական պետությունների ԶԼՄ-ներում և էլեկտրոնային մամուլում լուսաբանվող իրավապաշտպանական պրակտիկայի, իրավապաշտպան կազմակերպությունների փորձի և հասարական հնչեղություն ունեցող դեպքերի ուսումնասիրությունը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը տարածաշրջանի ամենաերիտասարդ հաստատությունն է. առաջին Պաշտպանը նշանակվել է 2004-ի մարտի 1-ին, իսկ առաջին խորհրդարանական Պաշտպանն ընտրվել է 2006թ. փետրվարի 17-ին: Արտերկրների Օմբուդսմանների և միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների կայքէջերում և էլեկտրոնային ԶԼՄ-ներում տեղ գտած նյութերի վերլուծությունը հնարավորություն է ընձեռում իրազեկված լինելու մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին: Հայաստանյան ԶԼՄ-ների տեղեկատվական նյութերի հավաստիության ստուգման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ ԶԼՄ-ներում հաճախ իրականությանը չհամապատասխանող կամ ոչ ճշգրիտ տվյալներ պարունակող հրապարակումներ են լինում: 2006 թ. ընթացքում ստացված հավաստի նյութերի վերլուծության արդյունքները կամ Պաշտպանի հնարավոր միջամտության կարիք ունեցող տեղեկությունները գտնվել են նրա ուշադրության կենտրոնում: Պաշտպանը «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի դրույթների համաձայն արագ արձագանքել է այն հրապարակումներին, որոնք, կարիք են ունեցել պարզաբանումների կամ հերքման:

Լրատվամիջոցների հրապարակումների ամենօրյա մոնիտորինգի արդյունքում ստեղծվել է մարդու իրավունքներին վերաբերող նյութերի արխիվ, որը դասակարգված է ըստ ոլորտների: Պաշտպանի և նրա հաստատության գործունեությանը վերաբերող տպագիր

մամուլում եղել է 481 հրապարակում, էլեկտրոնային տարբերակով ներկայացվել են ամփոփ հաղորդագրություններ, հեռարձակվել են մոտ 40 հեռուստատեսային ու ռադիոռեպորտաժներ, հարցազրույցներ:

**2. Պաշտպանի գործունեությանը վերաբերող տեղեկատվական նյութերի, մամուլի հաղորդագրությունների, հայտարարությունների պատրաստումը և տարածումը:**

Պաշտպանի հաստատության գործունեության թափանցիկությունն ապահովելու նպատակով հավաքվել, մշակվել և տարածվել է Պաշտպանի հանդիպումների, այցելությունների, ինչպես նաև վարույթում գտնվող գործերի վերաբերյալ տեղեկատվության: Առանձնակի կարևորություն կամ հասարակական հնչեղություն ունեցող գործերի վերաբերյալ տեղեկատվական նյութեր տարածելու նպատակով, 2006 թ. ընթացքում Պաշտպանի կայքէջի «Գործ համար» բաժնում տեղադրվել է մոտ 35, «Նորություններ» բաժնում` մոտ 55 տեղեկատվություն, տարածվել է 40-ից ավելի մամուլի հաղորդագրություն, ինչպես նաև բազմաթիվ հարցերի պարզաբանումներ, նյութեր են տրամադրվել լրագրողներին:

2006թ. ընթացքում հաճախակի են դարձել լրագրողների մասնագիտական գործունեության դեմ ոտնձգութենները: Տեղի ունեցածների վերլուծության և հավաստիության ստուգման արդյունքում Պաշտպանի հանձնարարությամբ տարածվել են հայտարարություններ, ուր Պաշտպանը խստորեն դատապարտել է նման արարքները: Մամուլի հաղորդագրությունների և հայտարարությունների զգալի մասը հեռարձակվել են հեռուստատեսության և ռադիոյի տարբեր /հիմնականում լրատվական/ հաղորդաշարերով:

Ստեղծվել է Պաշտպանի և նրա աշխատակազմի ֆոտոնյութերի արխիվ, որի նյութերով ուղեկցվում է տարածվող տեղեկատվությունը` այն դարձնելով առավել պատկերավոր:

**3. Մամուլի ասուլիսների, Պաշտպանի և նրա աշխատակազմի հետ հարցազրույցների կազմակերպումը:**

Պաշտպանի և նրա հաստատության թափանցիկությունը և հրապարակայնությունն ապահովելու լավագույն միջոցներից է մամուլի ասուլիսների կազմակերպումը, որտեղ լրագրողներին տրվում է իրենց հետաքրքրող հարցերը Պաշտպանին ուղղելու լրացուցիչ հնարավորություն: Պաշտպանի հաստատության գործունեությունը լուսաբանելու նպատակով 2006թ. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հրավիրել է մամուլի ասուլիսներ, որոնց ակտիվ մասնակցություն են ունեցել գրեթե բոլոր լրատվամիջոցները: Ասուլիսների ընթացքում լրագրողներին են տրամադրվել հաշվետու ժամանակահատվածի վիճակագրական տվյալներ և հետաքրքրություն ներկայացնող այլ նյութեր:

Ստացված տեղեկատվությունը և Պաշտպանի գնահատականները լուսաբանելու նպատակով աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի

խումբը Պաշտպանի հանձնարարությամբ ակտիվ մասնակցություն է ունենում Պաշտպանի և նրա աշխատակազմի՝ մարզեր, քրեակատարողական հիմնարկներ, հատուկ դպրոցներ, ծերանոցներ և այլ վայրեր կատարվող այցելություններին: Դրանց ընթացքում խումբը հանրային իրազեկման բարձրացման նպատակով տարածել է Պաշտպանի գործունեությանը վերաբերող տեղեկատվական նյութեր:

4. Մարդու իրավունքների հանրային իրազեկության և բնակչության իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն ուղղված գործունեությունը:

Մարդու իրավունքների հանրային իրազեկման և բնակչության իրավագիտակցության բարձրացման անհրաժեշտությունը պայմանավորված է մեր հասարակության գերակշիռ զանգվածի՝ իրենց իրավունքների ու հիմնարար ազատությունների չիմացությամբ և հանրային մարմինների առջև իրենց իրավունքների՝ օրենքով սահմանված կարգով պաշտպանության ցանկության բացակայությամբ: Այս երևույթը հանգեցնում է կոռուպցիոն դրսևորումների, լրացուցիչ հնարավորություն տալիս հանրային մարմնի ներկայացուցչին խախտել քաղաքացիների այն իրավունքները, որոնց ապահովման երաշխավորը հաճախ հանդիսանում է հենց նույն հանրային մարմինը կամ նրա ներկայացուցիչը: Մեր հասարակության այն զանգվածը, որն իր իրավունքների չիմացության պատճառով կամ դիտավորությամբ նախընտրում է անօրինական ճանապարհներով ապահովել իր իրավունքների պաշտպանությունը, զգալի վնաս է պատճառում և՛ մեր երկրի ժողովրդավարացմանը, և՛ իրավական պետության կայացմանը: Այս իմաստով Պաշտպանի կարևոր գործառույթներից է հասարակության՝ հնարավորինս մեծ զանգվածների իրազեկումը մարդու իրավունքներին ու հիմնարար ազատություններին, ինչպես նաև նրանց գերակայության կարևորության մասին:

2006թ. ընթացքում հասարակայնության հետ կապերի զարգացման նպատակով Պաշտպանի և նրա հաստատության վերաբերյալ ստեղծվել է հուշաթերթ, ուր հակիրճ տեղեկություններ են տրված Պաշտպանին դիմելու կարգի, իրավասության, աշխատակազմի և այլ հարցերի վերաբերյալ: Թարգմանվել /անգլերեն, ռուսերեն/ և հրապարակվել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը՝ փոփոխություններով:

Մշակվել է 2007թ. գործողությունների ծրագիր, որը նպատակաուղղված է լինելու երկրում բնակչության իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը:

Գործողությունների ծրագրի բաղկացուցիչ տարր է կազմել հասարակության այն շերտերի բացահայտումը, որտեղ առավել շատ են իրավունքների խախտումները՝ պայմանավորված իրավական գրագիտության ցածր մակարդակով և տարրական իրավունքների չիմացությամբ: Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքները օգտակար նյութ են հանդիսացել նշված հասարակական շերտերի /թիրախների/ բացահայտման համար:

Առավել ազդեցիկ, մեծ լսարան ունեցող, մեր օրերում հասարակական կարծիքի ձևավորման և քարոզչության համար անհրաժեշտ լրատվամիջոցը հանդիսանում է հեռուստատեսությունը: 2006թ. ընթացքում աշխատանքներ են տարվել հեռուստաընկերությունների հետ որոշակի պայմանավորվածություններ ձեռք բերելու ուղղությամբ : Մասնավարապես, նրանց առաջարկվել է համագործակցել հաղորդաշար, սոցիալական գովազդ /PSA/ և ֆիլմ ստեղծելու ուղղությամբ: Հաղորդաշարը նպատակ է ունենալու լուսանաբանել Պաշտպանի գործունեությունը՝ վարույթում գտնվող գործերին առնչվող խնդիրները, օրենսդրության թերությունները և հնարավոր բարեփոխումները, դրական արդյունքները՝ Պաշտպանին դիմած քաղաքացիների և կազմակերպությունների մասնակցությամբ:

Սոցիալական տեսահոլովակները կարող են լինել Պաշտպանին կամ դատական ատյաններին դիմելու կարգի, Պաշտպանի հաստատության և որոշակի իրավունքների մասին:

Պաշտպանի հաստատությանը վերաբերող տեղեկատվական- բացատրական կամ գովազդային-քարոզչական ֆիլմը նույնպես մեծ նշանակություն կունենա հանրային իրազեկության բարձրացման համար:

Աշխատանքներ են տարվել նաև Պաշտպանի հաստատության գործունեությունը լուսաբանող պարբերական հիմնադրելու ուղղությամբ:

Երկլեզվյա թարգմանությամբ տպագրվել և տարածվել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը: Սակայն անհրաժեշտ է վերը նշված, ինչպես նաև այլ օրենքները տպագրել համապատասխան լսարանների-թիրախների համար մատչելի մեկնաբանություններով, հասարակության տարբեր խավերի համար: Նշված խոցելի խմբերին վերաբերող մատչելի օրենսդրական համապատասխան նյութերի ստեղծումը և տարածումը նույնպես կարող է նշանակալի ավանդ ունենալ իրավական գրագիտության մակարդակի բարձրացման համար:

Հրապարակային ցուցանակների տեղադրումը նույնպես կարևոր նշանակություն ունի: Դրանք կարող են տեղադրվել հասարակական վայրերում և սահմանակետերում: Ցուցանակի տեղեկատվությունը կարող է լինել քարոզչական-գովազդային բնույթի (կնշվեն Պաշտպանի հաստատության հասցեն, հեռախոսահամարը և Պաշտպանի կարգախոսը): Ցուցանակները, ինչպես նաև հրապարակվող օրացույցները՝ Պաշտպանի հաստատության ինքնությունը խորհրդանշող գույներով և կարգախոսով, կարող են տարածվել պետական կառավարման հաստատություններում /քրեակատարողական հիմնարկներ, ոստիկանություն և այլն/: 2006թ. ընթացքում աշխատանքներ են տարվել նաև այս ուղղությամբ:

5. Պաշտպանի գործունեությունը լուսաբանող, ինչպես նաև հայաստանյան և արտերկրի մամուլում մարդու իրավունքներին առնչվող հրապարակումների տվյալների բազայի ստեղծումը և արխիվավարումը:

2006 թ. ընթացքում աշխատանքներ են տարվել նաև Պաշտպանի գործունեությունը լուսաբանող, ինչպես նաև հայաստանյան և արտերկրի մամուլում մարդու իրավունքներին առնչվող հրապարակումների տվյալների բազայի ստեղծման ուղղությամբ:

6. Պաշտպանի կայքէջի վարումը:

Հասարակայնության հետ կապերի զարգացմանն ուղղված գործունեության մաս է կազմում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքի վարումը: Հաշվի առնելով այն, որ էլեկտրոնային համացանցը մեծ ազդեցություն ունի Հայաստանում, խիստ կարևորվել է Պաշտպանի հաստատության գործունեության վերաբերյալ տեղեկատվության տեղադրումը կայքում և տարածումը էլեկտրոնային տարբերակով:

2006 թ. ընթացքում կայքի «Նորություններ» էջը թարմացվել է գրեթե ամեն օր, տեղադրվել են Պաշտպանի գործունեությանը վերաբերող տեղեկատվություն՝ քաղաքացիների շնորհակալագրերը, հաղորդագրություններ՝ հանդիպումների, այցելությունների, հասարակական հնչեղություն ունեցող հարցերի, դրական արդյունքների վերաբերյալ: Կայքի «Հայտարարություններ» էջում տեղադրվել են Պաշտպանի կողմից արված հայտարարությունները:

«Հաճախ տրվող հարցեր» էջում ընթերցողին հնարավորություն է ընձեռված ստանալ Պաշտպանի և հաստատության լիազորությունների, Պաշտպանին դիմելու կարգի և նման այլ հարցերով ամբողջական ու մատչելի տեղեկատվություն: Մանրամասն նկարագրված է թե ով, երբ, ինչպես և ինչ հարցերի շուրջ կարող է դիմել Պաշտպանին, ինչ որոշումներ է ընդունում Պաշտպանը, ինչպես կարելի է հանդիպել Պաշտպանին և այլն: Պաշտպանի վարույթում գտնվող գործերը կայքում տեղադրելը /ապահովելով դիմումատուների գաղտնիությունը/ տեղեկատվության կարևոր աղբյուր է հանդիսանում ոլորտը լուսաբանող լրագրողների համար, և նպաստել է նաև լրագրողական գործունեության իրականացմանը: Գործերով հետաքրքրվող լրագրողներին տրամադրվել է լրացուցիչ տեղեկատվություն:

Կայքում տեղադրվել են նաև մարդու իրավունքներին վերաբերող գիտաժողովների ու քննարկումների ընթացքում հնչած Պաշտպանի ելույթները:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կայքէջը ներկայացվել է տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի կողմից կազմակերպված Էլ. բովանդակության երկրորդ համահայկական մրցույթին: Մրցույթին մասնակցել են հանրապետության հասարակական կյանքի տարբեր ոլորտներ ներկայացնող ավելի քան 400 կայքէջեր: Պաշտպանին կայքէջին շնորհվել է 2006թ. գլխավոր մրցանակ: Հայտագրված աշխատանքները գնահատվել են հետևյալ չափանիշներով.

- բովանդակության որակն ու սպառիչ լինելը,
- օգտագործման դյուրինությունն ու մատչելիությունը,
- ռազմավարական կարևորությունը Հայաստանում տեղեկատվական հասարակության գոյացման համար:

## 1.5. Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն

Այսօր Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության ոչ դատական հաստատությունների համակարգը, որն ընդգրկում է նաև իրավապաշտպան կազմակերպությունները և Պաշտպանի ինստիտուտը, չունի ներքին փոխհամագործակցության հստակ կանոնակարգված կառուցակարգեր:

Պաշտպանի և ոչ կառավարական իրավապաշտպան կազմակերպությունների միջև փոխհամագործակցության հարաբերությունները կարգավորված չեն նաև «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում: Միակ բացառությունը, թերևս, Օրենքի՝ Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր գործող Փորձագիտական խորհրդի մասին դրույթներն են:

Պաշտպանի ինստիտուտի գործունեության հենց սկզբից նրա և ոչ կառավարական իրավապաշտպան կազմակերպությունների միջև փոխհամագործակցության ձևերից մեկը դարձավ Պաշտպանին կից գործող Փորձագիտական խորհրդի աշխատանքը, որի կազմում ընդգրկվեցին նաև իրավապաշտպան կազմակերպությունների ներկայացուցիչները: Խորհրդի գործունեությունն ուղղված է քաղաքացիների խախտված իրավունքների վերականգնման գործում հանդիպող բարդ խնդիրների լուծմանը, օրենսդրության կատարելագործմանը, մարդու իրավունքների և իրավական լուսաբանման բնագավառում միջազգային կապերի զարգացմանը:

Միաժամանակ, հենց հասարակական կազմակերպությունները, քաղաքացիներին ցուցաբերելով իրավական աջակցություն, ամենաշատ հնարավորությունն ունեն գնահատելու օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի անկատարությունը, քանի որ հաճախ նոր օրենսդրական ակտի ընդունումը կամ իրավակիրառ պրակտիկայի ձևավորումը հանգեցնում է պաշտպանության կարիք ունեցող քաղաքացիների հոսքի ավելացմանը: Սակայն հասարակական կազմակերպություններն օժտված չեն պետական իշխանական լիազորություններով, որոնք անհրաժեշտ են իրենց իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար դիմած քաղաքացիներին գործուն աջակցություն ցուցաբերելու համար: Հասարակական կազմակերպություններն օժտված չեն նաև օրենսդրական նախաձեռնության իրավունքով, որը հնարավորություն է տալիս ներազդել իրավաստեղծ

գործընթացի վրա, մարդու իրավունքների բնագավառում նախաձեռնել օրենսդրական բարեփոխումներ, վերացնել օրենսդրության բացերն ու հակասությունները:

Հաշվի առնելով նշված հանգամանքները, ինչպես նաև Հայաստանում հանրային մարմինների և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցության զարգացման միտումը՝ իր գործունեության հենց սկզբից Պաշտպանն իր ջանքերն ուղղել է հասարակական կազմակերպությունների հետ փոխհամագործակցության հաստատմանը:

2006 թ. ընթացքում այդ փոխհամագործակցությունն իրականացվել է այդ թվում նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ մարդու իրավունքների պաշտպանության հրատապ խնդիրների շուրջ պարբերաբար խորհրդատվություններ անցկացնելու և տեղեկատվական-լուսավորական աշխատանքներ ծավալելու միջոցով:

Մշակվել են նաև համատեղ միջոցառումներ՝ մարդու իրավունքների պաշտպանության իրավիճակի նկատմամբ վերահսկողության իրականացման, քաղաքացիների և ոչ կառավարական կազմակերպությունների իրավական մշակույթի բարձրացման, օրենսդրության կատարելագործման, համապատասխան առաջարկությունների մշակման և դրանք խորհրդարանի նստաշրջաններին ներկայացնելու ուղղությամբ:

2006 թ. ընթացքում Պաշտպանի կողմից ծավալվեց ակտիվ համագործակցություն ոչ կառավարական կազմակերպությունների հետ՝ մարդու իրավունքների բնագավառում տիրող իրավիճակի մոնիտորինգ անցկացնելու խնդրով: Մոնիտորինգի նպատակն էր ստանալ անկողմնակալ և ստույգ տեղեկատվություն՝ մարդու իրավունքների առավել հաճախ հանդիպող և կոպիտ խախտումների մասին:

Մշակվել է «Ոչ կառավարական կազմակերպությունների հետ Պաշտպանի փոխհարաբերությունների հայեցակարգ»-ը, որը նախատեսում է հանրապետությունում մարդու իրավունքների պահպանության և պաշտպանության իրավիճակի համատեղ մոնիտորինգ: Հայեցակարգը, օրինակ, թույլ տվեց անցկացնել միջոցառումներ, որոնց շրջանակներում ապահովվեց համապատասխան ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի մշակման գործընթացներին, անցկացվեց միջազգային համաժողով «Մարդու իրավունքների բիոէթիկական ասպեկտները կրթական համակարգում» թեմայով:

2006թ. կանոնավոր բնույթ ստացան Պաշտպանի և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համատեղ այցելությունները մարզեր: Այցելությունների ընթացքում Պաշտպանը և իրավապաշտպան շարժման ղեկավարները համատեղ ծանոթացել են մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում հանրային

մարմինների գործունեության հետ: Համագործակցության արդյունքում հայտնաբերվել են քաղաքացիների իրավունքների խախտումների փաստեր:

Կանոնավոր բնույթ է կրել «կլոր սեղանների» անցկացումը ոչ կառավարական կազմակերպությունների ղեկավարների հետ՝ Հայաստանում մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության հրատապ խնդիրների շուրջ:

2006թ. ընթացքում Պաշտպանը և նրա ներկայացուցիչները այցելել են տարբեր հասարակական կազմակերպությունների գրասենյակներ: Բոլոր հանդիպումներն առավելագույնս ուղղված են եղել քաղաքացիների իրավունքների պաշտպանության հարցերի քննարկմանը:

Նշանավոր իրադարձություն էր նաև 2006թ. դեկտեմբերի 10-ին Երևանում անցկացված՝ մարդու իրավունքների միջազգային օրվան նվիրված գիտաժողովը, որի անցկացման նախաձեռնողը Մարդու իրավունքների պաշտպանն էր:

Պաշտպանի կողմից ոչ կառավարական իրավապաշտպան կազմակերպությունների հետ կառուցողական երկխոսության ապահովման դեռևս առաջին քայլերն են արված: Առաջիկայում մեծ և լուրջ աշխատանք է սպասվում փոխգործունեության գործուն կառուցակարգեր մշակելու ուղղությամբ:

Նման փոխգործունեության նպատակը պետք է դառնա հասարակական նշանակություն ունեցող արդյունքների նվաճման փորձի փոխանակումը, Պաշտպանին՝ հասարակական կազմակերպությունների կողմից օգնության ցուցաբերումը՝ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների խախտման մոնիտորինգի իրականացման համար: Համագործակցության արդյունքում Պաշտպանը, հիմնվելով հասարակական կազմակերպությունների ներկայացրած տվյալների վրա, հնարավորություն կստանա նաև գնահատել մարզերում իրավունքների պահպանության և պաշտպանության վիճակը:

## 1.6. Միջազգային համագործակցություն

Պաշտպանի գործունեության հիմնական ուղղություններից է մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում միջազգային կազմակերպությունների, հաստատությունների, դրանց հայաստանյան ներկայացուցչությունների և Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի համագործակցության զարգացումը:

Միջազգային համագործակցությունը հնարավորություն է ընձեռում ծանոթանալու մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում միջազգային կազմակերպությունների գործունեությանը, տիրապետելու օմբուդսմանների գործունեության միջազգային փորձին, օգտագործելու միջազգային փորձագետների գիտելիքներն ու հմտությունները Պաշտպանի ինստիտուտի գործունեության կատարելագործման գործում: Այս ոլորտում ՀՀ մարդու

իրավունքների պաշտպանի հաստատության նպատակների իրականացման եղանակներն են.

- մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուտների միջազգային համակարգերին ինտեգրվելը,
- մարդու իրավունքների գծով միջազգային կազմակերպությունների, դրանց հայաստանյան ներկայացուցչությունների հետ Պաշտպանի աշխատակազմի կապերի հաստատումը և զարգացումը, այլ երկրներում գործող նմանատիպ կառույցների հետ Պաշտպանի աշխատակազմի կապերի հաստատումն ու զարգացումը,
- մարդու իրավունքների գծով միջազգային կազմակերպությունների, հաստատությունների հետ համագործակցության զարգացումը՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործման նպատակով,
- համագործակցության ռազմավարության մշակումն ու իրականացումը,
- մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի խթանումը:

1. **Մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուտների միջազգային համակարգերին ինտեգրվելը:**

Պաշտպանի գործունեության առաջին իսկ օրվանից ակտիվ համագործակցություն է ծավալվել մարդու իրավունքների հարցերով միջազգային կազմակերպությունների, մարմինների և մարդու իրավունքների այլ ազգային հաստատությունների հետ: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը միջազգային նման կառույցների շարքում արդեն ունի լայն ճանաչում և իր հաստատուն տեղը:

Պաշտպանի հաստատությունն անդամակցել է միջազգային այնպիսի հեղինակավոր կազմակերպությունների, ինչպիսիք են՝ Օմբուդսմանների միջազգային ինստիտուտը և Օմբուդսմանների եվրոպական ինստիտուտը և հանդիսանում դրանց լիիրավ անդամը:

1.1. Հատկանշական է Մարդու իրավունքների պաշտպանության և խթանման ազգային հաստատությունների միջազգային կոորդինացիոն կոմիտեին (ICC) անդամակցելու փաստը: 2005թ. մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը հայտ է ներկայացրել այդ կազմակերպությանը անդամակցելու համար: Ի դեպ, այս կոմիտեին կարող են անդամակցել միայն այն հաստատությունները, որոնք համապատասխանում են Փարիզյան սկզբունքներին: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատության անդամակցության հարցը քննարկվել է 2006 թ. ապրիլին և հավատարմագրման ենթակոմիտեի կողմից որոշվել է հաստատությանը շնորհել A(R) կարգավիճակ: Առհասարակ, Կոմիտեի կողմից շնորհվում է հետևյալ չորս կարգավիճակներից որևէ մեկը՝

- A – համապատասխանություն Փարիզյան սկզբունքներին,

- A(R) – ռեզերվային հավատարմագրում, երբ A կարգավիճակի շնորհման համար պահանջվում են լրացուցիչ տեղեկություններ,
- B – դիտորդի կարգավիճակ, երբ հաստատությունը ոչ լրիվ է համապատասխանում Փարիզյան սկզբունքներին կամ որոշում կայացնելու համար չեն ներկայացվել բավարար տեղեկություններ,
- C – չի համապատասխանում Փարիզյան սկզբունքներին:

Հավատարմագրման կոմիտեի նիստը կայացավ 2006թ. հոկտեմբերին: Հաշվի առնելով Պաշտպանի ինստիտուտի հանրապետության տարածքում արդյունավետ գործունեություն ծավալելու հանգամանքը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատությանը որոշվեց շնորհել ոչ թե A(R), այլ A կարգավիճակ:

1.2. Մարդու իրավունքների գծով միջազգային կառույցները ևս ընդհանուր շահեր ունեն օմբուդսմանների ինստիտուտների կատարելագործման և զարգացման գործում: Այսպես, Ստրասբուրգում, Եվրոպայի խորհրդի շրջանակներում անցկացված «Աջակցություն Օմբուդսմանների գործունեությանը» խորագրով աշխատանքային հանդիպմանը, որին մասնակցում էին նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատության ներկայացուցիչները, քննարկվել են Եվրոպայի խորհրդի անդամ-պետությունների օմբուդսմանների կարգավիճակը, նրանց գործունեությանն աջակցելու անհրաժեշտ կառուցակարգերը, քննարկվել են օմբուդսմանների առջև ծառացած դժվարություններն ու մարտահրավերները:

**2. Մարդու իրավունքների գծով միջազգային կազմակերպությունների, դրանց հայաստանյան ներկայացուցչությունների հետ Պաշտպանի աշխատակազմի կապերի հաստատումը և զարգացումը:**

2.1. Հայաստանը՝ որպես Եվրոպայի խորհրդի անդամ, ներկայացված է նրա մարմիններում՝ Խորհրդարանական վեհաժողովում, Նախարարների կոմիտեում և մի շարք այլ կառույցներում: Բարեփոխումների իրականացման գործում Պաշտպանն առաջնային է համարում Եվրոպայի խորհրդի առջև ստանձնած ՀՀ պարտավորությունների կատարումը և ՄԱԿ-ի Գլխավոր Վեհաժողովի կողմից հաստատված՝ Ազգային հաստատությունների կարգավիճակին վերաբերող սկզբունքների /Փարիզյան սկզբունքներ/ իրականացման ապահովումը:

2006թ. Պաշտպանը շարունակել է համագործակցությունը Եվրոպայի խորհրդի և Եվրամիության, ինչպես նաև Եվրոպայում անվտանգության և համագործության կազմակերպության հետ:

2.2. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի, ինչպես նաև նրա աշխատակազմի ներկայացուցիչների կողմից 2006թ. հանդիպումներ են կազմակերպվել մարդու իրավունքների խթանման ու պաշտպանության գծով միջազգային կազմակերպությունների հետ, այդ թվում

նաև ՍԻԴԱ-ի /Միջազգային Զարգացման Համագործակցության Շվեդական գործակալություն/, ՄԱԶԾ-ի /Միավորված Ազգերի Զարգացման Ծրագիր/, Բրիտանական խորհրդի և այլ կազմակերպությունների ներկայացուցիչների, Հայաստանում հավատարմագրված դեսպանների հետ, որոնց ընթացքում քննարկվել են համագործակցության հնարավոր ուղղությունները, մասնավորապես տարածաշրջանային համագործակցության զարգացման, Հայաստանում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի լիարժեք կիրառման ապահովման, մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող օրենսդրության կատարելագործման, այն միջազգային իրավունքի աղբյուրներին համապատասխանեցնելու հիմնահարցերը:

2.3. 2006 թ. ընթացքում կայացած Պաշտպանի աշխատանքային հանդիպումները ԵԽԽՎ կանանց և տղամարդկանց իրավահավասարության հանձնաժողովի, Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխման եվրոպական կոմիտեի (CPT) պատվիրակության, Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի Եվրոպական հանձնաժողովի (ECRI) ներկայացուցիչների հետ, անհրաժեշտ նախապայմաններ ստեղծեցին այս կառույցների հետ Պաշտպանի հետագա արդյունավետ համագործակցության ապահովման համար: Պայմանավորվածություն է ձեռք բերվել տեղեկատվական և հանրային իրազեկումը բարձրացնելու նպատակով 2007 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համատեղ անցկացնել միջոցառումների շարք:

2.4. Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի Կամընտիր արձանագրության դրույթների լրամշակման հարցերով Լիսաբոնում կայացած միջազգային վեհաժողովի աշխատանքներին:

2.5. ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատության և մարդու իրավունքների գրասենյակի աջակցությամբ հիմքեր են ստեղծվել Լիտվայի Սեյմի և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի միջև համագործակցության համար: Պաշտպանի հանդիպումները Լիտվայի արդարադատության նախարարի, Օմբուդսմանի, նրա աշխատակազմի ղեկավարի և աշխատակիցների, Սեյմի խոսնակի, Սեյմի մարդու իրավունքների կոմիտեի անդամների հետ էապես նպաստեցին Հայաստանում և Լիտվայում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում կուտակված փորձի փոխանակմանը:

**3. Մարդու իրավունքների գծով միջազգային կազմակերպությունների, հաստատությունների հետ համագործակցության զարգացումը՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործման նպատակով:**

3.1. Միջազգային կազմակերպությունները ու հաստատությունները կադրերի վերապատրաստման գործում մեծ դերակատարում ունեն: Դրանք լուրջ ուշադրություն են դարձնում և աջակցում են Օմբուդսմանների ինստիտուտների ձևավորմանը: Օրինակ՝ Եվրոպայի խորհուրդն աջակցում է նման ինստիտուտներին ԵԽ մարդու իրավունքներին վերաբերող իրավական փաստաթղթերին, կազմակերպության աշխատանքներին, մարդու իրավունքների պաշտպանության ոչ դատական կառուցակարգերին, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործունեությանը ծանոթանալու գործում: Այս նպատակն էր հետապնդում նաև Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների գլխավոր վարչության կողմից կազմակերպված ուսումնական այցը, որին մասնակցում էին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատության ներկայացուցիչները:

Միջազգային կազմակերպությունների աջակցությունը, որպես կանոն, կրում է կազմակերպչական բնույթ: Օրինակ՝ ՄԱԶԾ գրասենյակը Բրատիսլավայում միջազգային հանդիպում էր կազմակերպել օմբուդսմանների հաստատությունների կողմից իրենց ռազմավարության զարգացման ծրագրերի մշակման, աշխատանքի արդյունավետության գնահատման, քաղաքացիական վերահսկողության բնագավառում հասարակական անվտանգությունն ապահովող մարմինների հետ օմբուդսմանների փոխհարաբերությունների հստակեցման հիմնահարցերի քննարկման նպատակով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն իր հերթին, գիտակցելով մարդու իրավունքների պաշտպանության կայացման գործում միջազգային փորձի ուսումնասիրման և օգտագործման կարևորությունը, ապահովել է հաստատության աշխատակիցների մասնակցությունը տարաբնույթ միջազգային հանդիպումներին, միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված դասընթացներին՝ նրանց մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացման, նոր հմտությունների ու գիտելիքների ձեռքբերման, փորձի փոխանակման նպատակներով:

Օրինակ՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի, մարդու իրավունքների դանիական և գերմանական ինստիտուտների կողմից Գերմանիայում կազմակերպված «Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների դերը պայմանագրային գործընթացներում» կլոր սեղանին մասնակցել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի պատվիրակությունը, ուր քննարկվել են մասնավորապես մարդու իրավունքների պաշտպանության ազգային և միջազգային կառուցակարգերի միջև առկա կապերը, այդ կառուցակարգերի նշանակությունն ու հեռանկարները և այլ հարցեր:

Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները մասնակցել են նաև Ավստրիայում անցկացված Միջազգային քաղաքացիական խաղաղապաշտպանության և խաղաղաշինության կենտրոնի կողմից կազմակերպված մարդու իրավունքների մասնագիտացված ուսումնական ծրագրին: Այդ ծրագիրն աշխատակազմի

աշխատակիցներին ոչ միայն իրազեկել է Ավստրիայի Դաշնային Հանրապետության Օմբուդսմանի խորհրդի գործունեության մասին, այլ նաև հնարավորություն է ընձեռել Պաշտպանի հաստատությանը ընդլայնելու միջազգային համագործակցության շրջանակները: Արդյունքում աստիճանաբար զարգանում են երկու երկրների հաստատությունների հարաբերությունները:

Փորձի փոխանակումը նպաստում է ոչ միայն հաստատության ու աշխատակազմի աշխատակիցների կարողությունների բարձրացմանը, այլև այլ ոլորտներում ձեռք բերված փորձի ու առաջարկների ներդրմանը: Որպես օրինակ կարող է ծառայել Պաշտպանի ներկայացուցչի մասնակցությունը Մոսկվայում կայացած ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական համակարգերի գործունեությանը նվիրված միջազգային խորհրդաժողովին:

2006թ. ընթացքում Պաշտպանի աշխատակազմը հյուրընկալել է Հավասար իրավունքների գծով Շվեդիայի Օմբուդսմանին, որը ժամանել էր Պաշտպանի գրասենյակի հետ համագործակցություն հաստատելու նպատակով:

Միջազգային համագործակցությունը կարելի է կայացած համարել այն դեպքում, երբ գործնական փոխհարաբերությունները ամրապնդվում են համատեղ գործունեության վերաբերյալ երկկողմ կամ բազմակողմ պայմանագրերի կնքմամբ: Մարդու իրավունքների Վոլենբերգյան ինստիտուտի նախաձեռնությամբ Շվեդիայից ժամանած պատվիրակության հետ քննարկումների արդյունքում կնքվել է հուշագիր, որով նախատեսվում է Պաշտպանի աշխատակազմի, Հայաստանի Հանրապետության իրավապաշտպան կազմակերպությունների, պետական և ոչ պետական հաստատությունների ներկայացուցիչների վերապատրաստման համար Վոլենբերգյան ինստիտուտի կողմից մեթոդական օգնության ցուցաբերում:

4. Համագործակցության ռազմավարության մշակումը և իրականացումը:

4.1. Ոլորտում գործող այլ գործընկերների հետ իր միջոցառումների ներդաշնակեցման և իրականացման համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանը իրականացնում է համագործակցության համապարփակ ռազմավարություն:

2006թ. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը համագործակցություն է ծավալել միջազգային կազմակերպությունների հետ մարդու իրավունքների հարգման սկզբունքի հիման վրա համատեղ ծրագրերի մշակման և իրականացման ուղղությամբ:

Զարգացման աջակցության առավելագույն արդյունավետությունն ապահովելու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանն աջակցություն է ցուցաբերել միջազգային համագործակցության ցանցի ձևավորման ուղղությամբ իրականացվող աշխատանքներին: Այս ցանցերն ապահովում են.

- կրկնություններից խուսափելու և փոխկապակցված գործունեություն ապահովելու համար անհրաժեշտ համակարգում,
- միջոցների արդյունավետ բաշխման և ծրագրի կայունությունն ապահովելու համար անհրաժեշտ համաֆինանսավորում,
- հայեցակարգային հարցերի վերաբերյալ իրազեկություն ապահովելու համար անհրաժեշտ քարոզչություն,
- լավագույն փորձի ձևավորում և բարձրորակ ու նպատակային ծրագրեր ապահովելու համար անհրաժեշտ գիտելիքների և փորձի ձեռքբերում:

4.2. Մարդու իրավունքների պաշտպանը նպաստում է համագործակցության ցանցի կայացմանը հետևյալ եղանակներով.

- հայեցակարգային հարցերի շուրջ քննարկումներին մասնակցելով,
- նորարար նախաձեռնություններ առաջարկելով և փորձի փոխանակում ապահովելով:

Առաջիկայում նախատեսվում է տարածաշրջանային հանդիպումներ կազմակերպել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առկա ընդհանուր խնդիրների առնչությամբ՝ օմբուդսմանների միջամտությամբ այդ խնդիրների կարգավորման նպատակով:

5. Մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի խթանումը:

5.1. Մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի խթանումը իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով.

- մարդու իրավունքների գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ նորարար և ճկուն մոտեցումների խրախուսում,
- մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ ուսումնական ծրագրերի մշակում,
- մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ կրթական համակարգի մասնագետների գիտելիքների ու հմտությունների զարգացում,
- Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների գիտելիքների և հմտությունների հետևողական կատարելագործում,
- քաղաքացիների՝ Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու պայմանների և կարգի վերաբերյալ իրազեկում:

5.2. Վերը նշված ուղղությունների իրականացման ձևերը բազմաթիվ և տարաբնույթ են: 2006թ. ընթացքում կազմակերպվել են մի շարք սեմինար-քննարկումներ ինչպես հասարակական կազմակերպությունների, պետական և ոչ պետական ինստիտուտների, այնպես էլ միջազգային կառույցների համար՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում իրազեկության բարձրացման նպատակով: Օրինակ՝ Պաշտպանի աշխատակազմը

բիոէթիկայի ազգային ինստիտուտի հետ համատեղ և ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության /ՅՈՒՆԵՍԿՕ/ մոսկովյան գրասենյակի աջակցությամբ կազմակերպել էր «Մարդու իրավունքների բիոէթիկական ասպեկտները կրթական համակարգում» խորագրով երկօրյա միջազգային համաժողով: Դրան մասնակցում էին Օմբուդսմանների ազգային ինստիտուտների և իրավապաշտպան կազմակերպությունների պատվիրակությունները, ինչպես նաև Վրաստանի, Բելառուսի, Մոլդովայի, Ռուսաստանի Դաշնության բիոէթիկայի ոլորտի փորձագետներն ու Հայաստանում գործող միջազգային կառույցների, պետական մարմինների ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Համաժողովի մասնակիցների կողմից ընդունված եզրափակիչ փաստաթուղթը դրական գնահատականի արժանացավ բիոէթիկայի մասնագիտացված հասարակական կազմակերպությունների, պետական և ոչ պետական կառույցների շրջանում:

Բարձր գնահատելով Երևանում անցկացված միջազգային համաժողովը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի մոսկովյան գրասենյակը սերտ համագործակցության ծրագիր է մշակել Պաշտպանի գրասենյակի հետ և իր 2007-2008թթ. ռազմավարական ծրագրերում նախատեսվում են մի շարք համատեղ միջոցառումներ, ինչպիսիք են՝ հանրային իրազեկումը, ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների բնագավառում միջազգային պայմանագրերի իմպլեմենտացման գործընթացների խրախուսումն ու խթանումը: Այս առնչությամբ ՅՈՒՆԵՍԿՕ-ի մոսկովյան գրասենյակի հետ հետագա համագործակցությունը քննարկելու նպատակով Պաշտպանը հրավիրվել էր ք. Մոսկվա: Այցի շրջանակներում տեղի ունեցավ Պաշտպանի պաշտոնական հանդիպումը նաև Ռուսաստանի Դաշնության Օմբուդսմանի՝ Վ. Լուկինի հետ: Այցելության ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանն ամրապնդեց հետագա համագործակցությունը ինչպես Ռուսաստանի Դաշնության Օմբուդսմանի հաստատության, այնպես էլ ՅՈՒՆԵՍԿՕ-ի գրասենյակի հետ:

5.3. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն ակտիվ մասնակցություն է ունեցել Ստամբուլում անցկացված «Օմբուդսմանի հաստատության դերը ժողովրդավարության ամրապնդման բնագավառում» Սևծովյան տնտեսական համագործակցության անդամ-պետությունների մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների խորհրդաժողովի աշխատանքներին:

5.4. Հիմք ընդունելով Հայաստանում մարդու իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքի, ժողովրդավարության և օրենքի գերակայության ամրապնդման ու խրախուսման գործընթացները և շարունակելով մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը խթանելու միջոցառումների շարքը՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը, համագործակցելով ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի և Հայաստանում Բրիտանական խորհրդի հետ, 2006թ. կազմակերպել է

«Մարդու իրավունքները և հայաստանյան իրողությունները» խորագրով սեմինար-քննարկում՝ նվիրված Մարդու իրավունքների միջազգային օրվան: Միջոցառման ընթացքում քննարկվել են մի շարք հրատապ խնդիրներ, ինչպիսիք են՝ «Անհատական դիմումները Սահմանադրական դատարանում», «Մարդու իրավունքները և կրթությունը», «Մարդու իրավունքների պաշտպանության քաղաքացիադատավարական երաշխիքները» և այլն: Այս քննարկումը սեմինարների շարքից մեկ օրինակ է, որով հիմնավորվեց, որ, առաջինը՝ օմբուդսմանի հաստատության մոդելն ունի ինքնատիպ կարգավիճակ, և որ այդ յուրահատկությունն ամրապնդում է ինչպես համագործակցությունը մարդու իրավունքների պաշտպանության հաստատությունների միջև, այնպես էլ փոխհարաբերությունը միջազգային կազմակերպությունների հետ, և երկրորդը՝ միջազգային հանրությունն իր պատրաստակամությունն է հայտնում աջակցելու ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեությանը:

5.5. 2006թ. ընթացքում միջազգային ինստիտուտների հետ համագործակցության շրջանակներում Պաշտպանի կողմից իրականացվել են նաև աշխատանքներ տարաբնույթ գիտագործնական հետազոտությունների իրականացման բնագավառում: Պաշտպանն ակտիվորեն մասնակցել է միջազգային կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների պաշտպանության առանձին հիմնահարցերի շուրջ դիրքորոշումների մշակմանն ու հանձնարարականների կազմմանը: Պաշտպանի ղեկավարության ներքո իրականացվել է մարդու իրավունքների պաշտպանության գծով մասնագիտացված դպրոցներում, զարգացած ժողովրդավարական երկրների մարդու իրավունքների պաշտպանության ազգային կառույցներում և միջազգային իրավապաշտպան հասարակական կազմակերպություններում մասնագիտական վերապատրաստման վերաբերյալ տեղեկատվության ուսումնասիրում և վերլուծություն: Վերլուծվել և գնահատվել են Հայաստանի վերաբերյալ միջազգային զեկույցները, բանաձևերը և այլ փաստաթղթեր:

## 1.7. Փորձագիտական խորհուրդ

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պաշտպանը, խորհրդատվական օգնություն ստանալու նպատակով, կարող է ստեղծել փորձագիտական խորհուրդներ՝ կազմված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ ունեցող անձանցից:

Պաշտպանի հրամանով 2006թ. ստեղծված Փորձագիտական խորհրդի կազմում ընդգրկվել են մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ և իրավապաշտպան գործունեության ու իրավագիտության բնագավառի աշխատանքի փորձ և հեղինակություն ունեցող անձիք՝ բարձրագույն

ուսումնական հաստատությունների դասախոսական կազմի, պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև լրատվամիջոցների ներկայացուցիչները:

Փորձագիտական խորհրդի կազմում ստեղծվել են ենթախորհուրդներ՝

ա) քաղաքացիական, սոցիալական, տնտեսական և մշակութային հարցերի,

բ) ազգային փոքրամասնությունների, փախստականների, կանանց և երեխաների իրավունքների, բնապահպանության, հասարակական կազմակերպությունների հարցերի,

գ) քրեական, քրեադատավարական և զինծառայողների իրավունքների հարցերի:

Փորձագիտական խորհրդի անդամները ներգրավված են կամավոր հիմունքներով և իրենց գործունեությունն իրականացնում են հասարակական կարգով /Օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մաս/:

Փորձագիտական խորհրդի խնդիրներն են՝

– Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանության և պահպանման վիճակի վերլուծությունը,

– մարդու իրավունքների և ազատությունների պահպանման հարցերով առանձին նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ եզրակացությունների պատրաստումը,

– մարդու իրավունքներին առնչվող օրենսդրության կատարելագործումը, դրա՝ ՀՀ Սահմանադրությանն ու միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխանեցմանն ուղղված առաջարկների ներկայացումը,

– հանրային մարմիններին՝ Պաշտպանի կողմից ներկայացվելիք առավել կարևոր առաջարկությունների և միջնորդությունների քննարկումը,

– Պաշտպանի տարեկան և հատուկ զեկույցների նախագծերում արտացոլվելիք նյութերի և փորձագիտական գնահատականների ներկայացումը, զեկույցների վերաբերյալ ստացված եզրակացությունների քննարկումը,

– մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների զանգվածային կամ կոպիտ խախտումների հետ կապված հիմնահարցերի իրավական փորձաքննության անցկացումը:

2006թ. ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր Փորձագիտական խորհուրդը քննարկել է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկությունները, ինչպես նաև լրատվամիջոցների պաշտպան ունենալու նպատակահարմարության հարցը:

Խորհուրդը քննարկել է «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի մեջ փոփոխություններ կատարելու հարցը:

Քննարկվել են «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» Կոնվենցիայի Կամընտիր արձանագրությանը Հայաստանի Հանրապետության միանալու հետ կապված հարցերը:

Փորձագիտական խորհրդի նիստերում քննարկվել են խոսքի ազատության ապահովման հիմնահարցերը, մասնավորապես «Ա1+» և «Նոյյան տապան» լրատվամիջոցների գործունեության դադարեցման հետ կապված, ազգային փոքրամասնություններին, ինչպես նաև Հայաստանում օրինաստեղծ գործունեությանը Փորձագիտական խորհրդի անդամների մասնակցության վերաբերյալ հարցերը:

Փորձագիտական խորհրդի անդամները քննարկել են նաև «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում 2006 թ. կատարված փոփոխությունները և լրացումները, ինչպես նաև քրեական և քրեական դատավարության, վարչական իրավախախտումների մասին օրենսգրքերում, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում Պաշտպանի կողմից առաջարկված լրացումները:

# ԲԱԺԻՆ 2.
# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Սույն բաժնում շեշտը առավելապես կդրվի մարդու իրավունքների խախտման պատճառ հանդիսացող օրենսդրական ակտերի վերլուծության վրա: Ինչպես հայտնի է, օրենսդրությունն ինքնին հաճախ կարող է հանդիսանալ մարդու իրավունքների խախտման հիմնական պատճառը: Օրենսդրական հակասությունները և բացթողումները, ինչպես նաև տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տվող օրենսդրական նորմերը պարարտ հող են հանդիսանում մարդու իրավունքների ոտնահարման համար:

Այս բաժնում կվերլուծվեն նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման, համապատասխան միջազգային կառույցների կողմից Հայաստանի Հանրապետության վերաբերյալ ներկայացված զեկույցների, դրանցով տրված գնահատականների և ներկայացված առաջարկությունների հետ կապված առանձին հարցեր և այլն:

## 2.1. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ

### 2.1.1. Աշխատանքի ընտրության ազատության իրավունք

*ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատություն:*

Աշխատանքի իրավունքն իր նորմատիվ բովանդակությամբ հաճախ թյուրիմացաբար նույնացվում է աշխատանքով ապահովված լինելու իրավունքի հետ:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ աշխատանքի իրավունքը ներառում է յուրաքանչյուրի՝ իր ապրուստն այնպիսի աշխատանքով վաստակելու հնարավորության իրավունքը, որը նա ազատորեն ընտրում է, կամ որին նա ազատորեն համաձայնում է: Իսկ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն աշխատանքի իրավունքի վերաբերյալ 24.11.2005թ. ընդունված թիվ 18 Ընդհանուր մեկնաբանությամբ հատկապես ընդգծել է, որ աշխատանքի իրավունքը չպետք է ընկալվի որպես աշխատանք ձեռք բերելու բացարձակ և անպայմանական իրավունք:

Հետևաբար, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրով ճանաչված աշխատանքի իրավունքը չի ենթադրում աշխատանք երաշխավորելու պետության պարտավորությունը: Փոխարենը, այն ենթադրում է մասնակից

պետությունների՝ լիակատար զբաղվածության ապահովման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու պարտավորությունը:

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրվել է յուրաքանչյուրի՝ աշխատանքի ընտրության ազատության իրավունքը: Սահմանվել է նաև յուրաքանչյուրի՝ արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, ինչպես նաև անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունքը: Հարկ է նշել, որ աշխատանքի իրավունքը և աշխատանքի ընտրության ազատության իրավունքը սույն զեկույցում իրենց նորմատիվ բովանդակությամբ նույնացվում են:

Դաշնագրի 6-րդ հոդվածի երկրորդ մասն ամրագրում է աշխատանքի իրավունքի ապահովման ուղղությամբ մասնակից պետությունների պարտավորությունները, այդ թվում՝ տեխնիկական և մասնագիտական ուսուցման ու վերապատրաստման ծրագրեր, տնտեսական, սոցիալական ու մշակութային անշեղ զարգացման և արտադրական լրիվ զբաղվածության ձեռքբերման ուղիներ ու մեթոդներ մշակելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելու պարտավորությունը՝ այնպիսի պայմաններում, որոնք երաշխավորում են մարդու քաղաքական և տնտեսական հիմնարար ազատությունները:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածով ընդհանուր առմամբ մասնակից պետությունների վրա պարտավորություն է դրվում ապահովելու անհատների համար ազատորեն ընտրված կամ համաձայնեցրած աշխատանքի իրավունք, այդ թվում՝ աշխատանքից անօրինական կերպով ազատված չլինելու իրավունք:

Վավերացնելով Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը՝ Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է նաև սահմանված ժամկետներում Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեին Դաշնագրի իմպլեմենտացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների մասին զեկույցներ ներկայացնելու պարտավորությունը: Հայաստանի Հանրապետության կողմից առաջին զեկույցը ներկայացվել է 1997-ին, իսկ երկրորդը, որի ներկայացման ժամկետը 2000 թվականին էր, մինչ օրս չի ներկայացվել:

Հայաստանի Հանրապետությունը զեկուցման պարտավորություններ է ստանձնել նաև Վերանայված եվրոպական սոցիալական խարտիային համապատասխան: Առաջին զեկույցը Սոցիալական իրավունքների Եվրոպական կոմիտե ներկայացվեց 2006թ. նոյեմբերին, որի վերաբերյալ Կոմիտեի կողմից դեռևս եզրափակիչ հետևություններ չեն ներկայացվել:

Հարկ ենք համարում հակիրճ անդրադառնալ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի որոշ դրույթների մեկնաբանությանը: Խարտիայի 4-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսվում է բոլոր աշխատողների՝ աշխատանքից ազատվելու վերաբերյալ

ողջամիտ ժամկետում ծանուցում ստանալու իրավունքը: Ի դեպ այս դրույթը չպետք է մեկնաբանվի որպես լուրջ իրավախախտումների կատարման դեպքում՝ աշխատանքից անմիջապես ազատելու արգելք[2]:

Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի մեկնաբանության համաձայն՝ Խարտիայի 4-րդ հոդվածի 4-րդ կետը վերաբերում է ոչ միայն աշխատանքից ազատելու դեպքերին, այլև աշխատանքային հարաբերությունների դադարման բոլոր դեպքերին, ինչպես օրինակ, աշխատանքային հարաբերությունների դադարեցում գործատուի սնանկության, մահվան դեպքերում և այլն:

Անդրադառնալով ՀՀ աշխատանքային օրենսգրքին՝ նշենք, որ այն առանց ծանուցման աշխատանքային պայմանագիրը լուծելու հնարավորություն է նախատեսում նաև հետևյալ դեպքերում. **գործատուի սնանկ ճանաչվելու, աշխատողի կողմից իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքերում:**

Ակնհայտ է, որ առանց ծանուցման աշխատանքային պայմանագիրը լուծելու վերոնշյալ հիմքերից ոչ բոլորն են պայմանավորված լուրջ իրավախախտումների կատարման հետ: Հետևաբար, հարկ է վերանայել նշված հիմքերը՝ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 4-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներին դրանց համապատասխանությունն ապահովելու նպատակով:

Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն չի սահմանել «ողջամիտ ծանուցում» հասկացությունը: Հիմնական չափանիշը, որը օգտագործվում է Կոմիտեի կողմից ծանուցման ժամկետի «ողջամտությունը» գնահատելիս, դա աշխատանքի ժամանակահատվածի տևականությունն է:

Օրինակ՝ մեկշաբաթյա ծանուցումն աշխատանքի առաջին տարվա ընթացքում, երեսնօրյա ծանուցումն առնվազն հնգամյա աշխատանքից հետո, ութշաբաթյա ծանուցումը 15 տարուց ավելի աշխատանքի դեպքում, Կոմիտեի կողմից դիտվել են որպես Խարտիայի պահանջներին չհամապատասխանող:

ՀՀ աշխատանքային օրենսգիրքը աշխատանքային պայմանագրի լուծման տարբեր դեպքերի համար նախատեսում է ծանուցման տարբեր ժամկետներ, այդ թվում՝ տասնօրյա, երկշաբաթյա, երկամսյա և վերջապես առանց ծանուցման աշխատանքային պայմանագրի լուծման հնարավորություն՝ չպայմանավորելով դրանք անձի աշխատած ժամանակահատվածի հետ:

Խարտիայի 2-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ աշխատանքի արդար պայմանների իրավունքի արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են վերացնել վտանգները հատկապես անառողջ և վտանգավոր

[2] Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի հավելված

աշխատանքներում, իսկ որտեղ դեռևս հնարավոր չէ վերացնել կամ զգալիորեն նվազեցնել այս վտանգները, ապահովել աշխատանքային ժամերի կրճատում կամ սահմանել լրացուցիչ վճարովի արձակուրդներ այդ աշխատանքներում ներգրավված աշխատողների համար:

Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեին ներկայացված Հայաստանի Հանրապետության զեկույցով նկարագրվել են նշված պահանջների ապահովման նպատակով ձեռնարկված միջոցառումները: Մասնավորապես ներկայացվել են աշխատողների անվտանգությանը և առողջությանը վերաբերող՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 23-րդ գլխով սահմանված պահանջները, գործատուի պարտականությունները՝ աշխատանքի առողջ և անվտանգ պայմանների ապահովման բնագավառում:

Այնուամենայնիվ, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ «ՀՀ աշխատանքային օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքի առողջ և անվտանգ պայմանների ապահովմանն ուղղված գործատուի մի շարք պարտականությունների կատարման համար սահմանվել է եռամյա ժամկետ՝ օրենսգրքի գործողության մեջ դնելու պահից սկսած: Մասնավորապես, գործատուն պարտավոր է օրենսգիրքը գործողության մեջ դնելուց հետո երեք տարվա ընթացքում ապահովել օրենսգրքի 208-րդ հոդվածի 1-ին մասի, 243-րդ, 245-րդ, 249-255-րդ հոդվածների պահանջների կատարումը:

Նշված հոդվածները վերաբերում են գործատուի կողմից առանձին աշխատողների պարտադիր բժշկական զննության ապահովման, աշխատողների համար սանիտարահիգիենիկ սենյակների ապահովման, աշխատողներին պաշտպանության միջոցներով ապահովելու, պատշաճ, անվտանգ և առողջության համար անվնաս պայմանների ստեղծման և գործատուի այլ պարտականություններին:

ՀՀ աշխատանքային օրենսգիրքն ուժի մեջ է մտել 2005թ. հունիսի 21-ից, հետևաբար աշխատանքի առողջ և անվտանգ պայմանների վերաբերյալ վերը նշված պահանջների կատարումը գործատուների կողմից կարող է չապահովվել ընդհուպ մինչև 2008թ. հունիսի 21-ը: Կարծում ենք, որ «ՀՀ աշխատանքային օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված վերոնշյալ դրույթը վիճահարույց է Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի պահանջների ապահովման տեսանկյունից:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատության գործունեության պրակտիկան ցույց է տվել նաև, որ շատ դեպքերում գործատուն աշխատողին ազատում է աշխատանքից, երբ լրանում է նրա տարիքային կենսաթոշակի նշանակման համար՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված տարիքը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն՝ գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու հիմք կարող է հանդիսանալ աշխատողի կենսաթոշակային տարիքի լրանալը (113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ): Պետք է նշել, որ

այստեղ խոսքը գնում է ոչ թե տարիքային, այլ ծերության կենսաթոշակի տարիքի (65տ.) հասնելու մասին:

Նշված հետևության համար հիմք է հանդիսանում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը, որի համաձայն՝ աշխատանքային պայմանագրի լուծման օրինական պատճառ չի կարող համարվել տարիքը, բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատողը ձեռք է բերել ծերության կենսաթոշակ ստանալու իրավունք կամ ստանում է այդ կենսաթոշակը: Հետևաբար, անհրաժեշտություն կա վերանայելու ՀՀ աշխ. օր.-ի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը՝ սահմանված «կենսաթոշակային տարիք» հասկացությունը հստակեցնելու նպատակով:

2006թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ստացել է աշխատանքային իրավունքներին առնչվող 63 բողոք:

Դրանք առավելապես վերաբերել են գործատուների կողմից աշխատողների հետ վերջնահաշվարկ չկատարելու և վերջնահաշվարկի գումարը չվճարելու, աշխատանքից ազատման մասին պատշաճ ձևով չծանուցելու և ազատման հիմքերի մասին տեղյակ չպահելու, օրենքով սահմանված պահանջների խախտմամբ աշխատանքից ազատելու հետ և այլն:

### 2.1.2. Կրթության իրավունք

*ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք:*

Կրթությունը հանդիսանում է մարդու քաղաքացիական և քաղաքական իրավունքների, ինչպես նաև սոցիալ-տնտեսական իրավունքների իրականացման նախապայման: Կրթության իրավունքն ենթադրում է պետության պարտավորությունն ապահովելու այն յուրաքանչյուրի համար և վերացնելու գոյություն ունեցող անհավասարությունները կրթության մատչելիության ու կրթության իրավունքի լիարժեք իրականացման բնագավառում:

Կրթության իրավունքն ամրագրված է մի շարք միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերով՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրով, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրությամբ և այլն:

Կրթություն ստանալու իրավունքը կազմում է կրթության իրավունքի հիմքը: Դրան համապատասխան պետության պոզիտիվ պարտավորություններից է հանդիսանում անհրաժեշտ ուսումնական հաստատությունների ապահովումը: Ընդ որում, սա չի

նշանակում, որ այս հաստատությունները պետք է հիմնադրվեն միայն կառավարության կողմից: Ոչ պետական ուսումնական հաստատությունների բավարար քանակի առկայության դեպքում պետության պարտավորությունը կարող է համարվել կատարված: Այս դեպքում այն պետք է ապահովի կրթության մատչելիության վերաբերյալ միջազգային իրավունքի նորմերով սահմանված պահանջների կատարումը:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 13-րդ հոդվածով սահմանված են այս իրավունքի լիարժեք իրականացման նպատակով Դաշնագրի մասնակից պետությունների պարտավորությունները. տարրական կրթությունը պետք է պարտադիր և անվճար լինի բոլորի համար: Միջնակարգ կրթությունը՝ իր տարբեր ձևերով, ներառյալ՝ միջնակարգ տեխնիկական և մասնագիտական կրթությունը, պետք է լինի բաց և մատչելի բոլորի համար՝ բոլոր համապատասխան միջոցներով, մասնավորապես, առաջադիմական անվճար կրթության համակարգ ներդնելու միջոցով: Բարձրագույն կրթությունը, ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների, հավասարապես մատչելի պետք է լինի բոլորի համար՝ բոլոր համապատասխան միջոցներով, մասնավորապես՝ առաջադիմական անվճար կրթության համակարգ ներդնելու միջոցով: Մասնակից պետությունները պետք է ակտիվորեն իրականացնեն բոլոր մակարդակների դպրոցների համակարգի զարգացումը, սահմանեն կրթաթոշակների անհրաժեշտ համակարգ և շարունակաբար կատարելագործեն ուսուցչական անձնակազմի նյութական պայմանները և այլն:

Հարկ է նկատել, որ ՀՀ Սահմանադրությունը, ինչպես նաև կրթության ոլորտին առնչվող ՀՀ օրենսդրությունը, ընդհանուր առմամբ, ամրագրել են կրթության իրավունքին վերաբերող հիմնական միջազգային փաստաթղթերի դրույթները: Այժմ պետությունը քայլեր է ձեռնարկում դրանց արդյունավետ կիրառումն ապահովելու ուղղությամբ, այդ թվում՝ համապատասխան ծրագրերի ու ռազմավարությունների մշակման և իրականացման միջոցով:[3]

Այսպես, ըստ ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետությունում հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Յուրաքանչյուր քաղաքացի ունի մրցութային հիմունքներով անվճար պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն ստանալու իրավունք՝ օրենքով սահմանված կարգով:

---

[3] Տե՛ս, ՀՀ կառավարության 06.05.2004թ. N 17, 21.11.2003թ. N 46 և այլ որոշումները

Պետությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ֆինանսական և այլ աջակցություն է ցուցաբերում բարձրագույն ու այլ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին և դրանցում սովորողներին:

Կարևորում ենք նաև ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածը, որով առաջին անգամ սահմանադրական մակարդակով ամրագրվեց իրենց երեխաների դաստիարակության…և կրթության համար հոգ տանելու ծնողների իրավունքը և պարտականությունը:

Հայաստանի Հանրապետությունը, ընտրելով Եվրոպական բարձրագույն կրթական համակարգին ինտեգրվելու ուղին, պետք է հիմնական լուծումներ տար այդ ոլորտում ծառացած որոշ հիմնախնդիրներին: Մասնավորապես, դրանք պայմանավորված էին կրթական օրենսդրության վերակառուցման և Բոլոնիայի սկզբունքներին դրա համապատասխանեցման, բուհական որակավորումների երկաստիճան համակարգին անցնելու հետ կապված ոչ պետական բուհերին տրված լիցենզիաների և հավատարմագրերի վերանայման, ՀՀ բուհերի հավատարմագրման առկա համակարգի՝ եվրոպական չափանիշներին համապատասխանեցման հետ և այլն: Նշենք, որ այդ գործընթացը դեռևս շարունակվում է:

2006թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ստացել է կրթության իրավունքին առնչվող 18 բողոք:

Դրանք առավելապես վերաբերել են նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման կարգի կիրառմանը, ոչ պետական բուհերի հավատարմագրման գործընթացում օրենսդրությամբ սահմանված ժամկետների խախտմանը և այլն:

Պետք է նշել, որ Պաշտպանը կարևորում է «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման համակարգի ներդրումը, քանի որ այն խթանում է ուսանողների բարձր առաջադիմությունը և ուսման արդյունավետությունը: Դրա հետ միասին, Պաշտպանը վիճահարույց է համարում ռոտացիոն համակարգի կիրառման կարգի հետ կապված որոշ հարցեր և իր դիրքորոշման մեջ ելնում է մարդու իրավունքների գերակայության սկզբունքից:

«Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 14.12.2004թ. և ուժի մեջ է մտել 02.03.2005թ.:

Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Ուսման վճարի փոխհատուցում նպաստի ձևով տրվում է մրցույթի արդյունքներով բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունված, ուսումնական տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն ունեցող, սոցիալապես անապահով ուսանողներին՝ ՀՀ օրենքներով սահմանված կարգով, **ՀՀ կառավարության հաստատած տեղերի քանակին և կարգին համապատասխան»**: Այսինքն՝ նշված նորմի պահանջի կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ՀՀ կառավարության կողմից այլ իրավական ակտերի, մասնավորապես,

նպաստի ձևով տրվող ուսման վճարի փոխհատուցման կարգը և տեղերի քանակը հաստատող ակտերի ընդունմամբ:

Օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով ուսանողի կարգավիճակի փոխատեղման /ռոտացիայի/ սկզբունքը նախատեսված էր կիրառել 2005-2006 թվականների ուսումնական տարվանից: Ուստի ակնհայտ է, որ ՀՀ կառավարությունը համապատասխան ակտերը պետք է ընդուներ մինչև 2005-2006 թվականների ուսումնական տարին սկսվելը: Այնուամենայնիվ, քննարկվող կարգը՝ ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստներ տալու վերաբերյալ, ՀՀ կառավարությունը հաստատել է 15.09.2005թ. թիվ 2114-Ն որոշմամբ, որն ուժի մեջ է մտել 29.12.2005թ.:

Փաստորեն, 2005-2006 թվականների ուսումնական տարին սկսվելուց հետո միայն, ավելին՝ առաջին քննաշրջանի սկզբից ընդամենը մի քանի օր առաջ է հնարավոր դարձել ապահովելու «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջի կատարումը, թեև ուսանողները ծանուցված են եղել նշված կարգի վերաբերյալ:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Եթե իրավական ակտում նախատեսված նորմի պահանջի կատարում կարող է միայն իրականացվել այդ իրավական ակտով նախատեսված իրավական այլ ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է իրավական այլ ակտի ընդունմամբ, ապա իրավական ակտն այդ մասով գործում է համապատասխան իրավական այլ ակտն ուժի մեջ մտնելու պահից»:

Հետևաբար, «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը գործող կարող էր համարվել ՀՀ կառավարության կողմից ընդունված համապատասխան իրավական ակտի ուժի մեջ մտնելու պահից, այսինքն 2005 թվականի դեկտեմբերի 29-ից:

Ուստի, անվճար ուսուցման համակարգից վճարովի համակարգ ուսանողների կարգավիճակի փոխատեղման /ռոտացիայի/ կարգը չէր կարող կիրառվել 2005-2006 թվականների ուսումնական տարվանից, քանի որ օրենքով նախատեսված իրավական ակտն ընդունվել է միայն ուսումնական տարվա կեսին:

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2005թ. մայիսի 3-ի թիվ 201-Ն հրամանով, որն ընդունվել է «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելուց երկու ամիս հետո, հաստատվել են 2005թ. առկա ուսուցման կանոնները: Կանոններում բացակայում է ուսանողի կարգավիճակի փոխատեղման /ռոտացիայի/ սկզբունքի կիրառման վերաբերյալ դրույթը: Կանոններին համապատասխան 2005 թվականին բուհեր ընդունված ուսանողների և բուհերի միջև կնքվել են համապատասխան պայմանագրեր, որոնցում նույնպես բացակայում էր համապատասխան դրույթը:

Պետք է նշել, որ ուսանողների հետ պայմանագիր կնքելու պահանջը բխում է «Կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքներից:

Այսպես, «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Բուհը ուսանողի հետ կնքում է պայմանագիր, որի տեքստը հրապարակվում է բուհի ընդունելության հայտարարության հետ և նախապես տրամադրվում է դիմորդներին…»: Նշված դրույթից հետևում է, որ մինչև այս կամ այն բուհ դիմելը, ընդունվելը դիմորդը պետք է իրազեկված լինի այն պայմանագրի տեքստի մասին՝ որն ընդունվելու դեպքում պետք է կնքվի իր և բուհի միջև:

Սակայն, պայմանագրում ուսանողների կարգավիճակի փոխատեղման կարգի վերաբերյալ դրույթի նախատեսումը գործնականում հնարավոր է եղել ապահովել միայն 2006-2007 թվականների ուսումնական տարվանից սկսած: 2006թ. առկա ընդունելության կանոններում, որոնց համապատասխան էլ կնքվել են պայմանագրերը ուսանողների հետ, արդեն դրույթ է նախատեսվել ռոտացիայի սկզբունքի կիրառման մասին:

Այսպիսով, 2005-2006 թվականների ուսումնական տարում ռոտացիայի սկզբունքի կիրառման համար անհրաժեշտ իրավական հիմքեր լիարժեք ձևավորված չեն եղել: Թեև ուսանողները ծանուցված են եղել ռոտացիոն համակարգի կիրառման վերաբերյալ, ուսանողների հետ կնքված պայմանագրերում դրա վերաբերյալ որևէ նշում չի եղել : Այսպիսի ոչ միանշանակ իրավիճակը Մարդու իրավունքների պաշտպանը մեկնաբանել է հօգուտ այն ուսանողների, որոնց իրավական վիճակը վատթարացել է՝ 2005-2006 թվականների ուսումնական տարվա արդյունքներով ռոտացիոն համակարգի կիրառման հետևանքով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանն առաջարկել է ՀՀ կառավարությանը միջոցներ ձեռնարկել այն ուսանողների ուսման վճարի փոխհատուցման ուղղությամբ, որոնց վիճակը վատթարացել է 2005-2006 թվականների ուսումնական տարում ռոտացիայի համակարգի կիրառման հետևանքով:

### 2.1.3. Սեփականության իրավունք

*ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը:*

Սեփականության իրավունքն ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 17-րդ հոդվածում : Ինչ վերաբերում է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների, ինչպես նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին

միջազգային դաշնագրերին, ապա դրանցում սեփականության իրավունքի պաշտպանության վերաբերյալ դրույթ նախատեսված չէ: Թեև դաշնագրերի մշակման փուլում սեփականության իրավունքն ամրագրելու ուղղությամբ գործադրվել են զգալի ջանքեր, սակայն ձեռնարկված փորձերը ձախողվել են` իրավունքի սահմանափակումների վերաբերյալ ընդհանուր համաձայնության չգալու հետևանքով:

Չի հաջողվել ներառել սեփականության իրավունքը նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում: Այնուամենայնիվ, ավելի ուշ, Կոնվենցիայի 1-ին Արձանագրությամբ արդեն նախատեսվել է սեփականության իրավունքի պաշտպանությունը: Այսպես, Արձանագրության 1-ին հոդվածով սահմանվում է յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձի` իր գույքից անարգել օգտվելու իրավունքը: Պետք է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի և եվրոպական դատարանի մեկնաբանության համաձայն` իր գույքից անարգել օգտվելու անձի իրավունքը, ըստ էության, նույնացվում է սեփականության իրավունքի հետ:

Սահմանված է նաև, որ ոչ ոքի չի կարելի զրկել սեփական գույքից, բացառությամբ հանրային շահերի պաշտպանության համար և օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված պայմաններով:

Համանման դրույթ է ամրագրված նաև ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածում, մասնավորապես, սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ` գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ:

Այդ համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ ՀՀ-ում հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման գործընթացին առնչվող որոշ իրավական ակտերի վերլուծությանը:

Նախ պետք է նշենք, որ Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացման նպատակով հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման գործընթացը մշտապես գտնվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում:

Սեփականության օտարման գործընթացում մարդու իրավունքների խախտման փաստերը արծարծվել են ինչպես ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի նախորդ տարիների տարեկան զեկույցներում, այնպես էլ 2005-ի «Սեփականության, արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունքների խախտումների մասին» Պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցում:

Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացման կապակցությամբ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման ամբողջ գործընթացը կարգավորվել է ՀՀ կառավարության որոշումներով, որոնցով սահմանվել են

պետական կարիքների համար Երևան քաղաքում քաղաքացիների սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի օտարման գոտիները, օտարման կարգն ու պայմանները:

Կառավարության այդ որոշումներով չի բացահայտվել «պետական կարիք» հասկացության բովանդակությունը, իսկ ՀՀ քաղ.օր-ի 218-րդ հոդվածը, ինչպես նաև ՀՀ հողային օրենսգրքի 104-րդ, 106-րդ և 108-րդ հոդվածները չեն սահմանել հողամասը «պետական կարիքների» համար վերցնելու բավարար հստակ ձևակերպված ընթացակարգ:

Չի ընդունվել առանձին օրենք, որով սահմանված լինեն գույքի օտարման բացառիկ կարևորությունն ու նշանակությունը, ինչպես նաև այն հասարակության և պետության կարիքները, որոնց բավարարմանը պետք է ուղղվի օտարվող անշարժ գույքը:

2006թ. մարտին, Սահմանադրական փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո, Պաշտպանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218-րդ, հողային օրենսգրքի 104-րդ, 106-րդ և 108-րդ հոդվածների, ՀՀ կառավարության 2002թ. օգոստոսի 1-ի թիվ 1151-Ն որոշման սահմանադրականությունն որոշելու խնդրանքով:

Ի թիվս այլ փաստարկների՝ դիմումը հիմնավորվել է նրանով, որ վիճարկվող իրավական ակտերը չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին(res judicata):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անդրադառնալով Կոնվենցիայի իմաստով «օրենք» հասկացությանը՝ մասնավորապես, նշել է, որ որևէ իրավական նորմ չի կարող «օրենք» համարվել, եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին: Մասնավորապես, եթե այն ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, ինչը թույլ կտա քաղաքացուն դրա հետ համապատասխանեցնելու իր վարքագիծը: Քաղաքացին պետք է հնարավորություն ունենա, անհրաժեշտության դեպքում օգտվելով խորհուրդներից, կանխատեսելու այն հետևանքները, որոնք կարող են առաջանալ տվյալ գործողությունից[4] :

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Պրեսսոս Նավիերա Կոմպանիա Փ.Բ.-ն և մյուսներն ընդդեմ Բելգիայի (Pressos Compania Naviera S.A. and Others v. Belgium), ինչպես նաև մի շարք այլ գործերով կայացված վճիռներով ընդգծել է, որ «իր գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ» միջամտությունը ենթադրում է «արդարացի հավասարակշռություն» հասարակության շահերի և մարդու հիմնարար իրավունքների պահպանության անհրաժեշտության միջև: Մասնավորապես, անհրաժեշտ է, որպեսզի

[4] Տե՛ս Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության *(The Sandy Times v. The United Kingdom)* գործով 26.04.1979թ. վճռի 49 պարագրաֆը, Մալոնեն ընդդեմ Միացյալ Թագավորության *(Malone v. The United Kingdom)* գործով 02.08.1984թ. վճռի 66 պարագրաֆը, Ջեյմսը և մյուսները *(James and Others v. The United Kingdom )* գործով 22.01.1986թ. վճռի 67 պարագրաֆը):

ապահովվի ողջամիտ համաչափություն օգտագործվող միջոցի (որն անձին զրկում է սեփականությունից) և այն նպատակի միջև, որին ուղղված է այդ միջոցը[5]:

Եթե հանրային կարիքների համար սեփականության հարկադիր օտարումը տեղի է ունենում առանց օտարման սահմանափակումների վերաբերյալ սահմանադրական պահանջները օրենսդրությամբ հստակ ամրագրելու և գործնականում դրանք հաշվի առնելու, ապա այն հանգեցնում է սեփականության իրավունքի անհամաչափ սահմանափակմանը[6]:

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշմամբ անդրադարձել է նաև ՀՀ կառավարության կողմից սեփականության օտարման գործընթացը կարգավորող որոշումների ընդունման լիազորություն ունենալու հարցին: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ ընդգծվել է, որ ՀՀ կառավարությունը չի կարող իր որոշումներով սահմանել պետության կարիքների համար սեփականության օտարման կարգ, որն ուղղակիորեն առնչվում է սեփականության իրավունքի սահմանափակման հիմնախնդրին և պետք է լինի հանրային շահի ու անհատի սեփականության իրավունքի հավասարակշռության ապահովման երաշխիք:

Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման գործընթացը կարգավորող կառավարության համապատասխան որոշումները վիճարկելու վերաբերյալ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ ընդհանուր իրավասության դատարանները ՀՀ կառավարության կողմից ընդունված իրավական ակտերի՝ օրենքին համապատասխանության վերաբերյալ դիմումներին առնչվող հարցը քննարկելիս, մերժել են դրանց քննության ընդունումը՝ հիմք ընդունելով ՀՀ քաղ. դատ. օր.-ի 160-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունը: Այս հետևությունը հաստատվում է նաև ՀՀ սահմանադրական դատարանի 16.11.2006թ. թիվ 665 որոշմամբ, որով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունը՝ իրավակիրառ պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակությամբ, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

2006թ. ապրիլի 18-ին կայացված որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218-րդ, հողային օրենսգրքի 104-րդ, 106-րդ և 108-րդ հոդվածների, ՀՀ կառավարության 2002թ. օգոստոսի 1-ի թիվ 1151-Ն որոշման դրույթները ճանաչեց ՀՀ Սահմանադրության 31-րդ (3-րդ մաս), 4-րդ հոդվածների, ինչպես նաև մի շարք այլ հոդվածների պահանջներին չհամապատասխանող:

---

[5] Տե՛ս նաև Եվրոպական դատարանի 19.12.1994թ. վճիռը Լոպես Օստրան ընդդեմ Իսպանիայի (Lopez Ostra v. Spain) գործով, պարագրաֆ 58:

[6] Տե՛ս նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2006թ. ապրիլի 18-ի թիվ 630 որոշումը

Միաժամանակ, հաշվի առնելով այն, որ ՀՀ Ազգային ժողովը և ՀՀ կառավարությունը պարտավոր էին հնարավոր սեղմ ժամկետներում ՀՀ Սահմանադրության և սահմանադրական դատարանի որոշման պահանջներին համապատասխանեցնել բազմաթիվ իրավական ակտեր և օրենքով հստակ կանոնակարգել սեփականության հարկադիր օտարման իրավական ռեժիմը՝ որոշման մեջ ՀՀ Սահմանադրությանը չհամապատասխանող ճանաչված իրավական նորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանեց օրենքի հիման վրա նման իրավական ռեժիմի ուժի մեջ մտնելու պահը, բայց ոչ ուշ, քան 2006թ. հոկտեմբերի 1-ը:

Այս որոշման ընդունմանը հաջորդեցին ՀՀ կառավարության կողմից «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքի նախագծի մշակման աշխատանքները:

Նախագծի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանն իր կարծիքը ներկայացրել է ինչպես ՀՀ Ազգային ժողովի, այնպես էլ ՀՀ արդարադատության նախարարության քննարկմանը: Ներկայացված առաջարկությունների մի մասը ընդունվել է, այնուամենայնիվ էական նշանակություն ունեցող որոշ առաջարկություններ և դիտողություններ այդպես էլ հաշվի չառնվեցին[7]:

2006թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ստացել է սեփականության իրավունքին առնչվող 123 բողոք:

Դրանք առավելապես կապված են եղել հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման գործընթացի, այդ թվում՝ անշարժ գույքը պետության կարիքների համար վերցնելու դիմաց տրված փոխհատուցման գումարից եկամտահարկ պահելու, տիրապետումից զրկելու հետ չկապված՝ սեփականության իրավունքի խախտումների, անշարժ գույքի նկատմամբ սեփականության/օգտագործման/ իրավունքի գրանցումը անհիմն մերժելու, ինքնակամ շինությունների օրինականացման գործընթացում թույլ տրված իրավախախտումների հետ և այլն:

Հարկ ենք համարում առանձին անդրադառնալ անշարժ գույքը պետության կարիքների համար վերցնելու դիմաց տրված փոխհատուցման գումարից եկամտահարկ պահելու իրավաչափության հարցին:

Նշված հարցը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից բազմիցս բարձրացվել է իրավասու պետական մարմիններում: Այդ հարցին է անդրադարձել նաև ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 104-րդ, 106-րդ և 108-րդ հոդվածների, ՀՀ կառավարության 2002թ.

[7] Տե՛ս «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Պաշտպանի կարծիքը (հավելված 7)

օգոստոսի 1-ի թիվ 1151-Ն որոշման՝ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 18.04.2006-ի որոշմամբ:

ՀՀ սահմանադրական դատարանը մասնավորապես գտել է, որ քաղաքացու սեփականությունը պետության կամ հասարակության կարիքների համար վերցվելու դեպքում նրա հետ պետք է կնքվի «վերցվող գույքի դիմաց փոխհատուցում տրամադրելու մասին» պայմանագիր, և որ տրվող փոխհատուցումը չի կարող դիտվել որպես սեփականատիրոջ, օգտագործողի ստացած եկամուտ և հարկվել եկամտահարկով:

Հիմնախնդրի կարգավորման նպատակով Պաշտպանի կողմից ձեռնարկվել են հետևողական գործողություններ, իրավասու պետական մարմինների ուշադրությունը պարբերաբար հրավիրվել է խնդրի լուծման անհրաժեշտության վրա:

Ի վերջո հարցն իր կարգավորումն է ստացել 01.06.2006թ. «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ: Մասնավորապես, օրենքի 9-րդ հոդվածը լրացվել է «իզ» ենթակետով, որով սահմանվել է, որ հարկվող եկամուտն որոշելիս հարկ վճարողի համախառն եկամտից նվազեցվում են՝ պետության կամ համայնքների կարիքների համար ֆիզիկական անձանց պատկանող անշարժ գույքը վերցնելու դիմաց այդ ֆիզիկական անձանց, ինչպես նաև դրանում հաշվառված (գրանցված) ֆիզիկական անձանց վճարված գումարները:

Այնուհետև, ՀՀ կառավարության 26.10.2006թ. թիվ 1505-Ն որոշմամբ սահմանվել է պետության կարիքների համար անշարժ գույքի իրացման գործընթացում քաղաքացիների օգտագործման իրավունքի դադարեցման դիմաց վճարված գումարներից պահված եկամտահարկի վերադարձման կարգը:

### 2.1.4. Սոցիալական ապահովության իրավունք

*ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով:*

2006թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ստացել է սոցիալական ապահովության իրավունքին առնչվող 117 բողոք:

Կենսաթոշակի իրավունքի խախտումներ.

Կենսաթոշակի իրավունքին առնչվող բողոքներն առավելապես վերաբերել են ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և «Հայխնայբանկ» ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագրի հիման վրա յուրաքանչյուր ամսվա ընթացքում կենսաթոշակի վճարման որոշակի ժամկետի սահմանմանը, կենսաթոշակի հաշվարկման արտոնյալ կարգի վերացմանը և այլն:

**Առանձնապես վնասակար և առանձնապես ծանր պայմաններում աշխատանքի ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժի արտոնյալ հաշվարկման կարգի վերացման վերաբերյալ.**

Նախկինում գործող «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 06.12.1995թ., ուժը կորցրել է 10.04.2003թ.) 30-րդ հոդվածի համաձայն՝ առանձնապես վնասակար և առանձնապես ծանր պայմաններում աշխատելու ժամանակահատվածն աշխատանքային ստաժում հաշվարկվում էր մեկուկես անգամ:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ գործող օրենքի (ընդունվել է 2002թ. նոյեմբերի 19-ին, ուժի մեջ է մտել 2003թ. ապրիլի 10-ին) 45-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մեկ օրացուցային տարվա համար չի կարող հաշվարկվել մեկ տարուց ավելի ապահովագրական ստաժ, բացառությամբ նույն օրենքի 48-րդ հոդվածով սահմանված կարգի: Նշված հոդվածը, սակայն, առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատանքը չի դիտում որպես ստաժի հաշվարկման առանձնահատկություն:

Հատուկ ուշադրության է արժանի «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածը, որը վերաբերում է մինչև նշված օրենքի ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակի վերահաշվարկման կարգին:

Նշված հոդվածի համաձայն՝ մինչև օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակը վերահաշվարկվում է կենսաթոշակի գործում առկա փաստաթղթերով հաշվարկված ստաժին համապատասխան՝ հաշվի առնելով նույն օրենքի 17-19-րդ հոդվածներին համապատասխան սահմանված հիմնական կենսաթոշակի չափը, ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը և կենսաթոշակառուի անձնական գործակիցը: Լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում կենսաթոշակը վերահաշվարկվում է նույն օրենքով սահմանված կարգով և համարվում է նոր նշանակում:

Սահմանվում է նաև, որ «Եթե վերահաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է մինչև օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակի չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով»:

Հոդվածի բովանդակությունից բխում է, որ օրենսդիրն այստեղ տարբերակում է երկու մոտեցում՝ նախկինում նշանակված կենսաթոշակի վերահաշվարկման կարգի վերաբերյալ: Խոսքը վերաբերում է կենսաթոշակի վերահաշվարկմանը՝ առանց աշխատանքային ստաժը հիմնավորող լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու և նման փաստաթղթեր ներկայացնելու պարագայում:

Առաջին դեպքում օրենսդրի կողմից ցուցաբերվել է տրամաբանական մոտեցում, սահմանելով, որ «Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակը վերահաշվարկվում է կենսաթոշակի գործում առկա փաստաթղթերով հաշվարկված ստաժին համապատասխան…»: Հետևաբար, այս դեպքում պահպանվում է աշխատանքային ստաժի արտոնյալ հաշվարկման կարգը:

Իսկ աշխատանքային ստաժը հիմնավորող լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված նոր կարգով վերահաշվարկվում է ամբողջ կենսաթոշակը, այդ թվում՝ նոր կարգին համապատասխան է հաշվարկվում գործում առկա փաստաթղթերի հիման վրա արդեն սահմանված ստաժը: Ուստի, այս դեպքում չի պահպանվում աշխատանքային ստաժի արտոնյալ հաշվարկման կարգը:

Փաստորեն, լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում անձը կորցնում է աշխատանքային ստաժի արտոնյալ հաշվարկման իրավունքը, որն առանձնապես վնասակար և առանձնապես ծանր պայմաններում աշխատանքի համար ձեռք էր բերել նախկինում գործող (իր աշխատանքի ժամանակահատվածում) օրենսդրությամբ, այն դեպքում, երբ դրան համապատասխան արդեն իսկ հաշվարկվել ու նշանակվել էր նրա կենսաթոշակը: Արդյունքում, այս նորմի ուժով անձը կորցնում է նախկինում գործող օրենսդրությամբ ձեռք բերված իր իրավունքները:

Պետք է նշել նաև, որ օրենքով որևէ տարբերակում չկա ներկայացվող լրացուցիչ փաստաթղթերով հաստատվող աշխատանքային ստաժի ժամանակահատվածի վերաբերյալ: Անկախ նրանից, թե ներկայացվող փաստաթղթերը որ ժամանակահատվածի աշխատանքային ստաժն են հաստատում՝ մինչև օրենքի ուժի մեջ մտնելը, թե դրա ուժի մեջ մտնելուց հետո իրականացված աշխատանքային գործունեության, կենսաթոշակը վերահաշվարկվում է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված նոր կարգով և համարվում է նոր նշանակում:

Մեր կարծիքով, այն դեպքում, երբ ներկայացվում են լրացուցիչ փաստաթղթեր, որոնք հաստատում են մինչև «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը

իրականացված աշխատանքային գործունեության ստաժը, տվյալ ժամանակահատվածի համար կենսաթոշակը պետք է վերահաշվարկվի նախկին օրենսդրությամբ սահմանված պայմաններով: Այս դիրքորոշումը հիմնավորվում է նրանով, որ քաղաքացին իր կենսաթոշակի արտոնյալ հաշվարկման իրավունքը ձեռք է բերել մինչև «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը, և այդ իրավունքը քաղաքացու կողմից կարող է իրացվել նաև օրենքի ուժի մեջ մտնելուց հետո:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ կենսաթոշակի հաշվարկման նոր կարգի կիրառման արդյունքում կենսաթոշակի հնարավոր նվազեցումից խուսափելու նպատակով քննարկվող հոդվածի 3-րդ մասը սահմանել է, որ եթե վերահաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է մինչև օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակի չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով:

Դա նշանակում է, որ օրենքը թույլ չի տալիս կենսաթոշակի չափի նվազեցում ստաժը հաստատող լրացուցիչ փաստաթղթերի հիման վրա նոր կարգով իրականացվող վերահաշվարկի հետևանքով: Միևնույն ժամանակ, նման դեպքերում լրացուցիչ փաստաթղթերով հաստատվող քաղաքացու աշխատանքային ստաժը ընդհանրապես հաշվի չի առնվում:

**Աղքատության ընտանեկան նպաստների տրամադրման կարգի վերաբերյալ.**

Մեծ թիվ են կազմել աղքատության ընտանեկան նպաստների տրամադրման կարգի հետ կապված բողոքները: Մասնավորապես, դիմումատուները հայտնել են, որ բազային կենսաթոշակի, ինչպես նաև ապահովագրական ստաժի յուրաքանչյուր տարվա համար հավելման չափի ավելացման արդյունքում իջել է նրանց ընտանիքի անապահովության միավորը, որի հետևանքով նախկինում նպաստառու ընտանիքը կամ միայնակ նպաստառուն զրկվել է աղքատության ընտանեկան նպաստ ստանալու իրավունքից: Փաստորեն, 1000 կամ 2000 դրամով կենսաթոշակի չափի ավելացման պայմաններում քաղաքացին զրկվել է ավելի մեծ՝ օրինակ, 7000 դրամ կազմող աղքատության ընտանեկան նպաստի գումարից: Սա էլ իր հերթին ավելի է խորացրել քաղաքացու աղքատությունը: Փաստորեն, դե յուրե կենսաթոշակի չափը ավելացվում է, սակայն դե ֆակտո քաղաքացու սոցիալական վիճակը վատթարանում է: Այս խնդիրը Պաշտպանի կողմից բարձրացվել է նաև 2005թ. տարեկան զեկույցում:

Պետք է արձանագրել, որ տվյալ դեպքում համակարգված մոտեցում չի ցուցաբերվել խնդրի կանոնակարգմանը և չեն հաշվարկվել նման իրավական կարգավորման տնտեսական հնարավոր հետևանքներն առանձին անձանց ու անապահով ընտանիքների համար:

Այս հարցով Պաշտպանը դիմել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին: Ներկայացված հարցադրումների վերաբերյալ նախարարությունում

կազմակերպվել է քննարկում, որի արդյունքների և նախարարության դիրքորոշման վերաբերյալ հայտնվել է Պաշտպանին:

Մասնավորապես նշվել է, որ հաշվի առնելով նախորդ տարիների փորձը, ինչպես նաև առկա սոցիալ-տնտեսական վիճակը, 2006 թվականի համար ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2317-Ն որոշմամբ հաստատված «Ընտանիքների անապահովության գնահատման կարգով» նախատեսվել են փոփոխություններ, որոնք ստեղծել են կենսաթոշակառու ունեցող ընտանիքի ընտանեկան նպաստի պահպանման ավելի բարենպաստ պայմաններ: Բարձրացվել է «կենսաթոշակառու» սոցիալական խումբ ունեցող անձանց միավորը՝ 34-ից մինչև 36, իսկ «միայնակ կենսաթոշակառու» սոցիալական խումբ ունեցողինը՝ մինչև 37: Նշվել է նաև, որ կատարված ուսումնասիրությունների համաձայն՝ 2005թ. ընթացքում և 2006թ. հունվարի 1-ից կենսաթոշակի հիմնական և ապահովագրական ստաժի համար տրվող հավելման չափերի ավելացման հետևանքով ընտանեկան նպաստի իրավունքը կկորցներ կենսաթոշակառու անդամ ունեցող ավելի քան 4000 ընտանիք: 2006թ. առաջին երեք ամիսների ընթացքում վերահաշվառման արդյունքները ցույց են տվել, որ ընտանեկան նպաստի իրավունքը կորցրել է կենսաթոշակառու անդամ ունեցող 770 ընտանիք:

Որպես դրական արդյունք՝ պետք է համարել նաև «2007թվականի պետական նպաստների չափերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 28-ի թիվ 1896-Ն որոշմամբ ընտանիքների անապահովության գնահատման կարգում կատարված փոփոխությունները: Ի թիվս այլ փոփոխությունների՝ միայնակ կենսաթոշակառուների համար սահմանվել է առավել բարենպաստ գործակից, որը հնարավորություն կտա նրանց հավասար այլ պայմաններում ձեռք բերել նպաստի իրավունք:

## Օրինակ 1

Դիմումատուն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ ինքը 75-ամյա միայնակ կենսաթոշակառու է և գտնվում է սոցիալական ծանր վիճակում: Հունվարի 1-ից իր կենսաթոշակի չափն ավելացել է 1400 դրամով, ինչի հետևանքով դադարեցվել է աղքատության ընտանեկան նպաստի (7.000 դրամ կազմող) վճարումը, քանի որ իր ընտանիքի անապահովության միավորը կազմել է 31.25:

**ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993թ. հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման կարգի վերաբերյալ.**

2006թ. մեծ թիվ են կազմել ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993թ. հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման կարգի վերաբերյալ բողոքները:

Իրենց դժգոհությունն են արտահայտել այն քաղաքացիները, որոնք նախկինում ստացել են աղքատության ընտանեկան նպաստ, սակայն բազային կենսաթոշակի, ինչպես նաև ապահովագրական ստաժի յուրաքանչյուր տարվա համար հավելման չափի ավելացումից հետո նրանց ընտանիքի անապահովության միավորի իջեցման արդյունքում զրկվել են աղքատության ընտանեկան նպաստ ստանալու իրավունքից: Դրա հետևանքով, նրանք զրկվել են նաև Խնայբանկում ներդրված ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու հնարավորությունից:

Եթե մինչև 2006թ. սեպտեմբեր ամիսը ավանդների վերաբերյալ քաղաքացիների բանավոր և գրավոր բողոքներն առավելապես վերաբերել են ՀՀ կառավարության 16.03.2006թ. թիվ 352-Ն որոշմամբ սահմանված այն կարգին, համաձայն որի փոխհատուցում ստանալու համար անհրաժեշտ նախապայման է 2005թ. հուլիսի 1-ից սկսած մինչև 2006թ. ապրիլի 1-ը անընդմեջ աղքատության ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների կազմում ընդգրկված լինելը, ապա 2006թ. սեպտեմբերից բողոքներ սկսեցին ստացվել նաև վիճահարույց ցուցակներում ընդգրկված անձանցից:

Այսպես, 2006թ. սեպտեմբերից սկսած Պաշտպանին ներկայացվել են բողոքներ այն մասին, որ դիմումատուներն ընգրկվել են փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակներում, սակայն հետագայում իրենց հայտնվել է, որ փոխհատուցում չի տրամադրվելու: Բողոքների, կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ դիմումատուները ընդգրկվել են վիճահարույց ցուցակներում: Ընդ որում մի մասն ընդգրկվել է այդ ցուցակներում այն պատճառով, որ հաշվեհամարը բացակայում է «Հայխնայբանկ» ՓԲԸ-ի կողմից 2001թ. կատարված և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը տրամադրված ավանդային հաշիվների գույքագրման բազայում: Մի մասն ունեցել է նաև այլ անճշտություն՝ հաշվեհամարներն առկա են գույքագրման բազայում, սակայն չեն համապատասխանում ազգանվան, անվան, հայրանվան տվյալները: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ քաղաքացիների մեծ մասն ընդգրկված է ոչ թե ճշգրտված ամփոփ, այլ վիճահարույց ցուցակներում այն պատճառով, որ փոխհատուցման իրավունք ունեցող անձանց տվյալների տեղեկատվական բազան համադրվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունում առկա 2001 թվականի տվյալների բազայի հետ:

Որպես դրական արդյունք՝ պետք է արձանագրել այն, որ այս բողոքների քննարկման ընթացքում փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2006թ. մարտի 16-ի թիվ 352-Ն որոշման մեջ:

Այս կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը, ի պատասխան Պաշտպանի գրությանը՝ հայտնել է, որ վիճահարույց հանգամանքներն ի հայտ են եկել գործակալությունների կողմից քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերում առկա տեղեկատվության և 2001 թվականին Խնայբանկի կողմից իրականացված և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը հանձնած ավանդային հաշիվների գույքագրման բազայի տեղեկությունների համեմատությունից:

Արդյունքում ստացվել են անհանգստացնող տվյալներ, քանի որ մեծ թվով ավանդատուներ ընդգրկվել են վիճահարույց տվյալներով ավանդատուների ցուցակում: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ առաջացած խնդրի պատճառների զգալի մասը պայմանավորված է գույքագրման բազայի ձևավորման աշխատանքում տեղ գտած թերություններով:

Հաշվի առնելով ճշգրտված ամփոփ ցուցակների կազմման ժամանակ հանգուցային և որոշիչ դեր կատարած գույքագրման բազայի ձևավորման աշխատանքներում տեղ գտած թերությունները՝ հնարավոր սոցիալական մեծ լարվածությունից խուսափելու նպատակով՝ ՀՀ կառավարության կողմից 19.11.2006թ. ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 16-ի թիվ 352-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշումը: Որոշման համաձայն՝ ամփոփ ցուցակները կազմելիս հաշվի պետք է առնվեն գործակալությունների տեղեկատվությունը և Խնայբանկի կողմից տրամադրած՝ իր մասնաճյուղերում առկա ավանդային հաշվի քարտերի տվյալները:

Հայտնվել է նաև, որ փոփոխության արդյունքում վիճահարույց ցուցակներից դուրս կգան մեծ թվով ավանդատուներ իրենց համապատասխան ավանդային հաշվի համարներով: Նախնական վերլուծությունների արդյունքներով նախարարությունում առկա տվյալներով հաշվառված 138061 հաշվեհամարների քարտերից Հայխնայբանկում չեն գտնվել շուրջ 4000-ը: Այս խնդրի լուծումն արդեն կիրականացվի դատական կամ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

**Աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ.**

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումների շարքում առանձնակի ուշադրության են արժանի այնպիսի դիմումները, որոնք վերաբերում են կազմակերպության

լուծարման հետևանքով քաղաքացիների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման մերժման հարցերին: Նշված հարցով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին դիմել է մոտ 250 քաղաքացի: Պետք է նշել, որ այս հիմնախնդրին անդրադարձ է կատարվել նաև Պաշտպանի նախորդ տարիների զեկույցներում:

Համաձայն ՀՀ կառավարության 1992թ. նոյեմբերի 15-ի թիվ 579 որոշման 16-րդ կետի՝ կազմակերպության լուծարման կամ վերակառուցման հետևանքով նրա գործունեության դադարեցման դեպքում վնասը փոխհատուցում է նրա իրավահաջորդը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ սոցիալական ապահովության մարմինը՝ պետական բյուջեի միջոցների հաշվին:

1999թ. ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1086-րդ հոդվածը նույն հարցի կապակցությամբ սահմանել է, որ կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման դեպքում համապատասխան վճարներն օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կանոններով կապիտալացվում են՝ դրանք տուժողին վճարելու համար:

Կազմակերպության լուծարման և նրա գործունեության դադարեցման դեպքում աշխատանքային խեղման հետևանքով աշխատողներին պատճառված վնասի փոխհատուցման հարցը ներկայումս ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չէ: Այսինքն՝ կարգավորված չեն այն հարցերը, թե ո՞ր մարմինը պետք է վճարի այդ փոխհատուցման գումարները, որտե՞ղ և ի՞նչ եղանակով պետք է կուտակվեն և բաշխվեն կապիտալացված միջոցները և այլն:

Ենթադրվում է, որ օրենքով կամ Կառավարության որոշմամբ պետք է սահմանվեր կարգ, որով կհստակեցվեին աշխատանքային պարտականությունների կատարման ժամանակ խեղում ստացած քաղաքացիներին փոխհատուցում տրամադրելու մեխանիզմներն այն պարագայում, երբ կազմակերպության գործունեությունը դադարել էր լուծարմամբ:

Սակայն ո՛չ օրենքով, ո՛չ կառավարության որոշմամբ անցած 7 տարիների ընթացքում նման կարգ չի սահմանվել: Փոխարենը, ՀՀ կառավարությունը 2004թ. նոյեմբերի 11-ին ընդունեց որոշում, որով ուժը կորցրած ճանաչվեց ՀՀ կառավարության 1992թ. նոյեմբերի 15-ի թիվ 579 որոշման 16-րդ կետը: Խնդիրը մնացել է չկարգավորված:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը նշված հիմնախնդրի կապակցությամբ հրավիրել է ՀՀ կառավարության ուշադրությունը՝ առաջարկելով հնարավորինս սեղմ ժամկետներում միջոցներ ձեռնարկել ոլորտում առկա օրենսդրական բացի հաղթահարման ուղղությամբ: Ընդ որում, առաջարկվել է խնդրի

կապակցությամբ կառուցակարգերի մշակման համատեքստում քննարկել նաև բաց թողնված ժամանակահատվածի համար չվճարված փոխհատուցման գումարի տրամադրման հարցը:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի գրությամբ Պաշտպանին հայտնվել է, որ «Աշխատանքի վայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացումն առաջարկվել է ներառել ՀՀ կառավարության 2007թ. գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկում՝ կատարման ժամկետ սահմանելով հունիսի 3-րդ տասնօրյակը: Հայտնվել է նաև, որ նախագիծը գտնվում է մշակման փուլում և ավարտից հետո քննարկման ու համաձայնեցման համար կներկայացվի նաև Պաշտպանին:

## Օրինակ 1

Դիմումատուն հայտնել է, որ աշխատել է թիվ 1 հացի գործարանում, որտեղ աշխատանքային պարտականությունների կատարման ժամանակ ստացած վնասվածքի պատճառով ստացել է խեղում: Սահմանված փոխհատուցման վճարումը 2003 թվականից դադարեցվել է կազմակերպության լուծարման հետևանքով:

## Օրինակ 2

Դիմումատուն հայտնել է, որ «Հրազդան» ԴՁ տարածքում տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքով ինքը և 9 այլ քաղաքացի ստացել են խեղում ու դարձել հաշմանդամ: Առողջությանը պատճառված վնասի փոխհատուցման գումարը նրանց վճարվել է մինչև 2002թ. սեպտեմբերը: Ձեռնարկության լուծարումից հետո փոխհատուցման վճարումը դադարեցվել է:

### 2.1.5. Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք

*ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք:*

Առողջության պահպանման իրավունքն ամրագրված է մարդու իրավունքների բնագավառում ընդունված մի շարք միջազգային և տարածաշրջանային համաձայնագրերում:

Այսպես, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածով սահմանված են անձի ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակից օգտվելու իրավունքի ապահովման ուղղությամբ մասնակից պետությունների պարտավորությունները:

Մասնավորապես, պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ մեռելածնության ու մանկական մահացության կրճատման ու երեխայի առողջ զարգացման ապահովման, համաճարակային, տեղաճարակային, մասնագիտական և այլ հիվանդությունների կանխարգելման, բուժման և վերահսկման, ինչպես նաև այնպիսի պայմանների ստեղծման ուղղությամբ, որոնք հիվանդության դեպքում բոլորի համար կապահովեն բժշկական օգնություն և խնամք:

2006թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ստացել է բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքին առնչվող 18 բողոք:

Առավել տարածված բողոքներն առնչվել են անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն տրամադրելու կարգին և այլն:

Հարկ ենք համարում անդրադառնալ ՀՀ առողջապահության նախարարի 09.04.2004թ. թիվ 346 հրամանին, որով հաստատվել է «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և ծառայությունների շրջանակում թույլատրված ծառայությունների և գների» ցանկը:

Նշված հրամանի համաձայն՝ հոգեբուժական սուր դեպքերի բուժման միավորի գինը սահմանվել է 110 400 դրամ, միավորի օրական գինը՝ 4600 դրամ: Վերոնշյալից հետևում է, որ պետական պատվերի շրջանակներում հոգեբուժական սուր դեպքերի բուժման համար նախատեսված է ընդամենը 24 օր: Ընդ որում, այդ կապակցությամբ հրամանով որևէ վերապահում չի կատարվել:

Պաշտպանի ուսումնասիրությունները ևս ցույց են տվել, որ հոգեբուժարանում հիվանդը պահվում է միայն 24 օր՝ անկախ նրա ապաքինման, հետագա ստացիոնար բուժման անհրաժեշտությունից: Փաստորեն, հոգեբուժական սուր դեպքի պայմաններում, բուժման համար անհրաժեշտ միջոցներ չունեցող անձը կարող է դեռ չապաքինված վիճակում դուրս գրվել հիվանդանոցից՝ միայն 24-օրյա ժամկետը լրանալու հիմքով:

Գտնում ենք, որ այս խնդիրը լրացուցիչ կարգավորման կարիք ունի:

## Օրինակ 1

Դիմումատուն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ իր որդին երկրորդ խմբի հաշմանդամ է և տառապում է հոգեկան հիվանդությամբ: Դիմումատուի որդու նկատմամբ մշտական բժշկական հսկողություն է

իրականացվում «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ Նուբարաշենի կլինիկայի աշխատակիցների կողմից, որոնք, սակայն, հրաժարվում են նրա ստացիոնար բուժումը իրականացնել 24 օրից ավել ժամկետով:

Դիմումատուն խնդրել է Մարդու իրավունքների պաշտպանի միջամտությունը իր որդուն հիվանդանոցային պայմաններում բժշկական երկարատև հսկողության տակ պահելու հարցում:

Ի պատասխան Մարդու իրավունքների պաշտպանի գրության՝ ՀՀ առողջապահության նախարարի տեղակալը հայտնել է, որ հիվանդը ՀՀ ԱՆ «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ Նուբարաշենի կլինիկա է ընդունվել 21.07.2006թ. «Թեթև արտահայտված մտավոր հետամնացության, աֆեկտիվ անկայունություն» ախտորոշմամբ: Ներկայումս հիվանդը հանգիստ է, վարքը՝ կանոնավոր, բուժման և խնամքի կարիք չունի:

Միաժամանակ հայտնել է, որ համաձայն ՀՀ ԱՆ 09.04.2004թ. թիվ 346 հրամանով հաստատված «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և ծառայությունների շրջանակում թույլատրված ծառայությունների և գների» ցանկի՝ պետական պատվերի շրջանակներում սուր դեպքերի բուժումը 24 օր է:

## Օրինակ 2

Դիմումատուն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ ինքն առաջին խմբի հաշմանդամ է և տառապում է «օստեոպորոզ, արթրոզ» ոսկրահոդային հիվանդությամբ: Երկար տարիներ բուժվել է տարբեր բժշկական հաստատություններում, բայց դրական արդյունքի չի հասել:

2006թ. քաղաքացին դիմել է Վ. Ավագյանի անվան բժշկական կենտրոն, անցել է լրացուցիչ բժշկական զննություն և ստացել նեղ մասնագետի ցուցում այն մասին, որ ներկայումս գոյություն ունեն նոր արդյունավետ դեղամիջոցներ այդ հիվանդության դեմ: Դիմումատուն հայտնել է նաև, որ դրանք թանկարժեք են և մատչելի չեն: 2006-ին համապատասխան փաստաթղթերով գրավոր դիմել է ՀՀ առողջապահության նախարարությանը՝ իրեն անվճար դեղամիջոցներ տրամադրելու խնդրանքով, սակայն ստացել է բազմաթիվ մերժում:

Նկատի ունենալով, որ «օստեոպորոզ» հիվանդությունն ունի զգալի տարածում, հանգեցնում է ծանր հետևանքների, այդ թվում հիվանդի անաշխատունակության՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն անհրաժեշտ է համարել այդ հիվանդությունը նույնպես ներառել «Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի և հիվանդությունների ցանկերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկում:

Այդ նպատակով Պաշտպանը դիմել է ՀՀ առողջապահության նախարարին՝ «Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի և հիվանդությունների ցանկերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկում «օստեոպորոզ, արթրոզ» հիվանդությունը ներառելու նպատակով միջոցներ ձեռնարկելու առաջարկով:

### 2.1.6. Բավարար կենսամակարդակի իրավունք

*ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար:*

Բավարար կենսամակարդակի իրավունքն իր ամրագրումն է ստացել մի շարք միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերում, այդ թվում՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում, Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայում և այլն: Դաշնագրի 11-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի՝ իր ու իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բավարար սննդի, հագուստի ու բնակարանի և կենսապայմանների շարունակական բարելավման իրավունքը: Մասնակից պետությունները ձեռնարկում են պատշաճ միջոցներ այդ իրավունքի իրականացումն ապահովելու համար՝ այս կապակցությամբ ընդունելով ազատ կամքի արտահայտության վրա հիմնված միջազգային համագործակցության կարևոր նշանակությունը:

2006թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ստացել է բավարար կենսամակարդակի իրավունքին առնչվող 199 բողոք:

Բնակարանի իրավունքին առնչվող բողոքներն առավելապես ստացվել են վթարային շենքերի, աղետի գոտու բնակիչներից, փախստականներից՝ բնակարանային ապահովման, շենքային վատթար պայմանների, բնակարանների անարդարացի բաշխման, բնակարանային ցուցակներից առանձին ընտանիքների անհիմն կերպով հանվելու, նախկինում կորցրած բնակարանին համարժեք բնակարան չհատկացնելու և այլ հիմնախնդիրների վերաբերյալ:

Մտահոգիչ են վթարային շենքերի բնակիչներից ստացված բողոքները, թեև նրանց բնակարանային խնդիրների լուծման ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից ձեռնարկվել

և ձեռնարկվում են հետևողական քայլեր, այնուամենայնիվ, խնդիրը կրում է հրատապ բնույթ, որի առավել արագ լուծման ուղղությամբ անհրաժեշտ է լրացուցիչ միջոցներ ձեռնարկել:

Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքներում զգալի թիվ են կազմում 1988թ. երկրաշարժի հետևանքով տուժած անձանց դիմում-բողոքները: Պաշտպանի կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում որոշ դիմումների վերաբերյալ պարզվել են այնպիսի հանգամանքներ, որոնք հիմք են հանդիսացել Պաշտպանի կողմից համապատասխան դիմում-բողոքների քննարկումը դադարեցնելու համար : Պաշտպանին հասցեագրված և նույն խնդիրներին վերաբերող որոշ դիմում-բողոքներ դեռևս գտնվում են քննարկման փուլում, ինչը պայմանավորված է լրացուցիչ տեղեկությունների հստակեցման անհրաժեշտությամբ:

Դրան զուգահեռ, դժգոհությունների տեղիք են տվել ՀՀ կառավարության 10.06.1999թ. թիվ 432 որոշման այն դրույթները, որոնք վերաբերում են աղետի գոտու բնակավայրերում բնակարան արտահերթ ստանալու իրավունք ունեցող քաղաքացիների հաշվառման ցուցակների ճշգրտման կարգին:

ՀՀ կառավարության 10.06.1999թ. թիվ 432 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետի համաձայն՝ աղետի գոտու բնակավայրերում բնակարան արտահերթ ստանալու իրավունք ունեցող քաղաքացիների հաշվառման ցուցակներն ենթակա են ճշգրտման մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 1-ը և մեկամսյա ժամկետում հաստավում են համայնքի ղեկավարի կողմից:

06.06.2002թ. ՀՀ կառավարության կողմից ընդունել է թիվ 831-Ն որոշումը «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի իրականացման շրջանակներում՝ երկրաշարժի հետևանքով բազմաբնակարան շենքերի անօթևան մնացած բնակիչներին բնակարանների(բնակելի տների) գնման համար անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին»: Որոշմամբ սահմանվել է, որ բնակարանների գնման վկայագրի միջոցով բնակարան /բնակելի տուն/ ձեռք բերելու համար աջակցություն ստանալու իրավունք ունեն այն անձինք, որոնք հաշվառված են 10.06.1999թ. թիվ 432 որոշմամբ հաստատված կարգով: ՀՀ կառավարության թիվ 831-Ն որոշմամբ հաշվառման որևէ ժամկետային սահմանափակում նախատեսված չի եղել:

Վերոնշյալ որոշումն ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 24.05.2005թ. թիվ 309-Ն որոշմամբ, որով սահմանվել է, որ բնակարանների գնման վկայագրի միջոցով բնակարան /բնակելի տուն/ ձեռք բերելու համար աջակցություն ստանալու իրավունք ունեն այն անձինք, ովքեր ՀՀ կառավարության 10.06.1999թ. թիվ 432 որոշմամբ հաստատված կարգի համաձայն հաշվառված են բնակարան ստանալու համար՝ 2004թ. մարտի 1-ի դրությամբ:

ՀՀ կառավարության 24.05.2005թ. թիվ 309-Ն որոշումը վիճահարույց է՝ նախատեսված հաշվառման ժամկետային սահմանափակման առումով՝ իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից: Միաժամանակ, ՀՀ կառավարության 10.06.1999թ. թիվ 432 որոշմամբ անորոշ կերպով է սահմանված նաև որպես անօթևան հաշվառված անձանց ցուցակների ճշգրտման կարգը, ինչը գործնականում առաջացրել է մի շարք բարդություններ:

Մի քանի դիմումներով քաղաքացիները հայտնել են, որ չնայած իրենք հաշվառված են եղել որպես անօթևան մինչև 2004թ. մարտի 1-ը, սակայն, ցուցակների ճշգրտման ընթացքում, իրենց վերահաշվառումն իրականացվել է մարտի 1-ից հետո, որի արդյունքում զրկվել են բնակարանների գնման վկայագրերի ծրագրից օգտվելու իրավունքից:

Գյումրու քաղաքապետարանի կողմից Պաշտպանին ներկայացված պարզաբանմամբ հայտնվել է, որ ցուցակում չեն ընգրկվել նույնիսկ այն քաղաքացիները, որոնք դիմումներ են ներկայացրել փետրվարի 28-ի օրվա երկրորդ կեսին: Այդ կարգով հաշվառումից դուրս մնացած քաղաքացիների թիվը հասնում է 25-ի :

Սահմանված ժամկետից ավելի վաղ դիմում ներկայացրած քաղաքացիների դուրս մնալը հաշվառման ցուցակից պատճառաբանվել է նրանով, որ նրանց կողմից չեն ներկայացվել անօթևան լինելու փաստը հաստատող լրացուցիչ փաստաթղթեր:

Այդ բողոքները դեռևս գտնվում են քննարկման փուլում:

Մեծ թիվ են կազմել նաև քաղաքացիների ծանր սոցիալական վիճակին վերաբերող դիմումները, որոնցով նրանք աջակցություն են խնդրում Պաշտպանից:

### 2.1.7. Իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունք

*ՀՀ Սահմանադրության 33.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը:*

2006թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից ստացված փոքրաթիվ բողոքների ուսումնասիրությունը վկայում է շրջակա միջավայրի պաշտպանությանն առնչվող հարցերով հանրային իրազեկության ցածր մակարդակի մասին:

Պետք է արձանագրել, որ ՀՀ օրենսդրությամբ բավարար չափով կարգավորված չէ պետական մարմինների կողմից հասարակությանը բնապահպանական տեղեկատվության տրամադրման ընթացակարգը: Օրենսդրությամբ հստակ կերպով սահմանված չեն նաև

շրջակա միջավայրի առնչությամբ որոշումների կայացման գործընթացին հասարակության մասնակցությունն ապահովող ընթացակարգերը: Նշված ընթացակարգերի սահմանման պահանջը բխում է նաև Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին Օրհուսի կոնվենցիայի դրույթներից:

Այդ կապակցությամբ հարկ ենք համարում անդրադառնալ «Դալմայի այգիներ» տարածքի կառուցապատման առնչությամբ Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության հանձնաժողովի կողմից 2006թ. մարտին ընդունված եզրակացություններին և առաջարկություններին:

Դիմումը ներկայացվել է երեք հասարակական կազմակերպությունների կողմից դեռևս 2004թ. սեպտեմբերին: Դիմումով նշվել է, որ «Դալմայի այգիներ» տարածքի հողերի նպատակային նշանակության փոփոխման, ինչպես նաև առանձին հողատարածքները վարձակալության հանձնելու վերաբերյալ 2003թ. մարտից 2004թ. մարտ ամիսն ընկած ժամանակահատվածում ՀՀ կառավարության հինգ որոշումների ընդունման վերաբերյալ հասարակական քննարկումներ չեն անցկացվել, չի իրականացվել բնապահպանական փորձաքննություն, հասարակությունը չի տեղեկացվել այդ որոշումների ընդունման մասին: ՀՀ կառավարության որոշումներն ընդունվել են որպես անհատական իրավական ակտեր, հասարակությունը դրանց վերաբերյալ հնարավորություն չի ունեցել առաջարկելու այլ տարբերակներ, տեղեկացել է այն ժամանակ միայն, երբ գործընթացն ավարտված է եղել:

Իսկ երբ այդ որոշումները բողոքարկվել են դատարան, դատարանները մերժել են դիմումների ընդունումն այն պատճառաբանությամբ, որ ՀՀ կառավարության որոշումների հակասահմանադրականության հարցի քննարկումը ՀՀ սահմանադրական դատարանի իրավասությունն է:

Համապատասխանության հանձնաժողովը քննել է տվյալ գործը 2005թ. մայիսի 22-ին Ալմա-Աթայում կայացած նիստում, իսկ 2006թ. մարտի 29-31-ի իր 11-րդ նիստի ընթացքում հաստատել է եզրակացությունների և առաջարկությունների վերջնական տարբերակը:

Մասնավորապես նշվել է, որ հողի օգտագործման և կառուցապատման վերաբերյալ կառավարության որոշումները Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի իմաստով համարվում են «միջոց»: Իսկ պահանջված տեղեկությունները հստակորեն ներառվում են 2-րդ հոդվածի 3-րդ կետում սահմանված «բնապահպանական տեղեկատվություն» հասկացության մեջ :

Ուստի, հանձնաժողովի կարծիքով Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի իմաստով պետական մարմիններ համարվող ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն և Երևանի քաղաքապետարանը պարտավոր էին տրամադրել դիմողների կողմից 4-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան խնդրարկված՝ շրջակա

միջավայրին առնչվող տեղեկությունները և այդ պահանջը չկատարելու կամ նշված հոդվածով սահմանված ժամկետները չպահպանելու արդյունքում խախտվել են Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները:

Հողերի նպատակային նշանակության փոփոխումը գնահատվել է որպես շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունեցող գործողություն, որի դեպքում կիրառելի են կոնվենցիայի դրույթները: Հանձնաժողովը գտել է, որ առանց հասարակության մասնակցությունն ապահովելու համապատասխան որոշումների ընդունմամբ խախտվել են Կոնվենցիայի 7-րդ հոդվածի դրույթները: Ընդգծվել է նաև, որ տվյալ դեպքում խախտվել են նաև ՀՀ օրենսդրության պահանջները: Հանձնաժողովի կարծիքով Կոնվենցիայի 4-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված պահանջների խախտման պատճառը ոչ այնքան օրենսդրության մեջ առկա բացերի, այլ իրավակիրառ պրակտիկայի մեջ է :

Հանձնաժողովը նշել է նաև, որ կոնկրետ գործողությունների առնչությամբ որոշումների կայացման գործընթացում հասարակության մասնակցության ապահովման ընթացակարգերը բավարար չափով սահմանված չեն օրենսդրությամբ: Թեև այդ կապակցությամբ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքով ամրագրված են որոշակի դրույթներ, խորհուրդ է տրվել մշակել առավել հստակ ընթացակարգ:

Դիմումի քննարկման արդյունքներով Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության հանձնաժողովը ճանաչել է ՀՀ-ում Դալմայի այգիների կառուցապատման գործով Օրհուսի կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 6-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի և 1-ին հավելվածի 20-րդ կետի, 6-րդ հոդվածի 2-5 և 7-9 կետերի, 7-րդ հոդվածի և 9-րդ հոդվածի 2-4 կետերի դրույթների խախտումները :

Այդ խախտումների առնչությամբ, հետագայում նման խախտումները բացառելու նպատակով, հանձնաժողովը մեր հանրապետությանը ներկայացրել է 7 կետից բաղկացած առաջարկություններ, որոնք կապահովեն շրջակա միջավայրին առնչվող տեղեկատվության մատչելիությունը, նման գործընթացներին հասարակության մասնակցությունը, այլընտրանքային տարբերակների քննարկումը, արդարադատության մատչելիությունը:

## 2.2. Քաղաքացիական և քաղաքական իրավունքներ

### 2.2.1. Խոշտանգումների արգելում

*ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:*

Խոշտանգումների արգելքի սկզբունքը սահմանված է բազմաթիվ միջազգային և տարածաշրջանային համաձայնագրերով: Այս սկզբունքն իր ամրագրումն է ստացել նաև ՀՀ Սահմանադրությամբ(17-րդ հոդվ.), ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածներով, որպես կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություն՝ նաև ՀՀ քրեական օրենսգրքով:

Հարկ ենք համարում անդրադառնալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից խոշտանգումների, դաժան կամ անմարդկային վերաբերմունքի վերաբերյալ դիմումների քննության առանձնահատկություններին:

Եվրոպական դատարանի վճիռների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, եթե պատասխանող կառավարությունն իր օրենսդրությանը համապատասխան ընթացք չի տալիս ձերբակալված կամ կալանավորված անձի՝ խոշտանգումների, դաժան կամ անմարդկային վերաբերմունքի վերաբերյալ վիճելի գանգատին, թերանում է նման քննություն իրականացնելու հարցում և նման քննության միջոցով չի պարզում կալանքի տակ գտնվող անձանց՝ ոստիկանության հսկողության տակ գտնվելու ընթացքում ստացած վնասվածքների առաջացման պատճառներն ու այդ վնասվածքների հետ կապված այլ հանգամանքները, ապա Եվրոպական դատարանն առաջնորդվում է այն կանխավարկածով, որ այդ վնասվածքները պատճառվել են ոստիկանների կամ պետության այլ ներկայացուցիչների կողմից՝ ի խախտումն Կոնվենցիայի 3-րդ հոդվածի:

Այդ առումով ուշագրավ է Սեքափ Վեզնեդարօղլուն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռը: Չնայած նրան, որ Եվրոպական դատարանն իր տրամադրության տակ չի ունեցել ապացույցներ այն մասին, որ դիմողին վնասվածքներ պատճառել են ոստիկանները, այնուամենայնիվ, ելնելով այն հանգամանքից, որ դրանք պատճառվել են ոստիկանությունում գտնվելու ընթացքում, և ներպետական իշխանություններն այդ վնասվածքների պատճառները պարզելու նպատակով արդյունավետ քննություն չեն իրականացրել, Դատարանն առաջնորդվել է այն կանխավարկածով, որ դրանք պատճառվել են ոստիկանների կողմից: Տվյալ գործով ճանաչվել է պետության կողմից Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտումը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր բազմաթիվ վճիռներով արտահայտել է հստակ դիրքորոշում այն մասին, որ եթե անձը գանգատ է ներկայացնում իր նկատմամբ ոստիկանության կամ պետության այլ ներկայացուցիչների կողմից Կոնվենցիայի 3-րդ հոդվածով արգելված վերաբերմունք կիրառելու վերաբերյալ, ապա այդ հոդվածը, Կոնվենցիայի 1-ին հոդվածով նախատեսված պետության ընդհանուր պարտավորության լույսի ներքո, պահանջում է իրականացնել արդյունավետ պաշտոնական քննություն, որի միջոցով հնարավոր կլինի պարզել և պատժել նման վերաբերմունքի համար պատասխանատու անձանց»[8]:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված է. «Կասկածյալի, մեղադրյալի և նրանց պաշտպանի հայտարարությունները իրենց անմեղության, կասկածյալին կամ մեղադրյալին արդարացնող, իրենց պատասխանատվությունը մեղմացնող ապացույցների առկայության մասին, ինչպես նաև քրեական դատավարության ընթացքում օրինականության խախտումների վերաբերյալ բողոքները պետք է մանրակրկիտ ստուգի քրեական վարույթն իրականացնող մարմինը»:

Ստացված բողոքների քանակը և բնույթը վկայում են այն մասին, որ օրենքի այդ պահանջը քրեական հետապնդման մարմինների կողմից ոչ միշտ է լիարժեք կերպով իրականացվում:

2002թ. հոկտեմբերին Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի ներկայացուցիչներն առաջին անգամ այցելել են Հայաստան: Այցելության արդյունքների հիման վրա ԵԽ Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի՝ դեռևս 2004 թվականին հրապարակված զեկույցով արձանագրվել է, որ այցի ընթացքում կոմիտեի ներկայացուցիչները արժանահավատ տեղեկություններ են ձեռք բերել, որ ձերբակալված անձինք գտնվում են ոստիկանության կողմից դաժան վերաբերմունքի ենթարկվելու մեծ ռիսկի տակ: Նշվել է նաև, որ ծեծն ու այլ խոշտանգումները ՀՀ-ում կիրառվում են հիմնականում ինքնախոստովանական ցուցմունքներ կորզելու նպատակով: Զեկույցում արծարծվել են նաև քրեակատարողական հիմնարկներում, ԶՊՎ-ներում անձանց պահման պայմանների վերաբերյալ հարցեր: Մասնավորապես նշվել են ԶՊՎ-երի և քրեակատարողական հիմնարկների գերբեռնվածության և դատապարտյալների զբաղվածության ապահովման հետ կապված խնդիրները:

Կոմիտեն առաջարկել է առաջնային կարևորություն տալ ոստիկանության աշխատակիցների մասնագիտական վերապատրաստումներին, որոնք կներառեն նաև ժամանակակից հարցաքննության մեթոդները:

Զեկույցով առաջարկվել է նաև, որ ձերբակալվածներին պահելու վայրերում ապահովվի անհրաժեշտ բնակմակերեսի նորման՝ առնվազն 4 քմ, բավարար

---

[8] Տե՛ս, Սևքափ Վեզնեդարօղլուն ընդդեմ Թուրքիայի գործով վճիռը

լուսավորություն, օդափոխություն, սանիտարահիգիենիկ բավարար պայմաններ, բավարար քանակի և որակի սնունդ, անհրաժեշտ վերանորոգում:

2006թ. ընթացքում սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև ստացված բողոքների հիման վրա ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից ՀՀ ոստիկանության ձերբակալվածների պահման վայրեր, արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ կատարված այցելությունների, ինչպես նաև ստացված դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքներով, պետք է արձանագրենք, որ Կոմիտեի զեկույցում արծարծված հիմնախնդիրներն առկա են նաև այսօր, դրա հետ միասին պետք է նշենք, որ վերջին չորս տարիների ընթացքում մեծ դրական տեղաշարժ է նկատվում այդ ոլորտում: Քրեակատարողական հիմնարկներում կալանավորվածներին և դատապարտյալներին պահելու պայմանները մանրամասն նկարագրված են զեկույցի 3-րդ բաժնում (ՀՀ արդարադատության նախարության համակարգի մարմիններ): Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի ներկայացուցիչները Հայաստան են այցելել նաև 2006թ., կոմիտեի զեկույցը գտնվում է նախապատրաստման փուլում:

2006թ. մայիսի 31-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ Կոնվենցիայի կամընտիր Արձանագրությունը, որն ուժի մեջ է մտել հունիսի 22-ին: Արձանագրության 17-րդ հոդվածի համաձայն՝ Արձանագրության ուժի մեջ մտնելուց կամ այն վավերացնելուց կամ նրան միանալուց ոչ ուշ, քան մեկ տարի հետո յուրաքանչյուր մասնակից պետություն պետք է հաստատի, նշանակի կամ ստեղծի մեկ կամ մի քանի կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ՝ ներպետական մակարդակով խոշտանգումների կանխարգելման նպատակով: Արձանագրության 18-րդ հոդվածի 4-րդ մասում հատկապես շեշտվում է ազգային մեխանիզմ ստեղծելիս մարդու իրավունքների պաշտպանության և խթանման ազգային հաստատությունների կարգավիճակին վերաբերող սկզբունքները /Փարիզյան սկզբունքներ/ պատշաճ կերպով հաշվի առնելու անհրաժեշտությունը:

Նկատի ունենալով, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը համապատասխանում է Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ Կոնվենցիայի կամընտիր Արձանագրությամբ սահմանված կանխարգելման անկախ ազգային մեխանիզմի հիմնական չափանիշներին և կարող է ստանձնել նրա գործառույթները Հայաստանում՝ Պաշտպանի կողմից ՀՀ արտաքին գործերի նախարարությանը ներկայացվել է առաջարկ՝ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը որպես կանխարգելման ազգային մեխանիզմ ճանաչելու վերաբերյալ: Նշված հարցը դեռևս քննարկման փուլում է:

### 2.2.2. Արդար դատաքննության իրավունք

*ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:*

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Պաշտպանն իրավասու չէ միջամտել դատական վարույթին, պահանջել դատարաններից և դատավորներից բողոքի ուսումնասիրության ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ պարզաբանումներ, նա չի կարող քննարկել այն բողոքները, որոնք պետք է լուծվեն միայն դատական կարգով, ինչպես նաև պարտավոր է դադարեցնել բողոքի քննարկումը, եթե քննարկումն սկսելուց հետո շահագրգիռ անձը հայց կամ բողոք է ներկայացրել դատարան:

2005թ. մայիսի 6-ի որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության 2-րդ նախադասությամբ ամրագրված դրույթը ճանաչեց ՀՀ Սահմանադրության 39-րդ և 97-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին չհամապատասխանող: Նշված դրույթով, մասնավորապես, սահմանվում էր Պաշտպանի իրավունքը՝ դատաքննության մեջ գտնվող ցանկացած գործի մասին տեղեկություններ պահանջելու և առաջարկներ ներկայացնելու դատարան՝ երաշխավորելով քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ միջազգային իրավունքի նորմերով նախատեսված դատավարության իրավունքի պատշաճ ի կատար ածումը:

Որոշմամբ սահմանվեց նաև, որ Պաշտպանի՝ դատարաններից տեղեկություններ պահանջելու իրավունքը՝ օրենքի համապատասխան հոդվածների դրույթների կիրառելիության ապահովման հետ կապված, ենթակա է բավարարման, եթե դա միջամտություն չէ դատական վարույթին՝ չի առնչվում որոշակի գործով արդարադատության իրականացմանը, չի վերաբերում դատարանի վարույթում գտնվող գործի քննության նյութական և դատավարական բնույթի հարցերին:

Մինչդեռ, դատարանների դեմ ուղղված բողոքների մի զգալի մասը վերաբերում է հենց դատավարական պահանջների խախտումներին, ինչպիսիք են՝ դատաքննության անհիմն հետաձգման դեպքերը, հայցադիմումը, գործով կայացված վճիռը կամ որոշումը կողմերին օրենքով սահմանված ժամկետներում չուղարկելը, դատական նիստի մասին կողմերին պատշաճ չծանուցելը և այլն: Այս դեպքերում, ինչպես նաև դատարանների կողմից կայացվող վճիռների և դատավճիռների օրինականությունը և հիմնավորվածությունը վիճարկող

բողոքների կապակցությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից կայացվել է բողոքը չքննարկելու մասին որոշում՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Այնուամենայնիվ, Պաշտպանի կողմից կատարվել են որոշակի դատական գործերի ուսումնասիրություններ, որոնց վերաբերյալ վճիռները մտել են օրինական ուժի մեջ: Նշենք, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի ուժով Պաշտպանն իրավունք ունի ծանոթանալ այն գործերին, որոնց վերաբերյալ դատավճիռները, վճիռները և որոշումները մտել են օրինական ուժի մեջ:

Առանձին դատական գործեր մանրամասն վերլուծվել են զեկույցի 3-րդ բաժնում (Դատարաններ):

Ուշադրության են արժանի հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման գործընթացը կարգավորող համապատասխան կառավարության որոշումները վիճարկելու վերաբերյալ դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքները:

Այսպես, դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ ընդհանուր իրավասության դատարանները ՀՀ կառավարության կողմից ընդունված իրավական ակտերի՝ օրենքին համապատասխանության վերաբերյալ դիմումներին առնչվող հարցը քննելիս, հիմք ընդունելով ՀՀ քաղ. դատ. օր.-ի 160-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունը, մերժել են դրանց քննության ընդունումը:

Պետք է նշել, որ ընդհանուր իրավասության դատարանների կողմից ձևավորված այս դիրքորոշումը, որը կապված է ՀՀ քաղ. դատ. օր.-ի 160-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության մեկնաբանությանը, ոչ միայն համահունչ չէ ՀՀ քաղ. օր.-ի 15-րդ հոդվածի 1-ին մասին, այլ նաև հակասում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասին[9]:

Այս հետևությունը հաստատվում է նաև 16.11.2006 թ. ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 665 որոշմամբ, որով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունը՝ իրավակիրառ պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակությամբ, ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածների պահանջներին հակասող ու անվավեր:

---

[9] Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 16 նոյեմբերի 2006 թվականի թիվ 665 որոշումը

Կարևոր ենք համարում անդրադառնալ նաև ՀՀ քաղաքացիական դատավարության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերում 07.07.2006թ. կատարված փոփոխություններին՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու պայմանների սահմանման կապակցությամբ:

07.07.2006թ. ընդունված և 05.08.2006թ. ուժի մեջ մտած՝ «Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով սահմանվեցին վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու պայմանները:

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2-րդ հոդվածով նախատեսվեց, որ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե՝

1) վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ

2) վերանայվող դատական ակտը հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունված դատական ակտին, կամ

3) ստորադաս դատարանի կողմից դատավարական կամ նյութական իրավունքի խախտման արդյունքում հնարավոր դատական սխալը կարող է առաջացնել ծանր հետևանքներ, կամ

4) առկա են նոր երևան եկած հանգամանքներ:

Վճռաբեկ բողոքների «թույլատրելիության նման համակարգ» սահմանվեց նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով:

Վճռաբեկ բողոքի թույլատրելիության այս չափանիշների համար օրենքներում գործածվում է վճռաբեկ բողոքի «հիմնավորումներ» տերմինը: Վճռաբեկ բողոք ներկայացնելու «հիմքերն» իրենք որևէ փոփոխության չեն ենթարկվել: Քննարկվող չափանիշների նշանակությունն այն է, որ այսուհետ վճռաբեկ բողոք ներկայացնելու համար դատավարական օրենսգրքերով նախատեսված հիմքերն ինքնին բավարար չեն լինի վճռաբեկ դատարանի կողմից գործը վարույթ ընդունելու համար: Հարկ կլինի, որ այդ հիմքերն արտահայտված լինեն օրենքներով նախատեսված ձևերից որևէ մեկով:

Պետք է նշել, որ սահմանված պայմանները չեն համապատասխանում իրավական որոշակիության պահանջներին՝ հնարավորություն տալով վճռաբեկ դատարանի կողմից սուբյեկտիվիզմի դրսևորումներին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անդրադառնալով Կոնվենցիայի իմաստով «օրենք» հասկացությանը՝ մասնավորապես նշել է, որ որևէ իրավական նորմ չի

կարող «օրենք» համարվել, եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին[10]:

Ընդ որում, հարկ է նշել, որ խնդիրը ոչ այնքան վերոնշյալ դրույթների ձևակերպումների մեջ է, այլ իրավակիրառ պրակտիկայում:

Ինչպես նշեցինք, ՀՀ քրեական դատավարության և քաղաքացիական դատավարության օրենսգրքերի համապատասխան փոփոխությունները ուժի մեջ մտան 05.08.2006թ.-ից: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից կատարված ուսումնասիրությունները վկայում են նաև այն մասին, որ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից բողոքի՝ թույլատրելիության պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ վերադարձվել են բոլոր այն վճռաբեկ բողոքները, որոնք ներկայացված են եղել վճռաբեկ դատարան դեռևս մինչև ՀՀ քրեական դատավարության և քաղաքացիական դատավարության օրենսգրքերի փոփոխությունների ուժի մեջ մտնելը՝ 05.08.2006 թվականը: Ընդ որում, վերադարձվել են նաև այն բողոքները, որոնց ներկայացման օրվանից դատարանի կողմից գործի քննության համար օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը արդեն իսկ լրացած է եղել:

Գտնում ենք, որ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ մինչև 05.08.2006թ. ներկայացված վճռաբեկ բողոքները վերադարձնելու մասին համապատասխան որոշումները չեն համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին: Այս որոշումներով հետադարձ ուժ է տրվել ֆիզիկական անձանց իրավունքների իրականացման կարգը խստացնող իրավական ակտերին:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն: Նման դրույթ է սահմանված նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածով:

Նույն սկզբունքն իր ամրագրումն է ստացել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: Օրենսգրքի 4-րդ հոդվածի երկրորդ մասով սահմանված է, որ դատավարության մասնակիցների իրավունքները վերացնող կամ սահմանափակող, ինչպես նաև նրանց վիճակն այլ կերպ վատթարացնող քրեական դատավարական օրենքը հետադարձ ուժ չունի և չի տարածվում մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը սկսված վարույթի վրա:

Այս նորմերի սահմանումը պայմանավորված է իրավական որոշակիության ապահովման անհրաժեշտությամբ: Օրենսդրի կողմից նախկինում սահմանված պայմանների փոփոխումը պետք է իրականացվի այնպիսի եղանակով, որպեսզի պահպանվի

---

[10] Տե՛ս Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության *(The Sandy Times v. The United Kingdom)* գործով 26.04.1979թ. վճռի 49 պարագրաֆը, Մալոնեն ընդդեմ Միացյալ Թագավորության *(Malone v. The United Kingdom)* գործով 02.08.1984թ. վճռի 66 պարագրաֆը, Ջեյմսը եւ մյուսները *(James and Others v. The United Kingdom )* գործով 22.01.1986թ. վճռի 67 պարագրաֆը):

քաղաքացիների վստահությունը օրենքի նկատմամբ և պետության գործողությունների նկատմամբ, ինչը ենթադրում է իրավական կարգավորման ողջամիտ կայունություն և կանխատեսելիություն:

## 2.2.3. Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք

*ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք:*

2006թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ստացել է անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքին առնչվող 19 բողոք:

Դրանք առավելապես վերաբերել են կալանքը՝ որպես խափանման միջոց ընտրելու, անձին անազատության մեջ ապօրինի պահելու հետ կապված խնդիրներին:

Այս բողոքները մանրամասն վերլուծված են զեկույցի 3-րդ բաժնում:

Հարկ ենք համարում առանձին անդրադառնալ անձին բերման ենթարկելու հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորման որոշ հարցերին:

Այսպես, ՀՀ քր. դատ. օր-ում կատարված փոփոխություններից հետո բերման ենթարկելու կիրառումը համարվում է իրավաչափ նաև քրեական գործ հարուցելու նպատակով նյութեր նախապատրաստելու ընթացքում:

Մասնավորապես, ՀՀ քր. դատ. օր.-ի 180-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նյութերի նախապատրաստման ընթացքում կարող են պահանջվել բացատրություններ, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն, հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում՝ **կարող են բերման և անձնական խուզարկության ենթարկվել անձինք,** հետազոտման համար վերցվել նմուշներ, նշանակվել փորձաքննություն:

Իհարկե, հասկանալի է օրենսդրի բարի կամքն առավել դյուրին դարձնելու քրեական հետապնդման մարմինների աշխատանքը տաք հետքերով հանցանքի հատկանիշները հայտնաբերելիս: Այսինքն՝ տվյալ դեպքում փորձ է արվել գերակա նշանակություն տալ հանրային շահին մասնավորի հաշվին:

Մեր համոզմամբ, սակայն, նման կարգավորումը կարող է հանգեցնել անձի իրավունքների անհարկի սահմանափակմանը: Ավելին՝ Օրենսգրքով նախատեսված չէ որևէ երաշխիք անհիմն բերման ենթարկվելուց խուսափելու համար: Մասնավորապես, նախատեսված չեն բերման ենթարկված անձանց պահելու առավելագույն ժամկետներ, որոնց ընթացքում անհապաղ պետք է կատարվեն բերման ենթարկված անձի ինքնությունը

պարզելուն ուղղված գործողություններ: Այդ մասին ոչինչ նշված չէ նաև ՀՀ քր. դատ. օր.-ի 153-րդ հոդվածում:

Ավելին՝ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ կետն իր հերթին անորոշ ձևակերպմամբ Ոստիկանությանն ուղղակի իրավունք է վերապահում պահել բերման ենթարկված անձանց:

Առաջարկվող դիրքորոշումը բխում է նաև պրակտիկայի վերլուծությունից: Հաստատվել են դեպքեր, երբ բերման ենթարկված անձինք հետաքննության կամ վարույթն իրականացնող մարմնի կողմից պահվում են նույնիսկ մի քանի օր:

## Օրինակ 1

Դիմումատուի փաստաբանը Մարդու իրավունքների պաշտպանին ուղղած բանավոր բողոքով հայտնել է, որ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի (այսուհետ՝ ՔՀԲ) աշխատակիցները 23.09.2006թ. ժամը 23-ի սահմաններում ապօրինաբար բաժին են բերման ենթարկել իր վստահորդին և երկու օր է, ինչ հրաժարվում են նրան ազատ արձակել:

Մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ աշխատակազմի աշխատակիցները տեղի ունեցածի հանգամանքները պարզելու նպատակով այցելել են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժին և հանդիպել բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալին, ինչպես նաև ՔԳԲ պետին:

Ըստ որում, բաժին այցելելու պահին դիմումատուի վստահորդը դեռ գտնվում էր այնտեղ: Հիշյալ պաշտոնատար անձանց կողմից տրված պարզաբանումներից հայտնի դարձավ, որ հարուցված քրեական գործ առկա չէր, և քաղաքացին չուներ որևէ դատավարական կարգավիճակ:

Այսինքն՝ նշված քաղաքացուն բաժնում պահելը չի ունեցել որևէ իրավական հիմք: ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի ՔՀ բաժնի պետի կողմից տրված պարզաբանման համաձայն՝ քաղաքացու նկատմամբ քրեական գործ հարուցելու նպատակով նախապատրաստվել են նյութեր, որոնք վերջնական լուծման նպատակով արդեն ուղարկվել են Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների դատախազություն:

Այնուհանդերձ, Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների պահանջի հիման վրա քաղաքացին անմիջապես ազատ է արձակվել:

Ուշադրության է արժանի նաև ձերբակալման դատական բողոքարկման կարգի հետ կապված հետևյալ հիմնախնդիրը.

Այսպես, ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով՝ յուրաքանչյուրն իրավունք ունի իր ազատությունից զրկման կամ խուզարկության օրինականությունն ու հիմնավորվածությունը բողոքարկելու վերադաս դատական ատյանում:

Մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ոչ մի ուղղակի նշում չի բովանդակում այն մասին, որ ձերբակալված անձն իրավունք ունի ձերբակալման օրինականությունն ու հիմնավորվածությունը բողոքարկել դատարանում: Օրենսդիրը նախատեսել է միայն ընդհանուր բնույթի նորմեր, որոնք վերաբերում են քրեական հետապնդման մարմինների գործողություններն ու որոշումները դատարան բողոքարկելուն (ՀՀ քր. դատ. օր. –ի 103-րդ հոդվածի 1-ին մաս, 290-րդ հոդվածի 1-ին մաս):

Թեև ՀՀ Սահմանադրության նորմերը գործում են անմիջականորեն, այնուամենայնիվ, գտնում ենք, որ առավել նպատակահարմար կլիներ հստակորեն ամրագրել նշված նորմը նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր ձերբակալման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ձերբակալումն անօրինական է: Նմանատիպ պահանջ է ամրագրված նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածի 4-րդ մասում:

Կարևոր ենք համարում անդրադառնալ նաև ՀՀ Նախագահի 2006թ. հուլիսի 31-ի ՆՀ-163-Ն հրամանագրին, որով սահմանվել է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովների կազմավորման և գործունեության կարգը:

Հանձնաժողովները գործում են 2006թ. օգոստոսի 1-ից և եզրակացություններ են տալիս քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից պայմանական վաղակետ ազատման ներկայացված դատապարտյալների նկատմամբ պայմանական ազատում կերառելու թույլատրելիության վերաբերյալ:

Հանձնաժողովի որոշումների վերաբերյալ դատապարտյալներից ստացվել է 11 բողոք: Դիմումատուների համոզմամբ՝ իրենց վերաբերյալ հանձնաժողովի կողմից ընդունված եզրակացությունները եղել են ոչ օբյեկտիվ:

Նման բողոքներով անցկացված ուսումնասիրություններով պարզվել է, որ քրեակատարողական հիմնարկներից պայմանական վաղակետ ազատման են ներկայացվում այն բոլոր դատապարտյալները, որոնք դատարանով նշանակված պատժի օրենքով նախատեսված մասը կրել են և իրավունք են ստացել ներկայացնելու պայմանական վաղակետ ազատման համար խնդրանք:

ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածը նվիրված է պատիժը կրելուց պայամանական վաղաժամկետ ազատման հիմքերին: Համաձայն հոդվածի 1-ին մասի՝ «Հանրային աշխատանքների, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով

պատիժ կրող անձն իր համաձայնությամբ կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը գտնի, որ նա ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի»: «Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելիս դատարանը հաշվի է առնում նաև դատապարտվածի կողմից տուժողին պատճառված վնասը հարթելու հանգամանքը»:

Այստեղից հետևում է, որ անկախ հանձնաժողովը խնդիր ունի՝ պարզել, թե որքանով են բավարար դատապարտյալի վերաբերյալ այն տվյալները, որոնք հիմք կտան դատարանին՝ համոզվելու, որ տվյալ դատապարտյալն ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի:

Պատիժը կրելու ընթացքում դատապարտյալի ստացած խրախուսանքները, հասարակական աշխատանքներին ակտիվորեն մասնակցելը, մյուս կալանավորների վրա ունեցած դրական ազդեցությունը, մշտական կապն ընտանիքի հետ և նման այլ բնույթի տվյալների առկայության դեպքում հանձնաժողովը բնականաբար պետք է տա դրական կարծիք:

Երբ դատապարտյալի վերաբերյալ բացակայում են նման տվյալները և դրա փոխարեն առկա են նրան բացասական բնութագրող այլ տվյալներ, հանձնաժողովի կարծիքը չի կարող լինել դրական:

Անկախ հանձնաժողովը հիմնականում գործել է այս սկզբունքներով:

### 2.2.4. Այլ անձանց հետ միավորումներ կազմելու իրավունք

*ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունք:*

Միավորվելու իրավունքն ամրագրված է մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածում: «Միավորվելու ազատություն» հասկացությունը մեկնաբանելիս Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է այն հետևյալ կերպ՝ «Միավորվելու ազատությունն անձանց՝ առանց պետության միջամտության, ընդհանուր նպատակներին հասնելու համար միավորման մեջ հավաքվելու ընդհանուր հնարավորությունն է:»

Եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 11-րդ հոդվածն անառարկելիորեն կիրառելի է նաև քաղաքական կուսակցությունների նկատմամբ: Այսպես, Թուրքիայի սոցիալիստական կուսակցությունը և այլք ընդդեմ Թուրքիայի գործով կայացված վճռով Դատարանն ընդգծել է, որ եթե 11-րդ

հոդվածը համարվում է ժողովրդավարության պատշաճ գործառությունն ապահովող իրավական երաշխիք, ապա քաղաքական կուսակցություններն այս հոդվածով պաշտպանվող միավորումների առավել կարևոր ձևն են:

Անդրադառնալով միավորվելու իրավունքի սահմանափակման հարցին՝ նշենք, որ Կոնվենցիան այս իրավունքի սահմանափակումը թույլատրելի է համարում միայն հետևյալ դեպքում. եթե սահմանափակումը նախատեսված է պատասխանող պետության ներպետական օրենսդրությամբ, հետապնդում է Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված որևէ իրավաչափ նպատակ կամ նպատակներ, անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում:

Եվրոպական դատարանն առանձնահատուկ մոտեցում է ցուցաբերել պետության կողմից քաղաքական կուսակցությունների գործունեության արգելման հարցի նկատմամբ:

Մասնավորապես, Միացյալ կոմունիստական կուսակցությունը և այլք ընդդեմ Թուրքիայի գործով կայացված վճռում դատարանը նշել է, որ այն գործերով, որոնցով քաղաքական կուսակցության լուծարման մասին որոշում է կայացվել և դրա ղեկավարներին արգելվել է հետագայում զբաղվել քաղաքական գործունեությամբ, Եվրոպական դատարանի կողմից քննություն իրականացնելիս պահանջվում է առանձնապես խիստ հսկողություն:

Մի շարք վճիռներով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը շեշտել է նաև, որ միայն լուրջ իրավախախտումները, որոնք կարող են վտանգել քաղաքական պլյուրալիզմը և հիմնարար ժողովրդավարական սկզբունքները, կարող են արդարացնել քաղաքական կուսակցության գործունեության արգելքը:

Ուշադրության են արժանի նաև «Քաղաքական կուսակցությունների արգելման և լուծարման վերաբերյալ» Վենետիկի հանձնաժողովի կողմից 1999թ. դեկտեմբերին ընդունված ղեկավար սկզբունքները: Մասնավորապես, սկզբունքներով սահմանվում է, որ քաղաքական կուսակցության գործունեության արգելքը կամ հարկադիր լուծարումը կարող է արդարացված լինել միայն այն դեպքում, երբ այդ կուսակցությունը բռնության կամ ժողովրդավարական սահմանադրական կարգի տապալման քարոզչություն է իրականացնում՝ դրանով իսկ վտանգելով սահմանադրությամբ երաշխավորված իրավունքները և ազատությունները:

Սկզբունքներով շեշտվել է նաև, որ կուսակցության գործունեության արգելքը և լուծարումը ժողովրդավարական հասարակությունում պետք է հանդես գան որպես բացառիկ միջոցներ:

Միավորումներ կազմելու իրավունքի ապահովման տեսանկյունից հետաքրքրություն են ներկայացնում «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերը, որոնք վերաբերում են ընտրություններում անհրաժեշտ քանակությամբ ձայներ չհավաքելու արդյունքում կուսակցության լուծարման հիմքերին:

Այսպես, «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանվել են կուսակցության լուծարման հետևյալ հիմքերը. կուսակցությունը ենթակա է լուծարման, եթե Ազգային ժողովի իրար հաջորդող ցանկացած երկու ընտրություններից յուրաքանչյուրում ստացել է քվեարկությանը մասնակցած բոլոր կուսակցությունների ընտրական ցուցակների օգտին կողմ տրված ձայների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի մեկ տոկոսից պակաս ձայն, ինչպես նաև չի մասնակցել Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով մեկ ընտրության, իսկ դրան նախորդող կամ հաջորդող ընտրության ժամանակ ստացել է քվեարկությանը մասնակցած բոլոր կուսակցությունների ընտրական ցուցակների օգտին կողմ տրված ձայների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի մեկ տոկոսից պակաս ձայն:

Գտնելով, որ ընտրություններում անհրաժեշտ քանակությամբ ձայներ չհավաքելու հիմքով յուրաքանչյուր քաղաքացու՝ այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքի սահմանափակումը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման նպատակներին՝ Մարդու իրավունքների պաշտպանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերը՝ ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխանության հարցը որոշելու խնդրանքով:

Հարկ է ընդգծել նաև, որ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթները հակասում են նաև ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածի 2-րդ մասին, որի համաձայն՝ կուսակցությունները կազմավորվում են ազատորեն, նպաստում ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը:

Ակնհայտ է, որ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթների իմաստով խորհրդարանական ընտրություններում հաջողության չհասած կուսակցությունը, գործունեությունը շարունակելու պարագայում, նույնպես կարող է նպաստել ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը:

22.12.2006թ. ՀՀ սահմանադրական դատարանը նշված գործով որոշում կայացրեց:

Որոշմամբ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի դրույթները ճանաչվել են ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի 2-րդ մասին և 43-րդ հոդվածին հակասող և անվավեր:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասին համապատասխան՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում նշված որևէ նորմատիվ ակտի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը պարզում է նաև այդ ակտի վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների սահմանադրականությունը:

Հավաստիանալով վիճարկվող դրույթների հետ փոխկապակցված տվյալ նորմատիվ ակտի այլ դրույթների՝ Սահմանադրությանը հակասելու մեջ՝ սահմանադրական դատարանը կարող է Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչել նաև այդ դրույթները:

Ղեկավարվելով նշված դրույթով՝ ՀՀ սահմանադրական դատարանը Սահմանադրության 28-րդ հոդվածի 2-րդ մասին և 43-րդ հոդվածին հակասող ու անվավեր է ճանաչել նաև «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի այն դրույթը, համաձայն որի՝ «Կուսակցությունը ենթակա է լուծարման, եթե Ազգային ժողովի իրար հաջորդող ցանկացած երկու ընտրություններում համամասնական ընտրակարգով ընտրություններին չի մասնակցել»:

Բացի այդ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի հիմքերով Սահմանադրության 31-րդ հոդվածին հակասող և անվավեր է ճանաչվել նաև «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթների հետ փոխկապակցված տվյալ ակտի 31-րդ հոդվածի 4-րդ մասի այն դրույթը, համաձայն որի՝ «Կուսակցության դատական կարգով լուծարումից հետո մնացած գույքը փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը»:

Հարկ է նշել նաև, որ «Կուսակցությունների մասին» նոր օրենքի նախագիծը ներկայումս գտնվում է մշակման փուլում:

## 2.2.5. Խոսքի ազատության իրավունք

*ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն:*

*Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից…*

Տեղեկություններ ստանալու իրավունքը հանդիսանում է խոսքի ազատության իրավունքի բաղկացուցիչ մասը: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի փորձը ցույց է տալիս, որ այս իրավունքը հաճախակի խախտվում է տեղեկատվության իրավունքի իրականացման կարգն ապահովող համապատասխան ենթաօրենսդրական ակտերի բացակայության հետևանքով:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև խոսքի ազատության իրավունքի հետ առնչվող «Լոբբիստական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագծին, որի վերաբերյալ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը իր կարծիքը ներկայացրել է իրավասու պետական մարմնին: Մասնավորապես, շեշտադրվել է հետևյալը.

Ինչպես բխում է նախագծի 4-րդ հոդվածի առաջին մասի և 7-րդ հոդվածի դրույթների համակարգային վերլուծությունից, լոբբիստական գործունեությամբ զբաղվելու իրավունք ունեն բացառապես այն անձինք, ովքեր նախագծով սահմանված կարգով հաշվառվել են որպես լոբբիստներ:

Ընդ որում իբրև լոբբիստական գործունեության իրականացման ձև օրինագծում ներկայացված է, օրինակ, իրավաստեղծ մարմին կամ իրավաստեղծ լիազորությամբ օժտված անձին լոբբիստական գործունեության առարկայի վերաբերյալ առաջարկություններ, տեղեկատվական, վերլուծական և այլ փաստաթղթեր ներկայացնելը /21-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետ/:

Պաշտպանի կողմից ներկայացված եզրակացությամբ հատկապես նշվել է, որ ընդունվելու դեպքում օրինագծի գործողությունը կարող է հանգեցնել ՀՀ Սահմանադրության մի շարք հոդվածների, այդ թվում՝ 27-րդ հոդվածի խախտմանը, որի համաձայն յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք, ինչպես նաև խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Պետք է նշել, որ նախագծում տեղ գտած թերություններն արդյունք են նաև այն բանի, որ նախագծում լոբբիստական գործունեության բնույթն անհրաժեշտ հստակությամբ սահմանված չի եղել:

Այսպես, նախագծի 2-րդ հոդվածի խմբագրությունից հնարավոր չէ սահմանազատել պրոֆեսիոնալ ձեռնարկատիրական գործունեության, այն է՝ լոբբիստական գործունեության և անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության ոլորտները: Լոբբիստական գործունեությունը՝ ըստ օրինագծի, իրավաստեղծ մարմնի և (կամ) իրավաստեղծ լիազորությամբ անձի՝ իրավական նորմ սահմանելու, փոփոխելու կամ դրա գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որոշման վրա ներազդելու նպատակով օրինագծով նախատեսված կարգով իրականացվող գործունեություն է, որն ուղղված է անձի կամ անձանց որոշակի խմբի իրավաչափ շահերն ապահովելուն: Սակայն նախագծով նախատեսված կարգով իրականացվող գործունեությունը շատ դեպքերում նույնական է հասարակական շահերի պաշտպանության հետ:

Առանց պրոֆեսիոնալ ձեռնարկատիրական գործունեության և հասարակական շահերի պաշտպանության ոլորտների սահմանազատման իրավական հստակ չափանիշների (հիմքերի) և լոբբիստական գործունեության իրականացման կարգի սահմանման՝ հնարավոր չէ հասնել սահմանադրական այն նպատակներին, որոնց ապահովման համար կարող է ներմուծվել տվյալ ինստիտուտը: Նման դեպքում լոբբիզմը կորցնում է ժողովրդավարական

ինստիտուտի հատկանիշները, նախադրյալներ ստեղծում ժողովրդավարության սկզբունքներին հակասող նպատակներով նրա անբարեխիղճ օգտագործման համար :

«Արտահայտվելու ազատությունն ընկած է ժողովրդավարական հասարակության հիմքում, այն հանդիսանում է ժողովրդավարական հասարակության և յուրաքանչյուր անհատի զարգացման հիմնական պայմաններից մեկը[11]»:

2006թ. ընթացքում ՀՀ-ում արձանագրվել են մի շարք թերթերի լրագրողների նկատմամբ բռնության, նրանց մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու դեպքեր, ինչը մեծապես սպառնում է Հայաստանում խոսքի ազատության իրավունքի լիարժեք ապահովմանը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը խստորեն դատապարտել է այդ ոտնձգությունները և հանդես է եկել պաշտոնական հայտարարությամբ` կոչ անելով իրավապահ մարմիններին լինել առավել հետևողական լրագրողի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու ցանկացած դեպքի բացահայտման և մեղավորներին օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու համար:

### 2.2.6. Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք

*ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն` յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք :*

Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքն ամրագրված է նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածում, որն ապահովում է ներպետական իրավունքում պաշտպանության միջոցների գոյությունը, ինչը թույլ է տալիս պաշտպանել Կոնվենցիայում ամրագրված իրավունքները և ազատությունները: Այս հոդվածը, հետևաբար, պահանջում է, որ լինի իրավական պաշտպանության միջոց, որը հնարավորություն է տալիս ըստ էության քննարկել Կոնվենցիայի վրա հիմնված բողոքը և համարժեքորեն վերականգնել խախտված իրավունքը: Այս պարտավորության շրջանակը տարբերվում է կախված դիմողի հայցի (դիմումի) բնույթից: Այնուամենայնիվ, իրավական պաշտպանության պահանջվող միջոցը պետք է արդյունավետ և իրական լինի ինչպես իրավունքում, այնպես էլ պրակտիկայում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մեկնաբանությամբ, 13-րդ հոդվածը պահանջում է, որ եթե անձն իրեն համարում է Կոնվենցիայի խախտում հանդիսացող գործողությունից տուժած, ապա նա պետական մարմնի առաջ իրավական պաշտպանության

[11] Տե՛ս Հանդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության Եվրոպական դատարանի վճիռը:

արդյունավետ միջոց պետք է ունենա, որպեսզի կարողանա հասնել ինչպես իր բողոքի վերաբերյալ որոշման ընդունման, այնպես էլ անհրաժեշտության դեպքում վնասի հատուցման:

Մի շարք վճիռներով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 13-րդ հոդվածը պահանջում է ներպետական պաշտպանության միջոցի տրամադրում, որը հնարավորություն կտա ըստ էության քննության առնել Կոնվենցիայի հիման վրա «վիճելի գանգատը» և տրամադրել համապատասխան փոխհատուցում:

Այս համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ ՀՀ-ում բարոյական վնասի հատուցման ինստիտուտի կիրառելիության հարցին:

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ բարոյական վնասի հատուցման ինստիտուտը:

Այնուամենայնիվ, մեր կարծիքով բարոյական վնասի հատուցումը, որպես իրավունքի պաշտպանության եղանակ, համապատասխան դեպքերում պետք է կիրառվի ներպետական դատարանների կողմից:

ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխում թվարկված՝ մարդու և քաղաքացու այն հիմնական իրավունքներն ու ազատությունները, որոնք պաշտպանվում են նաև Եվրոպական Կոնվենցիայով, համահունչ են և դրանց մեկնաբանությունները պետք է լինեն միատեսակ: Նկատի ունենալով, որ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ, այս իրավունքի մեկնաբանությունը նույնպես պետք է համահունչ լինի Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի մեկնաբանությանը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի քանի վճիռներով շեշտել է այն հանգամանքը, որ այն դեպքերում, երբ խախտվում են Կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածները, որոնք հանդիսանում են Կոնվենցիայի հիմնարար դրույթները, նման խախտումից բխող բարոյական վնասի հատուցումը պետք է սկզբունքորեն առկա պաշտպանության միջոցների տարր հանդիսանա: Հետևաբար, նշյալ դեպքերում դատարանները պետք է անմիջականորեն կիրառեն ՀՀ Սահմանադրության նորմը և համապատասխան մարմինների համար սահմանեն բարոյական վնասի հատուցման պարտավորություն:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի իմաստով «իրավական պաշտպանության միջոցի» «արդյունավետությունը» կախված չէ նրանից, թե ինչքանով է այն դիմումատուի համար նպաստավոր որոշման հանգեցնելու, ընդհակառակն, այն նվազագույնս պահանջում է, որ գործն արագ քննարկվի[12]:

[12] Նախարարների կոմիտեի Rec(2004) 6 հանձնարարական-առաջարկությունն անդամ պետություններին
«Իրավական պաշտպանության ներպետական միջոցների բարելավման մասին»

## 2.2.7. Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք

*ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ քարոզի, եկեղեցական արարողությունների և պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը:*

Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը ամրագրված է մի շարք միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերում, այդ թվում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում: Հատկանշական է, որ խղճի ազատության իրավունքի կապակցությամբ կոնվենցիոն մարմինների առջև ծառացած ամենալուրջ հարցը կապված է եղել համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի իրացման հիմնախնդրի հետ: Ներկայումս Մարդու իրավունքների եվրոպական դատարանը համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվելու համար քրեական պատասխանատվության ենթարկելը դիտում է որպես միջամտություն մտքի, խղճի և կրոնի ազատությանը:

Կարևորվում են նաև ԵԽ նախարարների կոմիտեի 1987թ. R(87)8 հանձնարարականը՝ համոզմունքների հիմնավորմամբ պարտադիր զինվորական ծառայությունից հրաժարվելու վերաբերյալ, ինչպես նաև ԵԽ Խորհրդարանական վեհաժողովի 2001թ. թիվ 1518(2001) հանձնարարականը՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի իրացման վերաբերյալ: Հանձնարարականներով անդամ պետություններին առաջարկվել է օրենսդրությամբ ամրագրել համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը, ներպետական օրենսդրությունը և պրակտիկան համապատասխանեցնել այդ իրավունքին առնչվող որոշակի սկզբունքներին:

Անդամակցելով Եվրոպայի խորհրդին, ի թիվս այլ պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է նաև անդամակցության երեք տարվա ընթացքում այլընտրանքային ծառայության մասին եվրոպական չափանիշներին համապատասխան օրենքի ընդունման պարտավորություն: Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է նաև ներում շնորհել համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունը մերժելու պատճառով ազատազրկված կամ ուղղիչ

աշխատանքի դատապարտված անձանց և հնարավորություն տալ նրանց ընտրություն կատարել չզինված ռազմական կամ այլընտրանքային քաղաքացիական ծառայության մեջ:

«Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը ուժի մեջ է մտել 2004թ. հուլիսի 1-ին: Օրենքով այլընտրանքային զինվորական ծառայության ժամկետը սահմանվել է 36 ամիս, իսկ այլընտրանքային աշխատանքային ծառայության ժամկետը՝ 42 ամիս: Վերջինն անցկացվում է ՀՀ կառավարության սահմանած վայրերում (հոգեբուժարան, հաշմանդամների տուն-ինտերնատներ, ծերանոցներ և այլն), այլընտրանքային ծառայության զորակոչի անցկացման աշխատանքներն իրականացնում և վերահսկվում են պարտադիր զինվորական ժամկետային ծառայության զորակոչի անցկացման հարցերով զբաղվող նույն մարմինները:

Եվրոպայի խորհրդի խորհրդանական վեհաժողովը (ԵԽԽՎ) թիվ 1361 (2004)1 բանաձևով անընդունելի և չափազանց երկար է համարել այլընտրանքային քաղաքացիական ծառայության ժամկետը, որը սահմանվել է 42 ամիս: Առաջարկվել է կրճատել ծառայության ժամկետը մինչև 36 ամիս:

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը Հայաստանի ստանձնած պարտավորությունների և հանձնառությունների կատարման վերաբերյալ թիվ 1532(2007) բանաձևով կրկին անդրադարձել է այլընտրանքային ծառայության մասին «եվրոպական չափանիշներին համապատասխանող» օրենք ընդունելու և «համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվելու համար ազատազրկման դատապարտված անձանց ներում շնորհելու»՝ Հայաստանի հանձնառությանը:

# ԲԱԺԻՆ 3.
# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների պահպանումը և դրանց պաշտպանության երաշխավորումն առավելապես պայմանավորվում են հանրային մարմինների գործունեությամբ, մասնավորապես, թե որքանով է այն իրականացվում օրենքի շրջանակներում:

Հանրային մարմիններն իրենց գործունեության ընթացքում պարտավոր են մշտապես ղեկավարվել ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով ամրագրված սկզբունքներով, ըստ որոնց. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջական գործող իրավունք»:

Այս սկզբունքների իրականացումն ապահովելու տրամաբանությամբ է կառուցված «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, որով իրավունքի գերակայության ճանաչումը, իրավունքի հարգումը և պահպանումը վարչական մարմնին օրենքով պարտադրված են որպես գործունեության սկզբունքներ:

Հանրային մարմինների գործունեությանը տրվող Պաշտպանի գնահատականներն ելնում են այն սկզբունքից, որ այդ մարմինները կոչված են ծառայելու մարդուն, իրենց իրավասության սահմաններում կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնք նպատակաուղղված են մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգմանը, խրախուսմանը և ցանկացած ոտնձգությունից այդ իրավունքների պաշտպանությանը: Բացի այդ, կարևորվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում ամրագրված հետևյալ սկզբունքները.

«Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտավորություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են» / հոդվ. 5/:

«Հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության,

վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակ» /հոդվ. 6, մաս 2-րդ/:

Օրենքով ամրագրված այս և մյուս սկզբունքները /«Կամայականության արգելքը», «Վարչարարության համաչափությունը», «Առավելագույնի սկզբունքը», «Հավաստիության կանխավարկածը» և այլն/ կոչված են երաշխավորելու օրենքի իշխանության և իրավունքի գերակայության հաստատումը, ինչը հասարակության ներդաշնակ զարգացման հիմքն է:

Այս սկզբունքներից ցանկացած շեղում գնահատվում է որպես մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում: Այդպիսի շեղումների վերաբերյալ տվյալներ պարունակող բողոքներն են, որ ընդունվում և քննարկվում են Պաշտպանի կողմից:

2006 թվականին ստացված բողոքները, որոնք դասակարգված են ըստ հանրային մարմինների /տե՛ս սույն զեկույցի 1-ին բաժնում/, հիմք են տալիս փաստելու, որ հանրային մարմինները քաղաքացիների դիմում-բողոքների հետ առնչվելիս միշտ չէ, որ ղեկավարվում են իրավունքի գերակայության սկզբունքով կամ ելնում են ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով ամրագրված սկզբունքներից:

2006 թվականի ընթացքում ստացվել է 2687 դիմում-բողոք: Դիմումատուների թիվը կազմել է 6567: 103 բողոքը եղել է կոլեկտիվ՝ ներկայացված 3983 դիմումատուի կողմից: Բացի այդ, 222 դիմումատու այնուհետև ներկայացրել են ևս 132 լրացուցիչ դիմում: Ստացված դիմում-բողոքների բաշխումն ըստ հանրային մարմինների ցույց է տրված զեկույցի 1-ին բաժնում:

Հանրային մարմինների դեմ ուղղված բողոքների նման քանակն, անկախ այն բանից դրանցով իրավունքի խախտում բացահայտվել է, թե՝ ոչ, արդեն իսկ վկայությունն է նրա, որ այդ մարմինների պաշտոնատար անձինք դիմումների ընթացքը լուծելիս թերացել են իրենց պարտականությունների կատարման մեջ: Եթե չեն խախտվել դիմումատուների իրավունքները, ապա տեղ են գտել դիմումատուների նկատմամբ ոչ ուշադիր կամ ոչ հոգատար վերաբերմունք, դիմումների մերժման պատճառների և հիմքերի մասին ոչ լիարժեք տեղեկությունների տրամադրում և նման այլ անթույլատրելի մոտեցումներ:

Բողոքների վերաբերյալ վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ առավել մեծ թիվ են կազմում դատարանների՝ 159, Երևանի քաղաքապետարանի՝ 120, ոստիկանության մարմինների՝ 114, արդարադատության նախարարության համակարգի մարմինների՝ 88, դատախազության՝ 76, աշխատանքի և սոցիալական ապահովության մարմինների՝ 76, կադաստրի մարմինների՝ 39 գործունեությանն առնչվող բողոքները:

2004, 2005 թվականներին ստացված դիմում-բողոքների համեմատ, 2006 թվականին ստացվածների քանակն ըստ հանրային մարմինների՝ մնացել է գրեթե անփոփոխ: Չի

փոխվել նաև ստացվող բողոքների բնույթը՝ ըժգոհություն դատական ակտերից, սոցիալական, այդ թվում՝ աղետի գոտու բնակիչների և փախստականների խնդիրներ, հողային և այլ գույքային վեճեր:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2006 թվականին առավել թվով բողոքները ուղղված են եղել Երևանի քաղաքապետարանի դեմ /չհաշված դատարանների դեմ եղած բողոքները/ և հիմնականում վերաբերել են սեփականության իրավունքի խախտման դեպքերին: Առաջնային են մնում նաև իրավապահ մարմինների՝ դատախազության, ոստիկանության, ինչպես նաև արդարադատության նախարարության համակարգի մարմինների՝ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանն, պետռեգիստրի, քրեակատարողական հիմնարկների, ինչպես նաև դատարանների դեմ ուղղված բողոքները: Պահպանվում է նաև պետական կադաստրի մարմինների դեմ ուղղված բողոքների քանակը:

Ստացված դիմում-բողոքների շարքում կարևորվում են ոստիկանության, դատախազության, արդարադատության նախարարության համակարգի որոշ մարմինների և դատարանների դեմ ուղղված բողոքները, ինչը պայմանավորված է այդ մարմինների՝ իրավունքի սահմանափակում կիրառելու իրավասությամբ օժտված լինելու հանգամանքով, որը մշտապես պարունակում է իրավունքի և ազատությունների խախտման ռիսկեր:

Դրանից ելնելով էլ սահմանվել է ստացված բողոքների վերլուծության հաջորդականությունն ըստ հանրային մարմինների և առաջնային են համարվել իրավապահ մարմինների դեմ ուղղվածները:

## 3.1. Ոստիկանություն

Արդեն նշվել է, որ ոստիկանության դեմ 2006 թվականին ստացվել է 114 բողոք, որից՝

- ընդունվել են քննարկման՝ 44
- փոխանցվել են այլ մարմնի քննարկմանը՝ 26
- ներկայացվել են դիմողի իրավունքների պաշտպանության հնարավորությունները՝ 13
- չեն ընդունվել քննարկման՝ 24
- ուսումնասիրման ընթացքում են՝ 7

Ոստիկանության դեմ ուղղված բողոքները հիմնականում վերաբերել են՝ դիմումատուին ոստիկանություն անհիմն բերման ենթարկելուն, ապօրինի պահմանը, հանցագործության մասին հաղորդմամբ քրեական գործ չհարուցելուն, հարուցված քրեական գործերով հանցագործության բացահայտման ուղղությամբ ակտիվ գործողություններ չձեռնարկելուն կամ որպես մեղադրյալ ներգրավված լինելու դեպքում՝ մեղադրանքի անհիմն լինելուն և նման այլ հանգամանքներին:

Այդ շարքի բողոքների համար բնութագրական է այն, որ դիմումատուները հիմնականում ոժգոհում են ոստիկանության այնպիսի գործողություններից, որոնց օրինականության ստուգումը դատախազական մարմինների իրավասությունն է: Օրինակ՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու, քրեական գործի վարույթը կասեցնելու, որպես մեղադրյալ ներգրավելու, խափանման միջոցը կալանք ընտրելու մասին որոշումների օրինականության վերաբերյալ բողոքները հիմնականում փոխանցվել են դատախազության քննարկմանը կամ դիմումատուին բացատրվել է նման որոշումների բողոքարկման օրենքով սահմանված կարգը: Նման կարգով ընթացք ստացել է 39 բողոք:

Երբ բողոքը վերաբերել է նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությանը և հիմքեր են եղել նման որոշման օրինականությունը կասկածի տակ առնելու համար, գործի նյութերը իրավասու մարմնից պահանջվել և ուսումնասիրվել են: Բողոքը հիմնավոր լինելու դեպքում, առաջարկ է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազին՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու/վերանայելու/ վերաբերյալ: Օրինակ՝ նմանատիպ բողոքներից մեկով, մեր կողմից պահանջված և ուսումնասիրված նյութերի հիման վրա առաջարկ է ներկայացվել նյութերով քրեկան գործի հարուցման որոշումը վերացնելու մասին: Երևան քաղաքի դատախազի կողմից միջնորդությունը բավարարվել է՝ վերացվել է նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը:

Ստացված բողոքների քննարկմամբ արձանագրվել են դեպքեր, երբ հանցագործության վերաբերյալ տրված հաղորդումներով ոստիկանությունում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի կարգով որոշում ընդունելու, որոշման օրինակը դիմումատուին ուղարկելու, տվյալ որոշումը բողոքարկելու իրավունքը պարզաբանելու փոխարեն, նյութերի վերջնական ընթացքը լուծվել է տեղեկանքի կամ զեկուցագրի կազմումով, որի մասին դիմումատուին հաճախ նաև չի հայտնվել: Այս հարցին անդրադարձ կատարվել է նաև Պաշտպանի նախորդ տարիների զեկույցներում: Միայն տեղեկանքով նյութերի ընթացքը լուծելու պրակտիկան հիմնականում վերացվել է, սակայն, այնուամենայնիվ, նման դեպքեր առկա են:

Քիչ չեն դեպքերը, երբ չեն պահպանվում հանցագործության մասին ստացված հաղորդման կապակցությամբ որոշում կայացնելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածով սահմանված ժամկետները: Ըստ նշված հոդվածի՝ նման հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում:

Նույն օրենսգրքի 174-րդ հոդվածի 1-ին մասով ասված է. «Ժամկետն անցնելուց հետո կատարված դատավարական գործողությունները համարվում են անվավեր, եթե ժամկետը չի վերականգնվում»:

Ցանկացած քրեական գործով կարելի է հանդիպել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածով նախատեսված ժամկետների խախտման, ինչը սակայն հետագայում անտեսում է նախաքննություն իրականացնող մարմինը, ապա նաև դատարանն իր վարույթում եղած քրեական գործերով: Նման մոտեցման արդյունքում է, որ նույն օրենսգրքի 174-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված սկզբունքը չի գործում, մնում է որպես հռչակագրային:

Ոստիկանության մարմինների կողմից թույլ տրված իրավունքի խախտումների համար բնութագրական են հետևյալ օրինակները.

## Օրինակ 1

Դիմումատուն գանգատվել է, որ Ծենգավիթի ոստիկանության Չարբախի բաժանմունքի երեք աշխատակից մտել են իրենց տուն և ծեծել որդուն:

Դիմումատուի որդու նկատմամբ բռնություն գործադրած լինելու հանգամանքը չի հիմնավորվել, սակայն պարզվել է, որ նրա նկատմամբ կազմվել է վարչական իրավախախտման մասին արձանագրություն՝ անբավարար տվյալներով:

Պաշտպանի կողմից ոստիկանության աշխատակիցների գործողություններում դիտվել է մարդու իրավունքի խախտում և այդ մասին կայացվել է որոշում: Պաշտպանի որոշման հիման վրա ոստիկանության աշխատակիցն ենթարկվել է կարգապահական տույժի:

## Օրինակ 2

Դիմումատուն գանգատվել է, որ իր երկու հարևանները, օգտագործելով կեղծ փաստաթղթեր, տիրացել են բազմաբնակարան շենքի սպասարկման տարածք հանդիսացող հողատարածքին, երեք նկուղներին, ընդհանուր օգտագործման կաթսայատանը: Երևան քաղաքի ոստիկանության վարչության կենտրոնական բաժնում իր դիմումի կապակցությամբ ձեռք բերված նյութերով առանց բավարար հիմնավորման քրեական գործի հարուցումը մերժվել է:

Ոստիկանության Երևան քաղաքի վարչության կենտրոնական բաժնից պահանջվել են դիմումատուի բողոքի կապակցությամբ նախապատրաստված նյութերը, սակայն դրանք չեն տրամադրվել նաև հիշեցումից հետո:

Որոշում է կայացվել ոստիկանության նշված բաժնի գործողություններում մարդու իրավունքի խախտում տեսնելու մասին և առաջարկվել է նշանակել ծառայողական

քննություն հենց այն հիմքով, որ Պաշտպանի պահանջը՝ նյութերն իրեն ուղարկելու մասին, անտեսվել և չի կատարվել:

Ծառայողական քննություն տվյալ դեպքով նշանակված է, վերջնական արդյունքների մասին տվյալներ դեռևս չեն ստացվել:

## Օրինակ 3

Փաստաբանից բանավոր հաղորդում է ստացվել այն մասին, որ իր վստահորդը բերման է ենթարկվել Արաբկիրի ոստիկանության բաժին և ապօրինի պահվում է անազատության պայմաններում:

Հաղորդումը ստուգվել է տեղում և հաստատվել է, որ քաղաքացուհին պահվում է ոստիկանության բաժնում առանց օրինական հիմքերի՝ չկա հարուցված քրեական գործ, չի կազմվել բերման արձանագրություն, չկա նաև ձերբակալման արձանագրություն կամ որոշում: Նրա նկատմամբ, ըստ բաժնի ղեկավարության, նյութեր կան դատախազությունում, ոստիկանությունն իրականացնում է օպերատիվ գործողություններ:

Պաշտպանի միջամտության արդյունքում քաղաքացին ազատ է արձակվել, սակայն ոստիկանության ապօրինի գործողությունների դեմ բողոք ներկայացնելուց հրաժարվել է:

## Օրինակ 4

Դիմումատուն գանգատվել է, որ Տավուշի մարզի ոստիկանության աշխատակցի անօրինական գործողությունների վերաբերյալ իր բաղոքը ոստիկանության պետը չի ընդունել՝ պատճառաբանել է, որ իր աշխատակցի դեմ բողոքը քննարկելու իրավասություն չունի:

Պաշտպանի միջնորդությամբ ՀՀ ոստիկանության կողմից անցկացվել է ծառայողական քննություն, որի արդյունքներով բողոքում նշված փաստը հաստատվել է և բարձրացվել է Տավուշի ոստիկանության մի խումբ աշխատակիցների կարգապահական տույժի ենթարկելու հարցը:

## Օրինակ 5

ՀՀ պետական սահմանի Գոգավանի անցակետում ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության աշխատակիցները վերցրել են դիմումատուի անձնագիրը և վերադարձրել են միայն Պաշտպանի միջամտությունից հետո:

Օրինակ 6

Դիմումատուն գանգատվել է ոստիկանության աշխատակիցների թույլ տված ինքնիրավչությունից:

Պարզվել է, որ դիմումատուն խնամելիս է եղել իր որդու 3 տարեկան երեխային: Արաբկիրի ոստիկանության աշխատակիցները, հիմք ընդունելով ՌԴ-ից ժամանած և երեխայի մայրը լինելու վերաբերյալ որևէ փաստաթուղթ չունեցող կնոջ դիմումը, երեխային հարկադրաբար վերցրել են դիմումատուից և հանձնել այդ կնոջը, որն էլ երեխային անմիջապես տեղափոխել է ՌԴ:

Նկատի ունենալով, որ երեխայի խնամքին վերաբերող հարցերը օրենքով նախատեսված դեպքերում ենթակա են լուծման խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից կամ դատական կարգով, որ տվյալ դեպքով ոստիկանությունն իր վրա է վերցրել խնամակալության և դատական մարմինների իրավասությունները, նրանց գործողությունները գնահատվել են որպես ինքնիրավչություն և առաջարկվել է լուծել ոստիկանության այդ աշխատակիցների պատասխանատվության հարցը:

Հատկանշանական է, որ այս դեպքով ոստիկանության Արաբկիրի բաժնի ղեկավարությունը փորձել է իր աշխատակիցների անօրինական գործողություններն արդարացնել «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթների յուրօրինակ մեկնաբանություններով: Նրանց կողմից վկայակոչվել են օրենքի 2-րդ հոդվածի 6-րդ կետը և 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, որոնցով ասված է. «Ոստիկանության խնդիրներն են օրենքին համապատասխան ապահովել՝ սեփականության բոլոր ձևերի պաշտպանությունը» / հոդ. 2 կետ 6-րդ/:

«Ոստիկանության աշխատակիցները ՀՀ տարածքում, անկախ զբաղեցրած պաշտոնից, գտնվելու վայրից և ժամանակից պարտավոր են՝ օգնություն ցույց տալ / այդ թվում առաջին բժշկական օգնություն/ հանցագործություններից, վարչական իրավախախտումներից և պատահարներից տուժած, ինչպես նաև անօգնական կամ կյանքի համար վտանգավոր այլ իրավիճակներում հայտնված քաղաքացիներին» / հոդ. 36 2-րդ մասի 1-ին կետ/:

Քննարկվող դեպքով, եթե ոստիկանության աշխատակիցներն երեխային հանձնեին խնամակալության և հոգաբարձության մարմիններին, մինչև վիճող կողմերի իրավունքների ճշտումը, նրանց գործողությունները կարող էին տեղավորվել նշված հոդվածների շրջանակներում: Մինչդեռ, նրանք կանխորոշել են որպես մայր հանդես եկող ինքնությունը չպարզված կնոջ իրավունքի գերակայությունը երեխայի խնամքն իրականացնող տատի իրավունքների նկատմամբ:

Դրա փոխարեն նկատելի է ոստիկանության այս կամ այն աշխատակցի անտարբերությունը, անգործությունը, երբ կա անհրաժեշտություն միջամտելու կենցաղային վեճի, հանցավոր դրսևորումների կանխմանը, թույլ տրված իրավախախտման վերացմանը և այլն:

## Օրինակ 7

Դիմումատուն իր բնակարանի վարձակալի հեռանալուց հետո, բնակարանում հայտնաբերել է մի պարկ հրազենի փամփուշտներ, որի մասին անհապաղ տեղեկացրել է ոստիկանության Մաշտոցի բաժնի աշխատակիցներին:

Ի տարբերություն նախորդ դեպքի, երբ ոստիկանության աշխատակիցները միջամտել են իրենց իրավասությանը չվերաբերող հարցի լուծմանը, այս դեպքով ցուցաբերվել է բացարձակ անտարբերություն՝ հրազենի փամփուշտների հայտնաբերման մասին քաղաքացու հաղորդումը պատշաճ չի ձևակերպվել, նյութեր չեն նախապատրաստվել, չի ճշտվել դրանք ձեռք բերողի և պահողի անձը, քաղաքացու հետագա դիմումները թողնվել են անպատասխան:

Դիմումատուի համաձայնությամբ, բողոքը փոխանցվել է ՀՀ գլխավոր դատախազին, որի հանձնարարությամբ Աջափնյակ և Դավթաշեն համայնքների դատախազությունում նախապատրաստվել են նյութեր և քաղաքացու հաղորդմանն ընթացք չտալու հարցում մեղավոր աշխատակիցները ենթարկվել են կարգապահական տույժի:

## Օրինակ 8

Դիմումատուն գանգատվել է, որ Նոր Նորքի ոստիկանության աշխատակիցները, առանց օրինական հիմքերի, ներխուժել են իրենց տուն, բռնություն կիրառել նախկինում դատապարտված իր տղայի և ընտանիքի մյուս անդամների նկատմամբ, որի հետևանքով նրանք ստացել են մարմնական վնասվածքներ, իսկ տղան տարվել և պահվում է ոստիկանությունում:

Նկատի ունենալով, որ բողոքը վերաբերել է պաշտոնատար անձանց հանցավոր գործողություններին, դիմումատուի համաձայնությամբ, բողոքը փոխանցվել է ՀՀ գլխավոր դատախազին:

Դատախազությունից հայտնել են, որ փաստի առթիվ հարուցված է քրեական գործ, դիմումատուի նշած անձիք ուղարկվել են դատաբժշկական փորձաքննության:

Դատախազությունից հայտնել են նաև, որ կատարված գողության վերաբերյալ քննվող քրեական գործով ոստիկանության Նոր Նորքի բաժնում տվյալներ են ստացվել գողությունը դիմումատուի տղայի կողմից կատարված լինելու վերաբերյալ, որի կապակցությամբ նրան հրավիրել են ոստիկանության բաժին, սակայն նա չի ենթարկվել,

դիմադրել է, ապա դիմել փախուստի: Ոստիկանները փորձել են բերման ենթարկել մյուս եղբորը, որը նույնպես դիմադրել և չի ենթարկվել ոստիկանության աշխատակիցների պահանջին: Փախուստի դիմած եղբայրը վերադարձել և ոստիկանության աշխատակիցների ներկայությամբ վնասել է իր նախաբազկի երակները, վնասվածք է հասցրել նաև ոստիկանության աշխատակիցներից մեկին:

Այս դեպքը բնութագրական է այն առումով, որ չի հերքվել դիմումատուի պնդումն այն մասին, որ ոստիկանության աշխատակիցներն իրենց տուն են մտել առանց տան տերերի համաձայնության և դատարանի որոշման, չի եղել տղային բերման ենթարկելու մասին որոշում, երբևէ տղային ոստիկանություն չեն կանչել ծանուցագրով կամ օրենքով նախատեսված այլ միջոցներով:

Դատախազությունում քննվող քրեական գործով գնահատական կտրվի ոստիկանության աշխատակիցների նաև այս գործողություններին:

## Օրինակ 9

Դիմումատուն գանգատվել է, որ սխալ վիրահատության արդյունքում ամուսինը կորցրել է տեսողությունը, իսկ բուժող բժշկի դեմ ոստիկանություն ներկայացրած իր բողոքին ընթացք չի տրվում:

Բողոքը, դիմումատուի համաձայնությամբ, փոխանցվել է Երևան քաղաքի դատախազություն, որտեղից տեղեկացրել են, որ նախապատրաստվում են նյութեր՝ քրեական գործ հարուցելու հարցը լուծելու համար:

Մի շարք բողոքներով դիմումատուները վիճարկել են քրեական գործերով իրենց վերագրվող մեղադրանքը ոչ թե դատավարական այս կամ այն իրավունքի խախտման վկայակոչմամբ, այլ ապացույցների բավարարության կամ թույլատրելիության առումով, ինչին Պաշտպանի միջամտելը կնշանակեր փոխարինել քննչական մարմնին: Հիմնականում այդպիսի բողոքներով է, որ դիմումատուներին տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն կամ նրանց համաձայնությամբ բողոքը փոխանցվել է դատախազություն:

Ստացվել են նաև բողոքներ, որոնցով իրավունքի խատման վերաբերյալ վկայակոչված հանգամանքները չեն հաստատվել:

Նմանօրինակ գործերից են հետևյալները.

## Օրինակ 10

Դիմումատուն քրեական գործով ներգրավվել է որպես մեղադրյալ՝ շիրիմը պղծելու մեղադրանքով: Բողոքում է, որ իրեն վերագրվող մեղադրանքն անհիմն է:

Դիմումատուին ներկայացվել են իր իրավունքները պաշտպանելու դատավարական հնարավորությունները, քանի որ բողոքի քննարկումը դուրս է Պաշտպանի իրավասությունների շրջանակից:

## Օրինակ 11

Ոստիկանության Երևան քաղաքի ոստիկանության վարչության կենտրոնական բաժնում խարդախության վերաբերյալ քննվող քրեական գործով տուժողները գանգատվել են, որ չի ապահովվում քննության լրիվությունը, իրենց խախտված իրավունքները վերականգնելու ուղղությամբ անհրաժեշտ քննչական միջոցներ չեն ձեռնարկվում:

Դիմումատուների համաձայնությամբ, դիմումը փոխանցվել է ՀՀ գլխավոր դատախազին: Գործի քննությունը, ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ, վերցվել է հատուկ հսկողության տակ:

## Օրինակ 12

Դիմումատուն ոստիկանություն է դիմել իր հարևանների անօրինական գործողությունների դեմ բողոքով: Բողոքի ստուգումն իրականացվել է Շենգավիթի ոստիկանության քննչական բաժնի կողմից: Այստեղ որոշում է կայացվել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին, ինչից և դժգոհել է դիմումատուն:

Դիմումատուի համաձայնությամբ, դիմումը փոխանցվել է ՀՀ գլխավոր դատախազություն, որտեղ ստուգվել է նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունը: Ստուգմամբ դատավարական խախտումներ չեն հայտնաբերվել, որոշումը ճանաչվել է օրինական:

## Օրինակ 13

Դիմումատուն ոստիկանության համապատասխան բաժին բողոքել է իր հարևանների անօրինական գործողություններից, ինչի կապակցությամբ նախապատրաստված նյութերով մերժվել է քրեական գործի հարուցումը՝ ներկայացված տվյալներն անհիմն լինելու պատճառաբանությամբ: Դիմումատուն Պաշտպանին հասցեագրած դիմումով դժգոհել է քրեական գործի հարուցումը մերժելու որոշումից:

Նյութերը պահանջվել և Պաշտպանի կողմից ուսումնասիրվել են: Մարդու իրավունքների խախտում ոստիկանության գործողություններում չի բացահայտվել:

Ոստիկանության դեմ ուղղված բողոքների շարքում քիչ չեն այնպիսիք, որոնք վերաբերում են անձնագրային խնդիրներին՝ անձնագրի տրամադրման, ըստ բնակության վայրի հաշվառման, հաշվառումից հանման, ելքի թույլտվության տրամադրաման /«անձնագիրն օտարերկրյա պետությունում վավերական է» նշումը/, փաստացի բնակության վայրի նշումով հաշվառմանը և նման այլ խնդիրներին:

Անձնագրերի տրման, անձնագրային հաշվառման, հաշվառումից հանելու հարցերը կարգավորվում են ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և ՀՀ քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» 1998թ. դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ, ինչպես նաև «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքով, որոնց պահանջների չկատարումն է, որ հանգեցնում է իրավունքի խախտման:

## Օրինակ 14

Դիմումատուն գանգատվել է, որ ինքը հրաժարվել է զինվորական ծառայությունից կրոնական համոզմունքներից ելնելով, ինչի համար դատապարտվել և կրել է պատիժը:

Այնուհետև դիմել է ոստիկանության անձնագրային բաժանմունք՝ անձնագիր ստանալու նպատակով, որի համար անհրաժեշտ է եղել Շահումյանի զինկոմիսարիատի նշումը՝ զինհաշվառման մասին: Շահումյանի զինկոմիսարիատը առանց որևէ պատճառաբանության մերժել է նրա փաստաթղթերում անհրաժեշտ նշումը կատարելը: Խնդիրը դրական լուծում ստացել է միայն Պաշտպանի միջամտությունից հետո:

## Օրինակ 15

Դիմումատուն դիմել է ոստիկանության Երևանի քաղաքային վարչության անձնագրային բաժին այն հասցեում հաշվառվելու խնդրանքով, որտեղ հաշվառված է եղել 1961 թվականից մինչև 2001 թվականը, ապա դուրս է գրվել ՌԴ մեկնելու կապակցությամբ: Վերադարձել է 2004 թվականին և բնակվում է նույն հասցեում: Նույն հասցեում դիմումատուի վերահաշվառումը մերժվել է առանց որևէ հիմնավորման:

Պաշտպանի միջամտության արդյունքում դիմումատուի հաշվառման հարցը լուծվել է դրական:

Ոստիկանության դեմ ստացված դիմում-բողոքների ընդհանուր վերլուծությունը ցույց է տալիս, որ մարդու իրավունքների հարգման և պաշտպանության առումով այս համակարգում՝ չնայած զգալի դրական տեղաշարժին, այնուամենայնիվ դեռևս տեղ ունեն իրավունքի այնպիսի խախտումներ, ինչպիսիք են՝ ապօրինի բերման ենթարկելը, անազատության պայմաններում ապօրինի պահելը, խոստովանություն կորզելը, մարդու

անձնական կյանքին ապօրինի միջամտելը, բողոքն անհետևանք թողնելը, կատարված հանցագործության դեպքով թերի քննությունը, անձնագրի հետ կապված խնդիրներում բյուրոկրատիզմն ու քաշքշուկը և այլն:

Այդ ամենին զուգահեռ, ոստիկանության համակարգում առկա է դրական տեղաշարժը: Դրական է այն, որ եթե 2004, 2005 թվականներին արձանագրվել են ազատ տեղաշարժման իրավունքի, բերման ենթարկելու և վարչական կալանք կիրառելու բնագավառներում զանգվածային խախտումներ, ապա 2006 թվականին նման խախտումների վերաբերյալ բողոքները եղել են եզակի:

Դրական է նաև այն, որ հաստատվել է կայուն և արդյունավետ համագործակցություն Մարդու իրավունքների պաշտպանի կառույցի և ոստիկանության հանրապետական մարմնի միջև՝ վերջինս անարձագանք չի թողնում ոստիկանության աշխատակիցների թույլ տված խախտումների վերաբերյալ հաղորդումները, անհրաժեշտության դեպքում միջոցներ է ձեռնարկում իրավունքի խախտում առաջացնող հանգամանքները վերացնելու, ոստիկանության գործունեությունը կարգավորող գերատեսչական ակտերում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին առաջարկների կատարման ուղղությամբ:

## Օրինակ 16

Աչքի տեսողության թերություններ ունեցող մի խումբ բնակիչներ բողոքել են, որ իրենց՝ Երևան քաղաքի Ն. Տիգրանյան փողոցով տրանսպորտի երթևեկությունը, որը նախկինում եղել է միակողմ, դարձվել է երկկողմ, ինչը որոշակի վտանգ է ստեղծում իրենց համար:

Խնդիրը ներկայացվել է ոստիկանության Երևան քաղաքի վարչության պետավտոտեսչությանը և հարցը լուծվել է դրական:

## Օրինակ 17

Բողոքների տեղիք է տվել նաև ՀՀ ոստիկանության պետի և ՀՀ մաքսային պետական կոմիտեի նախագահի «Օտարերկրյա պետություններում առևանգված, ապօրինի ձեռք բերված ավտոտրանսպորտային միջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարն ուժեղացնելու մասին» 2004թ համատեղ հրամանը, որի հիման վրա պետավտոտեսչության գրանցման-քննական ստորաբաժանումներում պրակտիկա է դարձած եղել ավտոմեքենաների սեփականատերերին հաշվառման ժամանակավոր կտրոնների տրամադրումը և այն էլ «օտարումն արգելվում է» նշումով: Այդպիսի կտրոններ են տրվել ոչ միայն նոր ներմուծված ավտոմեքենաների համար, այլ նաև այնպիսիների, որոնք արդեն իսկ տևական ժամանակ եղել են օգտագործման մեջ՝ նման կտրոնները պարբերաբար

նորացնելով: Այս հանգամանքը ոչ միայն հանգեցրել է սեփականության իրավունքի սահմանափակման, այլ նաև պարունակել է կոռուպցիոն ռիսկեր:

Տվյալ գործով Պաշտպանի որոշմամբ արված առաջարկի կապակցությամբ, ոստիկանության պետը և մաքսային պետական կոմիտեի նախագահը տեղեկացրել են, որ խնդիրը քննարկվել է, նախապատրաստվում են համապատասխան փոփոխություններ համատեղ հրամանում, որոնք կքացառեն ավտոմեքենաների սեփականատերերի իրավունքների անհիմն սահմանափակումները:

## 3.2. Դատախազություն

Դատախազության մարմինների դեմ 2006թ. ընթացքում ստացվել է 76 բողոք: Ստացված բողոքներն ունեցել են հետևյալ ընթացքը՝

- ընդունվել են քննարկման՝ 16
- փոխանցվել են այլ մարմնի քննարկմանը՝ 25
- ներկայացվել են դիմողի իրավունքների պաշտպանության հնարավորությունները՝ 14
- չեն ընդունվել քննարկման՝ 21

Դատախազության մարմինների դեմ բողոքները հիմնականում վերաբերել են հանցագործության վերաբերյալ տրված հաղորդումներին ընթացք չտալուն, նյութերով քրեական գործի հարուցումը մերժելուն, քրեական գործը կարճելուն, մեղադրանքի անհիմն լինելուն, խափանման միջոցը կալանք ընտրելուն:

Բնութագրական է, որ նման բողոքներ ներկայացնողներն եղել են մի դեպքում տուժողները, երբ խոսքը վերաբերել է նյութերով քրեական գործի հարուցումը մերժելուն, հարուցված քրեական գործի վարույթը կասեցնելուն կամ կարճելուն, գործով իրենց մատնանշած կասկածյալին մեղադրանք չառաջադրելուն և այլն, մյուս դեպքում՝ մեղադրյալները, նրանց հարազատները՝ երբ խոսքը վերաբերել է վերագրվող մեղադրանքին, խափանման միջոցը կալանք ընտրված լինելուն, պաշտպանության կողմի միջնորդությունների մերժմանը և այլն:

Այսպիսի բողոքների հիմնական մասն առնչվել է նախաքննության գործընթացներին, որին միջամտելու Պաշտպանի լիազորությունները սահմանափակ են: Քննարկման ընդունվել են դատավարական իրավունքի խախտումների մասին տվյալներ պարունակող բողոքները: Մյուս խումբ բողոքները, որոնք վերաբերել են ապացույցների գնահատմանը՝ դիմումատուի համաձայնությամբ փոխանցվել են ՀՀ գլխավոր դատախազին կամ դիմումատուին պարզաբանվել են իր բարձրացրած հարցերով իրավունքի պաշտպանության հնարավորությունները:

Այստեղ խոսք չի կարող լինել այն մասին, որ բողոքն ուղարկվել է նույն մարմնին, որի գործողությունների կամ անգործության դեմ ուղղված է եղել բողոքը: Նման հարց չի կարող առաջանալ, քանի որ բողոքները վերաբերել են դատախազության այս կամ այն ստորաբաժանման դեմ գործողություններին կամ անգործությանը, մինչդեռ դրանք փոխանցվել են ՀՀ գլխավոր դատախազի քննարկմանը: Այլ կերպ չի էլ կարող լինել, որովհետև բարձրացված խնդիրների լուծմանը, դատախազական մարմիններից բացի, որևէ այլ մարմին միջամտելու իրավասություն չունի: Օրինակ, քննիչի այս կամ այն որոշումը վերացնելու, մեղադրանքի ծավալը փոփոխելու, բացարկի հարցը լուծելու և նման դատավարական այլ խնդիրներ, ՀՀ գլխավոր դատախազից կամ քննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազից բացի, այլ մարմին լուծելու իրավասություն չունի:

## Օրինակ 1

Դիմումատուն գանգատվել է, որ իր քրոջ որդու սպանության գործով զինվորական դատախազությունում քննվող քրեական գործի վարույթը կասեցվել է, քանի որ հայտնի չէ անձը, որը գործով պետք է ներգրավվի որպես մեղադրյալ: Ինքը հանդես է գալիս որպես տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ: Գործի վարույթը կասեցնելու մասին որոշումն իրեն տրամադրվել է կայացվելուց վեց ամիս անց և միայն այն բանից հետո, երբ անձամբ ներկայացել է դատախազություն և հետաքրքրվել գործի ընթացքով: Գործի վարույթը կասեցնելու որոշման հետ համաձայն չէ, սակայն իր բողոքները դառնում են վերացական, քանի որ ծանոթ չէ դրա նյութերին: Քննիչը պնդում է, որ նա իրավունք ունի գործի նյութերին ծանոթանալ այն բանից հետո միայն, երբ կհայտարարվի քննության ավարտի մասին:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի՝ «Նախաքննությունն ավարտվում է մեղադրական եզրակացություն, բժշկական միջոցների կիրառման համար քրեական գործը դատարան ուղարկելու մասին կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում կազմելով»:

Քրեական գործի վարույթի կասեցումը գործի ավարտ չէ և այստեղից հետևություն է արվում, որ դատավարության մասնակիցը չի կարող օգտվել գործի նյութերին ծանոթանալու իրավունքից:

Մինչդեռ, համաձայն նույն օրենսգրքի 6-րդ հոդվածի 21-րդ կետի, տուժողը, քաղաքացիական հայցվորը և նրանց ներկայացուցիչները մեղադրանքի կողմ են: Հետևաբար, կարող են նպաստել գործի քննության լրիվության ապահովմանը, հանցագործության բացահայտմանը, հանցավորի հայտնաբերմանը: Այստեղից հետևում է, որ գործի վարույթը կասեցնելու դեպքում՝ գործի նյութերին նրանց չծանոթացնելը չի բխում քննության շահերից: Պատահական չէ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվել է նաև քննության տվյալները չհրապարակելու

պարտականության մասին դատավարության համապատասխան մասնակիցներին նախազգուշացնելու սկզբունք:

Քրեական հետապնդման մարմնի կողմից մեղադրանքի կողմի մյուս մասնակիցներին քննությունից լիովին մեկուսացնելը, գործի նյութերն առանց անհրաժեշտության գաղտնիացնելն է, որ առաջ է բերում նման գործերով տուժողների դժգոհություններն ու բողոքները:

Թեև ՀՀ քրեական դատավարության ընդհանուր սկզբունքները թույլ են տալիս տվյալ խնդիրը լուծել հօգուտ դիմումատուի, այնուամենայնիվ միասնական մոտեցում ապահովելու նպատակով, անհրաժեշտ է համապատասխան լրացում կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ, 258-րդ հոդվածներում:

Նույն հարցին սերտորեն առնչվում է նաև գործի նյութերից դատավարության մասնակիցներին քաղվածքներ, պատճեններ տրամադրելու խնդիրը:

Տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի իրավունքների շարքում քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսել է նաև իր մասնակցությամբ իրականացված քննչական գործողությունների արձանագրություններին, փորձաքննություն նշանակելու մասին որոշումներին և փորձագիտական եզրակացություններին ծանոթանալու իրավունք մինչև նախաքննության ավարտը:

Եթե նախաքննության ավարտման պահին գործի նյութերից քաղվածքներ և պատճեններ հանելու իրավունքն օրենսգրքով ուղղակի է ամրագրված, ապա մինչև նախաքննության ավարտման մասին հայտարարելը որոշ նյութերի ծանոթացման իրավունք սահմանելով, դրանցից քաղվածքներ, պատճեններ հանելու իրավունք չի սահմանվել, ինչն էլ օգտագործվում է քրեական հետապնդման մարմնի կողմից՝ դատավարության մասնակցին փաստաթուղթը ներկայացվում է ծանոթացման, սակայն չի թույլատրվում քաղվածքներ և պատճեններ հանել:

Օրինակ՝ վերը հիշատակված գործով տուժողի իրավահաջորդի ներկայացուցչին մերժվել է փորձաքննություն նշանակելու մասին որոշման, փորձագետի եզրակացության պատճենների տրամադրումը:

Այն, որ քաղվածքներ անելու և պատճեններ հանելու իրավունքը հիշյալ օրենսգրքի որոշ հոդվածներում ուղղակի է շեշտված, քրեական հետապնդման մարմիններին հանգեցրել է այն հետևության, որ ծանոթանալու և պատճեններ ստանալու իրավունքները տարանջատված են, որ ծանոթանալու իրավունքը չի ենթադրում փաստաթղթի պատճենը ստանալու իրավունք:

Քանի որ քրեական հետապնդման մարմինը օրենքի տառացի կամ տրամաբանական մեկնաբանությունը կատարում է առավելապես դատավարության մասնակցի իրավունքների սահմանափակման առումներով, անհրաժեշտ է համապատասխան լրացում կատարել ՀՀ

քրեական դատավարության օրենսգրքում: Օրինակ` օրենսգրքի 6-րդ հոդվածով, որով պարզաբանվում են օգտագործված հիմնական հասկացությունները, կարելի է սահմանել, թե ինչ պետք է հասկանալ «ծանոթացում» ասելով: Կպարզաբանվի, որ ծանոթացումն իր մեջ ներառում է նաև քաղվածքներ հանելու և պատճեններ ստանալու իրավունքը:

Զգալի թիվ են կազմում բողոքները` կապված խափանման միջոցը կալանք ընտրելու հետ: Չի հաղթահարվել այն պրակտիկան, երբ խափանման միջոցը կալանք է ընտրվում նաև այնպիսի մեղադրյալների նկատմամբ, որոնց ազատ մնալը ոչնչով չի կարող անդրադառնալ գործի քննության վրա, երբ ակնհայտ է, որ տվյալ անձը չի խուսափի քննությունից կամ դատից, չի կարող և չի ներազդի վկաների, տուժողների վրա, երբ նաև ընտանիքի միակ կերակրողն է:

Թեև այդ հարցում դատարանների մոտեցումներում նախորդ տարիների համեմատ որոշակի դրական տեղաշարժ նկատելի է, և դատարանները հաճախակի են մերժում խափանման միջոցը կալանք ընտրելու մասին քրեական հետապնդման մարմինների միջնորդությունները, այնուամենայնիվ այդ դրական տեղաշարժը, հատկապես քրեական հետապնդման մարմինների մոտեցումներում, դեռևս բավարար համարվել չի կարող:

Դատախազության մարմինների դեմ ստացված բողոքներից բնութագրական են հետևյալները.

## Օրինակ 2

Ըստ դիմումատուի` իր եղբոր սպանության գործով Կոտայքի մարզի դատախազությունը կատարում է ոչ անաչառ քննություն` քննիչը վկաներին հարկադրել է տալ իր համար նախընտրելի և իրականությանը չհամապատասխանող ցուցմունքներ, զննություն, խուզարկություն և այլ անհրաժեշտ քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ իր միջնորդությունները մերժվել են առանց բավարար հիմնավորման:

Բողոքը վկայում է, որ դիմումատուն այնուամենայնիվ հնարավորություն ունեցել է օգտվելու իր դատավարական իրավունքներից, ծանոթ է փորձաքննություն նշանակելու մասին որոշմանը, փորձագետի եզրակացությանը, ներկայացրել է միջնորդություններ:

Բողոքը հետևանք է այն բանի, որ քննչական մարմինը լիարժեք չի օգտագործել մեղադրանքի կողմ հանդիսացող դատավարության մասնակցի հնարավորությունները:

Քանի որ դիմումատուն վիճարկում է քննիչի օբյեկտիվությունը, նրան պարզաբանվել են քննիչի գործողությունները բողոքարկելու, նրա դեմ բացարկ հայտնելու իր իրավունքները:

Օրինակ 3

Դիմումատուն բողոքել է, որ Շիրակի մարզի դատախազությունում քննվող քրեական գործով ինքը մեղադրվում է տուժողին մարմնական վնասվածք հասցնելու մեջ, որ իրականում ինքը հանցանք չի կատարել, համաձայն չէ դատաբժշկական փորձագետի եզրակացության հետ, պահանջել է նոր փորձաքննություն, սակայն իր պահանջը մերժվել է:

Նկատի ունենալով, որ բողոքը դարձյալ վերաբերում է ապացույցների գնահատմանը, դիմումատուին պարզաբանվել են քննիչի գործողությունները բողոքարկելու, քննիչի դեմ բացարկ հայտնելու, միջնորդությունները գրավոր ներկայացնելու իր իրավունքները:

Օրինակ 4

Երկու տարբեր դիմումատուներ բողոքել են դատախազությունում քննվող քրեական գործերով մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցը կալանք ընտրված լինելու հանգամանքից՝ գտնելով, որ այդպիսի խափանման միջոցի կիրառումը հիմնավորված չէ քրեական գործում առկա ապացույցներով:

Այս գործերից մեկով մեղադրյալը լրագրող է, մյուսով՝ կին, այսինքն՝ ակնհայտ է, որ խափանման միջոցի հարցը լուծելիս հաշվի չի առնվել մեղադրյալի անձը:

Խափանման միջոցը կալանք ընտրելու վերաբերյալ բողոքների ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու, որ դեռևս հաղթահարված չէ միայն անձին վերագրվող հանցանքի բնույթից ելնելով նրա նկատմամբ խափանման միջոցը կալանք ընտրելու իներցիան:

Քանի որ խափանման միջոց կալանքը կիրառվում է դատարանի որոշմամբ, իսկ Պաշտպանն իրավասու չէ միջամտելու դատական վարույթին, նման բողոքները չեն քննարկվել:

Օրինակ 5

Դիմումատուն գանգատվել է, որ ՀՀ գլխավոր դատախազությունում իր նկատմամբ հարուցված քրեական գործով օգտագործվում են օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներ, իր նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանքն անհիմն է, որ իր և ընտանիքի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը նպատակային է և ապօրինի:

Դիմումատուն օգտագործել է առաջին ատյանի դատարանի որոշումը բողոքարկելու իր իրավունքները: Այստեղ դարձյալ խնդիրը բախվում է ընթացող նախաքննության և դատական վարույթին միջամտելու արգելքին, ուստի բողոքը փոխանցվել է ՀՀ գլխավոր դատախազին:

Օրինակ 6

Դիմումատուն բողոքել է, որ իր գործով ինքը նախնական կալանքի տակ է, մեկ այլ գործով կալանավորված է նաև կինը: Գտնում է, որ իր ընտանիքը ենթարկվում է անօրինական հետապնդման:

Չանդրադառնալով ամուսիններին վերագրվող մեղադրանքների հիմնավոր կամ անհիմն լինելու հանգամանքին՝ կարևորում ենք այն, թե որքանով է արդարացված մի ընտանիքից երկու ծնողներին կալանավորելը:

ՀՀ գլխավոր դատախազին առաջարկվել է՝ վերանայել դիմումատուի կնոջ նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքի նպատակահարմարության հարցը:

Ըստ դատախազից ստացված պատասխանի՝ «Հարցի վերանայման անհրաժեշտությունը չկա, քանի որ այն լուծվել է դատարանի միջոցով»:

Օրինակ 7

Դիմումատուն զանգատվել է, որ կասկածելի հանգամանքներում իր որդին աշխատանքի վայրում մահացել է: Ծենգավիթի դատախազությունում մերժվել է նյութերով քրեական գործի հարուցումը, որի մասին ինքը տեղեկացվել է միայն մեկ տարի անց:

Պաշտպանի առաջարկով ՀՀ գլխավոր դատախազությունը, նյութերի ուսումնասիրության արդյունքում, վերացրել է նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը:

Անընդունելի պետք է համարել այն գործելակերպը, երբ չպարզված հանգամանքներում տեղի ունեցած մահվան դեպքերով փորձ է արվում դեպքի հանգամանքները պարզել՝ առանց քրեական գործ հարուցելու: Դրանով, նախևառաջ, խախտվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածով սահմանված ժամկետները և ապա չեն կատարվում այն քննչական գործողությունները, որոնք կարող են կատարվել միայն քրեական գործ հարուցելուց հետո: Բնական է, որ այսպիսի պայմաններում դեպքը չի պարզաբանվում մինչև վերջ և լինում է նաև տուժող կողմի դժգոհությունը:

Օրինակ 8

Դիմումատուն զանգատվել է, որ իր որդու կասկածելի պայմաններում անհետանալու փաստի առթիվ հարուցված քրեական գործով Երևանի Կենտրոնի դատախազության կողմից լիարժեք քննություն չի կատարվել, գործի վարույթը կասեցվել է թերի քննության պայմաններում:

Բողոքը փոխանցվել է ՀՀ գլխավոր դատախազին, որի հանձնարարությամբ ուսումնասիրվել և վերացվել է գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը: Այսինքն՝ դիմումատուի՝ գործով թերի քննություն կատարված լինելու մասին բողոքը եղել է հիմնավոր:

Հանցագործությունների վերաբերյալ տրված հաղորդումներով քրեական գործի հարուցումն անհիմն մերժելու, հարուցված քրեական գործերով թերի քննություն կատարված լինելու արդյունքում տուժողը զրկվում է դատական պաշտպանության հնարավորություններից, խախտվում է դատական պաշտպանության նրա իրավունքը: Հետևաբար, օրենքով պետք է երաշխավորվի քրեական հետապնդման մարմնի որոշումները բողոքարկելու տուժողի իրավունքի լիարժեք իրականացման հնարավորությունը՝ գործի նյութերին ծանոթանալու, դրանցից քաղվածքներ և պատճեններ ստանալու իրավունքի առավել հստակ ձևակերպումով:

Դատավարության մասնակիցների նկատմամբ բռնության, քննությանը խորթ մեթոդների կիրառման և նման այլ հանգամանքների վերաբերյալ եղած բողոքներով Պաշտպանի կողմից բազմիցս ՀՀ գլխավոր դատախազությանն առաջարկվել է՝ այդ բողոքների ստուգման համար հարուցել առանձին վարույթ, ինչը հնարավորություն կտա ապահովել բողոքի ստուգման լրիվությունը, կդրվի նաև սուտ մատնություն կատարողի քրեական պատասխանատվության հարցը:

## Օրինակ 9

Դիմումատուն բողոքել է, որ Գորիսի քրեակատարողական հիմնարկում քրեակատարողական վարչության աշխատակիցների կողմից ենթարկվել է դաժան ծեծի, ստացել է նաև մարմնական վնասվածքներ:

Պարզվել է, որ դիմումատուն՝ զբոսանքի դուրս բերվելիս, միջամտել է քննչական սենյակում քննություն կատարող քննիչի գործողություններին և նրան ծեծի է ենթարկել: Այդ կապակցությամբ դիմումատուի նկատմամբ հարուցվել է քրեական գործ:

Քննիչի հետ կապված դեպքից երկու օր անց քրեակատարողական վարչության աշխատակիցների միջոցով դատապարտյալների մոտ անց է կացվել խուզարկություն, որի ընթացքում նաև բռնություն է կիրառվել դիմումատուի նկատմամբ: Առկա է դատաբժշկական եզրակացություն, ըստ որի՝ դիմումատուն ունի առողջությանը պատճառված միջին ծանրության վնասվածքներ:

Դիմումատուի բողոքի կապակցությամբ առանձին վարույթ չի հարուցվել: Բողոքի ստուգումը հանձնարարվել է քննիչի հետ կապված դեպքով քրեական գործը քննող քննիչին՝ նույն գործի հետ համատեղ ստուգելու: Դրա արդյունքում իրականությունը չի բացահայտվել,

քննիչը հանգել է հետևության, որ դիմողի մարմնական վնասվածքները նրա նկատմամբ օրինական հիմքերով հարկադրանքի միջոցների կիրառման արդյունք են:

ՀՀ քրեական օրենսգրքի 17-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված է. «Կասկածյալի, մեղադրյալի և նրանց պաշտպանի հայտարարությունները իրենց անմեղության, կասկածյալին կամ մեղադրյալին արդարացնող, իրենց պատասխանատվությունը մեղմացնող ապացույցների առկայության մասին, ինչպես նաև քրեական դատավարության ընթացքում օրինականության խախտումների վերաբերյալ բողոքները պետք է մանրակրկիտ ստուգի քրեական վարույթն իրականացնող մարմինը»:

Ստացված բողոքների քանակը և բնույթը վկայում են, որ օրենքի այդ պահանջը քրեական հետապնդման մարմինների կողմից իրականացվում է ոչ լիարժեք, ինչում կարելի է տեսնել նաև դատախազության բացթողումը:

Այս ամենին զուգահեռ, առկա է դրական տեղաշարժ Պաշտպան- դատախազություն հարաբերություններում՝ առավել հաճախակի են դարձել անմիջական շփումները՝ հնարավոր է դարձել որոշակի բողոքով բարձրացված խնդիրները գործը քննող քննիչի, քննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազի հետ համատեղ քննարկելը, բացի այդ անարձագանք չեն մնացել Պաշտպանի առաջարկները:

## 3.3. Դատարաններ

Դատարանների դեմ 2006 թվականի ընթացքում ստացվել է 159 բողոք: Դրանք դժգոհություններ են դատարանների վճիռներից, դատավճիռներից և որոշումներից: Թեև բնական կարելի է համարել դատապարտյալի դժգոհությունը մեղադրական դատավճռից, քաղաքացիական գործով կողմի դժգոհությունն ի վնաս իրեն կայացված վճռից, այնուամենայնիվ բողոքների նման քանակը հիմք է տալիս եզրահանգելու, որ բնակչության վստահությունը դատարանների նկատմամբ հեռու է բավարար լինելուց:

Դատարանների դեմ ստացված 159 բողոքներն ունեցել են հետևյալ ընթացքը՝

- ընդունվել են քննարկման՝ 7
- փոխանցվել են այլ մարմնի քննարկմանը՝ 5
- ներկայացվել են դիմողի իրավունքների պաշտպանության հնարավորությունները՝ 21
- չեն ընդունվել քննարկման՝ 124
- ուսումնասիրման ընթացքում են՝ 2

Արդեն նշվել է, որ դատարանների դեմ ուղղված բողոքները հիմնականում վերաբերում են դատավճիռների, վճիռների և դատական որոշումների հետ դիմումատուների անհամաձայնություններին: Դիմումատուները բողոքել են, որ դատարանը չի բավարարել իրենց այս կամ այն միջնորդությունը, անտեսել է ներկայացրած ապացույցները, ճիշտ չի կիրառել նյութական իրավունքը, չի ազատվել օրենքի խախտումով ձեռք բերված ապացույցներից և այլն: Փաստորեն բողոքել են հանգամանքներից, որոնց ստուգումը բացառապես վերադաս դատական ատյանի խնդիրն է:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքով անթույլատրելի է համարված Պաշտպանի կողմից դատական վարույթին միջամտելը, դատարաններից պարզաբանումներ պահանջելը: Բողոքի քննարկումը ենթակա է դադարեցման, եթե շահագրգիռ կողմը հայց կամ դիմում է ներկայացրել դատարան:

Դատարանների վարույթում գտնվող գործերով դատարանին առաջարկներ ներկայացնելը ՀՀ սահմանադրական դատարանի 2005թ. մայիսի 5-ի որոշմամբ գնահատված է որպես դատարանի անկախության սկզբունքի խախտում:

Սա է պատճառը, որ ստացված 159 բողոքից 124-ը քննարկման չի ընդունվել:

Քննարկման չընդունված բողոքների մի զգալի մասով դիմումատուները ընդունելություն են ունեցել Պաշտպանի կամ Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների կողմից և ստացել են անհրաժեշտ իրավական խորհրդատվություն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքներ կազմելու, դատարանում քննվող հարցի հետ կապված անհրաժեշտ միջնորդություններ կամ ապացույցներ ներկայացնելու, այս կամ այն խնդիրը կարևորելու և դատարանի վարույթում գտնվող գործին առնչվող այլ հարցերով:

Այս առումով, քննարկման չընդունված բողոքներով իրավաբանական խորհրդատվությունը կազմել է Պաշտպանի և նրա աշխատակազմի գործունեության կարևոր և աշխատատար ոլորտներից մեկը:

Դատարանների դեմ ուղղված բողոքներից 2006 թվականի ընթացքում քննարկման են ընդունվել ընդամենը 7 բողոքներ: Դրանցից բնութագրական են հետևյալ օրինակները.

## Օրինակ 1

Այս դեպքով դիմումատուները Գյումրու Շիրակշին բանավանի թվով 400 բնակիչներն են, որոնք երկրաշարժի հետևանքով դարձել են անօթևան և բնակվում են նախկին «Լենինգրադշին» կազմակերպության կառուցած «Մոդուլներ» կոչվող շինություններում: Հետագայում այդ մոդուլները հանձնվել են «Շիրակշին» ՓԲԸ-ին:

Այս շինություններում բնակվողները չեն հաշվառվել որպես աղետի հետևանքով անօթևան մնացած քաղաքացիներ, չի որոշակիացվել նաև զբաղեցրած շինությունների նկատմամբ նրանց ունեցած իրավունքների շրջանակը:

ՀՀ տնտեսական դատարանի վճռով «Շիրակշին» ՓԲԸ-ն ճանաչվել է սնանկ և ընկերության հաշվեկշռում եղած գույքը, այդ թվում նաև հիշյալ շինությունները, դրվել են աճուրդի՝ անտեսելով բնակիչների առկայությունը:

Արդարացի է բնակիչների այն պնդումը, որ սնանկ ճանաչված ընկերությունն այդ շինությունների սեփականատեր դարձել է առանց որևէ ներդրման, ընդունել է միայն նախկին «Լենինգրադշին» կազմակերպության ակտիվները, որ շինությունների պահպանությունը, վերանորոգումը, նաև որոշ վերակառուցումներ կատարվել է իրենց կողմից:

Այս պայմաններում, երբ դրված է եղել «Շիրակշին» ընկերության անվճարունակ ճանաչելու և լուծարելու հարցը, երբ քննարկվելիս է եղել ընկերության առկա գույքի ցանկը, իսկ հարյուրավոր բնակիչներ պետք է դառնային անօթևան, ՀՀ Շիրակի մարզպետը և Գյումրու քաղաքապետը չպետք է անտարբեր մնային:

Դատարանը չպետք է անտեսեր տվյալ շինություններում բնակիչների առկայությունը և կարող էր նրանց ներգրավել որպես ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք, ինչը նույնպես չի արվել: Ընկերության լուծարման մասին բնակիչները տեղեկացել են միայն այն ժամանակ, երբ շինությունները դրվել են աճուրդի:

## Օրինակ 2

Հասարակական լայն հնչեղություն է ստացել Մատաղիսում երկու զինծառայողի սպանության վերաբերյալ հայտնի քրեական գործը, որը քննվել և դատարան է ուղարկվել զինվորական դատախազության կողմից :

Այս գործով առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները դատավճիռ են կայացրել ամբաստանյալներին ցմահ ազատազրկման դատապարտելու մասին, մինչդեռ վճռաբեկ դատարանը գտել է, որ նման դատավճիռ կայացնելու համար գործով ապացույցները եղել են անբավարար, և որոշում է կայացրել քրեական գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու մասին:

Գործի լրացուցիչ նախաքննության վերջնական արդյունքներով է, որ պետք է գնահատականներ տրվեն նախաքննության և դատաքննության գործընթացներին:

## Օրինակ 3

Հասարակական լայն քննարկումների առարկա է դարձել լրագրողի կողմից ժամկետային զինվորական ծառայությունից խուսափելու վերաբերյալ քրեական գործը:

Տվյալ գործով Պաշտպանի գնահատականն այն է, որ թեև լրագրողը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 327 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունը կատարելու մեջ, որով պատժաչափը սահմանված է ազատազրկում 1-5 տարի ժամանակով, այնուամենայնիվ նրան 3,5 տարվա ազատազրկման դատապարտելը խիստ մոտեցում է՝

հաշվի չեն առնված ամբաստանյալի անձը դրական բնութագրող այնպիսի հանգամանքները, ինչպիսիք են՝ դատվածության բացակայությունը, ոչնչով արատավորված չլինելը, զբաղմունքի բնույթը և այլն:

## Օրինակ 4

Դիմումատուն աշխատել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում որպես մեքենագրուհի: Աշխատանքից ազատվել է պայմանագրի ժամկետը լրացած լինելու հիմքով:

Դիմումատուն գանգատվել է, որ չի նախազգուշացվել իր հետ աշխատանքային պայմանագիրը չշարունակելու մասին, առ այսօր իրեն չի տրվել աշխատանքային գրքույկը:

Դատական դեպարտամենտից տեղեկացրել են, որ դիմումատուի անձնական գործում բացակայում են աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու հիմքերը:

Դիմումատուի աշխատանքային իրավունքների խախտման փաստն առկա է, որի կապակցությամբ Պաշտպանի կողմից կայացվել է որոշում՝ դիմումատուի իրավունքների խախտում տեսնելու մասին:

## Օրինակ 5

Դիմումատուն գանգատվել է, որ Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը չի ընդունել աշխատանքում վերականգնվելու պահանջի մասին իր հայցադիմումն այն պատճառաբանությամբ, որ նա բաց է թողել դատարան դիմելու մեկամսյա ժամկետը:

Դիմումի քննարկմամբ պարզվել է, որ դատարանը ոչ թե մերժել է հայցադիմումի ընդունումը, այլ դատաքննությամբ հաստատված է համարել, որ դիմումատուն բաց է թողել աշխատանքում վերականգնվելու վերաբերյալ հայցով դատարան դիմելու օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը: Հայցը քննարկվել և մերժել է այդ հիմքով:

Պաշտպանի կողմից դիմումատուին բացատրվել է դատարանի վճռի իմաստը:

## Օրինակ 6

Դիմումատուն դատարան է դիմել աշխատանքային խեղման հետևանքով աշխատունակության մասնակի կորստի դիմաց տրվող փոխհատուցումը գործատուի կողմից դադարեցնելը՝ կենսաթոշակի անցած լինելու հիմքով, անօրինական ճանաչելու պահանջով:

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի վճռով հայցը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ աշխատանքային խեղում ստացած անձի կենսաթոշակի անցնելը հիմք է կորցրած աշխատավարձի դիմաց փոխհատուցման տրամադրումը դադարեցնելու համար:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի վճռով հայցը բավարարվել է այն հիմնավորմամբ, որ նման փոխհատուցումը պետք է տրվի ցմահ:

ՀՀ վճռաբեկ դատարանը բեկանել է վերաքննիչ դատարանի վճիռը՝ գտնելով, որ առողջությանը հասցված վնասները հատուցվում են որպես կորցրած աշխատավարձը փոխհատուցելու միջոց, որ հայցվորն անցել է տարիքային կենսաթոշակի, այսինքն՝ աշխատունակության կորուստն արդեն նշանակություն ունենալ չի կարող:

Բողոքը քննարկման է ընդունվել այն կապակցությամբ, որ խնդիրը վերաբերել է սոցիալական իրավունքի ոլորտին և առկա է օրենքի տարաբնույթ մեկնաբանությունների հանգամանքը:

## Օրինակ 7

Դիմումատուն Պաշտպանին է դիմել մի դեպքում գանգատվելով, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում իր ներկայացրած փաստաթղթերը գործից անհետացել են, մյուս դեպքում՝ գործով տրված վերաքննիչ բողոքի օրինակն իրեն ուղարկված չլինելու պայմաններում վերաքննիչ դատարանը բողոքն ընդունել է վարույթ:

Անցկացված քննարկումներով բողոքի տվյալները չեն հիմնավորվել:

Ինչպես 2004-2005 թվականներին, 2006-ին ևս զգալի թիվ են կազմել բողոքները՝ Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացման կապակցությամբ սեփականության հարկադիր օտարման վերաբերյալ գործերով դատարանների կայացրած վճիռների դեմ:

Չնայած նման վճիռների վերաբերյալ եղած քննադատական հրապարակումներին, դրանց բնույթը 2006 թվականին չի փոխվել, չեն փոխվել տվյալ հարցի վերաբերյալ դատարանների մոտեցումները: Այն, որ անցած չորս տարիների ընթացքում դատարանների կողմից քննված նմանաբնույթ գործերից որևէ մեկով հօգուտ սեփականատիրոջ կամ այլ գույքային իրավունքներ ունեցողների վճիռ չի կայացվել, ասվածի վկայությունն է:

Այսպիսի գործերի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բոլոր դեպքերում իրացնող կազմակերպությունները գնահատել են օտարվող սեփականությունը և սեփականատիրոջը դատական վճիռներով պարտադրել տվյալ գնահատմամբ առաջարկվող անընդունելի փոխհատուցումը : Դատարանների վճիռները մեծամասամբ եղել են հետևյալ բովանդակությամբ. «Պատասխանողին պարտավորեցնել կնքելու պայմանագիր և վտարել զբաղեցրած տարածքից»:

Դատարանները նման գործերով երբևէ չեն ընդունել առաջարկվող փոխհատուցման չափի վերաբերյալ սեփականատերերի առարկությունները, չեն բավարարվել հակընդդեմ հայցերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218-րդ, ՀՀ հողային օրենսգրքի 104-րդ, 106-րդ, 108-րդ հոդվածների, ՀՀ կառավարության թիվ 1151-Ն որոշման ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության մասին հարցը քննարկելիս, սահմանադրական դատարանը տվել է նաև դատական պրակտիկայի գնահատականները հենց նման վճիռների հիման վրա, որոնց հիմքում հիմնականում եղել են են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218-րդ, ՀՀ հողային օրենսգրքի 104-րդ հոդվածները:

Սահմանադրական դատարանի կողմից վերոհիշյալ իրավական նորմերը ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչվելուց հետո, դատական վճիռներով սեփականությունից զրկված քաղաքացիները փորձել են վերանայել տալ այդ վճիռները՝ սահմանադրական դատարանի որոշումը գնահատելով որպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված նոր հանգամանք:

Առաջին ատյանի դատարանները և քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը նման դիմումները մերժել են այն հիմնավորմամբ, որ սահմանադրական դատարանի որոշմամբ հակասահմանադրական ճանաչված այդ իրավական նորմերն ուժը կորցրած կարող են համարվել միայն սահմանադրական դատարանի սահմանած ժամկետը լրանալուց հետո՝ 2006թ. հոկտեմբերի 1-ին, որ մինչ այդ սահմանադրական դատարանի որոշումը որպես նոր հանգամանք դիտվել չի կարող:

Առկա է նաև այն փաստը, որ 2006թ. հոկտեմբերի 1-ից հետո ներկայացված դիմումները նույնպես չեն բավարարվել նույն այն հիմնավորմամբ, որ սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշումը տվյալ դեպքերով կայացված վճիռները վերանայելու համար որպես նոր հանգամանք դիտվել չի կարող:

Դատարանների համար բնութագրական է նաև այն, որ ներկա օրենսդրական դաշտում առկա բազում անորոշությունների ու հակասությունների պայմաններում, չեն օգտվում նման իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելու հարցով սահմանադրական դատարան դիմելու իրենց իրավունքից: Առ այսօր միայն մեկ դեպքով է դատավորը դիմել սահմանադրական դատարան, և այն էլ «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի հետ կապված հարցով:

Բողոքներ են ստացվել՝ վճռաբեկ բողոքը չընդունելու մասին վճռաբեկ դատարանի որոշումների կապակցությամբ: Այդպիսի որոշումների հիմքում դրված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1 և 414.2, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1, 231.2 հոդվածները: Այդ մասին մանրամասն շարադրված է սույն զեկույցի 2-րդ բաժնում:

Իրավունքի պաշտպանության առումով անցկացված դատական բարեփոխումների շարքում դրական պետք է համարել դատարանների շենքային պայմանների բարելավումները, դատական նիստերի ընթացքի ձայնագրումը, դատական դպրոցի հիմնումը և այն ամենը, ինչն ուղղված է դատական ընթացակարգերի վերահսկման ապահովմանը, դատավորների մասնագիտական որակավորման և պատասխանատվության բարձրացմանը:

### 3.4. ՀՀ արդարադատության նախարարության համակարգի մարմիններ

### 3.4.1.Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության դերն ու նշանակությունը կարևորվում է այն առումով, որ դատական ակտերի կատարման ապահովումն արդարադատության իրականացման, հետևաբար նաև դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ մասն են:

Այս ծառայության գործունեության դեմ ստացված բողոքները վերաբերել են դատական ակտի պահանջները ժամանակին կամ ընդհանրապես չկատարելուն, կատարման ընթացքում հարկադիր կատարողի կողմից իր լիազորությունները սահմանազանցելուն և նմանաբնույթ այլ խախտումներին: Այդպիսիք արձանագրվել են նաև 2004, 2005 թվականներին: Չնայած դրան՝ իրավիճակն այստեղ մնում է անփոփոխ՝ իրավունքի նույնաբնույթ խախտումներն առկա են, որոնք և տեղիք են տալիս շարունակական բողոքների:

ԴԱՀԿ ծառայության դեմ 2006 թվականին ստացվել է 46 բողոք, որից՝

- ընդունվել են քննարկման՝ 29
- փոխանցվել են այլ մարմնի քննարկմանը՝ 2
- ներկայացվել են դիմողի իրավունքների պաշտպանության հնարավորությունները՝ 2
- չեն ընդունվել քննարկման՝ 8
- ուսումնասիրման ընթացքում են՝ 5

ԴԱՀԿ ծառայության աշխատանքների գնահատման համար բնութագրական են հետևյալ բողոքները.

## Օրինակ 1

Դիմումատուն գանգատվել է, որ ԴԱՀԿ ծառայության Երևանի բաժնի կողմից չի կատարվում ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի՝ ինքնակամ կառույցը քանդելուն պարտավորեցնելու մասին 03.05.2005թ. վճիռը:

Դիմումի քննարկմամբ պարզվել է, որ հարկադիր կատարողը բավարարվել է միայն ինքնակամ կառույցը քանդելուն պարտապանին պարտավորեցնելու մասին որոշում կայացնելով, այնուհետև միջոցներ չի ձեռնարկել իր որոշման հարկադիր կատարումն ապահովելու ուղղությամբ, այսինքն՝ անտեսել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի պահանջները:

Պաշտպանի միջամտությունից հետո միայն հարկադիր կատարողը ձեռնամուխ է եղել վճռի կատարմանը:

Հարկադիր կատարողի անգործությունը գնահատվել է որպես դիմումատուի դատական պաշտպանության իրավունքի խախտում:

## Օրինակ 2

ԴԱՀԿ ծառայության Երևանի բաժնի հարկադիր կատարողի կողմից դեռևս 29.07.2004թ. հարուցվել է կատարողական վարույթ՝ ի կատարումը ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 22.04.2004թ. վճռի՝ դիմումատուին ճարտարապետանախագծային առաջադրանք տրամադրելու համար Երևանի քաղաքապետին պարտավորեցնելու մասին:

Հարկադիր կատարողը բավարարվել է միայն քաղաքապետին գրություններ ուղարկելով և հիմնավոր է համարել քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության գրությունն այն մասին, որ «Երևան քաղաքի գլխավոր հատակագծի /2006-2020/ իրականացման հիմնական միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման համաձայն, իրականացվելու են Երևանի Կենտրոն համայնքի գոտևորման նախագծի մշակման աշխատանքները:

Փաստորեն, դիմումատուին ճարտարապետանախագծային առաջադրանքի տրամադրումը, առանց որևէ հիմնավորման, պայմանավորվել է գոտևորման այդ աշխատանքների կատարումով:

Պաշտպանի միջամտությունից հետո միայն՝ կատարողական վարույթի հարուցումից մոտ երկու տարի անց, հարկադիր կատարողը պարտապանի նկատմամբ կիրառել է վարչական տույժ և սահմանել է կատարման վերջնաժամկետ:

## Օրինակ 3

ԴԱՀԿ ծառայության Երևանի բաժնի հարկադիր կատարողի կողմից 30.03.2006թ. հարուցվել է կատարողական վարույթ՝ ի կատարումն Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 10.01.2006թ. վճռի՝ ՀՀ ոստիկանությունից հօգուտ դիմումատուի, որպես պակաս վճարած կենսաթոշակ, 225232 դրամ բռնագանձելու մասին:

Այս դեպքում նույնպես հարկադիր կատարողը բավարարվել է պարտապանին գրություններ ուղարկելով, իսկ վճռի փաստացի կատարման ուղղությամբ որևէ գործողություն չի ձեռնարկել:

Դատարանի վճիռը կատարվել է 2006թ. սեպտեմբերին` Պաշտպանի միջամտությունից հետո:

## Օրինակ 4

Ի կատարումը ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 06.05.2006թ. վճռի` հարկադիր կատարողի կողմից հայցվորը բնակեցվել է դիմումատուների բնակարանում` նրանց բացակայությամբ և առանց վճիռը կամավոր կատարելու համար ժամկետ սահմանելու:

Եթե թվարկված նախորդ դեպքերում հարկադիր կատարողները ցուցաբերել են պաշտոնեական անգործություն, ապա տվյալ դեպքում դրսևորել են շտապողականություն, որի արդյունքում խախտվել են մյուս կողմի իրավունքները:

Բողոքի քննարկման ընթացքում կողմերի միջև համաձայնություն է կայացվել և դիմումատուները խնդրել են դադարեցնել բողոքի քննարկումը:

Նմանաքնույթ բողոքներ եղել են նաև ԴԱՀԿ ծառայության մարզային ստորաբաժանումների աշխատակիցների կողմից թույլ տրված խախտումների վերաբերյալ:

ԴԱՀԿ ծառայության աշխատանքների ընդհանուր գնահատականն այն է, որ երբ պարտապանը պետական մարմին է, հարկադիր կատարողները ձեռնպահ են մնում օրենքով իրենց վերապահված հարկադրանքի միջոցներ կիրառելու իրավունքն օգտագործելուց: Այստեղ կարծես թե չի գիտակցվում օրենքի առջև բոլորի հավասար լինելու սկզբունքը: Դրա վկայությունն է այն, որ հիմնականում չեն կատարվում կամ կատարվում են մեծ ձգձգումներով դատական այն ակտերը, որոնցով պարտապան են ճանաչված քաղաքապետը, մարզպետը, կաղաստրը, ոստիկանությունը կամ պետական կառավարման այս կամ այն մարմինը: Ասվածի վկայություրյունն են դատական ակտերի չկատարման վերաբերյալ ստացված բազմաթիվ բողոքները :

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով հարկադիր կատարողներին տրված են այնպիսի լիազորություններ, ինչպիսիք են` հարկադիր կատարողի որոշումը դիտավորյալ չկատարող պարտապանի նկատմամբ տուգանք կիրառելը, քրեական պատասխանատվության կանչելու համար նյութերը դատախազություն ուղարկելը, իր օրինական գործողությունների կատարմանը արգելք հանդիսացողների նկատմամբ ուժային միջոցներ գործադրելը և այլն:

Հարկադիր կատարողին այդպիսի իրավունքների վերապահումը նպատակ ունի ապահովելու դատական ակտի պահանջների կատարման անդառնալիությունը հավասարապես բոլորի, այդ թվում նաև պետական կառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց համար: Վերջապես, այստեղ պետք է կարևորվի նաև այն, որ հարկադիր կատարման ծառայությունը պատասխանատու է հարկադիր կատարողի մեղքով դատական ակտի կատարումն անհնարին դառնալու, ինչպես նաև դրա չկատարման հետևանքով պարտապանին պատճառված վնասների համար:

Ստացված մի շարք դիմում-բողոքների տվյալներով ԴԱՀԿ ծառայության ղեկավարության ուշադրությանն է հրավիրվել նրան, որ հարկադիր կատարողները կատարողական վարույթն իրականացնելիս, միշտ չէ, որ ապահովում են վարույթի մասնակիցների համար օրենքով սահմանված իրավունքների իրականացումը՝ ծանոթանալ վարույթին, բողոքարկել հարկադիր կատարողի գործողությունները, բացարկ հայտնել հարկադիր կատարողին, պահանջել աճուրդով իրականացվող գույքի վերագնահատում, առաջարկել հաշտության համաձայնություն և այլն:

Այսպես, պարտապանի վարկային պարտավորություններով հաճախակի են իրականացվում գրավի առարկա հանդիսացող գույքի հարկադիր աճուրդներ: Հանրահայտ է, որ որպես գրավ ներկայացվող գույքը հիմնականում գնահատվում է իր շուկայական արժեքից զգալիորեն ցածր: Այդպիսի գույքն աճուրդի ներկայացվելիս, որպես մեկնարկային գին առաջարկվում է տվյալ գնահատմամբ սահմանված գինը, և հազվադեպ է, որ պարտապանը տեղյակ է լինում աճուրդի դրված գույքի վերագնահատում պահանջելու իր իրավունքի մասին:

Կամ երբ կատարողական վարույթով պարտապանի նկատմամբ դատարանում հարուցվում է անվճարունակության գործ, տրամաբանական է, որ կատարողական վարույթն իրականացնող հարկադիր կատարողը պարտատիրոջը նախազգուշացնի՝ պարտապանին անվճարունակ ճանաչելու հետևանքների մասին: Մինչդեռ դա չի արվում, և օրենքին անտեղյակ պարտատերը կանգնում է պարտապանի սնանկ ճանաչված լինելու փաստի առաջև, երբ արդեն որպես պահանջատեր հանդես գալ չի կարող:

Կատարողական վարույթի կողմերին իրենց իրավունքների պարզաբանման և դրանց լիարժեք իրականացման համար պայմանների ապահովման շնորհիվ է, որ կկանխվեն օրենքի խախտումները, չեն լինի կամ նվազագույնի կհասցվեն դժգոհությունները հարկադիր կատարողների գործողություններից:

### 3.4.2. Քրեակատարողական հիմնարկներ

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հիմնական և կարևոր ոլորտներից է քրեակատարողական հիմնարկներում նախնական կալանք կրող կամ ազատազրկման դատապարտված անձանց իրավունքների պաշտպանությունը՝ կարևորելով նրանց՝ կեցության համար անհրաժեշտ և բավարար կենսապայմաններով ապահովված լինելը, նրանց նկատմամբ բռնությունների և անձի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող գործողությունների կիրառման բացառումը, արտաքին աշխարհի հետ կապ պահպանելու իրավունքի իրականացման ապահովումը, անազատության պայմաններում պահվող անձանց համար օրենքով նախատեսված այլ իրավունքների լիարժեք իրականացումը երաշխավորված լինելը:

Կատարված ուսումնասիրությունների տվյալներով կարելի է պնդել, որ ներկայիս գործող քրեակատարողական հիմնարկների շենքային պայմանները դեռևս չեն կարող նման հաստատությունների համար նախատեսված միջազգային չափանիշներին լիովին համապատասխանող համարվել՝ սանիտարական պայմանների, ջերմային անհրաժեշտ ռեժիմի ապահովման, խոնավության տոկոսայնության, բուժսպասարկման հնարավորությունների և նման այլ պայմանների առումով:

Միաժամանակ, գրեթե բոլոր քրեակատարողական հիմնարկների շինությունների վերակառուցման և միջազգային չափանիշներին համապատասխանեցման ուղղությամբ զգալի աշխատանքներ կատարվել և կատարվում են: Կարելի է արձանագրել, որ առկա է զգալի դրական տեղաշարժ նախկինում գոյություն ունեցած պայմանների համեմատ: Շնորհիվ իրականացված վերանորոգումների և վերակառուցումների՝ հնարավոր է դարձել բեռնաթափել պահման խցերը, իսկ կենցաղային հարմարությունները մեկուսացնելու, ջրամատակարում ապահովելու և նման այլ փոփոխությունների իրականացման արդյունքում ստեղծվել են սանիտարական պայմաններ: Զգալի ուշադրություն է դարձվում դատապարտվածների կրթության, հանգստի, զբաղվածության կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը: Բոլոր դեպքերում, դրական է գնահատվում գոյություն ունեցող վիճակը բարելավելու շարունակական ձգտումը, ինչը պայմանավորված է ֆինանսական, որոշ դեպքերում նաև տեխնիկական հնարավորություններով:

2006թ. մարտին Գորիսի քրեակատարողական հիմնարկ կատարված այցի ընթացքում այդտեղ պահվող անձիք գանգատվել են լվացվելու ջրի անկանոն մատակարումից, խցերի մեծ մասում խոնավության բարձր տոկոսից: Իրոք, հիմնարկի ջրամատակարման խողովակները հնացած և կոռոզիայի ենթարկված լինելու հետևանքով, հնարավոր չի եղել ապահովել կանոնավոր ջրամատակարարում: Մեր այցելության պահին արդեն իսկ

իրականացվելիս են եղել ջրագծերի աշխատանքներ, հետագա այցի ժամանակ՝ լուծված է եղել ջրամատակարարման խնդիրը: Գորիսի քրեակատարողական հիմնարկի խցերում խոնավությունը պայմանավորված է ոչ միայն շինության վիճակով, այլև տվյալ վայրի բնակլիմայական պայմաններով: Խնդիրը հիմնարկի ղեկավարությունը փորձում է լուծել առավելապես վերին հարկերի և արևկող խցերն օգտագործելու ճանապարհով:

Անմխիթար է վիճակը Աբովյանի քրեակատարողական հիմնարկում: Այստեղ շենքային պայմաններն այնպիսին են, որ վերանորոգման, վերակառուցման ճանապարհով՝ առանց եղած շինությունները հիմնովին քանդելու, պայմանների բարելավում հնարավոր չէ: Խցերում առկա են խոնավության բարձր տոկոսայնություն, անբավարար սանիտարական պայմաններ, օգտագործվող էլեկտրատաքացուցիչները բավարար ջերմություն չեն ապահովում: Սա այն դեպքն է, երբ չկան բարեփոխման տեխնիկական հնարավորություններ: ՀՀ արդարադատության նախարարությունը նախատեսում է այդ հիմնարկի փոխարեն նորի կառուցումը: Աբովյանի քրեակատարողական հիմնարկ կատարած այցի ժամանակ կալանք կրող կանայք գանգատվել են, որ խցի ներվածքի պայմաններում ցերեկային ժամերին իրենց չի թույլատրվում հանգստանալու համար օգտագործել մահճակալը: Այդ գանգատը ներկայացվել է քրեակատարողական վարչության քննարկմանը: Վերջինս համաձայնվել և թույլատրել է կալանք կրող կանանց ցերեկային ժամերին հանգստի համար օգտվել նաև խցում իրենց հատկացված մահճակալներից:

Վանաձորի նոր կառուցվող քրեակատարողական հիմնարկը դեռևս շահագործման չի հանձնվել, իսկ գործող հիմնարկի պայմաններն անընդունելի են:

Վերանորոգման, վերակառուցման զգալի աշխատանքներ են կատարվել և կատարվում են Նուբարաշենի, Էրեբունու, Վարդաշենի, Գյումրու, Կոշի, Արթիկի քրեակատարողական հիմնարկներում:

Այս ամենին զուգահեռ, անմխիթար պայմաններում են ազատազրկման դատապարտված և «Մեղրի» բաց տիպի քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող դատապարտյալները:

Ոչ բարվոք շենքային պայմանները, կենցաղային հարմարությունների բացակայությունը դատապարտյալների արդարացի դժգոհությունների տեղիք են տալիս: Հիմնարկի ղեկավարությունը պատճառաբանում է, որ իրենց չեն տրամադրվում նյութական միջոցներ՝ վերանորոգումներ, վերակառուցումներ իրականացնելու համար:

Երևանի Կենտրոն քրեակատարողական հիմնարկը, ներառված լինելով ՀՀ արդարադատության նախարարության կառուցվածքային համակարգում, շարունակում է մնալ ՀՀ ազգային անվտանգության ծառայության շենքում: Այստեղ պահվում են ինչպես նախնական կալանք կրող, այնպես էլ ազատազրկման դատապարտված անձինք:

Թեև այստեղ պահվող անձանցից պահման պայմանների վերաբերյալ գանգատներ չեն ստացվել, այնուամենայնիվ, նրանց համար առկա է ՀՀ ազգային անվտանգության ծառայության ազդեցության ռիսկը:

Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանցից 2006 թվականին հազվադեպ են ստացվել բողոքներ, որոնցով նրանք գանգատվում են պահման պայմաններից, վարչակազմի կողմից իրենց իրավունքների խախտումներից:

Քրեակատարողական ծառայությունների դեմ 2006թ. ստացված բողոքներից 1/3-ով է, որ դիմումատուները մատնանշել են իրենց իրավունքները խախտված լինելու հանգամանքը:

Մնացած դեպքերում դիմումները պարունակել են խնդրանք՝ հանդիպում Պաշտպանի հետ, Պաշտպանի միջնորդությունն այլ կալանավայր տեղափոխելու, դատավճիռը վերանայելու և նման այլ հարցերով:

Զգալի թիվ են կազմում դատապարտյալներից ստացված բողոքները՝ իրենց նկատմամբ կայացված, մի քանի տարվա վաղեմություն ունեցող դատավճիռների անարդարացի լինելու վերաբերյալ:

Քրեակատարողական հիմնարկում իր նկատմամբ բռնություններ կիրառված լինելու վերաբերյալ միակ բողոքը եղել է Գորիսի քրեակատարողական հիմնարկից, ինչի մասին արդեն ներկայացվել է դատախազությանը վերաբերող բաժնում:

Նուբարաշենի քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավորվածի մայրը բողոքել է, որ իրեն մերժել են որդու հետ տեսակցություն տրամադրելը:

Այդ բողոքով իրավունքի խախտում չի արձանագրվել, քանի որ նախնական կալանքի տակ գտնվող մեղադրյալի հետ հարազատների տեսակցությունը սահմանափակված է եղել քրեական հետապնդումն իրականացնող մարմնի որոշմամբ, ինչը պարտադիր է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի համար:

Նուբարաշենի քրեակատարողական հիմնարկում պահվող ցմահ ազատազրկման դատապարտված անձանցից բողոքներ են ստացվել՝ իրենց խցերում ապօրինի խուզարկություններ կատարելու, կենցաղային իրերն իրենցից վերցնելու, ապօրինի պատժախուց տեղափոխելու, ինքնավնասում իրականացրած անձանց պատշաճ բժշկական օգնություն ցույց չտալու վերաբերյալ :

Բողոքն ուսումնասիրվել է տեղում: Արձանագրվել է, որ խցերում խուզարկությունը կատարվել է «ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 03.08.2006թ. թիվ 1543-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ դատապարտյալներից վերցվել են այն իրերն ու առարկաները, որոնց պահելը տվյալ կանոնակարգով արգելված է:

Միաժամանակ վարչակազմի ուշադրությունն է հրավիրվել այն հանգամանքի վրա, որ ցուցաբերված բժշկական օգնության կամ բուժօգնությունից հրաժարվելու մասին կալանավորների բժշկական քերթիկներում տվյալները հաճախակի լրացվում են ոչ լիարժեք:

Նախկինում մահապատժի դատապարտված և պատիժը ցմահ ազատազրկմամբ փոխարինված անձանց բողոքները, կապված օրենսդրական խնդիրների հետ, վերլուծվել է զեկույցի 2-րդ բաժնում:

Քրեակատարողական հիմնարկների հետ կապված, կարևորում ենք նաև նախնական կալանքի տակ պահելու ժամկետների հաշվարկման կարգը, երբ վերաքննիչ դատարանը որոշում է կայացնում քրեական գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու մասին, իսկ նախնական կալանքի տակ պահելու ժամկետը սպառված է:

Քննարկվել է կոնկրետ բողոք, ըստ որի՝ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը կայացրել է որոշում՝ քրեական գործը լրացուցիչ քննության վերադարձնելու մասին, գործով ամբաստանյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը թողնվել է անփոփոխ: Կալանքը դատախազության վրա հաշվարկելու մասին գրություն է ուղարկվել Նուբարաշենի քրեակատարողական հիմնարկ:

Քրեական գործն անհապաղ դատախազություն ուղարկելու փոխարեն, այն պահվել է վերաքննիչ դատարանի գրասենյակում: Այնուհետև, դատարանի որոշումից 10 օր անց, փաստաբանը վճռաբեկ բողոք է բերել դատարանի որոշման դեմ և վերաքննիչ դատարանից քրեական գործն ուղարկվել է վճռաբեկ դատարան, որի ընթացքում փաստաբանը հետ է վերցրել վճռաբեկ բողոքը: Սակայն քրեական գործը շուրջ երկու ամիս մնացել է վճռաբեկ և ապա վերաքննիչ դատարանում:

Քրեակատարողական հիմնարկը շարունակել է կալանքը հաշվարկել դատախազության վրա, քանի որ կալանքը դատարանի վրա վերահաշվելու մասին լրացուցիչ գրություն վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանը չի ուղարկել: Այս ընթացքում նաև լրացել է տվյալ անձին նախնական կալանքի տակ պահելու ժամկետը:

Ի պատասխան նախնական կալանքի տակ պահելու ժամկետի լրանալու մասին քրեակատարողական հիմնարկի նախազգուշական գրությանը՝ դատախազության քննիչը հաղորդել է, որ քրեական գործով բերված է վճռաբեկ բողոք, գործը գտնվում է վճռաբեկ դատարանում, կալանքը պետք է հաշվել դատարանի վրա:

Քրեակատարողական հիմնարկում քննիչի այս գրությունը հիմք է ընդունվել և տվյալ անձին կալանքի տակ պահելը համարել է օրինական:

Պաշտպանի կարծիքով, չպետք է անտեսվեր այն հանգամանքը, որ վերաքննիչ դատարանի որոշումը՝ քրեական գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու մասին ուժի մեջ է մտել հրապարակման պահից, որ վճռաբեկ դատարանը չի կասեցրել կամ չի

վերացրել այդ որոշումը: Հետևաբար, վերաքննիչ դատարանի որոշման հրապարակման պահից կալանքը հաշվվելիս է եղել նախաքննական մարմնի վրա և այդ պահից շարունակվել է նախնական կալանքի տակ պահելու ժամկետի ընթացքը, որը լրանալու պահից քրեակատարողական հիմնարկի պետը պարտավոր էր իր որոշմամբ անձին ազատել կալանքից:

Քրեակատարողական հիմնարկների հետ կապված նման խնդիրները մշտապես գտնվում են Պաշտպանի ուշադրության կենտրոնում՝ այդ հիմնարկներ հաճախակի այցելությունների, կալանավորվածների և դատապարտյալների հետ հանդիպումների, կալանքի տակ գտնվողների խնդիրներով մամուլում եղած հրապարակումներին արձագանքելու, ՀՀ արդարադատության նախարության հասարակական դիտորդական խմբի հետ համագործակցության և նման այլ եղանակներով:

### 3.5. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե

Քաղաքացիների սեփականության իրավունքի իրականացումը, օրենքով նախատեսված դեպքերում /անշարժ գույքի հետ կապված գործարքներով ընդհանրապես/, պայմանավորվում է այդ իրավունքների պետական գրանցմամբ:

Այս կառույցի դեմ ուղղված բողոքները վերաբերել են իրավունքի գրանցման, գրանցված իրավունքի վերաձևակերպման կամ դրա վերաբերյալ տեղեկությունների տրամադրման անհիմ մերժումներին:

Կադաստրի մարմինների դեմ 2006 թվականի ընթացքում ստացվել է 39 բողոք, որից՝

- ընդունվել են քննարկման՝ 26
- փոխանցվել են այլ մարմնի քննարկմանը՝ 1
- ներկայացվել են դիմողի իրավունքների պաշտպանության հնարավորությունները՝ 1
- չեն ընդունվել քննարկման՝ 11

Իրավունքի խախտման տեսանկյունից առավել բնութագրական են կադաստրի մարմինների դեմ ուղղված հետևյալ բողոքները.

## Օրինակ 1

Անշարժ գույքի կադաստրի «Կենտրոն» տարածքային ստորաբաժանման կողմից մերժվել է անշարժ գույքի նկատմամբ դիմումատուի՝ դատարանի վճռով ճանաչված սեփականության իրավունքի գրանցումն այն հիմնավորմամբ, որ գույքը ներառված է

օտարման գոտում, իսկ Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացման գրասենյակի /ԾԻԳ/ կառավարման խորհուրդի որոշմամբ անթույլատրելի է համարվել այդ իրավունքի գրանցումը:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, որով պարտավոր են ղեկավարվել կադաստրի մարմինները, իրավունքի գրանցումը մերժելու նման հիմք նախատեսված չէ: Բացի այդ, խոսքն այնպիսի իրավունքի գրանցման մասին է, որը ճանաչված է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով:

Կադաստրի մարմնում իրենց գործունեությունը կարգավորող օրենքով ղեկավարվելու և դատարանի վճռով քաղաքացու իրավունքն առանց առարկության գրանցելու փոխարեն, դատարանի վճիռը և հարկադիր կատարողի որոշումը՝ դատարանի վճիռը կատարելուն պարտավորեցնելու մասին, ուղարկվել է ԾԻԳ-ի կառավարման խորհրդին՝ գրանցման թույլտվություն ստանալու նպատակով: Այս խորհուրդը, որի կազմը սահմանված է ՀՀ կառավարության որոշմամբ և, որը նախագահում է Երևանի քաղաքապետը, իրեն իրավունք է վերապահել կայացնելու նաև դատարանի վճիռները չկատարելու որոշումներ:

Հարկադիր կատարողը բավարարվել է խորհրդի որոշման մասին ստացած հաղորդմամբ և հետագա գործողություններ չի ձեռնարկել:

Պաշտպանի կողմից որոշում է կայացվել հարկադիր կատարողի, կադաստրի ստորաբաժանման և քաղաքապետի գործողություններում իրավունքի խախտում տեսնելու մասին: Դրանից հետո է միայն, որ կատարվել է դիմումատուի իրավունքի պետական գրանցումը:

## Օրինակ 2

Այս դեպքով նույնպես մերժվել է ընդհանուր սեփականություն հանդիսացող անշարժ գույքից դիմումատուի բաժինն առանձնացնելու մասին դատարանի վճռով իրավունքի գրանցման կատարումն այն պատճառաբանությամբ, որ Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացման գրասենյակի կառավարման խորհուրդն իրավունքի գրանցմանը համաձայնություն չի տվել:

Նյութերն փոխանցվել են ՀՀ գլխավոր դատախազություն՝ դատարանի վճիռը չկատարելու հարցում մեղավոր անձանց քրեական պատասխանատվության կանչելու առաջարկով:

Դրանից հետո է միայն, որ իրականացվել է դիմումատուի սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Օրինակ 3

Դիմումատուն գանգատվել է, որ իր զբաղեցրած հողատարածքի վերաբերյալ կադաստրի աշխատակցի կողմից կեղծ փաստաթղթեր են ներկայացվել դատարան, որի հետևանքով հողամասի սահմանները ճշգրտելու մասին իր հայցով դատարանը կայացրել է անօրինական վճիռ:

Դիմումատուի համաձայնությամբ, բողոքը փոխանցվել է ՀՀ գլխավոր դատախազություն, որտեղ նախապատրաստվել են նյութերը:

Դատախազությունից հայտնել են, որ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Դավթաշենի ստորաբաժանման աշխատակցի կողմից դատարան ներկայացրած փաստաթղթերում կեղծիքներ կատարված լինելու փաստը քննությամբ հաստատվել է: Նյութերով մերժվել է քրեական գործի հարուցումը՝ հանցավորին քրեական պատասխանատվության կանչելու համար օրենքով նախատեսված ժամկետն անցած լինելու հիմքով: Հաստատված է, որ փաստաթղթերի կեղծիքը կատարվել է 2003 թվականին:

Օրինակ 4

Այս գործով դիմումատուն բաժնետիրական ընկերությունն է, որի կողմից առուվաճառքի պայմանագրով ձեռք բերած բազմաբնակարան շինության նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումը մերժվել է կադաստրի պետական կոմիտեի Արաբկիրի տարածքային ստորաբաժանման կողմից այն հիմնավորմամբ, որ ընկերությունը չի վճարել բնակելի շինություններով զբաղեցված հողատարածքի կադաստրային արժեքը:

ՀՀ տնտեսական դատարանի 31.07.2006թ. վճռով ընկերության հայցը՝ կադաստրի Արաբկիրի տարածքային ստորաբաժանման մերժումն անօրինական ճանաչելու պահանջի մասին, բավարարվել է: Տնտեսական դատարանը գտել է, որ կադաստրի մարմինը սխալ է մեկնաբանել «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 04.10.2005թ. ընդունված ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը, անտեսել է այն հանգամանքը, որ բազմաբնակարան շենքերով զբաղեցված տարածքների նկատմամբ իրավունքի փոխանցման դեպքերում՝ սեփականության իրավունքի գրանցման համար դրանց կադաստրային արժեքի վճարում նախատեսված չէ :

Տնտեսաական դատարանի վճիռը մտել է օրինական ուժի մեջ, դիմումատուին տրվել է կատարողական թերթ, սակայն առայժմ վճիռը կատարված չէ այն պատճառաբանությամբ, որ վճռի դեմ բերված է վճռաբեկ բողոք:

Օրինական ուժի մեջ մտած վճռի վճռաբեկության կարգով բողոքարկումը չի կարող կասեցնել վճռի կատարումը, եթե վճռաբեկ դատարանը որոշում չի կայացրել այն կասեցնելու մասին: Տվյալ դեպքով վճռաբեկ դատարանը նման որոշում չի կայացրել:

Դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի չկատարումն արդյունք է հարկադիր կատարողի անգործության, կադաստրի մարմնի կամայական մոտեցման:

ՀՀ կառավարությունը և Երևանի քաղաքապետը դրական քայլ կատարեցին Կոնդ և Կոզեռն թաղամասերի ինքնակամ համարվող կառույցների, զբաղեցրած տարածքների օրինականացման և դրանց նկատմամբ քաղաքացիների սեփականության իրավունքը ճանաչելու ուղղությամբ:

Քաղաքապետարանի կողմից ճանաչված իրավունքների պետական գրանցումն իրականացնող մարմիններն այս հարցերում նույնպես ստեղծել են արհեստական քաշքշուկներ, որոշակի արգելքներ և տեղիք են տվել բողոքների ու դժգոհությունների: Այդ խնդիրներով նույնպես առաջացել է Պաշտպանի միջամտության անհրաժեշտությունը:

Դժգոհությունների տեղիք տվող խնդիրներն առայժմ ստացել են մասնակի լուծում:

Առկա են բողոքներ՝ կապված 26.12.2002թ. ընդունված «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի կիրառման հետ:

Օրինակ՝ ինքնակամ կառույցի նկատմամբ իրավունքը ճանաչելու մասին տրված դիմումներն անհիմն վերադարձնելու, անհիմն պատճառաբանություններով դիմումի բավարարումը ձգձգելու հետևանքով, դիմումատուն բաց է թողնում սեփականության իրավունքը տվյալ օրենքով սահմանված կարգով օրինականացնելու համար նախատեսված ժամկետը: Այնուհետև նաև այն դեպքերում, երբ իրավունքի ճանաչման մերժումը եղել է կադաստրի կամ տեղական ինքնակառավարման մարմնի մեղքով, այդ իրավունքը ճանաչելու ու գրանցելու համար քաղաքացին պարտավորեցվում է հողատարածքի համար վճարում կատարել ՀՀ կառավարության 25.11.2005թ. «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի գործողության ավարտից հետո ծագած խնդիրները կանոնակարգելու մասին» թիվ 936-Ա որոշմամբ սահմանված դրույքներով, որը 10 անգամով ավելին է, քան սահմանված է եղել հիշատակված օրենքով:

### 3.6. ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի մարմինների դեմ 2006թ. ընթացքում ստացվել է 41 բողոք, որից՝

- ընդունվել են քննարկման՝ 18
- փոխանցվել են այլ մարմնի քննարկմանը՝ 1

- չեն ընդունվել քննարկման՝ 17
- ուսումնասիրման ընթացքում են՝ 5

Այս խումբ բողոքները հիմնականում վերաբերել են զինկոմիսարիատների կողմից օրենքի խախտումով զորակոչ իրականացնելուն, զինվորական հաշվառման վերցնելը կամ հաշվառումից հանելն անհիմն մերժելուն, ռազմաբժշկական հանձնաժողովների կողմից զորակոչվողի առողջության վերաբերյալ սխալ եզրակացություն կազմելուն, ժամկետային զինծառայողի նկատմամբ ոչ հոգատար վերաբերմունք ցուցաբերելուն, «Սահմանված կարգի խախտմամբ զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի դրույթների կիրառումն անհիմն մերժելուն և այլն:

## Օրինակ 1

Դիմումատուի որդին պարտադիր զինծառայության է կանչվել 2005թ. դեկտեմբերին: Ռազմաբժշկական հանձնաժողովը հաշվի չի առել առողջական վիճակի վերաբերյալ նրա գանգատները և նրան ճանաչել է զինվորական ծառայության համար պիտանի: Ծառայության ողջ ընթացքում զինծառայողը գանգատվել է առողջությունից:

Պաշտպանի միջամտությունից հետո ՀՀ պաշտպանության նախարարության ղեկավարության կողմից հանձնարություն է տրվել ռազմաբժշկական վարչությանը՝ ամենայն մանրամասնությամբ ստուգել զինծառայողի առողջական վիճակը:

Զինծառայողը տեղափոխվել է ՀՀ պաշտպանութան նախարարության կենտրոնական կլինիկական հոսպիտալ, որտեղ անցկացված հետազոտությունների արդյունքով ՀՀ պաշտպանութան նախարարության կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովը նրան ճանաչել է զինվորական ծառայության համար ոչ պիտանի խաղաղ ժամանակ:

Դա եղել է տվյալ անձին բանակ զորակոչելուց ընդամենը 5 ամիս անց, ինչը վկայում է, որ հիվանդությունը նրա մոտ առկա է եղել դեռևս մինչև զորակոչվելը և զորակոչային բժշկական հանձնաժողովը կարող էր այն հայտնաբերել պատշաճ հետազոտում իրականացնելու դեպքում:

Եզակի չեն դեպքերը, երբ զինկոմիսարիատները փորձում են զինված ուժեր զորակոչել նաև զինակոչային տարիքի հասած փախստականի կարգավիճակ ունեցող անձանց

## Օրինակ 2

Դիմումատուն գանգատվել է, որ Մասիսի զինկոմիսարիատի կողմից փորձ է արվում իր տղային զորակոչել բանակ, թեկուզ իր ընտանիքը, այդ թվում նաև տղան, ունեն փախստականի կարգավիճակ:

Պաշտպանի հարցման կապակցությամբ, զինվորական կոմիսարը պարզաբանել է. «Մեր կողմից ամեն զորակոչի ընթացքում զինկոմիսարիատ են հրավիրվում նաև փախստականի կարգավիճակ ունեցող պատանիներ, նրանց հետ մենք տանում ենք լայնածավալ աշխատանքներ՝ բացատրելով օրենքի պահանջները, նրանց արտոնությունները և փորձում ենք նրանց հոգեբանությունը ձևավորել հայրենասիրական և ազգայնասիրական ոգով»:

Զինկոմիսարիատի գործողությունների դեմ ուղղված բողոքն արդեն իսկ վկայությունն է այն բանի, թե իրենք ինչպես և որքանով են «ձևավորել» փախստականի կարգավիճակ ունեցող պատանու հոգեբանությունը:

Առավել անընդունելի է, որ բանակում դեռևս տեղ ունեն այնպիսի դեպքեր, ինչպիսիք զինծառայողների միջև ոչ կանոնագրքային հարաբերություններն են, որոնք երբեմն հանգեցնում են բռնությունների, անգամ սպանության:

## Օրինակ 3

Դիմումատուն բողոքել է, որ բանակ զորակոչված իր տղայի նկատմամբ զորամասում անմիջական հրամանատարի և ծառայակիցների կողմից կիրառվել են բռնություններ, այդ թվում նաև սեքսուալ գործողություններ:

Բողոքն ուղարկվել է զինվորական դատախազություն, որտեղ այդ փաստով հարուցվել է քրեական գործ: Միաժամանակ տվյալ զինծառայողը ենթարկվել է բժշկական հետազոտման և ճանաչվել է զինվորական ծառայության համար ոչ պիտանի:

Իհարկե վերջին տարիների ընթացքում դրական տեղաշարժն այս հարցում ակնհայտ է, սակայն ինքնին երևույթն անընդունելի է:

Կարևորելով զինծառայողների, հատկապես ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվողների իրավունքների պաշտպանության հետ կապված խնդիրները՝ ՀՀ-ՆԱՏՕ անհատական գործընկերության գործողությունների ծրագրի շրջանակներում դիմել ենք ՀՀ կառավարությանը՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում զինվորական գործերով առանձին հաստիք նախատեսելու առաջարկով:

### 3.7. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ

Այս համակարգի կառույցների դեմ ուղղված բողոքների թիվը 2006 թվականին կազմել է 91, որոնք ունեցել են հետևյալ ընթացքը՝

- ընդունվել են քննարկման՝ 32
- փոխանցվել են այլ մարմնի քննարկմանը՝ 5
- ներկայացվել են դիմողի իրավունքների պաշտպանության հնարավորությունները՝ 38
- չեն ընդունվել քննարկման՝ 13
- ուսումնասիրման ընթացքում են՝ 3

Այս բնագավառի բողոքները վերաբերել են կենսաթոշակային ապահովման, նպաստների և փոխհատուցումների տրամադրման և սոցիալական ապահովության իրավունքի ապահովման այլ խնդիրներին :

Այս բողոքների շարքում զգալի են թիվ են կազմել այնպիսիք, որոնցով բարձրացվում են համակարգային լուծում պահանջող խնդիրներ: Օրինակ՝ թոշակառուն գանգատվել է կենսաթոշակի՝ օրենքով սահմանված չափի անբավարար լինելուց, ընտանեկան նպաստ ստանալուն հավակնողը՝ նպաստ նշանակելու համար որոշված սահմանային չափորոշիչներից, գանգատներ են ստացվել հանրային ծառայությունների մատուցման գների բարձր լինելուց և նման այլ հարցերից :

Բողոքները, որոնք վերաբերել են համակարգային լուծում պահանջող խնդիրների, այլ ոչ դիմումատուի որոշակի իրավունքի խախտմանը, քննարկման չեն ընդունվել, սակայն դրանք օգտագործվել են օրենսդրական փոփոխությունների, օրենքների կատարելագործման վերաբերյալ առաջարկների նախապատրաստման և պատկան մարմիններին ուղարկելու նպատակով:

Կենսաթոշակների, նպաստների, փոխհատուցումների նշանակման, վճարման կարգն ու պայմանները սահմանող օրենքներում և իրավական այլ ակտերում տեղ ունեն զգալի անորոշություններ, հակասություններ, որոնք հանգեցնում են կամայական մոտեցումների և, բնականաբար, առաջ են բերում իրավունքի խախտումներ:

## Օրինակ 1

Դիմումատուն, որը Լոռու մարզի Դեբեդ գյուղի բնակիչ է, հայտնել է, որ մինչև 2005թ. մարտը ստացել է աղքատության ընտանեկան նպաստ: Սակայն փոտրվար ամսին նպաստառուների ցուցակից իր ընտանիքը հանվել է՝ անապահովության միավորը ցածր լինելու հիմնավորմամբ: Դիմել է Լոռու մարզի սոցիալական ծառայության տարածքային գործակալություն և իրեն նշանակվել է միանվագ դրամական օգնություն, որը մեկ եռամսյակ վճարվելուց հետո դադարեցվել է:

Դիմումի քննարկման ընթացքում սոցիալական ծառայության տարածքային մարմնից հայտնել են, որ ընտանիքին նպաստի վճարումը դադարեցնելը պայմանավորված է եղել

նրանով, որ դիմումատուի ընտանիքի անապահովության միավորը ցածր է եղել սահմանային մեծությունից: Սակայն հաշվի է առնվել նաև Պաշտպանի միջնորդությունը և դիմումատուն ընդգրկվել է 2006 թվականի 4-րդ եռամսյակի հրատապ օգնություն ստանալու իրավունք ունեցողների ցուցակում:

## Օրինակ 2

Լոռու մարզի մեկ այլ բնակիչ բողոքել է, որ 80 տարեկան է, ունի 40 տարվա աշխատանքային ստաժ, ստանում է 12.800 դրամ կենսաթոշակ: Ընդգրկված է եղել նպաստառուների ցուցակում որպես աղքատության ընտանեկան նպաստի իրավունք ունեցող, սակայն նպաստի վճարումը 2005թ. դադարեցվել է: Ապրում է միայնակ, չունի որևէ այլ եկամուտ:

Այս դեպքում նույնպես նպաստի վճարման դադարեցումը պայմանավորված է անապահովության միավորի իջեցմամբ :

Սպիտակի սոցիալական ծառայության տարածքային գործակալությունից հայտնել են, որ դիմումատուին սոցիալական աջակցություն տրամադրելու հարցը քննարկվել է սոցիալական աջակցության խորհրդում և 2007թ. առաջին եռամսյակում ընտանիքը կներառվի հրատապ օգնություն ստացող ընտանիքների ցուցակում:

Նույնաբովանդակ դիմումներ ստացվել են նաև Վայոց ձորի, Տավուշի և հանրապետության այլ մարզերից:

## Օրինակ 3

Դիմումատուն Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի բնակիչ է, բողոքել է, որ 1996թ. Աբխազիայի Սուխում քաղաքից տեղափոխվել է Հրազդան և ստանում է 11000 դրամ կենսաթոշակ: Դադարեցվել է իր աղքատության ընտանեկան նպաստի վճարումը:

Ի պատասխան Պաշտպանի հարցմանը՝ Կոտայքի մարզի սոցիալական ծառայությունների Հրազդանի տարածքային գործակալությունից հայտնել են, որ 2005թ. դիմումատուի ընտանիքի անապահովության միավորը բարձր է եղել սահմանային մեծությունից և նրանք ստացել են աղքատության ընտանեկան նպաստ: 2006թ. հունվարից թոշակի բարձրացման հետևանքով ընտանիքի անապահովության միավորը դարձել է սահմանային մեծությունից ցածր: 2006թ. հունվար, փետրվար և մարտ ամիսներին նրան տրվել է հրատապ օգնություն, այնուհետև կատարվել է տնային այցելություն, որի արդյունքում պարզվել է, որ դիմումատուն որևէ խնամող չունի, ուստի ամրագրվել է միայնակ

չաշխատող կենսաթոշակառու (Կ87) սոցիալական խումբը և 2006թ. հուլիսից նա ստանում է ընտանեկան նպաստ:

## Օրինակ 4

Դիմումատուն հայտնել էր, որ ինքը անչափահաս է: Ծնվել է 1989 թվականին, ունի 8 ամսական երեխա, անօթևան է : Անծանոթ մարդիկ իրեն և երեխային ժամանակավոր տեղ են հատկացրել՝ Նոր Նորքի 5-րդ զանգվածում, աղքատության ընտանեկան նպաստ կամ որևէ դրամական օգնություն չի ստանում :

Նոր Նորքի սոցիալական ծառայության տարածքային գործակալությունից տեղեկացրել են, որ դիմումատուն որպես նպաստառու կհաշվառվի անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում, իսկ այնուհետև հայտնել են, որ այդպիսիք ներկայացվել են, և նա հաշվառված է որպես նպաստառու :

## Օրինակ 5

Աբովյան քաղաքի բնակիչ դիմումատուն հայտնել է, որ ինքը 1930թ. ծնված միայնակ թոշակառու է: 05.02.2000թ. իրեն տրված սոցիալական անձնագրի հիման վրա հաշվառվել է որպես նպաստառու Երևան քաղաքում: 2005թ. որդու մահից հետո մշտական բնակության է տեղափոխվել Աբովյան քաղաք, և օրենքով սահմանված կարգով դիմել է սոցիալական ծառայության իր բնակության վայրի տարածքային գործակալություն որպես նպաստառու հաշվառվելու համար: Այնտեղ թույլ տրված սխալի արդյունքում քաղաքացու նպաստի վճարումը չի վերսկսվել: Պաշտպանի միջամտության արդյունքում՝ հարցին տրվել է դրական լուծում:

Ընտանեկան նպաստների վերաբերյալ ստացված բողոքներով դրականն այն է, որ եթե դիմումատուն չի ներառվել նպաստառուների ցուցակում, այնուամենայնիվ Պաշտպանի միջամտությամբ, հիմնականում, նշանակվել է հրատապ օգնություն:

## Օրինակ 6

Դիմումատուն հայտնել է, որ ամուսնու անվամբ ԽՍՀՄ Խնայբանկի հանրապետական բանկում ներդրված ավանդի գրքույկը, ամուսնու մահից հետո՝ 1994 թվականի մայիսի 4-ին, փոխել է իր անվամբ: Սոցիալական ծառայության համապատասխան տարածքային գործակալության կողմից մերժվել է փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակներում ընդգրկելու վերաբերյալ իր խնդրանքն այն հիմնավորմամբ, որ նա չի կարող համարվել մինչև 1993 թվականը ավանդ ներդրած անձ:

Բողոքի քննարկման ընթացքում «Հայխնայբանկ» ՓԲԸ-ի կողմից հաստատվել է, որ դիմումատուի ամուսնու անվամբ (ավանդային հաշիվը բացվել է 1991 թվականին) «Հայխնայբանկ» ՓԲԸ-ի համապատասխան մասնաճյուղում առկա է եղել ավանդային հաշիվ, որը նրա մահից հետո, 03.05.1994թ. վերաձևակերպվել է դիմումատուի անունով (ՀՀ դրամով):

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարն իր գրությանը կից մեզ է ուղարկել նաև ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի կողմից տրված պարզաբանումը, որի համաձայն, եթե ավանդատուն մահացել է (ժառանգությունը բացվել է) մինչև 10.06.1993թ. ներառյալ, ապա կհամարվի, որ ժառանգը հանդիսացել է ավանդատու 10.06.1993թ. դրությամբ՝ անկախ ժառանգության վկայագրի տրման ժամկետից, որի պարագայում մյուս անհրաժեշտ չափանիշների առկայության դեպքում այդ ժառանգն օգտվում է փոխհատուցման իրավունքից, և վերջինիս դիմումը ենթակա է հաշվառման:

Այդ հիմքերով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը Պաշտպանի կողմից առաջարկվել է դիմումատուին ընդգրկել ավանդների դիմաց առաջնահերթության կարգով փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակներում:

Խնդիրը լուծվել է դրական:

Խնդրահարույց է և դժգոհությունների տեղիք է տալիս ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և «Հայխնայբանկ» ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագիրը, որով սահմանափակվում է ամսական կենսաթոշակի վճարման ժամկետը:

ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և «Հայխնայբանկ» ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագրում 31.10.2005թ. կատարված փոփոխությունների համաձայն՝ կենսաթոշակառուների կենսաթոշակի յուրաքանչյուր ամսվա վճարումը պետք է կատարվի ֆինանսավորված գումարը «Հայխնայբանկի» մասնաճյուղերի ընթացիկ հաշիվներին մուտքագրվելուց հետո 12 օրացուցային օրվա ընթացքում:

Նշված կարգի կիրառման արդյունքում սահմանված ժամկետում կենսաթոշակ չստացած կենսաթոշակառուն այն ստանալու հնարավորություն է ունենում միայն հաջորդ ամսում:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ամսվա կենսաթոշակը վճարվում է հաջորդ ամսվա ընթացքում՝ ըստ Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակառուի փաստացի բնակության վայրի: Կենսաթոշակառուն իրավունք ունի կենսաթոշակը ստանալ վճարման ծառայություն մատուցող կազմակերպությունից:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության 29.05.2003թ. թիվ 793-Ն որոշման թիվ 1 հավելվածի 21-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ամսվա կենսաթոշակը կենսաթոշակառուին վճարվում է նրա փաստացի բնակության վայրում, իսկ կենսաթոշակառուի գրավոր դիմելու դեպքում՝ վճարող կազմակերպության գրասենյակում:

Ինչպես կարելի է նկատել ո՛չ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով և ո՛չ էլ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության 29.05.2003թ. թիվ 793-Ն որոշմամբ կենսաթոշակառուի կողմից կենսաթոշակը ստանալու համար որևէ ժամկետային սահմանափակում նախատեսված չէ: Ընդհակառակը, օրենքը սահմանում է կենսաթոշակառուի իրավունքը՝ տվյալ ամսվա իր կենսաթոշակը ստանալ հաջորդ ամսվա ողջ ընթացքում: Հետևաբար, կենսաթոշակ ստանալու համար 12-օրյա ժամկետի սահմանումը սահմանափակում է քաղաքացու կենսաթոշակ ստանալու իրավունքը, իսկ նման սահմանափակում կարող է նախատեսվել միայն օրենքով[13]:

## Օրինակ 7

Դիմումատուն հայտնել է, որ «Հայխնայբանկ» ՓԲԸ-ի համապատասխան ստորաբաժանումը իրեն հասանելիք կենսաթոշակը վճարում է միայն ամսվա առաջին 12 օրերի ընթացքում, այդ ժամկետում գումարը չստանալու դեպքում այն հնարավոր է ստանալ միայն հաջորդ ամսին:

Պաշտպանի կողմից հիմնադրամին հասցեագրված նամակով հայտնվել է, որ իր համոզմամբ հիմնադրամի և «Հայխնայբանկ» ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագրում կենսաթոշակի գումարը ստանալու համար 12 օրացուցային օրվա ժամկետ սահմանող դրույթի ամրագրումը սահմանափակում է կենսաթոշակառուների իրավունքները: Մասնավորապես, սահմանափակվում է նրանց հասանելիք կենսաթոշակը հաջորդ ամսվա ընթացքում ստանալու իրավունքը, ինչպես որ դա նախատեսված է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածով:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ նույն գրությամբ խնդրվել է քննարկել հիմադրամի և «Հայխնայբանկ» ՓԲԸ-ի միջև 31.10.2005թ. կնքված պայմանագրի՝ կենսաթոշակների վճարման 12-օրյա ժամկետ սահմանող դրույթի վերանայման հարցը և քննարկման արդյունքների մասին տեղեկացնել Պաշտպանին:

---

[13] ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, պատասխանատվության տեսակները, չափերը սահմանվում են բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով:

Հիմնադրամից ստացվել են պատասխաններ, որոնցով պարզաբանվում է, թե ինչով է պայմանավորված 12-օրյա ժամկետի սահմանումը: Հայտնվել է նաև, որ հիմնադրամում տեղի են ունենում քննարկումներ՝ «Հայխնայբանկ» ՓԲԸ-ի կողմից կենսաթոշակների վճարումներն իրականացնելու համար օրերի թիվն ավելացնելու նպատակով: Բողոքի քննարկումը շարունակվում է:

Ելնելով սոցիալական խնդիրներին վերաբերող բողոքների ընդհանուր վերլուծության արդյունքներից՝ Պաշտպանը հանգում է այն եզրակացության, որ բողոքներով բարձրացված խնդիրների մի զգալի մասը ոչ թե երկրի սոցիալական վիճակի, այլ օրենսդրական դաշտում տեղ գտած բացթողումների ու անորոշությունների հետևանք է: Ուստի, իր հետագա գործունեության ընթացքում, Պաշտպանը ձգտելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ, բացահայտել և քննարկել խնդրահարույց իրավական նորմերը:

### 3.8. ՀՀ առողջապահության նախարարություն և առողջապահության համակարգ

Օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում, անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված յուրաքանչյուրի իրավունքի իրականացումը պայմանավորվում է ՀՀ առողջապահության նախարարության և առողջապահության ընդհանուր համակարգի գործունեությունը կարգավորող օրենքներով, այլ իրավական ակտերով և տվյալ համակարգի մարմինների գործունեությամբ:

Յուրաքանչյուրի համար սահմանադրական այդ իրավունքներից լիարժեք օգտվելն ապահովելու նպատակով պետության կողմից իրականացվում են տարբեր միջոցառումներ՝ ուղղված բուժաշխատողների որակավորման բարձրացմանը, բուժական հաստատությունների տեխնիկական հագեցվածության ապահովմանը, բուժսպասարկման մեթոդների ու միջոցների կատարելագործմանը, անվճար բուժսպասարկման ոլորտների ընդարձակմանը և այլն :

Ամբուլատոր պայմաններում անվճար բուժսպասարկման ներդրումը, ապահովագրական բուժսպասարկման համակարգի ներմուծմանն ուղղված ջանքերը, բուժաշխատողների համար պարտադիր պարբերական վերապատրաստման և կատարելագործման ուսումնական կենտրոնների առկայությունը, բուժական հաստատությունների, առանձին բուժաշխատողներին վերաբերող դժգոհությունների ընդունման թեժ գծի առկայությունն առողջապահության նախարարությունում այն քայլերից

են, որոնք կարող են և պետք է հանգեցնեն բնակչության առողջության պահպանման ոլորտի խնդիրների լուծմանը :

ՀՀ առողջապահության նախարության և ընդհանրապես առողջապահության համակարգի գործունեության վերաբերյալ 2006 թվականի ընթացքում ստացվել է 16 բողոք, որոնք ունեցել են հետևյալ ընթացքը՝

- ընդունվել են քննարկման՝ 7
- ներկայացվել են դիմողի իրավունքների պաշտպանության հնարավորությունները՝ 2
- չեն ընդունվել քննարկման՝ 7

Այդ բողոքները վերաբերել են մասնավորապես անվճար բուժսպասարկում, անվճար դեղորայք, առողջարանային բուժման ուղեգիր տրամադրելու խնդիրներին: Որոշակի բուժհաստատությունների, բուժաշխատողների դեմ ուղղված բողոքներ՝ անօրինական վճարներ պահանջելու, պատշաճ բուժսպասարկում չտրամադրելու և նման այլ խնդիրների վերաբերյալ, եզակի են եղել, ինչը, սակայն, չի վկայում այդ բնագավառում ընդհանրապես խախտումների բացակայության մասին :

Ստացված բողոքներից բնութագրական են հետևյալները.

## Օրինակ 1

Դիմումատուն հայտնել է, որ 2006թ. մայիսի 3-ին դիմել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչություն՝ իրեն, որպես անդամալույծ հաշմանդամի, առողջարանային բուժման ուղեգիր տրամադրելու խնդրանքով, սակայն որոշակի պատասխան չի ստացել: Խնդրել է Պաշտպանի միջամտությունը:

2006թ. հունիսի 8-ին՝ Պաշտպանի միջամտության արդյունքում, դիմումատուի խնդրանքը բավարարվել է:

## Օրինակ 2

Դիմումատուն հայտնել է, որ ինքը երրորդ խմբի հաշմանդամ է, 2003թ. հուլիս և նոյեմբեր ամիսներին ՀՀ առողջապահության նախարարության կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտի նյարդաբանության կենտրոնում երկու անգամ բուժում ստանալուց հետո իր վիճակը բարելավվել է: 2006թ. առողջության վատթարացման պատճառով դիմել է կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ՝ կրկին բուժման կուրս անցնելու խնդրանքով:

Իրեն հերթագրել են, սակայն, չի կարողանում տեղեկանալ, թե երբ կհասնի իր հերթը՝ իրեն այդ մասին որևէ տեղեկություն չի տրամադրվում:

Ի պատասխան Պաշտպանի հարցման՝ ՀՀ առողջապահության նախարարության կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտի տնօրենը պարզաբանել է. «ՀՀ ԱՆ կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտն իրականացնում է սոցիալական ծրագրեր, որոնց շրջանակում ինստիտուտում բուժվելու իրավունք ունեցողների և ցանկացողների թիվն անհամեմատ մեծ է (շուրջ 1500 մարդ), քան ինստիտուտի հնարավորություններն են: Այս խնդիրը կանոնակարգելու համար ինստիտուտում ստեղծված է հանձնաժողով, որը կարգավորում է ընդունելությունը բժշկական ցուցմունքների չափորոշիչներով: Երբևէ ինստիտուտում բուժված հիվանդը կարող է շատ կարճ ժամանակից հետո ձեռք բերել հակացուցումներ և այնտեղ բուժվելը նրան այլևս հակացուցված լինի»:

Ինստիտուտի տնօրենը հայտնել է նաև, որ հաստատությունը չի հանդիսանում շտապօգնության հիվանդանոց, այնտեղ իրականացվում է վերականգնողական բուժում, իսկ հիվանդության սուր շրջանում բուժման կազմակերպումը հակացուցված է (ինչպես օրինակ դիմումատուի դեպքում):

Պաշտպանի գնահատմամբ, տվյալ բողոքը չէր լինի, եթե բուժհաստատության լիազորված անձինք սպառիչ տեղեկություններ տրամադրեին դիմումատուի իրավունքների և դրանք ապահովելու իրենց հնարավորությունների մասին:

## Օրինակ 3

Սա այն եզակի դիմումներից է, որով դիմումատուն բողոքել է բուժհաստատությունում իրենից անօրինական գումար գանձելու հանգամանքից :

Դիմումատուն հայտնել է, որ ինքը երկրորդ խմբի հաշմանդամ է, 2005թ. հունիսի 13-ին իրեն անգիտակից վիճակում տեղափոխել են «Էրեբունի» բժշկական կենտրոն, որտեղ կատարված հետազոտությունների և բուժման համար իրենից պահանջել են մուծել 65000 ՀՀ դրամ: Նրա գնահատմամբ, իրենից վճար պահանջելն անօրինական է, քանի որ, լինելով երկրորդ կարգի հաշմանդամ, իրավունք ունի բուժվելու պետական պատվերի շրջանակներում:

Ի պատասխան Պաշտպանի հարցմանը՝ ՀՀ առողջապահության նախարարությունից հայտնել են, որ դիմումատուի և նրա փաստաբանի կողմից նախարարությանը հասցեագրած դիմում-բողոքների կապակցությամբ ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան ստորաբաժանումների միջոցով «Էրեբունի ԲԿ» ՓԲԸ-ում արդեն կատարվել է նշված փաստերի և դրանք հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրություն: Մասնավորապես, դիմումատուի հիվանդության պատմագրում առկա գրառումների

համաձայն, վերջինս հիվանդանոց ընդունվելու օրվա ընթացքում կրծքավանդակի շրջանում ցավեր է ունեցել և դիմել է «Էրեբունի ԲԿ»՝ ամբուլատոր պայմաններում հետազոտման նպատակով: 13.06.2005թ. ամբուլատոր պայմաններում որոշակի հետազոտություններ անցկացնելուց հետո, 14.06.2005թ. ընդունվել է «Էրեբունի ԲԿ»՝ ստացիոնար պայմաններում հետազոտությունները շարունակելու և համապատասխան բուժում ստանալու նպատակով: Հիվանդության պատմագրում առկա են հետազոտության և բուժման համար կատարված վճարումների կտրոնները՝ ընդհանուր առմամբ 73000 ՀՀ դրամի չափով: Ըստ ուսումնասիրվող փաստաթղթերի՝ հիվանդի ընդունման պահին ախտորոշումը ընդգրկված չի եղել 2006թ. ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության պահանջող հիվանդությունների ցանկում: Առկա փաստաթղթերում բացակայում են դիմումատուի պետպատվերի շրջանակներում բուժօգնություն ստանալու համար հիմք հանդիսացող փաստաթղթերը՝ ուղեգիրը և սոցիալական կարգավիճակը հաստատող փաստաթղթերի պատճենները: Մինչդեռ սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց հիվանդանոցային բուժօգնությունն իրականացվում է տվյալ բնակչին սպասարկող տեղամասային բժշկի կողմից տրված ուղեգրերով, անձը հաստատող փաստաթղթի և սոցիալական կարգավիճակը հաստատող փաստաթղթի պատճենները փակցնելով հիվանդության պատմագրում:

Համաձայն ՀՀ կառավարության 04.03.2004թ. «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-Ն որոշման 19-րդ կետի՝ բացառությամբ հեմոդիալիզի և անհետաձգելի բուժօգնության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց հիվանդանոցային բուժօգնությունն իրականացվում է նախարարի կողմից հաստատված հիվանդանոցային բուժօգնություն պահանջող հիվանդությունների և վիճակների ցանկի շրջանակներում՝ տվյալ բնակչին սպասարկող տեղամասային բժշկի կողմից տրված ուղեգրով:

Քանի որ գումարի գանձումը կատարվել է իրավական ակտերին համապատասխան, այդպիսի գանձումը որպես դիմումատուի իրավունքի խախտում չի դիտվել :

## Օրինակ 4

Դիմումատուն գանգատվել է, որ 1974թ. Երևանի թիվ 3 հիվանդանոցում հեռացրել են իր աջ երիկամը: 1995թ. բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովը իրեն տվել է հաշմանդամության երկրորդ խումբ մեկ տարի ժամկետով: 1996թ. հունիսին բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովը, համարելով իրեն որպես ընդհանուր հիվանդ և աշխատունակ, տվել է հաշմանդամության երրորդ խումբ: 1997թ. բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովը զրկել է իրեն հաշմանդամության որևէ

խմբից: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն ուղղված բազմաթիվ դիմում-բողոքների հետևանքով հաշմանդամության երկրորդ խմբի փոխարեն վերականգնել են հաշմանդամության երրորդ խումբ: Իսկ 2000թ. բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովը կրկին զրկել է իրեն հաշմանդամության որևէ խմբից:

Այս բողոքի կապակցությամբ Պաշտպանի կողմից հարցումներ են ուղարկվել առողջապահության նախարության համապատասխան մասնագետներին՝ պարզելու համար հետևյալ հարցերը.

- մարդու մեկ երիկամի բացակայության դեպքում կարելի է համարել, որ առկա չէ օրգանիզմի կենսագործունեության որևէ տեսակի և աստիճանի սահմանափակում,
- մեկ երիկամի բացակայությյն դեպքում հնարավոր է արդյոք, որ մյուս՝ առողջ երիկամն ամբողջովին ապահովի տվյալ օրգանի ֆունցիան և օրգանիզմի նորմալ գործունեությունը:

Առաջադրված հարցերին տրվել է դրական պատասխան՝ մեկ երիկամը կորցրած անձը կարող է հաշմանդամության խումբ չունենալ:

Հատկապես կարևորելով հոգեկան հիվանդությամբ տառապող և հոգեբուժական հիվանդանոցներում ստացիոնար պայմաններում բուժում ստացող անձանց իրավունքների պաշտպանության խնդիրները, և նկատի ունենալով, որ այդպիսի անձինք հիմնականում զրկված են իրենց իրավունքների խախտումների վերաբերյալ համապատասխան բողոքներ, տեղեկություններ ներկայացնելու հնարավորություններից, պարբերաբար կազմակերպվել և իրականացվել են այցելություններ հոգեբուժական հիվանդանոցներ՝ դրանց ստացիոնար պայմաններում բուժում ստացող անձանց հիվանդանոցում տեղավորելու և պահելու հիմքերի օրինականությունը, պահման, ինչպես նաև կենցաղային, սննդի պայմանները, բուժանձնակազմի վերաբերմունքը և մյուս անհրաժեշտ հանգամանքները ճշտելու նպատակով:

Նման նպատակային այցեր կատարվել են Նորքի, Նուբարաշենի, Ավանի, Սևանի, Գյումրու, Արմաշի հոգեբուժական կլինիկական հիվանդանոցներ:

Այդպիսի այցերը կարևորվում են հատկապես այն տեսակետից, որ դրանք նպաստում են բուժանձնակազմի զգաստացմանը, իրավունքի հնարավոր խախտումների կանխարգելմանը:

Գրեթե բոլոր նման հիվանդանոցների տնօրենները դժգոհում են ֆինանսավորման անբավարար լինելուց: Չնայած դրան, այնուամենայնիվ զգալի աշխատանքներ են կատարվել հիվանդանոցների շենքային պայմանների բարելավման, սննդի որակի բարձրացման, հիվանդասենյակներում և հիվանդանոցում սանիտարական վիճակի բարելավման ուղղությամբ:

Այցելությունների ընթացքում հիվանդանոցների ղեկավարության կողմից որևէ արգելք չի արձանագրվել հիվանդների հետ շփման, հիվանդասենյակների դիտարկման և անհրաժեշտ այլ ուսումնասիրությունների իրականացման ժամանակ:

Անցկացրած ուսումնասիրությունների արդյունքներով արձանագրվել է, որ «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ Ավանի կլինիկայի շենքը վերանորոգված է մասնակի և ներկա դրությամբ շինության ներսում հատակն ամբողջովին խարխլված է և կարիք ունի հիմնական վերանորոգման: Հիվանդասենյակներում սպիտակեղենը հնամաշ է և խունացած:

«Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ Նորքի կլինիկայի շենքը կարիք ունի հիմնական վերանորոգման, սակայն նման վերանորոգում առայժմ նախատեսված չէ:

### 3.9. ՀՀ կրթության և գիտության նախարարություն, կրթության համակարգ

2006 թվականի ընթացքում ստացվել է կրթության ոլորտին վերաբերող 21 բողոք, որից՝

- ընդունվել են քննարկման՝ 11
- ներկայացվել են դիմողի իրավունքների պաշտպանության հնարավորությունները՝ 2
- չեն ընդունվել քննարկման՝ 6
- ուսումնասիրման ընթացքում են՝ 2

Եթե 2004-2005 թվականներին կրթության բնագավառի հաստատությունների դեմ ուղղված բողոքների զգալի մասը ստացվել է մանկավարժներից և հիմնականում վերաբերել է աշխատանքային իրավունքների խախտումներին՝ կապված հանրակրթական դպրոցների օպտիմալացման ծրագրի իրականացման հետ, ապա 2006 թվականին աշխատանքից ազատման հետ կապված նման բողոքներն եղել են եզակի: Գոհացուցիչ է այն, որ բողոքներ չեն ստացվել նաև 2006 թվականին բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննությունների կազմակերպման և անցկացման ընթացքում դիմորդների իրավունքները խախտված լինելու վերաբերյալ: Սակայն ստացվել են ընդունելության քննությունների արդյունքների նախապես հրապարակված ամփոփ ցուցակներն այնուհետև փոխելու վերաբերյալ բողոքներ:

2006 թվականին անցկացված ընդունելության քննություններին մասնակցած մի խումբ դիմորդներ և նրանց ծնողները բողոքել են, որ ընդունելության քննությունների արդյունքների վերաբերյալ ցուցակները օգոստոսի 24-ի երեկոյան փակցվել են բոլոր բուհերի պատերին, իսկ հաջորդ օրը հանվել և փոխվել են: 150 դիմորդներ, որոնք որպես բուհ ընդունվածներ,

ընդգրկված են եղել փակցված սկզբնական ցուցակներում, հետագայում դուրս են թողնվել դրանցից:

Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը, ինչպես նաև ՀՀ կրթության և գիտության նախարարությունը հրապարակված ցուցակներում փոփոխությունը պատճառաբանել են նրանով, որ տեղի է ունեցել համակարգչային սխալ:

Պաշտպանի հարցման կապակցությամբ ՀՀ կրթության և գիտության նախարարը պարզաբանել է, որ «2006-2007 ուսումնական տարվա ընդունելության մրցույթի արդյունքում հաշվիչ կենտրոնի ծրագրային վրիպակի հետևանքով բուհերում որոշ դիմորդների անուններ սխալմամբ փակցվելու վերաբերյալ հարցը քննարկվել է հանրապետական ընդունող հանձնաժողովի /ՀԸՀ/ նիստում, համաձայն 30.08.2006թ. ՀԸՀ թիվ 8 նիստի ՈՐՈՇՄԱՆ՝ թույլ տրված վրիպակը ճշտվել է և նշված դիմորդները ընդունվել են վճարովի /ԱՏ/ համակարգ»:

Խնդրի նման լուծումը դիմորդներին բավարարել է:

Ոչ պետական բուհերի մի շարք շրջանավարտներ բողոքել են՝ նման բուհերի հավատարմագրման գործընթացն ավարտին հասցնելու գործում ՀՀ ԿԳ նախարարության անգործությունից, որի արդյունքում իրենց ավարտական վկայականները շարունակում են մնալ ոչ լիարժեք և իրենք զրկված են՝ ըստ բուհում ստացած մասնագիտության, աշխատանք գտնելու հնարավորությունից :

Ըստ ՀՀ կառավարության 07.07.2000թ. թիվ 372 որոշմամբ հաստատված՝ ՀՀ-ում միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգի 7-րդ կետի՝ դրական փորձագիտական եզրակացության դեպքում նախարարության սահմանած կարգով իրականացվում է 2 տարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորում:

«Ամփոփիչ ատեստավորուում» հասկացության տակ ըստ էության նկատի է ունեցվում բուհերի շրջանավարտների ավարտական քննությունները, դիպլոմային աշխատանքների պաշտպանությունը:

ՀՀ կրթության և գիտության նախարարը պարզաբանել է, որ «ամփոփիչ ատեստավորում»-ը ամենևին էլ ավարտական քննությունները չեն, միաժամանակ ներկայացրել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կոլեգիայի որոշմամբ 24.05.2002թ. հաստատված կարգը՝ պետական հավատարմագրման գործընթացում գտնվող բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման /քննությունների և դիպլոմային աշխատանքների պաշտպանության/ իրականացման վերաբերյալ:

Մեկ այլ խումբ դիմումատուներ բողոքում են, որ «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված՝ նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման համակարգի կիրառմանը վերաբերող ՀՀ կառավարության «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում նպաստներ տալու կարգը հաստատելու մասին» 27.07.2006թ. թիվ 1183-Ն որոշմանը տրվել է հետադարձ ուժ, որով իրենք հայտնվել են իրենց համար անբարենպաստ վիճակում :

Այս խնդիրներին վերաբերող իրավական ակտերի վերլուծությունները տրված են զեկույցի 2-րդ բաժնում:

## 3.10. Երևանի քաղաքապետարան

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2006 թվականին մեծ թիվ են կազմել Երևան քաղաքի բնակիչներից ստացված բողոքները և դրանց շարքում մեծ է հատկապես քաղաքապետարանի դեմ ուղղվածների քանակը :

Քաղաքապետարանի դեմ ստացվել է 116 բողոք, որից՝

- ընդունվել են քննարկման՝ 54
- փոխանցվել են այլ մարմնի քննարկմանը՝ 1
- ներկայացվել են դիմողի իրավունքների պաշտպանության հնարավորությունները՝ 19
- չեն ընդունվել քննարկման՝ 33
- ուսումնասիրման ընթացքում են՝ 9

Երևանի քաղաքապետարանի դեմ ուղղված բողոքները հիմնականում վերաբերում են՝ քաղաքապետի, քաղաքապետարանի աշխատակազմի և կառուցվածքային ստորաբաժանումների այնպիսի գործողություններին կամ անգործությանը, որոնցով՝ դիմումատուների պնդմամբ, խախտվել են իրենց սեփականության իրավունքները : Դրանք, մասնավորապես, վերաբերել են՝

- ինքնակամ կառույցների և ինքնակամ զբաղեցրած հողատարածքների օրինականացմանը, սեփականության օգտագործման իրենց իրավունքը խախտող այլոց անօրինական գործողությունները չկանխելուն կամ դրանց հետևանքները չվերացնելուն,

- սեփականության հարկադիր օտարման դեպքերում՝ ոչ լիարժեք փոխհատուցմանը,

- հողօգտագործման իրավունքի տրամադրման դեպքերում՝ խտրական մոտեցումներին,

- «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով բնակարանային անհատական շինարարության համար հողատարածք և արտոնյալ վարկ հատկացնելուն,

- վթարային դարձած բազմաբնակարան շենքերի ամրացմանը:

Ստացված բողոքները, բոլոր դեպքերում, վատ վարչարարության, բյուրոկրատիզմի և քաշքշուկների արդյունք են: Նման երևույթներ առկա են եղել հատկապես «Ինքնակամ կառույցների և ինքնակամ զբաղեցրած հողատարածքների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի և դրա կիրառման կարգին վերաբերող ՀՀ կառավարության որոշումների կատարման ընթացքում : Այդ հարցում դժգոհություններ են առաջ բերել ինքնակամ կառույցի, ինքնակամ զբաղեցրած հողատարածքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման անհիմն մերժումները, ներկայացված դիմումը օրենքով նախատեսված ժամկետներում չքննարկելը և այլն:

Հողահատկացման, շինարարության թույլտվության տրամադրման մերժումները հաճախ, առանց բավարար հիմնավորման, պատճառաբանվել են Երևան քաղաքի այս կամ այն հատվածի ճարտարապետահատակագծային փաստաթղթերի բացակայությամբ, իսկ այնուհետև, երբ վերացել է նաև այդ արգելքը, քաղաքացու դիմումին անդրադարձ չի կատարվել:

Այլոց իրավունքները խախտող ինքնակամ կառույցներն իրականացվում են հաճախ թաղապետարանների, քաղաքապետարանի համապատասխան ծառայությունների թողտվության պայմաններում, իսկ նման կառույցները քանդելու հարց առաջանալիս, նույն ծառայությունները չհիմնավորված պատճառաբանություններով դա չեն կատարում կամ կատարում են մեծ ձգձգումներով:

Այս և մյուս ոլորտներում թույլ տրվող խախտումները կնկարագրվեն նաև ստորև բերված օրինակներում:

Շարունակում են բողոքներ ստացվել Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացման կապակցությամբ սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարմանը վերաբերող խնդիրներով, որին անդրադարձ կկատարվի առանձին :

1980-ական թվականներին պետական կարիքների համար վերցված և քանդված բնակարանների նախկին բնակիչներին՝ նախկին քաղխորհրդի գործկոմի հետ կնքված պայմանագրով այլ բնակարան հատկացնելու խնդիրը դեռևս լուծված չէ: Այն բնակիչները, որոնց քանդված բնակարանների տեղում նորը կառուցել չի նախատեսվում, չեն կարող բավարարված համարվել առաջարկվող դրամական փոխհատուցմամբ, քանի որ հաշվի չի առնվում անցած մոտ քսան տարիների ընթացքում իրենց կրած վնասը, ընտանիքի բազմանդամ դարձած լինելը : Բացի այդ, անշարժ գույքի շուկայական արժեքի կադաստրի գնահատականը, որին համապատասխան նախատեսվում է նման անձանց փոխհատուցման տրամադրումը, մշտապես հետ է մնում շուկայում գոյություն ունեցող և արագ փոփոխվող դրա իրական արժեքից :

Բռնադատվածի կամ բռնադատվածի ընտանիքի անդամի կարգավիճակ ունեցող անձանց, բնակարանային պայմանների կարիք ունենալու դեպքում, հողահատկացում Երևան քաղաքում չի կատարվում, ինչը խնդիրներ է առաջացնում նման կարգավիճակ ունեցող Երևան քաղաքում բնակվող քաղաքացիների համար :

Վերջնականապես լուծված չեն Երևան քաղաքի ժամանակավոր կացարաններում բնակվող Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային խնդիրները :

«Ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների, ինքնակամ զբաղեցրած հողատարածքների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի կիրառման ընթացքում տեղ են գտել նաև սուբյեկտիվ մոտեցումներ, որի արդյունքում որոշ քաղաքացիներ զրկվել են օրենքով ընձեռված իրավունքից օգտվելու հնարավորություններից:

Համատիրությունների վերջնականապես կայացած չլինելու պատճառով, խնդիրներ են առաջանում բազմաբնակարան շենքերի պատշաճ սպասարկումն ապահովելու բնագավառում :

Թվարկած խնդիրների հետ կապված բնութագրական են`

## Օրինակ 1

Դիմումատուն հայտնել է, որ 30.12.2004թ. «Երևան քաղաքում ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների կարգավիճակի մասին» Երևանի քաղաքապետի թիվ 2503-Ա որոշմամբ Երևանի կայարանամերձ կիսակառույց հյուրանոցին հարող տարածքում գտնվող 51.6քմ. շինության նկատմամբ ճանաչվել է իր սեփականության իրավունքը : Նույն որոշմամբ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչությանը հանձնարարվել է կնքել հողի վարձակալության պայմանագիր` 5 տարի ժամկետով: Կատարելով բոլոր անհրաժեշտ վճարումները, քաղաքացին անմիջապես դիմել է քաղաքապետարանի աշխատակազմի վերոնշյալ վարչություն` հողի վարձակալության պայմանագիրը կնքելու նպատակով: Սակայն շուրջ 7 ամիս անհիմն քաշքշուկներից հետո Երևանի քաղաքապետը 21.07.2005թ. իր 1627-Ա որոշմամբ անվավեր է ճանաչել իր նախկին 30.12.2004թ. թիվ 2503-Ա որոշումը` պատճառաբանելով, որ տվյալ տարածքում իրականացվում է վերակառուցման խոշոր ծրագիր : Ըստ դիմումատուի, նման ծրագիր գոյություն չունի, քանի որ իր տարածքին հարող կիսակառույց շենքը ընդհանրապես չունի սեփականատեր:

Երևանի քաղաքապետարանին պայմանագիր կնքելուն հարկադրելու և Երևանի քաղաքապետի 21.07.2005թ. թիվ 1627-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջով քաղաքացու ներկայացրած հայցը քննվել է դատական բոլոր ատյաններում, առկա է ՀՀ

վճռաբեկ դատարանի վերջնական որոշումը, որով անփոփոխ է թողնվել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի՝ հայցը բավարելու մասին, վճիռը :

Վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մի քանի անգամ /վերջինը 2006թ. հունիս ամսին/ քաղաքացին դիմել է Երևանի քաղաքապետարան՝ վարձակալության պայմանագիր կնքելու խնդրանքով, սակայն մերժվել է :

28.06.2006թ. թիվ 20/1-2-20 նամակով քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչությունից դիմումատուին հայտնել են, որ նրա անվամբ սեփականության իրավունքը ճանաչված 51.6քմ մակերեսով շինությունը գտնվում է կայարանի կիսակառույց հյուրանոցին հարող քաղաքաշինական վերակառուցման խոշոր ծրագրերի իրականացման հողատարածքում, որ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի վճիռը բողոքարկելու խնդրանքով ՀՀ գլխավոր դատախազությանը համապատասխան գրություն է հղվել:

Դիմումը Պաշտպանի կողմից ընդունվել է քննարկման և քաղաքապետից պահանջվել է հարցի վերաբերյալ պարզաբանում :

Քաղաքապետից ստացվել է հետևյալ պատասխանը. «Երևանի քաղաքապետարանում քննարկվել է դիմումատուին հողամասի տրամադրման հարցը և արդյունքում աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրվել է մասնագիտական եզրակացություն այն մասին, որ ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների համաձայն հողամասը տրամադրման ենթակա չէ /այն խոչընդոտելու է հարևան, տվյալ դեպքում հյուրանոցի զբաղեցրած, հողամասի նպատակային կամ գործառական նշանակությամբ օգտագործմանը/: Հարկ է նշել, որ այս փաստը դատական ատյաններում քննարկման առարկա չի եղել և ներկայումս նոր երևան եկած հանգամանքի հիմքով վճիռը վճռաբեկության կարգով բողոքարկելու հիմնավորում, ինչպես նաև Երևանի քաղաքապետի 30.12.2004թ. թիվ 2503-Ա որոշումը վերանայելու հիմք կարող է հանդիսանալ, որոնց իրականացման հարցը ներկայումս Երևանի քաղաքապետարանում քննարկվում է»:

Քաղաքապետի վկայակոչած նոր երևան եկած հանգամանքը, որը իբր դատաքննության առարկա չի դարձվել, ուղղակի արտացոլված է դատարանի 2006թ. մարտի 10-ին օրինական ուժի մեջ մտած վճռում: Նրանում մասնավորապես նշված է, որ Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչը որևէ ապացույց չի ներկայացրել այն մասին, թե երբվանից է վիճելի տարածքը ընդգրկված քաղաքաշինական վերակառուցման խոշոր ծրագրում և ինչու այդ հանգամանքը հաշվի չի առնվել 30.12.2004թ. թիվ 2530-Ա որոշումը կայացնելիս, ավելին, դատաքննությամբ քաղաքապետարանի ներկայացուցիչը հայտնել է, որ նման ապացույց չի կարող ներկայացնել:

Հետևաբար, քաղաքապետի վկայակոչած հանգամանքը դատական քննության առարկա արդեն իսկ դարձել է, այն չի կարող դիտվել որպես նոր ի հայտ եկած այնպիսի հանգամանք, որը դատաքննության ընթացքում կողմերին հայտնի չի եղել և դատարան չի ներկայացվել:

Տվյալ դեպքով Պաշտպանի կողմից կայացվել է որոշում՝ իրավունքի խախտում տեսնելու և դիմումատուի խախտված իրավունքները վերականգնելուն ուղղված միջոցներ ձեռնակելու առաջարկ ներկայացնելու մասին:

Որոշմամբ, որը կատարման համար Երևանի քաղաքապետին է ուղարկվել, փաստվել է.

1. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի գործողություններում առկա է դիմումատուի իրավունքի խախտում:

2. Առաջարկվել է Երևանի քաղաքապետին.

- Ապահովել 30.12.2004թ. «Երևան քաղաքում ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների կարգավիճակի մասին» Երևանի քաղաքապետի թիվ 2503-Ա որոշմամբ դիմումատուին վերաբերող իրավունքների հետ կապված գործողությունների իրականացումը,
- Լուծել 30.12.2004թ. Երևանի քաղաքապետի թիվ 2503-Ա որոշմամբ դիմումատուին վերաբերող իրավունքների հետ կապված գործողությունների կատարման հարցում թերացած պաշտոնատար անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը և միջոցներ ձեռնարկել նման խախտումները բացառելու ուղղությամբ:

Երևանի քաղաքապետը չի համաձայնվել Պաշտպանի գնահատականներին և չի ընդունել որոշմամբ արված առաջարկները: Դրա փոխարեն ներկայացրել է հետևյալ պատասխանը.

«Երևանի քաղաքապետարանի համապատասխան ծառայության կողմից կազմվել և շրջանառության մեջ է դրվել «Երևանի քաղաքապետի 21.07.2005թ. «Երևան քաղաքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի կարգավիճակի վերաբերյալ Երևանի քաղաքապետի համապատասխան որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» հ.1627-Ա որոշման 6-րդ կետը անվավեր ճանաչելու մասին Երևանի քաղաքապետի որոշման նախագիծ»:

Ինչպես հետևում է գրությունից, քաղաքապետարանում որոշման նախագիծ է մշակվում քաղաքապետի նախկին որոշման՝ դատարանի վճռով արդեն իսկ անվավեր ճանաչված կետն անվավեր ճանաչելու մասին :

Օրինակ 2

Համաձայն դիմումի քննարկման տվյալների՝ դիմումատուին սեփականության իրավունքով պատկանող 413 քմ մակերեսով հողամասը և 187 քմ մակերեսով բնակելի տունը Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացման շրջանակներում ենթակա է եղել օտարման:

Երևանի քաղաքապետը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.03.2004թ. թիվ 399-Ն որոշման պահանջները, ինչպես նաև «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից անշարժ գույքը պետական կարիքների համար վերցնելու կապակցությամբ պայմանագիր կնքելու մասին առաջարկը, 25.11.2002թ. թիվ 2594-Ա և 20.12.2005թ. թիվ 2778-Ա որոշումներով, Արամի փ. 38 հասցեում դիմումատուին վարձակալության իրավունքով տրամադրել է 332.6 քմ մակերեսով հողամաս՝ որպես նույն հասցեում գտնվող իր սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի դիմաց փոխհատուցում:

Հողի վարձակալության պայմանագրի կնքման և ճարտարապետահատակագծային առաջադրանքի ստացման հարցերով ստեղծված քաշքշուկը հաղթահարելու նպատակով, դիմումատուն հարկադրված է եղել դիմել դատական պաշտպանության:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2006թ. վճռով հաստատվել է հաշտության համաձայնագիր, ըստ որի՝ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպության և դիմումատուի միջև փոխհատուցման ու հողամասի վարձակալության պայմանագրերի կնքումը պետք է բխեր քաղաքապետի վերոնշյալ որոշումներից:

Քաղաքապետի և դիմումատուի միջև կնքվել է հողամասի վարձակալության մասին պայմանագիր, որով ըստ էության լուծվել է դիմումատուի սեփականության իրավունքը նախկինում ունեցած հողամասի նկատմամբ դադարեցնելու և փոխհատուցմամբ նույն հասցեում վարձակալությամբ հողամաս հատկացնելու հարցը : Սակայն պայմանագիրը նոտարական վավերացում չի ստացել՝ գլխավոր հատակագծի բացակայության պատճառով, որը պետք է ներկայացվեր քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից:

Որոշման կատարման ձգձգումները բերել են նրան, որ քաղաքապետը 16.03.2006թ. չեղյալ է ճանաչել իր նախկին որոշումները, որն էլ հիմք է հանդիսացել հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանի միջոցով քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2005թ. վճիռը նոր երևան եկած հանգամանքների հիմքով, միայն հաշտության համաձայնության հաստատման մասով, 23.03.2006թ. վճռաբեկ բողոք բերելու համար:

Նկատի ունենալով, որ գործը գտնվել է դատարանի վարույթում, բողոքի քննարկումը դադարեցվել է: Սակայն արձանագրվում է այն փաստը, որ պետական մարմնի կամայական

մոտեցումները քաղաքացին ի վիճակի չի լինում հաղթահարել նաև հօգուտ իրեն կայացված դատական ակտի առկայության պայմաններում :

Նույնաբնույթ մոտեցումների տարածվածության վկայություն է նաև ներքոհիշյալ գործը.

## Օրինակ 3

Դիմումատուն հայտնել է, որ Երևանի քաղաքապետի 14.06.1999թ. թիվ 804 որոշմամբ իրեն թույլատրվել է Լալայանց փողոցի սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասում կառուցել հինգ հարկանի բազմաբնակարան շենք, տրվել է շինարարության թույլտվություն և համապատասխան այլ փաստաթղթեր:

Հետագայում, Հյուսիսային պողոտայի կառուցապատման ծրագրի շրջանակներում նրան առաջարկվել է հանձնել Լալայանց փողոցի սեփականության իրավունքով իրեն պատկանող 59 քմ մակերեսով բնակելի տունն ու 308 քմ մակերեսով հողամասը և դրա փոխարեն ստանալ 26.286 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ և վարձակալությամբ 800 քմ մակերեսով հողամաս՝ Տերյան-Լալայանց փողոցներին հարող հատվածում, ինչպես նաև 200 քմ գրասենյակային տարածք՝ փոքր կենտրոնում:

Դրա վերաբերյալ 06.11.2002թ. կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր: Քաղաքապետարանը պարտավորվել է շենք-շինություն կառուցելու համար 99 տարի ժամկետով վարձակալության իրավունքով 7 ամսվա ընթացքում դիմումատուին վարձակալության իրավունքով հատկացնել 800 քմ մակերեսով հողատարածք, իսկ նշված ժամկետում հողատարածքը չտրամադրելու դեպքում կետանցի յուրաքանչյուր օրվա համար վճարել 100 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Պայմանագրի հիման վրա քաղաքապետի կողմից 12.02.2003թ. կայացվել է հողահատկացման մասին թիվ 214-Ա որոշումը, տրվել են ճարտարապետահատակագծային առաջադրանք, շինարարության թույլտվություն և այլ փաստաթղթեր, բացառությամբ գլխավոր հատակագծի, որի տրամադրումը պայմանավորվել է տվյալ տարածքի իրացման աշխատանքների ավարտման հանգամանքով:

Քաղաքապետարանն այնուհետև իր պայմանագրային պարտավորությունները՝ հողատարածք տրամադրելու մասով, չի կատարել, որի պատճառով քաղաքացին հարկադրված է եղել դիմել դատարան:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի, 30.04.2004թ. և ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 20.07.2004թ. վճիռներով հայցը բավարարվել՝ Երևանի քաղաքապետին պարտավորեցվել է կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Դատարանի վճիռը քաղաքապետի կողմից չի կատարվել, որի պատճառով վերցվել է կատարողական թերթ:

ԴԱՀԿ ծառայության կողմից ցուցաբերվել է անգործություն՝ ոչինչ չի արվել դատարանի վճիռը կատարելու ուղղությամբ: Քաղաքացին հարկադրված է եղել դատարանով վիճարկել նաև հարկադիր կատարողի անգործությունը: Դատարանը բավարարել է քաղաքացու նաև այդ դիմումը:

22.11.2004թ. Երևանի քաղաքապետը միջնորդություն է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 20.07.2004թ. վճիռը վճռաբեկության կարգով բողոքարկելու վերաբերյալ, սակայն դատախազության կողմից վճիռը չի բողոքարկվել՝ վճռաբեկ բողոք բերելու հիմքերի բացակայության պատճառաբանությամբ:

Նույնիսկ դրանից հետո Երևանի քաղաքապետը ոչ միայն չի կատարել դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը, այլև կայացրել է նոր որոշում, որով Տերյան-Լալայանց փողոցներին հարող տարածքում գտնվող ամբողջ ազատ հողը, այդ թվում նաև դիմումատուին մինչ այդ հատկացված 800 քմ մակերեսով հողամասը օտարել է այլ ընկերությանը:

Դիմումատուն քաղաքապետի այդ որոշումն անվավեր ճանաչելու մասին հայց է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան, որը 27.12.2004թ. վճռով հայցը բավարարել է:

Այդ ընթացքում ՀՀ դատախազությունը վերանայել է տվյալ հարցով իր գնահատականները և վճռաբեկ բողոք է բերվել վերաքննիչ դատարանի 20.07.2004թ. վճռի դեմ : Վճռաբեկ դատարանը բողոքը բավարարել և բեկանել է վերաքննիչ դատարանի վճիռը :

ՀՀ վերաքննիչ դատարանում գործի նոր քննության ընթացքում կողմերը կնքել են հաշտության նոր համաձայնություն, որով քաղաքապետարանը պարտավորվել է՝ Երևանի քաղաքապետի 12.02.2003թ. «Հյուսիսային պողոտայի կառուցապատման գոտում դիմումատուին հասարակական և բնակելի շենքի շինարարության նպատակով հողամաս տրամադրելու մասին» թիվ 214-Ա որոշմամբ հատկացված 800 քմ հողատարածքի փոխարեն՝ հաշտության համաձայնության մասին վճիռն ուժի մեջ մտնելուց 15 օր հետո 800 քմ մակերեսով հողամաս տրամադրել Երևանի Գլխավոր պողոտայի իրացման գոտում /Բուզանդի փողոցի վրա/՝ կնքելով համապատասխան կառուցապատման իրավունքի նախնական պայմանագիր: Հաշտության համաձայնությունը հաստատվել է վերաքննիչ դատարանի 16.03.2005թ. վճռով:

Վերաքննիչ դատարանի 16.03.2005թ. վճռի կատարումն ապահովելու նպատակով, քաղաքապետի կողմից 04.04.2005թ. կայացվել է թիվ 679-Ա որոշումը՝ դիմումատուի հետ կառուցապատման իրավունքի պայմանագիր կնքելու մասին:

04.04.2005թ. Երևանի քաղաքապետի և դիմումատուի միջև կնքվել է կառուցապատման իրավունքով հողամասի հատկացման և առուվաճառքի պայմանագիր, որով սահմանվել է, որ պայմանագիրը կնքելուց հետո 6 ամսվա ընթացքում հողամասը պետք է ազատված լինի երրորդ անձանց իրավունքներից և շինություններից: Համաձայն պայմանագրի, նշված ժամկետը երկու և ավելի ամիս ժամկետով խախտվելու դեպքում վերականգնվում են ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.03.2005թ. վճռով հայցվորի կողմից զիջված տույժերը և տուգանքները և բացի այդ քաղաքապետարանը շուկայական գնով փոխհատուցում է 800 քմ մակերեսով հողամասի արժեքը:

04.04.2005թ. տրվել է ճարտարապետահատակագծային առաջադրանք:

Քաղաքապետարանը չի կատարել նաև իր այս պարտավորությունը : Դրա փոխարեն 19.01.2006թ. քաղաքապետը կայացրել է թիվ 60-Ա որոշումը, որով չեղյալ է ճանաչել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.03.2005թ. վճռի կատարումն ապահովելու նպատակով 04.04.2005թ. կայացրած իր թիվ 679-Ա որոշումը, վաղաժամկետ լուծված է համարել իր և դիմումատուի միջև «Երևանի Գլխավոր պողոտային հարող իրացման գոտում կառուցապատման իրավունքով հողամասի հատկացման և առուվաճառքի պայմանագրի կնքման իրավունքի ձեռքբերման մասին» 04.04.2005թ. կնքված նախնական պայմանագիրը, չեղյալ է ճանաչել ճարտարապետահատակագծային առաջադրանքը և հանձնարարել է «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ իրականացնել սույն որոշումից բխող բոլոր անհրաժեշտ և օրենսդրությամբ պահանջվող գործողությունները, մասնավորապես՝ կազմակերպել Լալայանց փողոցում գտնվող և պետության կարիքների համար դիմումատուից վերցված 308 քմ հողամասի ներկայիս գնահատումը և գնային առաջարկի տրամադրումը:

Քաղաքապետն իր այդ որոշումը հիմնավորել է նրանով, որ անշարժ գույքի շուկայում տեղի է ունեցել անշարժ գույքի /հողամասի/ շուկայական արժեքի էական աճ, որը հանգեցրել է Երևանի քաղաքապետի 2005թ. ապրիլի 4-ի «ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2005թ. մարտի 16-ի վճռի կատարման մասին» թիվ 679-Ա որոշման հետագա կատարման տնտեսական և ֆինանսական աննպատակահարմարությանը :

Դիմումատուն դարձյալ հարկադրված է եղել ստանալ կատարողական թերթ և կրկին դիմել դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը :

Դիմումատուն դիմել է վերաքննիչ դատարան՝ 2005թ. մարտի 16-ի վճռի կատարման կապակցությամբ կատարողական թերթ ստանալու համար և 30.01.2006թ. տրված կատարողական թերթը ներկայացրել է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայություն : ԴԱՀԿ ծառայության հարկադիր կատարողի կողմից 01.02.2006թ. հարուցվել է կատարողական վարույթ, 12.09.2006թ. կայացվել է որոշում՝ պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին և

արգելվել է օտարել Բուզանդի փողոցի թիվ 91, 95, 97 հասցեների 800 քմ մակերեսով հողամասը:

Կատարողական վարույթ հարուցելուց հետո անցել է շուրջ 8 ամիս մինչև Պաշտպանին դիմելը, սակայն վճռի պահանջը չի կատարվել :

Բողոքը Պաշտպանի կողմից քննարկման ընդունելուց հետո, ԴԱՀԿ ծառայության աշխատակցի անգործության և քաղաքապետի կամայական մոտեցումների վերաբերյալ պահանջվել են համապատասխան պարզաբանումներ , որից հետո է, որ տեղի է ունեցել դրական տեղաշարժ և 16.11.06թ. դիմումատուի և քաղաքապետի միջև կնքվել է նոր համաձայնություն, որը բավարարել է դիմումատուին : Այս անգամ զոնե կատարվել են կայացած համաձայնության պահանջները:

## Օրինակ 4

Այս բողոքի քննարկմամբ ուշագրավ է այն փաստը, որ կառուցապատման համար ճարտարապետահատակագծային թույլտվություններ տրամադրելիս, հաճախակի անտեսվում են նախատեսվող կառույցով այլ անձանց իրավունքների հնարավոր խախտումները:

Տվյալ դեպքով դիմումատուի տան պատին կից խանութը սեփականաշնորհվել է և ապա հիմնադրվել է ընկերություն : Խանութի վերակառուցման համար քաղաքապետի 18.10.2001թ. թիվ 1283 որոշմամբ ընկերությանը վարձակալությամբ հատկացվել է 3316 քմ հողամաս:

Քաղաքապետի վերոնշյալ որոշման հիման վրա ընկերությանը տրվել են համապատասխան քաղաքաշինական փաստաթղթեր :

Դիմումատուն, գտնելով, որ ընկերության կողմից կառուցվող շինությամբ խախտվում են սեփականության իր իրավունքները՝ փակվում են իր բնակարանի ննջասենյակների պատուհանները, ինքը զրկվում է բնական լույսից, հայց է ներկայացրել դատարան քաղաքապետի որոշման և կառուցապատողի գործողությունների դեմ:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանն իր 2003թ. հունիսի 26-ի վճռով հայցը բավարարել է՝ հիմնավորված համարելով հետևյալը.

«Երևանի քաղաքապետի՝ ՍՊԸ-ին հողահատկացման որոշումից հետո հաստատվել է այնպիսի շինարարական առաջադրանք, որն ըստ էության չի համապատասխանում գործող շինարարական նորմերին: Հայցվորների դիմումների հիման վրա քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետը տարբեր գրություններ է ուղարկել քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական

վարչության պետին այն մասին, որ աշխատանքային նախագծով նախատեսված շինությունը կառուցվելու դեպքում կփակվեն դիմումատուի բնակարանի պատուհանները և առաջարկել է շինությունը չիրականացնել՝ մինչև նախագծում փոփոխություններ կատարելը: Առաջարկը հաշվի չի առնվել:

Համաձայն գործող քաղաքաշինական նորմերի, կապիտալ շինարարության իրականացման համար պահանջվում է, որ երկու շինությունների միջև եղած նվազագույն հեռավորությունը լինի 6 մետրից ոչ պակաս»:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և տնտեսական գործերի պալատը 2003թ. օգոստոսի 23-ի որոշմամբ վերաքննիչ դատարանի վճիռը բեկանել և գործն ուղարկել է նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

Ուշագրավ է, որ վճռաբեկ դատարանն իր որոշմամբ վերաքննիչ դատարանի վճռով բերված հիմնավորումներին անդրադարձել է միայն մասնակի, իսկ քաղաքաշինական այն նորմերին, որոնց հիման վրա հայցը բավարարել է՝ ընդհանրապես չի անդրադարձել, անտեսել է նաև տվյալ շինությամբ բնական լուսավորությունից դիմումատուին զրկվելու փաստը:

Վճիռը բեկանելիս վճռաբեկ դատարանը առաջնորդվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կետով, ըստ որի սեփականատերն իրեն պատկանող հողամասը կարող է տրամադրել այլ անձանց օգտագործմանը՝ ներառյալ վարձակալության, ինչպես նաև «Երևան քաղաքում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի 06.05.1997թ. թիվ ՆՀ-727 հրամանագրի 1.13 կետի «ե», 1.15 կետի «բ» և «գ» ենթակետերի, ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ, 75-րդ և 76-րդ հոդվածների վրա, որոնց համաձայն Երևան քաղաքում հողի հետ կապված բոլոր խնդիրների լուծումը բացառապես վերապահված է Երևանի քաղաքապետին:

Համաձայնվելով վճռաբեկ դատարանի վկայակոչած իրավական նորմերով ամրագրված սկզբունքների հետ՝ այնուամենայնիվ գտնում ենք, որ հարկ կար ղեկավարվել նաև ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 2-րդ մասով /Սահմ. նախկին խմբագրությամբ/ ամրագրված այն սկզբունքին, համաձայն որի. «Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը», ինչին և վերաբերելիս է եղել տվյալ դատական վեճը:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը նոր դատաքննության ընթացքում՝ նշանակել է դատաշինարարատեխնիկական փորձաքննություն :

Համաձայն ստացված փորձագիտական եզրակացության՝ «օժանդակ շինության, որի վերաբերյալ ընթանում է վեճը, տեղակայման դիրքից և նախագծման չափերից ելնելով, խախտվել են «Քաղաքների և գյուղական վայրերի հատակագծման և կառուցապատման»

քաղաքաշինության ՇՆ և Կ 2.07.01-89 շինարարական նորմի «9.19» կետի պահանջները, այն է՝ նախագծային նման լուծումով չի ապահովվում Չարենցի փողոցի 2-րդ նրբանցքի 32/1 հասցեում գտնվող տան հետին պատի մեջ գտնվող պատուհաններից արեգակի ճառագայթների ներթափանցման օրական նորմատիվ ժամանակը՝ ինսոլյացիան, որն ըստ նշված կետի, մարտի 22-ից մինչև սեպտեմբերի 22-ն ընկած ժամանակահատվածում պետք է կազմի 2,5 ժամ: Բացի այդ, օժանդակ շինության պատը գտնվելով թիվ 32/1 տան պատից ընդամենը 0,71 մ հեռավորության վրա և ծածկելով վերոգրյալ պատի պատուհանների 87 տոկոսը, արգելակում է վերջինիս բնական լուսավորումը, որով խախտվում է «Արհեստական և բնական լուսավորում» ՀՀ ՇՆ II-8.03.96 ՀՀ շինարարական նորմայի «4» կետի պահանջները, այն է՝ մարդկանց մշտական բնակեցման շենքերը, ինչպես կանոն, պետք է ունենան բնական լուսավորվածություն:

Այսինքն՝ ՍՊԸ-ի պարենային խանութի վերակառուցման նախագիծը՝ օժանդակ շինության մասով, չի համապատասխանում գործող շինարարական նորմերին»:

Նույն հարցն ուսումնասիրվել է նաև ՀՀ քաղաքաշինական պետական տեսչության կողմից և ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնի պետին 2004թ. սեպտեմբերի 6-ին հասցեագրած նամակով ՀՀ քաղաքաշինական պետական գլխավոր տեսուչը հայտնել է, որ համաձայն սեփականաշնորհման պայմանագրի և քաղաքապետի որոշման, ՍՊԸ-ն շինարարություն պետք է իրականացներ Շարա Տալյան փողոցի թիվ 13 հասցեում և ոչ թե Չարենցի 2-րդ նրբ. 32/1 տան հարևանությամբ: Կառուցապատողին տրված գլխավոր հատակագծում փոփոխված է հասցեն, նախագծերը մշակվել և համաձայնեցվել են շինարարական նորմերի պահանջների խախտմամբ, առկա է ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջների և հաստատված նախագծի անհամաձայնություն: Իսկ ՀՀ տարածքային կառավարման նախարարության արտակարգ իրավիճակների վարչության պետական հակահրդեհային ծառայության պետը հայտնել է, որ ուսումնասիրվել է Չարենցի փողոցի 2-րդ նրբ. 32/1 տան և հարակից կառուցվող թիվ 638 խանութի հակահրդեհային միջտարածությունների հարցը: Պարզվել է, որ խանութի կառուցումով խախտվել է ՀՀ-ում գործող «Քաղաքաշինություն: Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում ու կառուցապատում» ՇՆ և Կ (հծՌկ) 2.07.01-89 հավելված 1-ի (հակահրդեհային պահանջներ) աղյուսակ 1-ի պահանջը՝ Չարենցի փող. 2-րդ նրբ. թիվ 32/1 տան (հրակայունության 2-րդ աստիճան) և կառուցվող թիվ 638 խանութի (հրակայունության 2-րդ աստիճան)_միջև չի պահպանվել անհրաժեշտ 6 մ հակահրդեհային միջտարածությունը:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը վերոնշյալ քաղաքացիական գործով հայցը 05.02.2004թ. որոշմամբ թողել է առանց քննության՝ հայցվորների դատական նիստին չներկայանալու պատճառաբանությամբ:

Դիմումի քննարկման արդյունքում Պաշտպանի կողմից կայացվել է որոշում՝ մարդու իրավունքների խախտում տեսնելու և խախտված իրավունքների վերականգնման վերաբերյալ առաջարկ ներկայացնելու մասին: Առաջարկվել է Երևանի քաղաքապետին՝ լուծել դիմումատուի սեփականության իրավունքը սահմանափակող շինության՝ օրենքով սահմանված կարգով ապամոնտաժելու հարցը՝ նկատի ունենալով, որ մասնագիտական բոլոր եզրակացություններով հաստատվել է շինությունը քաղաքաշինության նորմերի խախտումով իրականացված լինելը: Տրամաբանական կլիներ, որ այս պայմաններում քաղաքապետը դատական վեճ սկսեր կառուցապատողի հետ, եթե կառուցապատողը կամավոր չվերացներ թույլ տրված խախտումները:

Դրան հակառակ, քաղաքապետարանից ստացված տարբեր պատասխաններով խնդիրը շրջանցվել է, ապա նաև ստացվել է քաղաքապետի գլխավոր խորհրդականի ստորագրությամբ պատասխան, որով կրկնվել են նախկին պատասխանները, ավելացնելով նաև. «քանի որ հայցը թողնվել է առանց քննության, ապա հարցը դատական կարգով չի լուծվել և վճիռ չի կայացվել, ուստի հարցի լուծումն ինքնըստինքյան Երևանի քաղաքապետարանի իրավասությունների շրջանակից դուրս է»:

Պաշտպանի մեկ այլ գրությամբ քաղաքապետին պարզաբանվել է, որ հայցն առանց քննության թողնելու մասին որոշումը հավասարեցվում է տվյալ խնդրով հայց ներկայացված չլինելուն, հետևաբար խնդրի լուծմանը քաղաքապետի անդրադառնալուն արգելք հանդիսանալ չի կարող:

Ինչ վերաբերում է Պաշտպանի որոշմամբ կատարված առաջարկին, ապա քաղաքապետը գրությամբ դարձյալ պնդել է, որ շինարարությունն իրականացվել է համաձայն 02.07.2002թ. թիվ 18-05/1-96 համաձայնեցված նախագծի, որտեղ լուսավորվածությունը սահմանափակող պատը կառուցվել է առանց նախագծային շեղման:

Քաղաքապետարանի այսպիսի մոտեցումների պայմաններում է, որ տվյալ պետական կառույցի դեմ տրվող բողոքները չեն նվազում:

## Օրինակ 5

Դիմումատուն գանգատվել է հետևյալից.

Երևանի Շինարարների փողոցի հմ. 14 շենքը ճանաչվել է որպես 4-րդ կարգի վթարային և բնակության համար ոչ պիտանի: Երևանի քաղաքապետի 30.03.2006թ. թիվ 444-Ա որոշմամբ տվյալ շենքի բնակիչներին հատկացվելու համար նախատեսվել են այլ բնակարաններ: Քաղաքապետի որոշմամբ անտեսվել է այն հանգամանքը, որ վերցվող բնակարանների մի մասը սեփականաշնորհված են, հետևաբար դրանց փոխարեն տրվողները նույնպես պետք է հատկացվեն սեփականության իրավունքով: Քաղաքապետի նույն որոշմամբ հանձնարարվել է քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի

կառավարման վարչության պետին՝ բնակարան ստացող բնակիչների հետ նոր բնակարան հատկացնելու մասին վարձակալության պայմանագրեր կնքել միայն վքարային բնակարանը Աջափնյակ թաղային համայնքին հանձնելու մասին համապատասխան տեղեկանք ներկայացնելուց հետո»: Սեփականության իրավունքով հատկացնելու մասին խոսք չկա:

Դիմումատուն, լինելով նույն շենքի բնակարաններից մեկի սեփականատեր, համապատասխան փաստաթղթերով ներկայացել է քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության համապատասխան աշխատակցին: Այստեղ նրան փորձել են համոզել՝ ստորագրել հատկացվող բնակարանի վարձակալության պայմանագիր, ինչին նա չի համաձայնվել:

Այնուհետև դիմումատուին առաջարկվել է կնքել բնակարանի փոխանակման պայմանագիր և նրան ուղարկել են Կենտրոնի նոտարական գրասենյակ:

Նոտարը հրաժարվել է պայմանագիրը վավերացնելուց՝ պատճառաբանելով, որ այն կարող է կնքվել միայն քաղաքապետարանի համապատասխան վարչության պետի գրավոր համաձայնության դեպքում:

Դիմումատուն կրկին դիմել է քաղաքապետարան, որտեղից հայտնել են, որ անշարժ գույքի վարչության պետը հրաժարվել է ստորագրել պայմանագիրը՝ սեփականաշնորհված բնակարանների փոխանակման մասին Երևանի քաղաքապետի որոշում չլինելու պատճառով:

Միայն Պաշտպանի միջամտությունից հետո է, որ Երևանի քաղաքապետի 30.03.2006թ. թիվ 444-Ա որոշման 3-րդ կետում կատարվել է փոփոխություն, որով թույլատրվել է դիմումատուի հետ կնքել բնակարանի փոխանակման պայմանագիր :

«Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ բռնադատվածներին և նրանց առաջին հերթի ժառանգներին անհատական բնակարանային շինարարության համար հողահատկացումներին վերաբերող խնդիրների առկայության մասին է վկայում հետևյալ բողոքը.

## Օրինակ 6

Դեռևս 2004-ից քննարկվում է բռնադատվածի և բռնադատվածի առաջին հերթի ժառանգի կարգավիճակ ունեցող քաղաքացու բողոքը :

Բողոքի քննարկմամբ հաստատված է, որ «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքին և ՀՀ հողային օրենսգրքին համապատասխան՝ Թբիլիսյան խճուղուն հարող տարածքում անհատույց հողամաս տրամադրելու խնդրանքով դիմումատուն դեռևս 03.03.2003թ. դիմել էր Երևանի քաղաքապետարան : Այստեղից նրան տրվել է մերժում՝ տվյալ տարածքի գոտևորման սխեման մշակման փուլում լինելու հիմնավորմամբ, ինչից ենթադրվել է, որ

քաղաքացու դիմումին անդրադարձ կկատարվի նշված սխեմայի պատրաստ լինելուց անմիջապես հետո, ինչը քաղաքապետարանի կողմից չի կատարվել:

Քաղաքացին դարձյալ դիմել է քաղաքապետարան և Երևանի քաղաքապետի կողմից 26.08.2004թ. կրկին մերժվել է` այս անգամ ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված ժամկետը լրացած լինելու պատճառաբանությամբ :

Դիմումատուն, չհամաձայնվելով նման մերժման հետ, դիմել է ՀՀ վարչապետին և ՀՀ տարածքային կառավարման նախարարին, որին հետևել են նրանց հանձնարարականները Երևանի քաղաքապետին` դիմումատուի կողմից բաց թողնված ժամկետը օրենսդրությամբ սահմանված կարգով հարգելի համարելուն համաձայնելու և համապատասխան ձևակերպումներն ապահովելու վերաբերյալ: Քաղաքապետարանից շարունակել են պնդել, որ դիմումատուն բաց է թողել հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով նախատեսված ժամկետը :

24.11.2004թ. և 25.02.2005թ. Պաշտպանը դիմել է Երևանի քաղաքապետին` գոտևորման սխեմայում Թբիլիսյան խճուղուն հարող տարածքն ընդգրկված լինելու, ինչպես նաև սխեմայի աշխատանքները սկսելու և ավարտելու ժամկետների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով:

23.12.2004թ. Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ նշված տարածքի գոտևորման սխեմայի աշխատանքները սկսվել են, դրանք ավարտվելուց հետո գոտևորման սխեմայի պատրաստ լինելու դեպքում` Պաշտպանը լրացուցիչ կտեղեկացվի:

22.03.2005թ. Երևանի քաղաքապետը, ի կատարումն ՀՀ վարչապետի 20.12.2004թ. թիվ 02716 հանձնարարականի, հաշվի առնելով ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի կարծիքները` բռնադատվածի կարգավիճակ ունեցող դիմումատուին բնակելի տան շինարարության համար անհատույց հողամաս հատկացնելու վերաբերյալ, հայտնել է, որ նախապատրաստվում է անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթ` Երևանի քաղաքապետի կողմից համապատասխան որոշման կայացման համար, սակայն այն դեռևս գործողության մեջ չի դրվել :

16.06.2005թ. Երևանի քաղաքապետը հայտնել է, որ «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՀ օրենքն ընդունվել է 28.02.2005թ., որով իրավունք չի տրվում Երևան քաղաքում բռնադատվածներին սեփականության իրավունքով անհատույց հողամաս տրամադրել: Բռնադատվածներին և նրանց առաջին հերթի ժառանգներին անհատույց սեփականության իրավունքով հողամաս տրամադրվում է մինչև 31.12.2005թ., բացի Երևան քաղաքից: Ուստի, ըստ քաղաքապետի գրության, դիմումատուի խնդրանքը բավարարել հնարավոր չէ:

Երևանի քաղաքապետը դիմումատուի խնդրանքի մերժումը փորձել է հիմնավորել հետևյալ իրավական նորմերով.

ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ սահմանված ժամկետը լրանալու հիմքով, ինչպես նաև «Բռնադատվածների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածում կատարված փոփոխության և լրացման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բռնադատվածներին սեփականության իրավունքով հողամասերն անհատույց տրամադրվում են մինչև 2005թ. դեկտեմբերի 31-ը /23.05.2006թ. ՀՕ-96 փոփ. է մինչև 2007թ. հունիսի 30-ը/ և բնակարանային պայմանների կարիք ունենալու դեպքում սեփականության իրավունքով տրամադրվում է սահմանված չափով հողատարածք բնակարանային անհատական շինարարության համար ՀՀ տարածքից բռնադատվածներին՝ նրանց նախկին բնակության վայրերում կամ վերջին 3 տարվա մշտական բնակության վայրում, բացի Երևան քաղաքից: Վերջին 3 տարիներին Երևան քաղաքում մշտապես բնակվող ու մինչև 2003թ. հունիսի 15-ը բնակարանային անհատական շինարարության համար սեփականության իրավունքով անհատույց հողամաս չստացած բռնադատվածներին հողատարածք տրամադրվում է ՀՀ կառավարության սահմանած բնակավայրերում :

ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պետության և համայնքային սեփականության հողամասերը սեփականության իրավունքով անհատույց տրամադրվում են գյուղատնտեսական գործունեության համար և որպես տնամերձ կամ անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար, որոնք չեն օգտվել հողի սեփականաշնորհումից, նախկինում չեն ստացել /ձեռք բերել/ տնամերձ կամ բնակելի տան շինարարության և դրա սպասարկման համար հողամաս, իսկ ՀՀ հողային օրենսգրիք 64-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետով սահմանված դեպքերում պետության սեփականություն հանդիսացող հողամասերի անհատույց տրամադրման ժամկետը 2 տարի է, որը լրացել է 2004թ. ապրիլի 1-ին /համաձայն ՀՀ արդարադատության նախարարության կողմից 05.05.2004թ. թիվ Ե-3677 գրության, նշված ժամկետը հաշվարկվում է օրենքում կատարված փոփոխությունն ուժի մեջ մտնելու օրվանից /այն փոփոխվել է 05.02.2002թ. ՀՕ-296 և ուժի մեջ է մտել 01.04.2002թ., այսինքն՝ ժամկետն ավարտվում է 01.04.2004թ./:

23.05.2006թ. /ՀՕ-96/ «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքում և ՀՀ հողային օրենսգրքում կատարված փոփոխություններից հետո, համաձայն որի բռնադատվածներին և նրանց 1-ին հերթի ժառանգներին հողամասերի անհատույց տրամադրման ժամկետը երկարաձգվել է մինչև 2007թ. հունիսի 1-ը, այս դեպքում նույնպես դիմումատուի համապատասխան դիմումը Երևանի քաղաքապետի կողմից չի բավարարվել:

Պաշտպանի գնահատմամբ, անտեսվել է այն, որ դիմումատուն բնակելի տան շինարարության համար անհատույց հողամաս հատկացնելու վերաբերյալ դիմումը ներկայացրել է մինչև «Բռնադատվածների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը, իսկ Երևանի քաղաքապետարանն անհիմն ձգձգել է նրա դիմումի քննարկումն ու բավարարումը: Հետևաբար, այս և այլ քաղաքացիների նման պահանջները պետք է բավարարվեն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի պահանջները կիրառելով կամ արագացնել նշյալ օրենքների համապատասխան փոփոխություն կատարելու գործընթացը:

Օրենքի թույլ տրված խատումը վերացնելու և խախտված իրավունքը վերականգնելու հարցում անգործություն դրսևորման ակնհայտ վկայություն է հետևյալ օրինակը.

## Օրինակ 7

Դիմումատուն բողոքել է, որ իրենց բազմաբնակարան շենքի բնակիչներից մեկն ինքնակամ կառույց է իրականացրել շքամուտքում, որով և փակել է այն: Այդ մասին ինքը 2004թ. դեկտեմբերի 17-ին գրավոր դիմել է Երևանի քաղաքապետարան, սակայն միջոցներ չեն ձեռնարկվել: Դիմում ներկայացնելուց երեք ամիս անց քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչությունից հայտնել են, որ այդ հարցով պետք է դիմել Կենտրոնի թաղապետարան:

Դիմումատուն այնուհետև դիմել է թաղապետարան, որտեղից ստացված պատասխանում նշվել է, որ Երևանի քաղաքապետի 21.04.2005թ. թիվ 850-Ա որոշմամբ նշած տարածքը սեփականության իրավունքով հատկացվել է տվյալ կառույցն իրականացնողին :

Համաձայն Երևանի քաղաքապետարանից նշված հարցի կապակցությամբ տրված պարզաբանման՝ Երևանի քաղաքապետի 21.04.2005թ. h. 850-Ա որոշմամբ ճանաչվել է շքամուտքն զբաղեցնելու մեջ մեղադրվողի սեփականության իրավունքը իր բնակարանի կցակառույցի նկատմամբ, իսկ շենքի շքամուտքի վերաբերյալ Երևանի քաղաքապետարան հայտ չի ներկայացվել:

Դիմումի քննարկման տվյալներով հաստատվել է, որ ինքնակամ կառույցով փակվել է բազմաբնակարան շենքի շքամուտքը, ինչը հնարավոր է դարձել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության թողտվության հետևանքով: Երբ նման կառույցի վերաբերյալ բողոք է ստացվել, վարչության կողմից միջոցներ չեն ձեռնարկվել ժամանակին գործընթացը կասեցնելու և հետևանքները սահմանված կարգով վերացնելու ուղղությամբ:

Այդ հարցով Պաշտպանի կողմից կայացվել է որոշում՝ մարդու իրավունքների խախտում տեսնելու և անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելու առաջարկ ներկայացնելու

մասին: Որոշումն ուղարկվել է Երևանի քաղաքապետին՝ քաղաքապետարանից դեռևս պատասխան չի ստացվել:

## Օրինակ 8

Դեռևս 2004 թվականից քննարկման առարկա է եղել փախստականներով բնակեցված նախկինում ՀԿԿ Կենտկոմի բարձրագույն կուսակցական դպրոցին պատկանող, ներկայումս պետական կառավարման որևէ մարմնի հաշվեկշռում չհաշվառված Նորքի այգիներ 227 հասցեի շենքի հետ կապված խնդիրը:

Այստեղ փախստականների ընտանիքները բնակվում են 1988 թվականից և բոլոր հիմքերը եղել են՝ այդ շինությունը բնակիչներին տրամադրելու համար: Փախստականների մի մասը դատարան է դիմել, և դատարանների վճիռներով ճանաչվել է յուրաքանչյուրի զբաղեցրած տարածքի նկատմամբ սեփականության իրավունքը, սակայն, այնուհետև, քաղաքապետի միջնորդությամբ, ՀՀ գլխավոր դատախազության կողմից նման վճիռների դեմ բերվել է վճռաբեկ բողոք և վճռաբեկ դատարանը բեկանել է դրանք: Ստեղծվել է փախստական բնակիչներին տվյալ տարածքից վտարելու սպառնալիք:

Խնդիրն ստացել է հասարակական հնչեղություն, որի արդյունքում ՀՀ կառավարության կողմից 13.10.2005թ. կայացվել է թիվ 1640-Ա որոշումը «Շենք ամրացնելու մասին» : Այդ որոշմամբ վիճելի շինությունն ամրացվել է պետական գույքի կառավարման վարչությանը՝ հետագայում տվյալ շենքում բնակվող փախստական ընտանիքներին իրենց կողմից զբաղեցված տարածքները սահմանված կարգով սեփականության իրավունքով տրամադրելու նպատակով:

Կառավարության որոշմամբ վարչությանը տրվել է մեկամսյա ժամկետ՝ շենքն ընդունելու և գույքային իրավունքների պետական գրանցման համար:

2006 թ. ապրիլ ամսվա դրությամբ վարչությունը դեռևս կատարած չի եղել ՀՀ կառավարության հիշյալ որոշման պահանջը՝ շենքն ընդունել է, սակայն պետական գրանցման չի ներկայացրել այն պատճառաբանությամբ, որ Երևանի քաղաքապետից պահանջել է տվյալ շինությանը վերաբերող հողհատկացման հիմքերը, որոնք դեռևս չի ստացել :

02.06.06թ. Երևանի քաղաքապետից Պաշտպանն ստացել է պատասխան այն մասին, որ ՀՀ կառավարության 13.10.05թ. թիվ 1640-Ա «Շենք հատկացնելու մասին» որոշման պահանջների կատարումն ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետը 26.05.06թ. ընդունել է թիվ 841-Ա որոշումը՝ «ՀՀ պետական գույքի կառավարման վարչությանը պատկանող Նորքի այգիների թիվ 227 հասցեում զբաղեցրած հողամասի հատկացման հիմքերը վերականգնելու և հողօգտագործման իրավունքը ձևակերպելու մասին» :

Պաշտպանի լրացուցիչ հարցմանը պետական գույքի կառավարման վարչությունից 25.07.06թ. հայտնել են, որ քաղաքապետարանից իրենց տրամադրվել է միայն քաղաքապետի որոշումը, գույքի գրանցման համար անհրաժեշտ է նաև շենքի հատակագիծը, ինչը քաղաքապետարանը չի տրամադրել :

Հարկ է եղել կրկին դիմել քաղաքապետարան : Քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունից «պարզաբանել» են, որ ՀՀ պետական գույքի կառավարման վարչության ներկայացուցիչը պետք է ներկայանա քաղաքապետարան և «մեկ պատուհանից» ստանա անհրաժեշտ փաստաթղթերը :

Պետական գույքի կառավարման վարչությունը, անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո դարձյալ դրանք չի ներկայացրել կադաստր պետական գրանցում իրականացնելու համար : Անհրաժեշտություն է առաջացել պետական գույքի կառավարման վարչության կողմից կառավարության որոշման պահանջները չկատարելու, փախստական բնակիչների իրավունքների որոշակիացման խնդիրն անտեսելու մասին տեղեկացնել ՀՀ վարչապետին :

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի 06.10.06 թվականի թիվ 107-6407 հանձնարականից հետո է միայն, որ շինության նկատմամբ փաստաթղթերը ներկայացվել են պետական գրանցման :

Այս օրինակից ակնհայտ է դառնում՝ պետական մարմնի կողմից այս կամ այն իրավական ակտի պահանջներն անտեսելու և չկատարելու անպատժելիությունը, պետական մարմինների միմյանց հետ ունեցած հարաբերությունների անկատարությունը և հատկապես պետական մարմնի կողմից խնդիրն անտեսելն այն դեպքերում, երբ դա վերաբերում է մարդու իրավունքների ճանաչմանը, խախտված իրավունքի վերականգնմանը :

Այդպիսի հետևությունների հիմք է տալիս այն, որ պետական գույքի կառավարման վարչությունը քաղաքապետարան հարցում կամ պահանջ ներկայացնելուց հետո այլևս չի հետաքրքրվել դրա կատարմամբ, որ քաղաքապետարանը իր «մեկ պատուհան» գործունեությանը փորձել է տալ նաև փոստային կապի բացառման իմաստ՝ պետական մարմնի պահանջած փաստաթղթերը չի ուղարկել՝ գտնելով, որ հարցում ուղարկողը պետք է գա և պատասխանն ստանա «պատուհանից»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218-րդ, հողային օրենսգրքի 104-րդ, 106-րդ, 108-րդ հոդվածների, ՀՀ կառավարության թիվ 1151 որոշման սահմանադրականության հարցի քննարկումը ՀՀ սահմանադրական դատարան ներկայացնելը պայմանավորված էր Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացման կապակցությամբ օտարվող գույքի սեփականատերերից, օգտագործողներից և այլ գույքային իրավունք ունեցողներից ստացված և ստացվող մեծաքիվ բողոքներով այն մասին, որ այդ գործընթացում խախտվում

են իրենց գույքային իրավունքները՝ հիմնավորված չէ իրենց գույքը հարկադիր օտարելու համար հասարակության և պետության կարիքների գերակա լինելը, օտարվող գույքը գնահատվում է կամայական և չի տրվում համարժեք փոխհատուցում, գործընթացում թույլ է տրվում խտրական մոտեցում :

ՀՀ սահմանադրական դատարանի 18.04.06 թ. որոշմամբ իրավական այդ նորմերը հակասահմանադրական ճանաչվելուց հետո ենթադրվում էր, որ Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակի կառավարման խորհուրդը, որի նախագահն է Երևանի քաղաքապետը, կնախաձեռնի օտարման պայմանագրերի վերանայումը թեկուզ առկա բողոքների մասերով, սակայն նման քայլեր չեն ձեռնարկվել :

Թվարկված օրինակները, կարծում ենք, բավարար են Երևանի քաղաքապետարանի կողմից թույլ տրվող իրավունքների խախտման մասին ամբողջական պատկերացում կազմելու համար :

Դրական ենք գնահատում այն, որ Պաշտպանի առաջարկները Կոնդ և Կոզեռն թաղամասերի վերաբերյալ քաղաքապետի կողմից ընդունվել են, ձեռնարկվել և իրականացվել է տվյալ տարածքներում առկա որոշակի կարգավիճակ չունեցող մի քանի տասնյակի հասնող շինությունների կարգավիճակի ճշտում, դրանց նկատմամբ համապատասխան քաղաքացիների սեփականության իրավունքի ճանաչում, ինչը վկայում է, որ «Հյուսիսային պողոտա և Կասկադ» ծրագրերի իրականացման ընթացքում թույլ տրված խախտումների վերաբերյալ քննարկումները, հրապարակային քննադատությունները անհետևանք չեն անցել, որ կատարվել է որոշակի հետևություն և քայլեր են ձեռնարկվում՝ նախկինում թույլ տրված սխալները չկրկնելու համար :

Քաղաքապետի կողմից կազմած հանձնաժողովի ուսումնասիրությունների հիման վրա այդ թաղամասերում ճշտվել են բնակիչների ցուցակները, շինությունների նկատմամբ իրավունքներ ունեցողները և այդ իրավունքների պետական գրանցման համար տվյալները ներկայացվել են անշարժ գույքի կադաստր՝ պետական գրանցում իրականացնելու համար :

Կոզեռն թաղամասի բնակիչներն այնուհետև գանգատվել են, որ կադաստրի տարածքային ստորաբաժանմունքում անհիմն արգելքներ են ստեղծվում քաղաքապետի որոշումների հիման վրա իրավունքների գրանցման հարցերում : Պարզվել է, որ այս դեպքում էլ քաղաքապետի նման որոշումներում տեղ են գտել որոշ անճշտություններ, որոնց կապակցությամբ և կադաստրում առաջացել են առարկություններ : Իր նման որոշումները քաղաքապետի կողմից վերանայվել են:

Կոզեռն թաղամասի բնակիչները տեղեկացրել են, որ խնդիրը հիմնականում լուծված է, իրականացվել է նաև իրավունքների պետական գրանցումը : Սակայն մոտ 10 ընտանիքի խնդիրները դարձել են վիճելի : Հարցը քննարկվում է քաղաքապետի հետ : 13 բնակչի

իրավունքի գրանցման վերաբերյալ առարկություններ ունի կադաստրի ստորաբաժանումը, ինչը նույնպես քննարկման փուլում է (այս խնդրի վերաբերյալ Պաշտպանի միջնորդությունը տե՛ս 2-րդ հավելվածում):

### 3.11. Երևանի թաղապետարաններ

Եթե Երևանի քաղաքապետարանի դեմ 2006 թվականին ստացվել է 116 բողոք, ապա թաղապետարանների դեմ ստացվածների ընդհանուր թիվը եղել է 77, ինչը բնական է այն առումով, որ Երևան քաղաքին վերաբերվող խնդիրների լուծման իրավասությունը՝ հողահատկացման, շինարարության թույլտվությունների տրամադրման, ինքնակամ կառույցների նկատմամբ օրենսդրական պահանջների կիրառման և նման այլ խնդիրներ, հիմնականում վերապահված են քաղաքապետին:

Երևանի թաղապետարանների դեմ ուղղված 77 բողոքներն ունեցել են հետևյալ ընթացքը՝

- ընդունվել են քննարկման՝ 48
- ներկայացվել են դիմողի իրավունքների պաշտպանության հնարավորությունները՝ 7
- չեն ընդունվել քննարկման՝ 17
- ուսումնասիրման ընթացքում են՝ 5

Այս բողոքները հիմնականում վերաբերել են բազմաբնակարան շենքերի բնակիչների այնպիսի խնդիրներին, ինչպիսիք են՝ շենքի ընդհանուր օգտագործման տարածքների սպասարկման, շինության վթարայնության վերացման, ընդհանուր օգտագործման տարածքների զավթման, ինքնակամ կառույց իրականացնելու հետևանքով այլոց իրավունքի խախտման, բնակարանի հատկացման, որպես բնակարանով ապահովվելու կարիք ունեցողների ցուցակներում հաշվառվելու և նման այլ խնդիրներին, որոնց իրականացման ապահովումը նաև թաղապետարանների խնդիրն է՝ քանի դեռ համատիրությունները վերջնականապես չեն կայացել:

Թաղապետարանների դեմ ուղղված մի շարք բողոքներով բարձրացված հարցերի լուծումը դուրս է նրանց լիազորություններից, պայմանավորված է քաղաքապետարանի կամ հանրային ծառայություններ մատուցող մարմինների մոտեցումներով:

Օրինակ՝ ջրամատակարարման, գազամատակարարման, էլեկտրամատակարարման խնդիրները: Թաղապետարանն է ինքնակամ կառույցների նկատմամբ հսկողություն սահմանում, կանխում դրանց իրականացումը, կազմում իրականացված ինքնակամ կառույցների նկատմամբ արձանագրություններ և ձեռնարկում քանդման ուղղությամբ

միջոցառումներ, մինչդեռ այդպիսիները օրինականացնելը և որպես սեփականություն ճանաչելը, պատկանում է քաղաքապետարանի իրավասությանը:

Պաշտպանի ուսումնասիրությունների տվյալները թույլ են տալիս պնդելու, որ բազմաբնակարան շենքերում բնակարանների սեփականաշնորհումից հետո, անտեսվել է նման շինությունների պահպանման և սպասարկման խնդիրը : Նկատի է ունեցվել, որ բնակարանների սեփականատերերն իրենք այն կլուծեն համատիրությունների միջոցով : Սակայն եզակի են այնպիսի համատիրությունները, որոնք կարելի է կայացած համարել և որոնք պատրաստ են և իրենց իրավասության շրջանակներում, լուծում են բազմաբնակարան շենքի պահպանման և սպասարկման հետ կապված խնդիրները :

Օրինակ՝ բազմաբնակարան շենքից աղբահանությունը քաղապետարանի համապատասխան ծառայության խնդիրն է, և տվյալ ծառայության համար բնակիչներից վարձավճարների հավաքումը և այդ ծառայությանը տրամադրումը շատ դեպքերում համատիրությունը վերցնում է իր վրա : Սակայն, երբ ոչ պատշաճ ծառայություն է մատուցվում, աղբը շաբաթներով կուտակվում և շրջապատում ստեղծում է հակասանիտարական վիճակ, համատիրությունը չի փորձում համապատասխան պահանջներ ներկայացնել այդ ծառայությանը :

Թաղապետարանների դեմ ուղղված բողոքներից բնութագրական են հետևյալները՝

## Օրինակ 1

Դիմումատուն բողոքել է, որ Մալաթիա-Սեբաստիայի քաղապետարանի կողմից 03.08.2003թ. իրեն վարձակալության հանձնված հողատարածքի վերաբերյալ պայմանագիրը քաղաքապետարանի միջոցով վերաձևակերպելու նպատակով 2005թ. մարտին քաղապետարան է ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերը: Պայմանագիր կնքելը ձգձգելու պատճառը պարզելու նպատակով դիմել է թաղապետարան, որտեղից հայտնել են, որ փաստաթղթերը սահմանված կարգով ուղարկվել են քաղաքապետարան : Իսկ հաջորդ անգամ հայտնել են, որ պայմանագրի վերահաստատումը ձգձգվել է, քանի որ բնօրինակների փոխարեն քաղաքապետարան են ուղարկվել դրանց պատճենները: 2006թ. հունվարին պարզել է, որ ներկայացրած փաստաթղթերը քաղաքապետարանում կորցրել են: 20.02.2006թ. երկրորդ անգամ է փաստաթղթերը ներկայացրել, սակայն քաղաքապետարանում դրանք դարձյալ կորել են:

Դիմել է քաղաքապետարան, որտեղից 07.03.2006թ. պատասխանել են, որ քաղաքապետարանում նման փաստաթղթեր մուտք չեն եղել:

Այս անգամ թաղապետարանի կողմից նոր պատրաստված փաստաթղթերի փաթեթը և իր դիմումը հարկադրված անձամբ ինքն է տարել և հանձնել Երևանի քաղաքապետարան:

Ապրիլին քաղաքապետարանն է դիմումը և կից փաստաթղթերը վերադարձրել թաղապետարան՝ դրանք ուշ ներկայացնելու պատճառաբանությամբ: Թաղապետարանից դիմումատուին հայտնել են, որ մինչև քաղաքապետարանը չպահանջի փաստաթղթերը, իրենք դրանք կրկին չեն ուղարկի:

Ի պատասխան Պաշտպանի պահանջի՝ քաղաքացու դիմումի նկատմամբ նման անփույթ վերաբերմունքի և անհիմն քաշքշուկի պատճառների վերաբերյալ պարզաբանումներ ներկայացնելու մասին, թաղապետարանից հայտնել են, թե իբր պայմանագրի կնքումը ձգձգվել է՝ փաստաթղթերի թերի լինելու պատճառով, որ դրանք լրացվել և համապատասխան գրությամբ ներկայացվել են քաղաքապետարան:

30.10.2006թ. տրված պատասխանով քաղաքապետը հայտնել է, որ իր 10.08.2006թ. թիվ 1321-Ա որոշմամբ դիմումը բավարարվել է՝ դիմումատուի հետ կնքվել է համապատասխան պայմանագիր:

## Օրինակ 2

2-րդ խմբի հաշմանդամ դիմումատուն բողոքել է, որ Նոր Նորքի թաղապետարանը ոչինչ չի ձեռնարկում բազմաբնակարան շենքի իրենց հարկի ընդհանուր օգտագործման պատշգամբում հարևանի կողմից ապօրինի տեղադրած պահարանը, որը խոչընդոտում է իր ազատ տեղաշարժմանը, ապամոնտաժելու ուղղությամբ :

Դիմումատուն Պաշտպանին է ներկայացրել ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության պետի՝ Երևանի Նոր Նորք համայնքի ղեկավարին և իրեն հասցեագրած 30.09.2005թ. նամակի պատճենը, որտեղ նշվել է, որ հմ. 26 շենքի բնակիչն իրոք ինքնակամ զբաղեցրել է ընդհանուր օգտագործման պատշգամբի տարածքի զգալի հատվածը և առաջարկվել է թաղապետին միջոցներ ձեռնարկել ընդհանուր օգտագործման տարածքի նախկին տեսքը վերականգնելու համար:

Ի պատասխան դիմումատուի բողոքի՝ 2005թ. դեկտեմբերի 6-ի նամակով Նոր Նորք համայնքի ղեկավարը հայտնել է, որ նշված պահարանը պատշգամբում տեղադրվել է մի քանի տարի առաջ և այն տեղադրող քաղաքացուն ծանուցվել է պահարանը մեկամսյա ժամկետում ապամոնտաժելու մասին :

Մեր հարցման կապակցությամբ թաղապետը հայտնել է, որ ինքնակամ կառույց իրականացրած բնակիչը ենթարկվել է վարչական պատասխանատվության, սակայն պահարանը չի ապամոնտաժվում, քանի որ նման պահարաններ կան շենքի գրեթե բոլոր հարկերում և, եթե որպես ապօրինություն այն վերացվի, ապա պետք է վերացվեն նաև մյուսների կողմից տեղադրված պահարանները:

Պաշտպանին է ներկայացվել նաև «Նոր Նորք 2/6» համատիրության նախագահի տեղեկանքը, որտեղ նշված է, որ վիճարկվող պահարանը /խորդանոց/ չի խոչընդոտում շենքի բնականոն շահագործման աշխատանքներին, այդ հարցով բողոքներն անհիմն են, շենքի մյուս բնակիչները նշված հարցի վերաբերյալ գանգատներ չունեն:

Բողոքի քննարկման արդյունքներով արձանագրվել է, որ խախտվել են «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջները, ըստ որի՝ բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում են շենքը կրող կառուցվածքները, շենքի միջհարկային ծածկերը (առաստաղները, հատակները), ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի և «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $26^1$–րդ հոդվածների պահանջները՝ չի կանխարգելվել ինքնակամ շինարարության դեպքը և օրենքով սահմանված կարգով չեն վերացվել դրա հետևանքները, ինչպես նաև «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջները, համաձայն որոնց շենքում պարտադիր նորմերի պահպանման ընդհանուր վերահսկողությունն իրականացնում է տվյալ համայնքի ղեկավարը :

Նկատի ունենալով, որ բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների ապօրինի զավթման այնպիսի դեպքերը, որոնցով խախտվում են մյուս բնակիչների ազատ տեղաշարժման, ընդհանուր օգտագործման տարածքներից հավասարապես օգտվելու իրավունքները, հանգեցնում են նաև կենցաղային անախորժությունների, կայացվել է որոշում՝ մարդու իրավունքների խախտում հայտնաբերելու և դրանք վերացնելու կապակցությամբ անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելու առաջարկ ներկայացնելու մասին:

Որոշմանն ի պատասխան Երևանի՝ Նոր Նորք համայնքի ղեկավարը հայտնել է, որ ինքնակամ կառուցված շինությունը օրենքով սահմանված կարգով վերացնելու և ընդհանուր օգտագործման տարածքը նախկին տեսքի բերելու թաղապետարանի պահանջները կառուցողի կողմից անտեսվելու պատճառով, թաղապետարանը հայց է ներկայացրել Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարան:

Սա այն եզակի դեպքերից է, երբ թաղապետը, ի պաշտպանություն քաղաքացիների իրավունքների, դիմել է դատարան :

Ցանկալի էր, որ նման դեպքերում համատիրությունները նույնպես պատասխանատվություն զգային բազմաբնակարան շենքերում բնակիչների կողմից համակեցության և ընդհանուր օգտագործման տարածքներից օգտվելու կանոնների պահպանման համար:

Օրինակ 3

Երևանի Ֆուչիկի փողոցի հմ. 9 շենքի բնակիչները համատեղ բողոքով հայտնել են, որ իրենց շենքի տանիքը գտնվում է անմխիթար վիճակում և անհետաձգելի վերանորոգման կարիք ունի: Այդ հարցով դեռևս 6 ամիս առաջ գրավոր դիմել են Աջափնյակի թաղապետարան՝ իրենց դիմումը թողնվել է անպատասխան: ՈՒնեն նաև համատիրություն, որին նույնպես դիմել և մերժում են ստացել այն դեպքում, երբ համատիրությունն ունի հարցը լուծելու համար անհրաժեշտ միջոցներ և հնարավորություն:

Բողոքն ընդունելով քննարկման՝ Աջափնյակ համայնքի ղեկավարին առաջարկվել է պարզաբանում տալ դիմումում նշված տեղեկությունների վերաբերյալ:

30.05.2006 թվականին թաղապետի կողմից տրվել է հետևյալ պարզաբանումը. «Մասնագետների ուսումնասիրություններից պարզվել է, որ շենքի տանիքի մասնակի վերանորոգումը արդյունավետ չէ, այն գտնվում է անմխիթար վիճակում և կապիտալ վերանորոգման կարիք ունի», «շենքը ընդգրկվել է 2007թ. ամրացման ենթակա շենքերի ցուցակում: Այն կամրացվի և հիմնական կվերանորոգվի տանիքը»: Նշվել է նաև, որ «համատիրության բյուջեի ֆինանսական միջոցները հնարավորություն չեն տալիս շենքում իրականացնելու մեծածավալ աշխատանքներ : Այդ կապակցությամբ համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ յուրաքանչյուր տարի համայնքի բյուջեից ֆինանսական և նյութական աջակցություն է տրամադրվում համատիրություններին՝ բնակելի շենքերի թեք լանջավոր տանիքների վերանորոգման համար»:

06.06.2006 թվականին ի լրումն իրենց դիմումի, բնակիչներն արդարացիորեն դժգոհել են տրված պարզաբանումից, մատնանշելով, որ անձրևի և ձյան տեղումների պատճառով չեն կարող սպասել 2007 թվականին շենքի ամրացման հետ միասին նաև տանիքի վերանորոգմանը:

Բոլոր դեպքերում տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց անգործությունը, բնակիչների խնդիրների նկատմամբ անտարբերությունը հակված են արդարացնելու ֆինանսական հնարավորությունների սահմանափակությամբ : Մինչդեռ, շատ դեպքերում խնդիրը լուծելու համար պահանջվում է միայն բնակիչների հնարավորությունների բացահայտում և այդ հնարավորությունների համախմբում խնդրի լուծման շուրջը :

Այս դեպքում, Պաշտպանի միջամտությունից հետո է միայն, որ պատկան մարմիններն օգտագործել են այդ հնարավորությունները և հենց նույն ամսում լուծվել է տանիքի վերանորոգման խնդիրը :

Նման բնույթի բողոքներ ստացվել են նաև Երևան քաղաքի այլ համայնքներից, ինչը վկայում է, որ արդիական է բազմաբնակարան շենքերի սպասարկումը բարելավելու խնդիրը :

## 3.12. Մարզպետարաններ և տեղական ինքնակառավարման մարմիններ

2006 թվականին մարզերից ստացված բողոքների թիվը եղել է 475, որոնցից 117-ը վերաբերել է մարզպետների, քաղաքապետերի և գյուղապետերի գործողություններին կամ անգործությանը: Մնացած 358 բողոքը վերաբերել է մարզային այլ կառույցներին :

Մարզպետարանների, քաղաքապետարանների և գյուղապետարանների դեմ ուղղված 117 բողոքները ունեցել են հետևյալ ընթացքը՝

- ընդունվել են քննարկման՝ 78
- ներկայացվել են դիմողի իրավունքների պաշտպանության հնարավորությունները՝ 8
- չեն ընդունվել քննարկման՝ 26
- ուսումնասիրման ընթացքում են՝ 5

Նշված 117 բողոքից մարզպետարանի դեմ են ուղղված 49-ը, քաղաքապետարանների դեմ՝ 39-ը և գյուղապետարանների դեմ՝ 29-ը:

Նշված բողոքները, որոնց շարքում զգալի թիվ են կազմում աղետի գոտու բնակիչներից ստացվածները, հիմնականում վերաբերել են բնակարանային, հողհատկացման, հողօգտագործման հետ կապված խնդիրներին՝ պետական ֆինանսավորման կամ այլ միջոցներով աղետի գոտում կառուցվող բնակարանների անարդարացի բախշմանը, աղետի գոտու վերականգնողական ծրագրերով ընտանիքի անդամների թվի ավելացումն անտեսելուն, անօթևան մնացածներին հաշվառման ցուցակներում չընդգրկելուն և նման այլ խնդիրներին, ինչպես նաև սոցիալական աջակցության ոլորտում թույլ տրված խախտումներին:

Աղետի գոտում բնակարանային խնդիրները վերջնական լուծում առայժմ չեն ստացել: Դեռևս կան աղետի հետևանքով բնակարան կորցրած և վթարային շինություններում կամ տնակային պայմաններում բնակվողներ : Խնդիր է առաջանում նաև որպես բնակարանի կարիք ունեցող հաշվառված անձանց ընտանիքների անդամների թվի հետագա ավելացման առումով, որոնց անտեսվելու դեպքում հատկացվելիք բնակտարածությունը բնականաբար անբավարար է դառնում տվյալ ընտանիքի բնակարանային կարիքները լիարժեք բավարարելու համար:

Ստացված բողոքներով արձանագրվել են՝ որպես անօթևան հաշվառումից անհիմն կամ ձևական հիմքերով դուրս թողնելու, անօրինական վտարումների և նման այլ դեպքեր:

Մարզպետարանների, քաղաքապետարանների և գյուղապետարանների դեմ ստացված բողոքներից բնութագրական են հետևյալները՝

Օրինակ 1

Շիրակի մարզի Գյումրու բնակիչ դիմումատուն գանգատվել է, որ երկրաշարժի հետևանքով կորցրել է Մանուշյան փող. թիվ 14 շենքի մեկսենյականոց բնակարանը: 1989թ. հերթագրված է եղել անօթևանների հերթացուցակում և օգտվել է ՀՀ կառավարության թիվ 432 որոշման 8-րդ կետի արտոնությունից: Գյումրու քաղաքապետարանի 11.02.2003թ. թիվ 109 որոշմամբ տրված հմ. 8 միասնական օրդերով Ճչեղրինի փող. 5բ շենքի 8-րդ բնակարանը հատկացվել է իրեն : Այդ բնակարանում նա ապրել է մինչև 04.08.2004թ.: Հետագայում պարզվել է, որ հատկացված բնակարանը կառուցված է եղել կոոպերատիվ հիմունքներով և պատկանել է նույն քաղաքի մեկ այլ բնակչի, որն այն նվիրատվության պայմանագրով 26.10.2002թ. հանձնել է Գյումրու քաղաքապետարանին՝ դրա դիմաց ստանալով Երևանյան խճուղու 22 շենքից մեկ-սենյականոց բնակարանի ամրացման կտրոնը, որը Շիրակի մարզպետարանը համարել է չեղյալ : Դրված է դիմումատուին տվյալ բնակարանից վտարելու հարցը:

Տվյալ գործով ստացվել է Շիրակի մարզպետի պարզաբանումն այն մասին, որ ՀՀ կառավարության 21.11.2002թ. թիվ 1935-Ն որոշման հիման վրա Շիրակի մարզպետարանը Գյումրի քաղաքում պետական աջակցության միջոցներով կառուցված պետական բնակարանային ֆոնդի բնակարանների բաշխումն իրականացնում է Գյումրու քաղաքապետի կողմից հաստատված երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած քաղաքացիների հերթացուցակի համաձայն՝ դրանում ընդգրկված քաղաքացիների հերթացուցակում ընդգրկվելու չափանիշներին համապատասխանության արդյունքներով: Քանի որ դիմումատուն ընդգրկված չի եղել Գյումրու քաղաքապետի կողմից հաստատված երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած քաղաքացիների 2003թ. բնակարանային հերթացուցակում, ՀՀ կառավարության վերը նշված որոշման համաձայն ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից նրան բնակարան չի հատկացվել, որ դիմումատուի բնակարանային գործը Շիրակի մարզպետարանը ժամանակին ուղարկել է Գյումրու քաղաքապետարան՝ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած քաղաքացիների բնակարանային հերթացուցակում հաշվառելու նպատակով:

Գյումրու քաղաքապետարանից ստացված պատասխանի համաձայն, դիմումատուի բնակարանային հարցը քննության է առնվել Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանում:

Պարզված է նաև, որ դատարանը հիմք է ընդունել Շիրակի մարզպետարանի 2004թ. մարտի 1-ի Ս-598 գրությունը, որի համաձայն, ըստ «Լինսի» հիմնադրամի կողմից կառուցված բնակելի շենքերի շահագործման վերաբերյալ հիմնադրամի սահմանած չափանիշների՝ չի թույլատրվում բնակարանների փոխանակում կամ վաճառք: Դատարանը վճռել է՝ 3-րդ անձի և Գյումրու քաղաքապետարանի միջև 2002թ. սեպտեմբերի 25-ին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը, որպես անօրինական գործարք, համարել առոչինչ:

Դիմումի քննարկման արդյունքներով Պաշտպանի կողմից կայացվել է որոշում՝ մարդու իրավունքների խախտում հայտնաբերելու և դրանք վերացնելու կապակցությամբ անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելու մասին : Գյումրու քաղաքապետին առաջարկվել է՝ դիմումատուի իրավունքները վերականգնելու նպատակով, լուծել նրան բնակարան հատկացնելու, ինչպես նաև նշված հարցում թերացած աշխատակիցներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը:

Ստացված պատասխանի համաձայն, որոշումը քննարկվել է Գյումրու քաղաքապետարանում և մարդու իրավունքների խախտում թույլ տված՝ քաղաքապետարանի բնակհաշվառման և բաշխման բաժնի պետը և նույն բաժնի մասնագետը քաղաքապետի համապատասխան հրամանով ազատվել են զբաղեցրած պաշտոններից: Դիմումատուի բնակարանային հերթը, որպես երկրաշարժի հետևանքով անօթևան մնացածի, վերականգնված է 8-րդ կետի արտոնությամբ և քաղաքապետի կողմից հաստատված երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած քաղաքացիների հերթացուցակներն ուղարկվել են ՀՀ Շիրակի մարզպետարան:

## Օրինակ 2

Գյումրի քաղաքի Իսահակյան փողոցի հմ. 9 շենքի բնակիչները բողոքել են հետևալի մասին.

1924թ. կառուցված իրենց շենքը մինչև 1988թ. ունեցել է 4-րդ կարգի վթարայնության աստիճան, ոչ մի անգամ չի վերանորոգվել, իսկ 1988-ի սկզբին կանգնեցվել է ամրացման, սակայն երկրաշարժից հետո այդ աշխատանքներն անավարտ են մնացել:

Ներկայումս շենքն ամբողջովին, այդ թվում նաև սանհանգույցները, գտնվում է անմխիթար վիճակում, առկա է տանիքի փլուզման սպառնալիքը :

Պաշտպանի հարցման կապակցությամբ՝ Շիրակի մարզպետը պարզաբանել է, որ խնդիրը բազմիցս քննարկվել է ՀՀ քաղաքշինության նախարարությունում և առաջարկվել է կա՛մ շենքը քանդել-վնասազերծել և բնակիչներին ճանաչել անօթևան, կա՛մ կատարել շենքի ամրացում-վերականգնում: Վերջինս տնտեսապես ավելի քիչ նպատակահարմար է:

Այնուամենայնիվ, Գյումրի քաղաքի անօթևան ընտանիքների շարքերը ևս 48 ընտանիքներով չավելացնելու նկատառումով, Իսահակյան փողոցի հմ 9 բնակելի շենքի ամրացման-վերականգնման աշխատանքների իրականացումը Շիրակի մարզպետի կողմից ընդգրկվել է 2007-2009թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի 2007թ. հայտում (առաջին հորիզոնականում) և ներկայացվել է ՀՀ քաղաքաշինության նախարարություն:

Խնդիրը մնում է չլուծված, 48 ընտանիք շարունակում են բնակվել 4-րդ կարգի վթարայնություն և հակասանիտարական պայմաններ ունեցող շենքում :

## Օրինակ 3

Քննարկման ընթացքում գտնվող դիմումներից մեկով Շիրակի մարզի մի խումբ բնակիչներ հայտնել են, որ իրենք բնակվել են «Լենինգրադշին» կազմակերպության կողմից կառուցված 19 մոդուլներում: 1988թ. երկրաշարժի արդյունքում դարձել են անօթևան, սակայն չունեն համապատասխան կարգավիճակ: 1991թ. բնակիչների մի մասի արտագաղթի արդյունքում, տնակներն անհատույց հանձնվել են «Լենինգրադշին» կազմակերպությանը, որի լուծարումից հետո, վերջինիս հաշվեկշռից տեղափոխվել է «Շիրակշին» բաժնետիրական ընկերության հաշվեկշռին:

Կառույցի պահպանման և բարեկարգմանն ուղղված աշխատանքները իրենց միջոցներով կատարվել են բնակիչների կողմից, «Շիրակշին » ընկերությունը որևէ ներդրում չի կատարել:

Տնտեսական դատարանի վճռով «Շիրակշին» ՓԲԸ-ն ճանաչվել է սնանկ և ընկերության ունեցվածքը դրվել է աճուրդի:

Մարզպետարանը և քաղաքապետարանը ոչինչ չեն ձեռնարկում իրենց կացարաններից վտարման սպառնալիքի տակ հայտնված ընտանիքների խնդիրը կարգավորելու ուղղությամբ:

Մարզպետին և քաղաքապետին առաջարկվել է՝ կրկին անդրադառնալ այդ քաղաքացիների բնակարանային խնդիրների լուծմանը:

## Օրինակ 4

Գյումրի քաղաքի բնակիչ դիմումատուն բողոքել է, որ երկրաշարժի հետևանքով կորցրել է 3-սենյականոց բնակարանը, երբ ընտանիքը բաղկացած է եղել 5 անձից:

1992թ. ընտանիքը բաղկացած է եղել 7 անձից և աղջկան՝ մանկուց հաշմանդամ երեխայի հետ հատկացրել են մեկ սենյականոց բնակարան: 1992-ին իրենք հաշվառվել են բնակարանի անօթևանների հերթացուցակում 5 անձով և օգտվել է օրենքի 13-րդ կետի արտոնությունից այդ նորմերով :

2004թ. փետրվարի 27-ին նորից է փաստաթղթերը ներկայացրել Գյումրու քաղաքապետարան, սակայն ցուցակում երեք սենյակի փոխարեն նշված է եղել երկու սենյակ: Բացի այդ, իրեն չեն ընդգրկել բնակարանների գնման վկայական /ԲԳՎ/ ստացողների ծրագրում՝ պատճառաբանելով, որ մինչև 2004թ. մարտի մեկը չունի հաշվառում անօթևանների ցուցակում:

Քաղաքացու դիմումի կապակցությամբ Պաշտպանի կողմից կատարված հարցման վերաբերյալ Գյումրու քաղաքապետը պարզաբանել է, որ որպես երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած քաղաքացի, դիմումատուն իր ընտանիքի հետ միասին հաշվառվել է բնակարան ստանալու համար՝ 3-սենյականոց բնակարանի կարիքավոր քաղաքացիների հերթացուցակում:

ՀՀ կառավարության 10.06.1999թ. թիվ 432 որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած քաղաքացիների հաշվառումը կատարվում է մինչև ընթացիկ տարվա մարտի 1-ը:

Դիմումատուն ցուցակների հերթական ճշգրտման ժամանակ քաղաքապետարան է դիմել 27.02.2004թ., սակայն ներկայացրած անձերի քանակի ու շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ տեղեկանքը վավերացված չի եղել բնակվարչության կնիքով, որի պատճառով նրա հաշվառումը կատարվել է 2004թ. մարտի 1-ից հետո:

Ինչ մնում է 3-սենյականոց բնակարանի կարիքավորների հերթացուցակից դուրս մնալուն, ապա ՀՀ կառավարության 10.06.1999թ. թիվ 432 որոշման 16-րդ կետով սահմանվում է, որ «Բնակելի տարածությունները քաղաքացիներին հատկացվում են սույն կետով սահմանված նորմաների սահմաններում, սակայն վարձակալի և նրա ընտանիքի անդամների կողմից նախկինում զբաղեցրած սենյակների թվից ոչ ավելի»:

Դիմումատուի ընտանիքի երկու անդամին Գյումրու /Կումայրի/ քաղաքային խորհրդի գործկոմի 01.05.1992թ. թիվ 4 որոշմամբ հատկացվել է մեկսենյականոց բնակարան, ուստի քաղաքապետարանը հիմք ընդունելով ՀՀ կառավարության վերը նշված որոշման 16-րդ կետը, նրա 5 անձից բաղկացած ընտանիքին հաշվառել է 2 սենյականոց բնակարանի կարիքավոր քաղաքացիների հերթացուցակում:

Ներկայումս դիմումատուն գտնվում է երկուսենյականոց բնակարանի կարիքավոր քաղաքացիների 297 համարում և օգտվում է վերը նշված որոշմամբ հաստատված արտոնությունների հերթականության 29-րդ կետից:

ՀՀ Շիրակի մարզպետի 28.12.2006թ. գրությամբ Պաշտպանին հայտնվել է, որ ՀՀ կառավարության 21.12.2006թ. նիստում որոշվել է դիմումատուին, բացառության կարգով, հատկացնել բնակարանի գնման վկայագիր:

Օրինակ 5

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկի փողոցի հմ. 59 շենքի բնակիչների բողոքի քննարկմամբ պարզվել է հետևյալը.

ՀՀ կառավարության 1998թ. փետրվարի 9-ի թիվ 81 որոշմամբ մարզպետարանի ենթակայությանն է հանձնվել կապի նախարարության Գյումրի քաղաքի Թիբիլիսյան խճուղու հմ. 59 2400 քմ. մակերես ունեցող շինության 2050 քմ: Մնացած 350 քմ կառավարության նույն որոշմամբ թողնվել է ՀՀ կապի նախարարության ենթակայության տակ, նկատի ունենալով, որ այն միասնական օրդերով, որպես բնակարան, հատկացված է կապի նախարարության նախկին աշխատողներին:

ՀՀ կառավարության 10.01.01 թվականի թիվ 15 որոշմամբ թույլատրվել է Շիրակի մարզպետին՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով նախատեսված պայմաններով /նվիրաբերություն/ իրականացնել համապատասխան միջոցներ ունեցող սուբյեկտի ընտրություն՝ վթարային դարձած շինությունների վերականգնումն իրականացնելու նպատակով:

22.04.2002թ. կնքված նվիրատվության պայմանագրով ՀՀ Շիրակի մարզպետը «Պրոգրես համալսարան» արտադրական կոոպերատիվին է նվիրաբերել տվյալ շինությունն ամբողջապես՝ այդ թվում նաև բնակիչներին թողնված 350 քմ. հատվածը, որի տնօրինման իրավունքը չի ունեցել: Նվիրաբերության պայմանագրով նվիրառուն որևէ պարտավորություն բնակիչների հանդեպ չի ստանձնել :

«Պրոգրես համալսարան» արտադրական կոոպերատիվը, հենվելով հիշյալ նվիրատվության պայմանագրի վրա, հանդես է գալիս որպես ամբողջ շինության սեփականատեր, հայց է ներկայացրել դատարան՝ բնակիչներին նաև մնացած 350 քմ. տարածքից վտարելու պահանջով:

Որքան էլ տարօրինակ է, անտեսելով ՀՀ կառավարության 1998 թվականի թիվ 81 որոշումը, կադաստրի տարածքային ստորաբաժանման կողմից ամբողջ շինության նկատմամբ սեփականության վկայական է տվել նախ մարզպետարանին և ապա՝ «Պրոգրես համալսարան» արտադրական կոոպերատիվին :

Շիրակի մարզի բնակիչներից բնակարանային խնդիրներով բողոքները հասնում են մի քանի տասնյակի և արդյունք են վատ վարչարարության : Այստեղ առկա են նաև կոռուպցիոն ռիսկեր:

Բնակարանային չլուծված խնդիրներ կան նաև Լոռու մարզի Վանաձոր քաղաքում : Այստեղ նույնպես առկա է տնակային պայմաններում բնակվողների մի թաղամաս : Քաղաքապետարանը ձեռնամուխ է եղել քաղաքի բարեկարգմանը և փորձում է ազատվել

տնակներից: Այդտեղ բնակվողներին առաջարկում են այս կամ այն հանրակացարանում բնակտարածք, ինչի դեմ առարկություններ և դժգոհություններ են առաջացել այն պատճառով, որ առաջարկվող հանրակացարանները անբարեկարգ են և զուրկ կենցաղային հարմարություններից:

Խնդիրը դեռևս քննարկվում է՝ վերջնական լուծում չի ստացել :

Մյուս մարզերից ստացված բողոքներից բնութագրական են՝

## Օրինակ 6

Վայոց ձորի մարզի Գնդևազ գյուղի բնակիչը բողոքել է, որ իրեն պատկանող վարելահողով, որտեղ ցանված է եղել աշնանացան հացահատիկ, 2003թ. մարտին անց են կացրել ոռոգման ջրի խողովակաշար : Աշխատանքների իրականացման հետ կապված, իր աշնանացանի արտը տրորվել և ոչնչացվել է : Աշխատանքների ավարտից հետո, տարածքը չի հարթեցվել և գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնելու համար մնում է ոչ պիտանի, չօգտագործվող հողատարածքի համար վճարում է տարեկան 75.000 դրամի չափով հողի հարկ :

Պատճառված վնասի փոխհատուցման հարցով 2003 թվականից սկսած դիմումներ է հասցեագրել իրավասու մարմիններին, որտեղից էլ դրանք ուղարկվել են Վայոց ձորի մարզպետարան : Մարզպետարանից այցելել և տեղում ծանոթացել են խնդրին և բանավոր գյուղապետին առաջարկվել է՝ փոխհատուցել պատճառված վնասը, սակայն իր կրած վնասը չի վերականգնվել, հողամասը նախկին տեսքի չի բերվել:

Պաշտպանի հարցման կապակցությամբ Վայոց ձորի մարզպետը հայտնել է, որ համայնքի ղեկավարի և շինարարության տնօրենի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել հողերը նախկին տեսքի բերելու վերաբերյալ, սակայն շինարարական աշխատանքները ընդհատվել են ոռոգման սեզոնի սկսվելու պատճառով: Ոռոգման սեզոնի ավարտից հետո քաղաքացու պահանջը կբավարարվի : Դիմումատուին, որպես վնասի փոխհատուցում, տրվել է 300 կգ սերմացու ցորեն և շինանյութեր :

Խնդիրն այստեղ նրանում է, որ իրավունքի խախտման ակնհայտության պայմաններում նույնպես քաղաքացուն անհրաժեշտ է եղել շուրջ երեք տարի՝ պատկան մարմիններից պաշտպանություն ստանալու համար :

## Օրինակ 7

Վայոց ձորի մարզի Գլաձոր գյուղի բնակիչը բողոքել է, որ իրեն որպես ժառանգություն անցած հողատարածքի ամբողջականությունը գրանցելու համար գյուղապետի կողմից գրանցամատյաններում անհրաժեշտ փոփոխություններ չեն կատարվում, իրեն չեն տրվում

պահանջվող փաստաթղթերը, կադաստրի Եղեգնաձորի ստորաբաժանման ղեկավարը գյուղի հողերի քարտեզի վրա կատարել է նշում, և հայտնել, որ թույլ տրված սխալը համայնքի ղեկավարի կողմից հաստատվելուց հետո կադաստրը կկատարի համապատասխան գրանցում, սակայն և նախկին, և ներկայիս համայնքապետերը հրաժարվում են ուղղել սխալները:

Պաշտպանի միջամտությունից հետո միայն դիմումատուի պահանջը բավարարվել է :

## Օրինակ 8

Սյունիքի մարզի Աշոտավան գյուղի բնակիչը բողոքել է, որ հողատարածքները սեփականաշնորհելու ժամանակ իրեն և մորը 1 հա հողատարածք պակաս է հատկացվել: Բողոքելուց հետո հատկացվել է ևս 6000քմ, որն իրենց հասանելիք հողից շարունակում է պակաս լինել 4000քմ: Չնայած դրան, իրենից պահանջում են հատկացված 6000քմ անջրդի հողակտորի դիմաց վճարել ջրովի հողի համար նախատեսված գումար : Բացի այդ, իրեն հատկացված հողակտորը չի համապատասխանում այն կարգի հողին, որը պետք է հատկացվեր :

Ի պատասխան Պաշտպանի հարցմանը՝ Աշոտավանի համայնքի ղեկավարը խնդրի վերջնական լուծումը պայմանավորել է Սյունիքի մարզպետարանի մասնագետի ստուգումների արդյունքներով, իսկ մարզպետը հայտնել է, որ հարցը ներկայացվել է կառավարության քննարկմանը :

Խնդիրը դեռևս վերջնական լուծում չի ստացել, բողոքի քննարկումը շարունակվում է:

## Օրինակ 9

Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի տեխնիկումի հանրակացարանի բնակիչները բողոքել են, որ այդտեղ քաղաքապետարանի ուղեգրերով բնակվում են մոտ 46 ընտանիք: Շենքը պատկանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությանը: Ներկայումս տեխնիկումի տնօրենը պահանջում է ազատել այն, իսկ այն հանրակացարանները որտեղ առաջարկում են ապրել, գտնվում են վատթար վիճակում: Այդ հարցով բազմիցս դիմել են Սևանի քաղաքապետին, սակայն հարցն իր լուծումը չի ստացել:

Բողոքի քննարկմամբ պարզվել է՝

2005թ. օգոստոսի 25-ին ՀՀ կառավարության թիվ 1354-Ա «Սևանի պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության Սևան քաղաքի Գործարանային 6 հասցեում գտնվող հանրակացարանային մասնաշենքը վերցվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության տնօրինումից: Նույն որոշմամբ ՀՀ պետական գույքի կառավարման վարչության պետին հանձնարարվել է՝ նշված հանրակացարանային մասնաշենքը

նվիրաբերել համապատասխան համայնքին՝ որպես բնակարանային ֆոնդ հանրակացարաններում բնակվող անօթևան բնակիչներին սահմանված կարգով անհատույց սեփականաշնորհելու պայմանով:

Պաշտպանի հարցման կապակցությամբ, 2006թ. մարտի 15-ին ՀՀ պետական գույքի կառավարման վարչության պետը հայտնել է, որ Սևան քաղաքի Գործարանային 6 հասցեում գտնվող հանրակացարանային մասնաշենքը հանձնման-ընդունման ակտով հանձնվել է քաղաքապետարանի տնօրինությանը:

Նշված հանրակացարանային սենյակները զբաղեցնող բնակիչներին անհատույց սեփականաշնորհելու գործընթացի կազմակերպման վերաբերյալ Սևանի քաղաքապետը հայտնել է, որ ՀՀ կառավարության 2005թ. օգոստոսի 25-ի թիվ 1354-Ա որոշման համաձայն՝ Սևան քաղաքի Գործարանային 6 հասցեում գտնվող հանրակացարանային մասնաշենքը, պետական գույքի կառավարման վարչության 2006թ. հունվարի 18-ի հանձնման-ընդունման ակտով, որպես բնակֆոնդ հանձնվել է Սևանի քաղաքապետարանին՝ հանրակացարանում բնակվող անօթևան բնակիչներին սահմանված կարգով անհատույց սեփականաշնորհելու համար:

Ներկայումս այդ շենքը գտնվում է վթարային վիճակում՝ ավելի քան 20 տարի այստեղ վերանորոգման աշխատանք չի կատարվել: Տանիքը, ներքին և արտաքին կոմունիկացիոն համակարգերն ամբողջությամբ շարքից դուրս են եկել, ժամանակին թալանվել են դուռ-լուսամուտները, քանդվել է հատակը: Շենքը գազաֆիկացված չէ, չկա ջրամատակարարում, չեն գործում սանհանգույցները: Այդ պատճառով հանրակացարանի բնակիչների օրերս հրավիրված ժողովի ժամանակ բոլոր 37 բնակիչներն էլ հրաժարվել են սեփականաշնորհումից՝ մտավախություն հայտնելով, որ սեփականաշնորհումից հետո շենքի վերականգնման ամբողջ ծանրությունը կմնա իրենց վրա:

Բացի այդ Սևանի պետական քոլեջը բնակիչների հետ ունի նաև գույքային խնդիրներ՝ ժամանակին նրանց հատկացվել են մահճակալներ, պահարաններ, սեղաններ, սակայն դեռևս չեն լուծվել դրանց հավաքման կամ դուրսգրման հարցերը: Չնայած նման իրավիճակին՝ Սևանի քաղաքապետարանը աշխատանք է տանում հնարավոր սեղմ ժամկետում շենքի տեխնիկական անձնագիրը ձեռք բերելու, գույքային իրավունքի պետական գրանցումը կատարելու և սեփականաշնորհման գործընթացը սկսելու ուղղությամբ:

Միաժամանակ Սևանի քաղաքապետարանի կողմից միջոցներ են ձեռնարկվում միջազգային որևէ կազմակերպության միջոցով, գործող ծրագրերով կամ հիպոթեքային վարկի միջոցով լուծել շենքի վերանորոգման հարցը:

Քաղաքապետի գրությամբ նշված գործընթացը հարցի դրական լուծումն է, սակայն մինչ այդ եղել է այդ բնակիչներին հանրակացարանից վտարելու սպառնալիքը, որն էլ տեղիք է տվել բնակիչների բողոքին:

Եզակի չեն նաև այնպիսի բողոքները, որոնք վերաբերում են տեղական ինքնակառավարման մարմիններում կամ համայնքի բյուջետային հիմնարկներում աշխատողների աշխատանքային իրավունքների խախտմանը՝ աշխատանքից ապօրինի ազատելուն, աշխատավարձը ժամանակին չվճարելուն, վերջնահաշվարկի չտրամադրմանը և այլն: Այդ առումով բնութագրական է հետևյալ օրինակը.

## Օրինակ 10

ՀՀ Տավուշի մարզի Պառավաքար գյուղի մանկապարտեզի նախկին տնօրենը տեղեկացրել է, որ 30 տարի անբասիր աշխատել է վերոնշյալ նախակրթարանում որպես դաստիարակ, ապա՝ տնօրեն, ունի բարձրագույն նախադպրոցական կրթություն :

2005թ. նոյեմբերի 30-ին գյուղապետը թիվ 35 կարգադրությամբ իրեն ազատել է աշխատանքից՝ ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ և 32-րդ հոդվածներով՝ գյուղապետարանի նախկին աշխատակազմը լուծարելու հիմնավորմամբ, և փոխարենը նշանակել է համապատասխան կրթություն չունեցող այլ անձի:

Ի պատասխան Պաշտպանի հարցմանը, Պառավաքարի գյուղապետը հայտնել է, որ դիմումատուն ազատվել է աշխատանքից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նա վերջին մեկ տարվա ընթացքում բարեխղճորեն չէր կատարում իր պարտականությունները, մասնավորապես ճիշտ չէր բաշխում գյուղապետարանի կողմից տրված անվճար սնունդը: Դիմումատուն աշխատանքից ազատվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի հիման վրա:

Այնուհետև Պաշտպանը գյուղապետից պահանջել է՝ աշխատանքում դիմումատուի անբարեխիղճ լինելու փաստի մասին վկայող փաստաթղթերը՝ կարգապահական խախտման մասին արձանագրություն, կարգապահական տույժի նշանակման մասին հրամանը և այլն:

Այս անգամ գոյուղապետը պատասխանել է, որ դիմումատուն ստացել է բանավոր նկատողություն աշխատանքում տեղ գտած թերությունների համար և, որ գյուղապետարանի նախկին աշխատակազմը լուծարվել է 31.10.2005թ. թիվ 35 կարգադրությամբ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 9-րդ կետով:

Բողոքի քննարկման տվյալները հիմք են տվել գտնելու, որ դիմումատուն աշխատանքից ազատվել է աշխատանքային օրենսդրության պահանջների խախտումով՝ աշխատանքից նրան ազատմանը չեն նախորդել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ

նախատեսված նյութական կամ կարգապահական պատասխանատվության միջոցներ, բավարար է համարել բանավոր նկատողությունը, ինչը չէր կարող աշխատանքից ազատման հիմք հանդիսանալ:

Դիմումատուին աշխատանքից ազատել է ոչ թե Աշխատանքային օրենսգրքով նախատեսված հիմքերով, այլ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ և 32-րդ հոդվածների վկայակոչմամբ, ինչը տվյալ դեպքով կիրառելի չէ :

Մանկապարտեզը համարվում է համայնքի բյուջետային հիմնարկ, հետևաբար նրա ղեկավարը չի մտնում համայնքի ղեկավարի աշխատակազմի մեջ և չի համարվում համայնքային ծառայող՝ համաձայն «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի, ըստ որի՝ «համայնքային ծառայող է համարվում տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմում պաշտոնների անվանացանկով նախատեսված որևէ պաշտոն զբաղեցնող անձը»:

Մեր կողմից կայացվել է որոշում՝ մարդու իրավունքների խախտում հայտնաբերելու և այն վերացնելու առաջարկ ներկայացնելու մասին, որով Պառավաքարի գյուղապետին առաջարկվել է վերացնել թույլ տված խախտումները և դիմումատուին վերականգնել նախկին աշխատանքում:

Գյուղապետը հետագայում հայտնել է, որ ձեռք բերված պայմանավորվածության արդյունքում, դիմումատուն աշխատանքի կտեղավորվի Պառավաքարի միջնակարգ դպրոցում:

Անցկացված ուսումնասիրությունների արդյունքներով Պաշտպանի ընդհանուր հետևությունն այն է, որ մարզերում պետական կառավարման մարմինները և տեղական ինքնակառավարման մարմինները հաճախ անտեսում և պատշաճ կարգով չեն անդրադառնում անհատի այնպիսի խնդիրներին, որոնցով պայմանավորվում է իրավունքի լիարժեք իրականացման ապահովումը :

### 3.13. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման այլ մարմիններ

Թվարկված մարմիններից զատ, քաղաքացիներից ստացվել են նաև այլ մարմինների դեմ ուղղված բողոքներ:

Ա. Տարածքային կառավարման նախարարության դեմ ուղղված բողոքների թիվը 22 է: Երկու բողոք վերաբերել է աշխատանքից ազատման խնդրին, իսկ մնացած դիմումները հիմնականում բնակարանային խնդիրներով փախստականների դժգոհություններն են եղել միգրացիայի գործակալությունից:

Աշխատանքից ազատման վերաբերյալ բողոքներով պարզվել է, որ դիմումատուները աշխատանքից ազատվել են կենսաթոշակային տարիքի կապակցությամբ: Հետևաբար նման ազատումը որպես իրավունքի խախտում դիտվել չի կարող:

Մնացած 20 բողոքները վերաբերել են հետևյալ խնդիրներին.

## Օրինակ 1

Դիմումատուն գանգատվել է, որ կնոջ հետ միասին մինչև 2001թվականը բնակվել է Կոտայքի մարզի Քասախ գյուղում` վագոն տնակում : Նույն թվականին ամուսնալուծվել է և վագոն տնակը մնացել է կնոջը : Հաշվառված է մնում տվյալ վագոն տնակում, սակայն որևէ կացարան չունի : Չնայած դրան` ինքը չի ընդգրկվել Նորվեգական գրասենյակի կողմից Քասախ գյուղում իրականացվելիք շինարարական ծրագրով բնակարան ստանալու իրավունք ունեցողների ցուցակում :

ՀՀ միգրացիոն գործակալությունից տեղեկացնում են, որ դիմումատուն չէր կարող ընդգրկվել այդ ծրագրում, քանի որ 2002 թվականից տվյալ բնակավայրում չի բնակվում, հաշվառված է որպես անօթևան, սակայն իր փաստացի բնակության վայրի վերաբերյալ որևէ տվյալ չի ներկայացրել :

## Օրինակ 2

Դիմումատուն բնակվում է Երևանի Արցախ փողոցում գտնվող հանրակացարանի` օրդերով իրեն հատկացված սենյակում : Նույն հանրակացարանի մեկ այլ սենյակում բնակվելիս է եղել դիմումատուի հայրը, որի մահից հետո դիմումատուն փորձել է զբաղեցնել նաև այդ սենյակը և իր իրերի մի մասը տեղափոխել է այդտեղ :

Ազատված սենյակը միգրացիոն գործակալությունը հանձնել է մեկ այլ փախստականի, ինչից և դժգոհել է դիմումատուն :

Բողոքը գնահատվել է որպես անհիմն:

## Օրինակ 3

Մի խումբ դիմումատուներ, չհանդիսանալով ժամանակավոր կացարաններում կամ վագոն տնակներում բնակվողներ, բողոքել են, որ գործակալությունն իրենց չի ներառել բնակարանով առաջնահերթ բավարարման կարիքավորների ցուցակներում:

Նրանց պարզաբանվել է ՀՀ կառավարության 20.05.2004թ. թիվ 747-Ն որոշմամբ` 1988-1992թ.թ. Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրի իմաստը և բովանդակությունը, տվյալ ծրագրում ներառվելու իրավունք ունեցող անձանց շրջանակը: Բացատրվել է, որ իրենց կարգավիճակը չի համապատասխանում այդ ծրագրով պահանջվող չափորոշիչներին:

## Օրինակ 4

Մի խումբ փախստականներ բողոքել են, որ իրենք, ընդգրկված են եղել բնակարանով առաջնահերթ բավարման կարիքավորների ցուցակում, սակայն իրենց կացարան չի տրամադրվել Արզումանյան փողոցում կառուցված 10 հարկանի բնակելի շենքից:

Պարզվել է, որ միգրացիոն գործակալությունը տվյալ կառույցի հետ որևէ առնչություն չունի և չէր կարող դիմումատուներին տվյալ վայրից բնակարան հատկացնել:

## Օրինակ 5

Դիմումատուն գանգատվել է, որ միգրացիոն գործակալությունն իրեն չի ապահովում ժամանակավոր կացարանով: Պաշտպանի միջամտությունից հետո գործակալությունը տեղեկացրել է, որ նրան հատկացնելու համար նախատեսվել է հանրակացարանային սենյակ: Փաստաթղթերը ձևակերպելու համար դիմումատուն պետք է ներկայանա գործակալություն:

Հետագայում պարզվել է, որ դիմումատուն գործակալություն ներկայացել է երկու ամիս անց, իսկ այդ ընթացքում նախատեսված կացարանում տեղավորվել է այլ փախստական: Խնդիրն այն է, որ դիմումատուն չունի որոշակի հասցե և մեզ հետ առնչվում է «Երևան-10, ցպահանջ» հասցեով :

Գործակալությունը խոստացել է դիմումատուին ժամանակավոր կացարանով բավարարել առաջին իսկ հնարավորության դեպքում :

## Օրինակ 6

Մեկ այլ խումբ դիմումներ վերաբերում են բնակարանի գնման վկայագրերով նախատեսվող գումարների չափին: Ըստ դիմումատուների, նման գումարներով իրենց բնակության վայրերում բնակարան գնել հնարավոր չէ :

Այս խնդիրը ներկայացվել է ինչպես միգրացիոն գործակալությանը, այնպես էլ ՀՀ կառավարությանը:

Փախստականներից նույնաբնույթ դիմումների շարունակականությունն արդյունք է նրա, որ դեռևս մեծ թիվ են կազմում վագոն-տնակներում և ժամանակավոր կացարաններում բնակվողները: Ժամանակավոր կացարանները հաճախակի զուրկ են ամենատարրական կոմունալ հարմարություններից :

Բ. **ՀՀ ֆինանսների և էկանոմիկայի նախարարության** դեմ ստացված 8 բողոքը վերաբերում է ԽՍՀՄ Խնայբանկի ավանդների վերադարձման խնդրին՝ փաստաթղթերի ոչ

էական անհամապատասխանության կամ ընտանեկան նպաստառուների ցուցակներում ներառված չլինելու պատճառներով այդ քաղաքացիները զրկվել են ավանդի դիմաց առաջնահերթ փոխհատուցում ստանալու իրավունքից:

Այս բողոքներն ընդհանրացվել են և առաջարկ է ներկայացվել ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն : Հետագայում ՀՀ կառավարությունն ու ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունն անդրադարձել են նման ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքների վերաբերյալ վիճահարույց համարված տվյալների վերանայմանը, որի արդյունքում զգալի թվով ավանդատուներ ներառվել են այն ստանալու իրավունք ունեցողների ցուցակներում :

Գ. **ՀՀ ազգային անվտանգության ծառայության** դեմ ուղղված 5 բողոքներից մեկ դեպքով դիմումատուն գանգատվել է տվյալ ծառայության քննիչի վարույթում գտնվող քրեական գործով քննության ոչ օբյեկտիվ լինելուց: Բողոքը, դիմումատուի համաձայնությամբ, փոխանցվել է ՀՀ գլխավոր դատախազություն:

Երեք դեպքով խնդիրը վերաբերել է բռնադատվածի կարգավիճակի հաստատմանը : Պարզվել է, որ դիմումատուի կամ դիմումատուի ծնողների բռնադատված լինելու վերաբերյալ արխիվային տվյալներ չեն պահպանվել:

Պաշտպանի կողմից փորձեր են արվել դիմումատուներին օժանդակել՝ ՌԴ անվտանգության ծառայության կենտրոնական արխիվ հարցումներ կատարելու միջոցով, սակայն պատասխանները եղել են բացասական:

Դ. **ՀՀ Նախագահի աշխատակազմի** դեմ ուղղված 5 բողոքներից երկու դեպքով դիմումատուները բողոքել են, որ աշխատակազմի կողմից չեն տրամադրվում իրենց աշխատանքային գրքույկները այն պատճառաբանությամբ, որ աշխատանքային հարաբերությունները դադարեցվելուց հետո իրենք չեն վերադարձրել իրենց տրված վկայականները:

Պաշտպանի միջամտության արդյունքում, դիմումատուները ստացել են աշխատանքային գրքույկները:

Մյուս երեք դեպքով դիմումատուները նախկինում մահապատժի դատապարտված անձիք են, որոնց նկատմամբ նշանակված մահապատիժը ՀՀ Նախագահի հրամանագրով փոխարինվել է ցմահ ազատազրկման: Նրանք գտնում են, որ ՀՀ Նախագահի այդ հրամանագիրը ենթակա է վերանայման:

Դիմումատուներին պարզաբանվել է տվյալ խնդրի վիճահարույց լինելու հանգամանքը :

Ե. **Հանրային ծառայությունները կարգավորող** հանձնաժողովի դեմ ստացված 4 բողոքները վերաբերել են գազի, ջրի, հեռախոսի սակագների վերաբերյալ ընդունած որոշումներին:

Դիմումատուներին պարզաբանվել է, որ հանձնաժողովը որոշումներ ընդունում է իրեն ներկայացված տնտեսական հիմնավորումների տվյալներով, որ նման որոշումներով իրավունքի խախտում տեսնելու համար հակառակ տնտեսական հիմնավորումները բավարար չեն:

Հարկային և մաքսային մարմինների դեմ եղել են 4-ական բողոք՝ մաքսազերծման, մաքսատուրքի հաշվարման, հարկման օբյեկտի գնահատման, հարկային խախտման արձանագրության տվյալների դեմ :

Մաքսային ծառայության դեմ եղած բողոքներից մեկը վերաբերել է մաքսային ծառայողի պաշտոնից ազատմանը, որով պարզվել է, որ դիմումատուն պաշտոնից ազատվել է հերթական ատեստավորման տվյալներով :

Մյուս երեք դեպքերով ներմուծված ապրանքի մաքսազերծման խնդիրների ձգձգումները կապված են եղել փորձաքննությունների անցկացման հետ, ապա խնդիրը լուծվել է դրական բողոքի քննարկման ընթացքում՝ ապրանքների մաքսազերծումը կատարվել է, ինչը դիմումատուներին բավարարել է :

Հարկային ծառայության դեմ եղած բոլոր չորս բողոքները վերաբերել են հաշվարկված հարկային պարտավորությունների չափին, որը կարող էր վիճարկվել դատական կարգով :

Դիմումատուներին պարզաբանվել են իրենց իրավունքները, տրամադրվել է նաև իրավաբանական խորհրդատվություն :

ՀՀ բնապահպանության նախարարության դեմ եղել է ընդամենը մեկ բողոք : Այս կառույցի դեմ բողոքների բացակայությունը պետք է բացատրել նրանով, որ բնակչությունը լավատեղյակ չէ, թե նախարարությունը բնապահպանական որ խնդիրների համար է պատասխանատու: Նույնը կարելի է ասել նաև ՀՀ պետական գույքի կառավարման վարչության մասին, որի դեմ նույնպես ստացվել է ընդամենը մեկ բողոք:

# ԲԱԺԻՆ 4.
# ՀԱՏՈՒԿ ԵՎ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

## 4.1. Փախստականների իրավունքներ

Փախստականների իրավունքների խախտմանն առնչվող բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանց մի մասը մինչև օրս ապահովված չէ մշտական օթևանով: 1988-1992թթ. Ադրբեջանից բռնագաղթած անձինք ապրում են կենցաղային ծանր պայմաններում, մասնավորապես բարձր լեռնային և սահմանամերձ գոտիներում բնակվող փախստականները: Նման պայմաններում ապրում են նաև մայրաքաղաքի վարչական շենքերում բնակվողները:

ՀՀ կառավարության 20.05.2004թ. «1988-1992թթ. Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրի մասին» թիվ 747-Ն որոշմամբ հաստատված ծրագրով որպես շահառու ընդգրկված բնակարանի առաջնահերթ կարիքավոր ընտանիքների թիվը հաստատված է եղել, սակայն 2005-2006թթ. Պաշտպանին շարունակել են դիմել վարչական շենքերում բնակվող փախստականները, մասնավորապես, Երևան քաղաքից, որոնք դուրս են մնացել և չեն ընդգրկվել շահառուների ցուցակում:

ՀՀ կառավարության 20.05.2004թ. թիվ 747-Ն որոշման համաձայն` բացի սահմանված ընդհանուր պայմաններից ծրագրի շահառուների ընտրության հիմքում որպես չափանիշ ընդունվում է նաև 2003 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ (Հայաստանի Հանրապետության տարածքում ժամանակավոր կացարաններում և վագոն-տնակներում ապաստանած փախստական ընտանիքների բնակարանային պայմանները ու նրանց ընտանիքների կազմը պարզելու նպատակով ՀՀ ԿԱ միգրացիայի և փախստականների վարչության կողմից իրականացված ուսումնասիրության ժամանակաշրջանը) ժամանակավոր կացարաններում և վագոն-տնակներում փախստական ընտանիքների փաստացի բնակությունը:

Այդ կապակցությամբ Պաշտպանը ստացել է փախստականների մի շարք բողոքներ, որոնք վերաբերել են ՀՀ ԿԱ միգրացիայի և փախստականների վարչության/ՄՓՎ/ աշխատակիցների կողմից սահմանված ժամանակաշրջանում կատարված ուսումնասիրությունների արդյունքների չհիմնավորվածությանը:

Որոշ բողոքների քննարկման արդյունքները ցույց են տվել, որ Կառավարության որոշմամբ սահմանված ժամանակահատվածում փախստականների փաստացի բնակվելու հանգամանքը ստուգելու նպատակով ՄՓՎ-ի աշխատակիցների կողմից կատարված ուսումնասիրությունները պատշաճ կարգով չեն իրականացվել:

Պետք է նշել նաև, որ որևէ իրավական ակտով սահմանված չի եղել բնակության վայրից փախստականի փաստացի բացակայության հանգամանքը հաստատելու համար հիմք հանդիսացող ժամանակահատվածի տևողությունը: Փաստորեն, հստակեցված չեն եղել ժամանակավոր կացարաններում և վագոն-տնակներում բնակվող փախստական ընտանիքների փաստացի բնակության ստուգման կառուցակարգերը:

Այնուհետև, ՀՀ կառավարության 24.02.2005 թվականի թիվ 309-Ն որոշմամբ սահմանվել է վկայագրի միջոցով բնակարան /բնակելի տուն/ ձեռք բերելու համար աջակցության ստանալու իրավունք ունեցող անձանց ընտրության չափանիշները: Մասնավորապես, համապատասխան աջակցություն ստանալու իրավունք ունեն այն անձինք, ովքեր ՀՀ կառավարության 2004թ. մայիսի 20-ի «1988-1992թթ. Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովություն առաջնահերթ ծրագրի մասին» թիվ 747-Ն որոշմամբ հաստատված չափանիշներին համապատասխան, 2003թ. օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառվել են ՀՀ ԿԱ միգրացիայի և փախստականների վարչության կողմից և ընդգրկվել են մարզպետների կողմից հաստատված ցուցակներում:

ՀՀ կառավարության 20.05.2004թ. թիվ 747-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 7-րդ բաժնի 2-րդ կետի համաձայն «Բնակարանի գնման վկայագրի /սերտիֆիկատի/ արժեքը սահմանվել է տվյալ տարածքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների ձևավորված շուկայական միջին գնին համարժեք՝ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2003թ. առաջին 9 ամսվա միջինացված տվյալներով, 1 քառ. մետրի հաշվարկով:

Ընդ որում, Երևանում, որպես հաշվարկի հիմք, ընդունվել է Ավան թաղային համայնքում ձևավորված գինը: Նույն բաժնի 5-րդ կետը սահմանում է, որ 2-րդ կետում նշված տվյալները ծրագրի իրականացման ընթացքում ենթակա են ճշգրտման՝ ելնելով ծրագրի իրականացմանը նախորդող եռամսյակի ընթացքում ձևավորված բնակարանների շուկայական միջին գներից:

Միևնույն ժամանակ, ՀՀ կառավարության 24.02.2005թ. թիվ 309 որոշմամբ սահմանված կարգի 9-րդ կետով սահմանվել է, որ վկայագրում նշվող աջակցության չափը որոշվում է նույն կետով սահմանված նորմաներով աջակցություն ստանալու իրավունք ունեցող անձի ընտանիքին /անձանց թվով/ հասանելիք բնակարանի /սենյակների թվով/՝ տվյալ բնակավայրում 2005թ. մայիսի 1-ի դրությամբ ձևավորված շուկայական միջինացված արժեքից:

Բողոքների մի զգալի մասը վերաբերել է անշարժ գույքի շուկայում փաստացի ձևավորված գների և տրամադրվող դրամական աջակցության չափերի անհամապատասխանությանը, ինչի հետևանքով վերոնշյալ ծրագրում ընդգրկված անձինք

հնարավորություն չեն ունեցել ձեռք բերելու համապատասխան բնակարան կամ բնակելի տուն:

## Օրինակ 1

Արարատի մարզի Վեդի քաղաքի մի խումբ փախստականներ 2005թ. սեպտեմբերին և 2006թ. մայիսին Պաշտպանին հասցեագրած դիմումներով հայտնել են, որ 2005թ. ստացել են բնակարանների գնման վկայագրեր, սակայն անշարժ գույքի շուկայում ձևավորված գների պայմաններում չեն կարողացել նույն վարչական տարածքում համապատասխան բնակարաններ գնել:

Դիմումատուները նշել են նաև, որ մեկսենյականոց բնակարանի համար տրամադրվել է 1.013.000 դրամ /մեկ միլիոն տասներեք հազար/, իսկ երկու սենյակի համար՝ 2.238.000 /երկու միլիոն երկու հարյուր երեսունութ հազար/ դրամ:

Խնդրի կարգավորման նպատակով համապատասխան գրություններ են հասցեագրվել ՀՀ վարչապետին, ՀՀ քաղաքաշինության նախարարին՝ առաջարկելով 2006թ. նախատեսվող նույնանուն ծրագրի իրականացման հետ կապված հարցերն ուսումնասիրելիս, քննարկել նաև 2005թ. իրականացված ծրագրի շահառուներին բնակարան գնելու համար լրացուցիչ աջակցություն տրամադրելու հարցը:

Ի դեպ, ՀՀ քաղաքաշինության նախարարությունը փաստում է այն հանգամանքը, որ 1988-1992թթ. Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային խնդիրների լուծման համար 2005թ. տրամադրված գումարների հաշվարկման և տրամադրման գործընթացում ծագել են խնդիրներ, որոնք առաջացրել են վկայագիր ստացած մի շարք անձանց դժգոհությունները: Ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ՝ նշյալ խնդրի լուծման ուղղությամբ, ՀՀ կառավարությանը ներկայացվել են համապատասխան առաջարկություններ:

## Օրինակ 2

Երևան քաղաքի Ամառանոցային փ. 123 շենքում բնակվող երկու փախստականներ 19.10.2004թ. Պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել են, որ ՀՀ ԿԱ միգրացիայի և փախստականների վարչությունը /այժմ ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալություն/ հրաժարվում է իրենց ժամանակավոր կացարան տրամադրել մինչև պետական ծրագրի շրջանակներում իրենց մշտական բնակարանով ապահովելը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը 2002թ. դեկտեմբերի 11-ին քննության առնելով քաղ. գործն ըստ հայցի Հ. Գ.-ի ընդդեմ մի խումբ փախստականների և մյուսների՝ ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջելու և վտարելու պահանջի մասին և ըստ

փախստականների հակընդդեմ հայցի ընդդեմ Հ. Գ.-ի՝ այլ բնակտարածություն հատկացնելու պահանջի մասին, հայցը բավարարել է:

Դատարանը վճռել է Ամառանոցային փ. 123 շենքից վտարել այն անձանց/նախկին փախստականներ/, ովքեր ՀՀ քաղաքացիություն են ընդունել՝ իրենց երեխաների հետ միասին, փախստականների մասով՝ Միգրացիայի և փախստականների վարչությունը պարտավորեցվել է յուրաքանչյուր ընտանիքին Երևան քաղաքում համապատասխան կացարան հատկացնել և վտարումը կատարել դրանից հետո:

Վճիռը ստացել է օրինական ուժ և ի կատար է ածվել մասնակի: ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.06.2003թ. վճռին համապատասխան՝ դիմումատուն և այն բնակիչները, ովքեր ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու հետևանքով կորցրել են փախստականի կարգավիճակը, 17.09.2004թ. ԴԱՀԿ ծառայության կողմից վտարվել են իրենց զբաղեցրած սենյակներից, առանց համապատասխան բնակարան հատկացնելու:

Պաշտպանի կողմից համապատասխան միջնորդություններ են հասցեագրվել իրավասու մարմիններին՝ համապատասխան անձանց ժամանակավոր կացարաններով ապահովելու հարցին անհապաղ լուծում տալու կապակցությամբ:

Սույն հարցն իր տրամաբանական լուծումն է ստացել ՀՀ միգրացիոն գործակալությունում, և դիմումատուներին ժամանակավոր կացարաններ են տրամադրվել Երևանի Նոր Նորքի 2-րդ զանգվածի ուսանողական ավանի 1-ին մասնաշենքում: Այդ առաջարկը դիմումատուների կողմից ընդունվել է:

## Օրինակ 3

ՀՀ կառավարության 13.10.2005թ. «Շենք ամրացնելու մասին» թիվ 1640-Ա որոշմամբ նախկինում ՀԿԿ Կենտկոմի բարձրագույն կուսակցական դպրոցին պատկանող, ներկայումս պետական որևէ մարմնի հաշվեկշռում չհաշվառված Երևանի Նորքի այգիներ 227 հասցեում գտնվող շենքն ամրացվել է «ՀՀ պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին՝ հետագայում նշված շենքում բնակվող փախստական ընտանիքներին իրենց կողմից զբաղեցված տարածքները սեփականության իրավունքով հատկացնելու նպատակով:

Նշված որոշման 2-րդ կետով ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության պետին հանձնարարվել է մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով ապահովել որոշման 1-ին կետում նշված շենքի ընդունման աշխատանքների կատարումը և գույքային իրավունքների պետական գրանցումը: Սակայն մինչ օրս ՀՀ կառավարության որոշումը չի կատարվում:

Պաշտպանը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան միջոցներ ձեռնարկելու առաջարկով 07.04.2006թ. դիմել է ՀՀ պետական գույքի կառավարման վարչության պետին և Երևանի քաղաքապետին:

ՀՀ պետական գույքի կառավարման վարչությունից ստացվել է պատասխան, համաձայն որի՝ Երևանի Նորքի այգիներ 227 հասցեում գտնվող շենքը 14.02.2006թ. ընդունման-հանձնման միակողմանի ակտով ընդունվել և հաշվառման է վերցվել ՀՀ պետական գույքի կառավարման վարչության հաշվեկշռում: Տվյալ շենքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը սահմանված կարգով իրականացնելու նպատակով 06.03.2006թ. ՀՀ պետական գույքի կառավարման վարչությունը կրկին դիմել է Երևանի քաղաքապետարան՝ նշյալ շենքի հողհատկացման փաստաթղթերը տրամադրելու համար:

Միաժամանակ հայտնվել է, որ ՀՀ պետական գույքի կառավարման վարչության կողմից 11.05.2006թ. Երևանի քաղաքապետարանի համապատասխան աշխատակիցներին ցույց է տրվել Երևանի Նորքի այգիներ 227 հասցեի շենքը՝ տարածքը տեղագրական հանույթի և սահմանների ճշգրտման նպատակով: Դրանից հետո քաղաքապետարանը պետք է տրամադրեր նշյալ հասցեի հողհատկացման հիմքերը և գլխավոր հատակագիծը, որը ստանալուն պես պետք է ձեռնարկվեին ՀՀ կառավարության 13.10.2005թ. թիվ 1640-Ա որոշումից բխող պահանջների անհապաղ կատարմանն ուղղված միջոցառումները:

Այնուհետև, Երևանի քաղաքապետի կողմից 26.05.2006թ. ընդունվել է «ՀՀ պետական գույքի կառավարման վարչությանը պատկանող Նորքի այգիների 227 հասցեում զբաղեցրած հողամասի հատկացման հիմքերը վերականգնելու և հողօգտագործման իրավունքը ձևակերպելու մասին» թիվ 841-Ա որոշումը, որով Նորքի այգիներ 227 հասցեում գտնվող 3570.0քմ մակերեսով հողամասն անհատույց /մշտական/ օգտագործման իրավունքով տրամադրվել է ՀՀ պետական գույքի կառավարման վարչությանը:

Պաշտպանի կողմից ՀՀ պետական գույքի կառավարման վարչությանը՝առաջարկություն է ներկայացվել՝ Երևանի Նորքի այգիներ 227 հասցեում գտնվող շենքի և դրա զբաղեցրած հողամասի նկատմամբ Վարչության գույքային իրավունքները պետական գրանցման ներկայացնելու վերաբերյալ: Բացի այդ առաջարկվել է իրավունքների գրանցումից հետո ձեռնամուխ լինել ՀՀ կառավարության 13.10.2005թ. «Շենք ամրացնելու մասին» թիվ 1640-Ա որոշման 1-ին կետի պահանջի կատարմանը, այն է՝ նշված շենքում բնակվող փախստական ընտանիքներին իրենց կողմից զբաղեցված բնակելի տարածքները սեփականության իրավունքով սահմանված կարգով տրամադրման գործընթացին:

Այնուհետև, ՀՀ պետական գույքի կառավարման վարչության կողմից հայտնվել է, որ սեփականության իրավունքի պետական գրանցում իրականացնելու համար անհրաժեշտ է

նաև նշված հասցեի շենքի հատակագիծը, որը Երևանի քաղաքապետարանի կողմից Վարչությանը դեռևս չի տրամադրվել:

Երևանի քաղաքապետարանի կողմից ստեղծված արհեստական արգելքների հետևանքով ՀՀ կառավարության 13.10.2005թ. «Շենք ամրացնելու մասին» թիվ 1640-Ա որոշումը մեկ տարուց ավելի է, ինչ չի կատարվել:

Նշված խնդրով Պաշտպանը դիմել է ՀՀ վարչապետին :

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը 03.08.2006թ. համապատասխան փաստաթղթերը ներկայացրել է ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ շենքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում իրականացնելու համար:

Դիմումը դեռևս գտնվում է քննարկման փուլում:

Ուշագրավ է նաև փախստականների պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու հետ կապված որոշ զինկոմիսարիատների դիրքորոշումը: «Փախստականների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ ծառայությունը զինված ուժերում փախստականի համար հանդիսանում է իրավունք, այլ ոչ թե պարտականություն : Այնուամենայնիվ, երբեմն փորձեր են արվում նշված անձանց զինվորական ծառայության զորակոչելու ուղղությամբ՝ «Փախստականների մասին» ՀՀ օրենքի նշված իրավական նորմին յուրօրինակ մեկնաբանություն տալով:

## 4.2. Ազգային փոքրամասնությունների իրավունքներ

Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներից ստացված փոքրաթիվ դիմումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանց բողոքները կրում են մարդու իրավունքների խախտումների ընդհանուր բնույթ, պայմանավորված չեն իրենց ազգային պատկանելիությամբ: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները չեն դժգոհում իշխանությունների և ընդհանրապես հասարակության կողմից նրանց նկատմամբ ցուցաբերվող խտրական վերաբերմունքից:

Այնուամենայնիվ, մենք լիովին համաձայն ենք Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի այն կարծիքին, որ, հաշվի առնելով երկրում բնակվող փոքրամասնական խմբերի փոքր թիվը, անհրաժեշտ է լրացուցիչ միջոցներ տրամադրել այս խմբերին իրենց լեզվական և մշակութային ինքնության պահպանման աջակցության նպատակով[14]:

[14] Տե՛ս Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի զեկույցը Հայաստանի մասին, ընդ. 2002թ. հուլիսի 13-ին

Հանձնաժողովն իր 2003թ. զեկույցով խրախուսել է ազգային փոքրամասնությունների վերաբերյալ առանձին օրենքի ընդունումը, որը կապահովի Հայաստանում փոքրամասնությունների իրավիճակին առնչվող հարցերի լուծման ընդհանուր մոտեցումների և ռազմավարության ծրագրի իրագործումը: Մասնավորապես նշվել է, որ այդ օրենքի ընդունումը ցույց կտա, որ գոյություն ունի քաղաքական կամք՝ այս բնագավառում առաջացած խնդիրները լուծելու համար և կսահմանի ձեռնարկվելիք քայլերի շրջանակը:

2006թ. հունիսի 30-ին Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը ընդունեց Հայաստանի վերաբերյալ երկրորդ զեկույցը : Հանձնաժողովը նշել է, որ Հայաստանի մասին ՌԱԵՀ-ի 2003 թ. հուլիսի 8-ի զեկույցից հետո առաջընթաց է ձեռք բերվել այդ զեկույցում լուսաբանված մի շարք բնագավառներում:

Այնուամենայնիվ, ՌԱԵՀ-ի առաջին զեկույցում արված մի շարք հանձնարարական-ներ չեն իրագործվել կամ իրագործվել են մասամբ: Թեև ազգային փոքրամասնությունների մասին օրինագիծը ուրվագծված է, ազգային փոքրամասնությունների որոշ ներկայացուցիչներ և ոչ կառավարական կազմակերպություններ նրան հավանություն չեն տվել, քանի որ նրանք կարծում են, որ այն մեծ փոփոխություն չի մտցնի առկա իրադրության մեջ:

Եզդիների փոքրամասնությունը դեռևս բախվում է հողի, ջրի և արոտավայրերի հետ կապված խնդիրներին: Նշվել է նաև, որ դեռևս չի ստեղծվել երկրի հասարակական և քաղաքական կյանքին ազգային փոքրամասնությունների մասնակցությանն ավելի մեծ հնարավորություն ընձեռող համակարգ: Ազգային փոքրամասնությունների պատկանող աշակերտները դեռևս բավարար քանակով և բարելավված դասագրքերի կարիք են զգում:

Այս զեկույցում ՌԱԵՀ-ն առաջարկում է Հայաստանի իշխանություններին հետագա գործողություններ ձեռնարկել մի շարք բնագավառներում: Մասնավորապես, ընդունել օրենք ազգային փոքրամասնությունների մասին, որը հնարավորինս հաշվի կառնի ազգային փոքրամասնությունների առաջարկություններն ու տեսակետները, ձեռնարկել եզդիների համայնքի խնդիրների լուծմանն ուղղված հետագա քայլեր, մասնավորապես, ոստիկանական հսկողության, հողի, ջրի, արոտավայրերի խնդիրների առնչությամբ: ՌԱԵՀ-ը Հայաստանի իշխանություններին առաջարկում է նաև միջոցներ ձեռնարկել ազգային փոքրամասնությունների մասնակցությունը երկրի հասարակական և քաղաքական կյանքին ապահովելու ուղղությամբ և այլն:

Անդրադառնալով ազգային փոքրամասնությունների մասին առանձին օրենք ընդունելու վերաբերյալ Հանձնաժողովի առաջարկությանը՝ նշենք, որ ներկայումս դեռևս քննարկման փուլում է «ՀՀ այլէթնիկ քաղաքացիների և էթնիկ փոքրամասնությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Դրա քննարկումներին մասնակցել են նաև ՀՀ մարդու

իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները: Նախագծի վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն իր կարծիքը ներկայացրել է ՀՀ կառավարություն:

Ամենևին դեմ չլինելով ազգային փոքրամասնությունների մասին առանձին օրենքի ընդունման գաղափարին, այնուամենայնիվ, Պաշտպանը գտել է, որ քննարկվող նախագիծը լրամշակման կարիք ունի:

Նախագծի ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ առաջարկվող օրենքի նախագիծը գրեթե ոչինչ չի ավելացնում այն ամենին, ինչ ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ և առանձին բնագավառները կարգավորող օրենքներով:

Ազգային փոքրամասնությունների հիմնախնդիրներն առավել բազմակողմանի ուսումնասիրելու նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ակտիվորեն համագործակցել է ՀՀ Նախագահի խորհրդականին առընթեր ազգային փոքրամասնությունների հարցերով համակարգող խորհրդի, ԱԺ նախագահին առընթեր ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդի, ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերով վարչության հետ:

Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները մշտապես այցելել են հունական, ռուսական, եզդիական, քրդական, ասորական գյուղեր, հանդիպել բնակիչներին, համայնքների ղեկավարներին, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին միավորող հասարակական կազմակերպությունների ղեկավարներին, քննարկել նրանց հուզող հարցերը: Պաշտպանի աշխատակիցները մասնակցել են նաև ազգային փոքրամասնությունների հարցերով, նրանց նախաձեռնությամբ կազմակերպվող քննարկումներին, սեմինարներին և այլ միջոցառումներին:

Պաշտպանին առընթեր փորձագիտական խորհրդի կազմում ստեղծվել է ազգային փոքրամասնությունների, փախստականների, կանանց և երեխաների իրավունքների, բնապահպանության, հասարակական կազմակերպությունների հարցերով ենթախորհուրդ, որում ընդգրկվել են նաև ազգային փոքրամասնությունների երկու ներկայացուցիչներ: Վերջիններս ներգրավվել են Պաշտպանի առաջարկությամբ ՀՀ Նախագահի խորհրդականին առընթեր ազգային փոքրամասնությունների հարցերով համակարգող խորհրդի կազմից՝ իրենց իսկ ընտրությամբ:

Պաշտպանը հաճախակի հանդիպումներ է ունեցել նաև ազգային փոքրամասնությունների համայնքների ղեկավարների հետ, քննարկել նրանց հուզող հարցերը:

## 4.3. Հաշմանդամների իրավունքներ

Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների խնդիրները հիմնականում առնչվում են առողջապահության, բժշկական, սոցիալական ու հոգեբանական, վերականգնման, հանրային կրթության մատչելիության ապահովման, տրանսպորտի, հաղորդակցության, զբաղվածության, սոցիալական պաշտպանության և այլ ոլորտների հետ:

Հաշմանդամների զբաղվածության ցուցանիշը Հայաստանում, ցավոք, բավականին ցածր է: 2006 թվականին որոշակի փոփոխություններ են կատարվել մի քանի իրավական ակտերում, որոնց նպատակն է եղել շահագրգռել գործատուներին հաշմանդամներին աշխատանքի ընդունելու հարցում, ավելի մեծ թվով հաշմանդամների ընդգրկել զբաղվածության ծրագրերում և բարձրացնել դրանց իրականացման արդյունավետությունը:

Զբաղվածության ոլորտում հաշմանդամների խնդիրները հիմնականում առնչվում են աշխատանքային տարիքի աշխատունակ հաշմանդամների աշխատանքի տեղավորման ցածր ցուցանիշների, զբաղվածության օրենսդրությամբ հաշմանդամներին տրվող երաշխիքների, իրավունքների և հաշմանդամին աշխատանքի տեղավորելու դեպքում գործատուներին տրվող երաշխիքների մասին գործատուների տեղեկացվածության ոչ բավարար մակարդակի, հաշմանդամների պահանջներին աշխատատեղերի հարմարեցված չլինելու, ինչպես նաև ոչ բավարար մասնագիտական ուսուցման հետ:

Բավարար մակարդակի չէ նաև հաշմանդամների բուժօգնության կազմակերպումը և պետական պատվերի շրջանակում նրանց դեղորայքով ապահովումը: Անհրաժեշտություն կա հաշմանդամության կանխարգելմանն ուղղված ծրագրերի իրականացման, ինչպես նաև հաշմանդամների համար բժշկական ծառայությունների մատչելիության ապահովման մեջ:

Բժշկասոցիալական փորձաքննության ընթացքում, բացի անձին հաշմանդամ ճանաչելուց, հաշմանդամության առաջացման պատճառն ու վաղեմությունը որոշելուց, որոշվում են նաև հաշմանդամի վերականգնման և սոցիալական պաշտպանության տեսակները: Այս ոլորտում անհրաժեշտ է իրականացնել բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող չափորոշիչների հստակեցում, մատչելիության ապահովում, ինչպես նաև ժամանակակից փորձագիտական, վերականգնողական և սոցիալական տեխնոլոգիաների ներդրում:

Հաշմանդամների վերականգնողական ոլորտում միջազգային փորձը բավարար չափով չի ուսումնասիրվում և ներդրվում:

Ներկա դրությամբ հաշմանդամների համար հարմարեցված ենթակառույցների թիվը բավական փոքր է: Չնայած հաշմանդամների համար հավասար հնարավորությունների ապահովման առանձին խնդիրներ օրենսդրությամբ ամրագրված են, սակայն

հաշմանդամների համար մատչելիությունը հասարակական կյանքի բոլոր բնագավառներում ապահոված չէ:

Սոցիալական ենթակառուցվածքի շենքերն ու շինությունները հարմարեցված չեն հաշմանդամների կարիքներին, ինչի հետևանքով խոչընդոտվում են հաշմանդամ երեխաների կրթությունը, զբաղվածության ապահովումը, նրանց լիարժեք մասնակցությունը հասարակական, քաղաքական և մշակութային կյանքին (մասնակցություն ընտրություններին, այցելություններ մշակութային և մարզական օջախներ և այլն):

Հաշմանդամների ընտրական իրավունքի իրականացման մատչելիության ապահովման նպատակով ՀՀ ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվել է տեղամասային կենտրոններում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից անհրաժեշտ միջոցառումներ իրականացնելու պարտավորությունը:

Այնուամենայնիվ, պետք է արձանագրենք, որ ոչ միշտ է, որ տեղամասային կենտրոնները հարմարեցվում են հաշմանդամների կարիքներին:

Հաշմանդամների երթևեկությունն ապահովելու համար հանրապետությունում չկա ոչ մի հարմարեցված փոխադրամիջոց: Հաշմանդամների համար մատչելի, բոլոր քաղաքացիների հետ հավասար հնարավորություններ ապահոված չեն:

Ապահոված չէ տրանսպորտային միջոցների (օդանավակայանի, երկաթուղային կայարանի, ներքաղաքային, մերձքաղաքային և միջքաղաքային ավտոբուսային, ինչպես ներքաղաքային էլեկտրատրանսպորտի) մատչելիությունը սայլակից օգտվող հաշմանդամների համար:

2006թ. ապրիլի 5-ին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն ընդունել է «Հաշմանդամների իրավունքների և հասարակության մեջ լիակատար մասնակցության վերաբերյալ գործողությունների ծրագիր» թիվ Rec (2006)5 Հանձնարարականը, որի 3.6.3 կետի համաձայն Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները պարտավոր են մշակել հաշմանդամների համար միջավայրի մատչելիությունն ապահովող օրենսդրական ակտեր:

Կարևորելով հատուկ օրենքի ընդունումը, որը բավարար իրավական հիմքեր կստեղծի շինությունները և տրանսպորտը հաշմանդամների և առհասարակ սակավաշարժ անձանց համար (որոնց թվին են դասվում սայլակավոր, հենաշարժողական ապարատի կամ տեսողության խանգարումով հաշմանդամները, տարեցները, մանկական սայլակով երեխաներ ուղեկցողները) մատչելի դարձնելու առումով՝ մեր կողմից նամակ է հասցեագրվել ՀՀ Ազգային ժողովին՝ առաջարկելով առաջնահերթության կարգով քննարկել «Հաշմանդամների և սակավաշարժ այլ անձանց համար հասարակական նշանակության վայրերի և հասարակական տրանսպորտի մատչելիության ապահովման մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը:

Նշված նախագծերի ընդունումը կարող է ձևավորել հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ իրավական հիմքերը:

Կրթության բնագավառում հաշմանդամների հիմնախնդիրների առնչությամբ նշենք, որ մանկուց հաշմանդամ ոչ բոլոր երեխաներն են ընդգրկված հանրակրթական և հատուկ-հանրակրթական ուսումնական հաստատություններում: Անբավարար է կազմակերպված հաշմանդամ երեխաների տնային ուսուցումը, բացակայում են նախադպրոցական ինտեգրված մանկական հաստատությունները, անբավարար է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատող մասնագետների թիվը (հատուկ մանկավարժներ, սուրդոմանկավարժներ, տիֆլոմանկավարժներ, մանկական հոգեբաններ և այլն):

Հանրակրթական և հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունները հարմարեցված չեն հաշմանդամ երեխաների պահանջներին (կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների համար բավարար չեն ուսումնական ծրագրերը, շենքերը և դասասենյակները հարմարեցված չեն և այլն):

Հաշմանդամ երեխաների համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որ նրանք հանրակրթական դպրոցում սովորեն իրենց հասակակիցների հետ համատեղ, անհրաժեշտության դեպքում հատուկ ծրագրերով:

Ինչ վերաբերում է հաշմանդամության կենսաթոշակներին, ապա դրանց չափը դեռևս ցածր է:

## 4.4. Կանանց իրավունքներ

Չնայած օրենքի առջև կանանց և տղամարդկանց հավասարության հռչակմանը՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների իրականացման բնագավառում կանանց և տղամարդկանց միջև առկա են անհավասարություններ:

Ինչպես նշվել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի նախորդ տարիների զեկույցներում կանանց զբաղվածության և հասարակական կյանքում նրանց մասնակցության ցուցանիշները շարունակում են մնալ շատ ցածր մակարդակում:

2006թ. ԵԽ Կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների կոմիտեի ներկայացուցիչներն այցելել են Հայաստան: 2007թ. Կոմիտեն հրապարակել է Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում կանանց իրավիճակի վերաբերյալ իր զեկույցի նախագիծը:

Զեկույցով, մասնավորապես, ընդգծվել է, որ կանանց իրավիճակը Հարավային Կովկասում անհանգստացնող է, նրանց մասնակցությունը քաղաքական և հասարակական կյանքին բավական սահմանափակ է: Նշվել է նաև, որ կանանց ներկայացվածության

մակարդակը ցածր է մնում խորհրդարանում, կառավարությունում, այլ պետական մարմինների բարձր պաշտոններում, գործարարության բնագավառում: Կանանց առողջությունը, մասնավորապես վերարտադրողական առողջությունը, պատշաճ ուշադրության չի արժանանում : Հատկապես անհանգստացնող են փախստական կանանց իրավիճակը, ինչպես նաև այն քրեակատարողական հիմնարկների պայմանները, որտեղ պահվում են կանայք:

Զեկույցով առաջարկվել է խթանել որոշումների ընդունման գործընթացում կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցությունը՝ այդ թվում՝ խորհրդարանում կանանց նվազագույն ներկայացվածության մակարդակի բարձրացման, կանանց վերապատրաստումների և իրազեկության բարձրացման եղանակով և այլն:

Չնայած ձեռնարկված որոշակի քայլերի և Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային իրավական փաստաթղթերի, այնուամենայնիվ որոշումների կայացման գործընթացում կանանց մասնակցության տոկոսը շատ ցածր է: Ի տարբերություն երկրի քաղաքական կյանքում որոշումների կայացման գործընթացի՝ բավականին բարձր է կանանց ընդգրկվածությունը հասարակական կազմակերպությունների աշխատանքներում:

Կարևոր ենք համարում նաև ոչ պետական մարմինների և կազմակերպությունների կողմից տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներից հավասարապես օգտվելու կանանց և տղամարդկանց իրավունքի պահպանման նկատմամբ արդյունավետ հսկողության իրականացումը : Ինչպես նշվել է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների խորհրդի թիվ 16 Ընդհանուր մեկնաբանությամբ, մասնակից պետությունների կողմից դաշնագրի 3-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունները ներառում են նաև ոչ պետական դերակատարների գործողությունների կանոնակարգումը և մոնիտորինգը, որպեսզի ապահովվի նրանց կողմից տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներից հավասարապես օգտվելու կանանց և տղամարդկանց իրավունքի պահպանումը: Այս պարտավորությունը կիրառելի է, օրինակ, եթե հանրային ծառայությունները մասնակիորեն կամ ամբողջությամբ սեփականաշնորհվել են:

Անդրադառնալով մարդկանց առևտրին (թրաֆիքինգ)՝ նշենք, որ որպես կանոն, մարդկանց առևտրի զոհ են դառնում սոցիալապես անապահով կանայք:

ՀՀ դատախազության տվյալներով 2006թ. հանրապետությունում արձանագրվել է ՀՀ քր. օր-ի 132-րդ, $132^1$-րդ, 261-րդ, 262-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների 42 դեպք:

Հաշվետվությամբ ներկայացված տվյալները վկայում են, որ հանրապետության իրավապահ մարմիններն որոշակի աշխատանքներ են կատարել այդ բնույթի հանցագործությունների հայտնաբերման, քննության որակի բարելավման ուղղությամբ, սակայն դեռևս առկա են թերություններ և բացթողումներ: Մասնավորապես, այդ բնույթի հանցագոր-

ծությունների բացահայտումն ու կանխումը դեռևս չի համապատասխանում դրանց տարածվածությանը:

Քրեական գործերով անհրաժեշտ չափով քննություն չի կատարվում նման հանցագործությունների կատարմանը նպաստող պայմաններն ու հանգամանքները բացահայտելու ուղղությամբ:

Այս հանցագործությունների նախականխման և բացահայտման ուղղությամբ համագործակցությունը պատշաճ մակարդակի վրա չի գտնվում խնդրի հետ առնչվող միգրացիոն, փախստականների տեղաշարժերի, որդեգրման, տուրիզմի, պետական սահմանների պաշտպանության, մաքսային, աշխատանքի տեղավորման և զբաղվածության ապահովման, անձնագրային ռեժիմի, հրավերների ձևակերպման և մյուս ծառայությունների հետ:

Պատշաճ հսկողություն չի իրականացվում հետախուզվողների հայտնաբերման ուղղությամբ ոստիկանության մարմինների կողմից իրականացվող օպերատիվ-որոնողական աշխատանքների կատարման նկատմամբ:

Չի ապահովվում նախկինում նմանատիպ հանցագործությունների համար ազատազրկման հետ չկապված պատիժների դատապարտված անձանց վարքագծի նկատմամբ հսկողությունը:

Դատի տրված անձանցից շատերն եղել են նույնպիսի արարքի համար նախկինում դատապարտված: Որոշ մեղադրյալներ հանցավոր գործունեությունը շարունակել են նույնիսկ հետախուզման մեջ գտնվելու պայմաններում[15]:

Դեռևս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2004թ. տարեկան զեկույցում արձանագրվել է այն փաստը, որ Հայաստանում չի գործում որևէ կառույց, որն աշխատեր թրաֆիքինգի զոհ դարձած անձանց հետ՝ մատուցելով նրանց հոգեբանական, իրավաբանական ծառայություններ, և այդ հարցերով հիմնականում զբաղվում են տարբեր հասարակական կազմակերպություններ:

Այս խնդիրը մինչ օրս մնում է չլուծված: Գտնում ենք, որ նման կառույցի ստեղծումը կարևոր նշանակություն կունենար թրաֆիքինգի զոհերի՝ հասարակության մեջ վերաինտեգրումը ապահովելու համար:

---

[15] ՀՀ գլխավոր դատախազության քննչական վարչության թրաֆիքինգի դեմ պայքարի բաժնի կողմից կազմված տեղեկանք՝ 2006թ. ՀՀ Քր. օր-ի 132-րդ, $132^1$-րդ, 261-րդ, 262-րդ հոդվածներով արձանագրված դեպքերի և քննված քրեական գործերի վերաբերյալ

## 4.5. Երեխայի իրավունքներ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի նախորդ տարիների զեկույցներում արծարծվել են ամուսնալուծված և երեխայից անջատ ապրող ծնողի, ինչպես նաև երեխայի հետ ապրող ծնողի իրավունքները չարաշահելու դեպքերին առնչվող խնդիրները: Այս հիմնահարցերը մնում են հրատապ նաև այսօր :

Անջատ ապրող ծնողի տեսակցությունը երեխայի հետ ապահովելու մասին դատարանի վճռի կատարումը դրվում է դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության վրա՝ տեսակցության ապահովման կարգի բացակայության պայմաններում, անգամ երբ երեխան ցանկություն չունի շփվել այդ ծնողի հետ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խնամակալության և հոգաբարձության մարմինը, որի մասնակցությունը նման հարցերով դատաքննությունների ժամանակ պարտադիր է, նախապես մանրամասնությամբ չի ուսումնասիրում խնդիրը: Չի վերահսկում դատարանի վճռի կատարման ընթացքում երեխայի հետ շփվելու իրավունք ստացած ծնողի վարքագիծը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ծնողների առանձին ապրելու իրավիճակում հայտնված երեխաների շահերի և իրավունքների անտեսման դեպքերը կրում են համատարած բնույթ:

### Օրինակ 1

Դիմումատուն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը վճռով 20.12.2005թ. թույլատրել է իրեն յուրաքանչյուր երեքշաբթի և շաբաթ օրերին ժամը 11:00-ից մինչև 15:00 տեսակցելու իր որդուն (ծնված 21.05.2003թ.): Այս կապակցությամբ հարուցվել է կատարողական վարույթ: 2006 թվականի ութ ամսիների ընթացքում որդու հետ պետք է կայանար շուրջ 60 հանդիպում, մինչդեռ որդու հետ հանդիպել է ընդամենը 3 անգամ:

Իր նախկին կնոջ հարազատներն անընդհատ արգելում են որդու հետ տեսակցությունը: Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության համապատասխան պաշտոնատար անձինք պատշաճ ձևով չեն կատարում իրենց պարտականությունները, որի արդյունքում չի կատարվում դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը, և ինքը չի կարողանում տեսակցել որդուն:

Բողոքի քննարկման ընթացքում ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի բաժնից ստացված պատասխանով հայտնվել է, որ 29.08.2006թ. հարկադիր կատարողը կայացրել է որոշում պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու մասին և զգուշացրել է, որ որոշման

պահանջները չկատարելու դեպքում վերջինս կենթարկվի վարչական պատասխանատվության: 06.10.2006թ. դրությամբ պարտապանի կողմից չեն կատարվել հարկադիր կատարողի որոշման պահանջները, նա շարունակել է խոչընդոտել սահմանված օրերին և ժամերին երեխայի և հոր տեսակցությանը:

Նկատի ունենալով նշված հանգամանքները՝ հարկադիր կատարողի կողմից 06.10.2006թ. կայացվել է որոշում՝ պարտապանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին և նշանակվել է վարչական տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով: Բողոքի քննարկումը շարունակվում է:

Արձանագրվել է նաև դեպք, երբ ոստիկանության աշխատակիցները դուրս են եկել իրենց լիազորությունների սահմաններից՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 57-րդ հոդվածի պահանջների խախտմամբ դիմումատուից վերցնելով երեխային հանձնել են մորը:

## Օրինակ 2

Դիմումատուն Պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ երեք տարեկան թոռնիկին ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի աշխատակիցները 06.10.2006թ. Կովկասյան փ. 69 հասցեից առևանգել են և հանձնել ոմն մի կնոջ, որին ինքը չի տեսել և չգիտի նրա ով լինելը:

Դիմումի կապակցությամբ Արաբկիրի բաժնի կողմից մեզ տրված պարզաբանման համաձայն՝ երեխան, ծնված 15.11.2003թ., ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից հանձնվել է իր մորը: Հանձնման գործընթացը կատարվել է օրենքի շրջանակներում, համապատասխան փաստաթղթերի առկայության պայմաններում:

Դիմումի կապակցությամբ Պաշտպանն որոշում է կայացրել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի աշխատակիցների գործողություններում մարդու իրավունքների խախտում տեսնելու մասին, առաջարկվել է նշված փաստի առթիվ անցկացնել ծառայողական քննություն քննարկվող ոլորտում իրավական ակտերի պահանջները խախտած պաշտոնատար անձանց նկատմամբ:

Պաշտպանի որոշումը հիմնավորվել է հետևյալ հանգամանքներով. ՀՀ ընտանեկան օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն՝ ծնողները կարող են պահանջել վերադարձնել իրենց երեխային այն անձից, ով նրան իր մոտ է պահում առանց օրինական հիմքի կամ առանց դատարանի որոշման: **Վեճի առկայության դեպքում ծնողներն իրենց ծնողական իրավունքները պաշտպանելու համար կարող են դիմել դատարան:**

Ոստիկանության աշխատակիցները, հաշվի առնելով ժողովրդավարական իրավական ընթացակարգերի ընդհանուր սկզբունքները, երկու կողմերին լսելու անհրաժեշտությունը՝ երեխային իր մոտ պահող անձին պետք է հնարավորություն տային իր դիրքորոշումն

արտահայտելու նախքան երեխային հանձնելը: Նույնիսկ եթե երեխային պահելը բացահայտ կերպով խախտում է ծնողի իրավունքները, արտադատական հարկադրանքի միջոցների կիրառումը նման դեպքում անթույլատրելի է:

Հարկ ենք համարում հակիրճ անդրադառնալ նաև քաղաքացիություն ստանալու ընթացակարգի թերի իրավական կարգավորմամբ պայմանավորված՝ փախստական երեխաների իրավական պաշտպանության անհրաժեշտության հետ կապված որոշ հարցերին: Այս հիմնախնդիրը արդեն իսկ բարձրացվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի նախորդ տարիների զեկույցներում, սակայն այդպես էլ լուծում չի ստացել:

Մասնավորապես, խոսքը վերաբերում է «Փախստականների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածին, որի համաձայն «փախստական երեխաները կորցնում են փախստականի կարգավիճակը, եթե օրենքով սահմանված կարգով նրանց ծնողները ձեռք են բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն…»:

Փախստականի կարգավիճակը կորցնելուց հետո երեխայի հետագա իրավական վիճակը ճշտելու նպատակով պետք է անդրադառնալ «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքին, որը նախատեսում է քաղաքացիության ձեռքբերման հիմքերը: Օրենքի 16-րդ հոդվածը նախատեսում է, որ ՀՀ քաղաքացիություն ձեռք բերած ծնողների մինչև 14 տարեկան երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն: Ուստի, եթե մինչև 14 տարեկան փախստական երեխայի ծնողները ձեռք են բերում ՀՀ քաղաքացիություն, որի հետևանքով երեխան կորցնում է փախստականի կարգավիճակը, «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի ուժով երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն:

Ինչ վերաբերում է 14-18 տարեկան փախստական(տվյալ դեպքում խոսքը գնում է 1988-1992թթ. Ադրբեջանից բռնագաղթած անձանց) երեխաներին, ապա նրանց ծնողների կողմից ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում վերջիններիս հետագա կարգավիճակն ենթարկված չէ իրավական կարգավորման:

«Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը կարգավորում է 14-18 տարեկան երեխաների քաղաքացիության ձեռքբերման կարգը միայն իրենց ծնողների քաղաքացիության փոփոխման դեպքում, իսկ ինչ վերաբերում է նրանց ծնողների կողմից քաղաքացիություն ձեռք բերելու դեպքին, ապա նման պարագայում 14-18 տարեկան երեխաների իրավական կարգավիճակը չի կարգավորվում:

Հետևաբար, 14-18 տարեկան փախստական երեխաների ծնողների կողմից ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում, փախստական երեխաները կորցնում են իրենց կարգավիճակը՝ վերածվելով քաղաքացիություն չունեցող անձանց: Նման իրավական կարգավորման պարագայում, առավել վատթարանում է 14-18 տարեկան փախստական երեխաների իրավական վիճակը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը նամակ է հասցեագրել ՀՀ Ազգային ժողովի նախագահին՝ առաջարկելով համապատասխան միջոցներ ձեռնարկել «Փախստականների մասին» և «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքներում առկա հակասությունը վերացնելու ուղղությամբ:

2006թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը պարբերաբար այցելել է մանկատներ և դպրոցներ: Եթե մանկատներում շենքային պայմանները կարելի է գնահատել որպես բարվոք, ապա Երևան քաղաքի դպրոցները մեծ մասամբ գտնվում են սանիտարահիգիենիկ վատթար վիճակում, ձմռանը դպրոցները բավարար չափով չեն ջեռուցվում:

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## Հավելված 1

### Գանձված 10%- ները պետք է վերադարձվեն

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը շարունակում է հետևել իրացման գոտիների բնակիչներից որպես 10% եկամտահարկ գանձված գումարների վերադարձման հետ կապված իրականացվող աշխատանքներին: Այս խնդրի կապակցությամբ Պաշտպանը դիմել է և շարունակական նամակագրության մեջ է ՀՀ հարկային ծառայության ղեկավարի, քաղաքապետի և այլ գերատեսչությունների ներկայացուցիչների հետ՝ առաջարկելով օրենքի սահմաններում, հնարավորինս սեղմ ժամկետում, վերադարձնել գանձված գումարները և պարզաբանումներ տալ գործընթացի վերաբերյալ: Նման գործարքները չի կարելի դիտել որպես եկամտի գոյացում հետևաբար, փոխհատուցվող գումարից 10% եկամտահարկ գանձելն անընդունելի է համարվում:

Պաշտպանի ուշադրության կենտրոնում է նաև “Հասարակության և պետական կարիքների համար սեփականության օտարման մասին” ՀՀ օրենքի նախագիծը: Հիշեցնենք, որ Պաշտպանը ներկայացրել է իր նախնական առարկություններն ու դիտողությունները նախագծի վերաբերյալ՝ ի սկզբանե արտահայտելով իր բացասական կարծիքը, քանի որ նախագծի որոշ դրույթներ խախտում են մարդու հիմնարար իրավունքներից մեկը՝ սեփականության իրավունքը: Պաշտպանն իր վերջնական կարծիքը վերը նշված օրենքի նախագծի վերաբերյալ պատրաստվում է ներկայացնել ՀՀ Ազգային ժողով:

Հավելված 2

**Կոզեռնցիների խնդիրները շարունակում են մնալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում**

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հերթական նամակն է հղել Երևանի քաղաքապետ՝ Ե.Զախարյանին: Հիշեցնենք, որ Պաշտպանի աշխատակազմում ստացված բազմաթիվ բնակիչների բողոքների և մամուլում տեղ գտած մի շարք հրապարակումների հիման վրա Պաշտպանը բազում անգամ դիմել է երկրի տարբեր գերատեսչությունների ղեկավարներին Կոզեռն թաղամասի բնակիչների սեփականության իրավունքի ճանաչման վերաբերյալ իր առաջարկություններով:

Խնդիրը կայանում է նրանում, որ Պռոշյան փողոցի 1-ին նրբանցքը գտնվում է իրացման գոտում և բնակիչները պահանջում են իրենց անշարժ գույքի օտարման գործընթացը սկսելուց առաջ, օրենքով սահմանված կարգով, ճանաչել այդ գույքի նկատմամբ իրենց սեփականության իրավունքը:

Այս ամենից ելնելով՝ Արմեն Հարությունյանը քաղաքապետին հասցեագրված նամակում առաջարկում է համապատասխան որոշման մեջ լրացում կատարել և ուղղակի նշել, որ համապատասխան հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքում որոշվել է լուծել Պռոշյան փողոցի 1-ին նրբանցքի բնակիչների գույքի նկատմամբ դրանց տիրապետողների սեփականության իրավունքի ճանաչման հետ կապված խնդիրները և միայն այնուհետև սկսել իրացման հետ կապված գործողությունները, որպեսզի երաշխավորված լինեն բնակիչների իրավունքների պաշտպանության հնարավորությունները:

Հավելված 3

### 10%-ների վերադարձման գործընթացն արդեն սկսվել է

ՀՀ կառավարությունն արդեն սահմանել է իրացված գոտիների բնակիչներից սեփականության օտարման ժամանակ գանձված եկամտահարկի վերադարձման կարգը, համաձայն որի 10% եկամտահարկը, որ գանձվել է վերոնշյալ բնակիչներից, կվերադարձվի սույն կարգն ուժի մեջ մտնելուց մեկ ամիս հետո:

Հիշեցնենք, որ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը հետևողական լինելով, այս խնդրի կապակցությամբ դիմել է և շարունակական նամակագրության մեջ է եղել համապատասխան գերատեսչությունների ներկայացուցիչների հետ՝ առաջարկելով օրենքի սահմաններում, հնարավորինս սեղմ ժամկետում, վերադարձնել գանձված գումարները, քանի որ նման գործարքները չեն կարող դիտվել որպես եկամտի գոյացում, հետևաբար, փոխհատուցվող գումարից 10% եկամտահարկ գանձելը անընդունելի է համարվում:

Հավելված 4

### ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատության անդամակցությունը ICC-ին

2005թ. Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը հայտ է ներկայացրել Մարդու իրավունքների պաշտպանության և խթանման ազգային հաստատությունների միջազգային կոորդինացիոն կոմիտեին (ICC) անդամակցելու համար: Կոմիտեին կարող են անդամակցել միայն այն հաստատությունները, որոնք համապատասխանում են Փարիզյան սկզբունքներին: Պատահական չէ, որ Կոմիտեի անդամների թիվը գրեթե չի գերազանցում հիսունը: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատության անդամակցության հարցը քննարկվել է սույն թվականի ապրիլին և հավատարմագրման ենթակոմիտեի կողմից որոշվել է հաստատությանը շնորհել A(R) կարգավիճակ, իսկ հոկտեմբերին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատությանը շնորհվել է A կարգավիճակ, ինչը վկայում է, որ Պաշտպանի հաստատությունը լիովին համապատասխանում է Փարիզյան սկզբունքներին:

Հիշեցնենք, որ Մարդու իրավունքների պաշտպանի հատատությունը նաև անդամակցում է Եվրոպական Օմբուդսմանի և Միջազային Օմբուդսմանի ինստիտուտներին:

Մարդու իրավունքների պաշտպանության և խթանման ազգային հաստատությունների միջազգային կոորդինացիոն կոմիտեի (ICC) նախագահի կողմից ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանին հասցեագրված նամակին կարող եք ծանոթանալ անգլերեն լեզվով՝ հաջորդ էջում:

CHAIRPERSON
THE INTERNATIONAL CO-ORDINATING COMMITTEE
OF NATIONAL HUMAN RIGHTS INSTITUTIONS

THE DANISH INSTITUTE FOR HUMAN RIGHTS
56 STRANDGADE
1401 COPENHAGEN K - DENMARK
PHO. +45 32 69 88 88
FAX +45 32 69 88 00
AMG@HUMANRIGHTS.DK
WWW.NHRI.NET

Mr. Armen Harutyunyan
Human Rights Defender
Human Rights Defender's Office of Armenia
12 Proshian street
Yerevan 375019,
Republic of Armenia

Fax: +37-410-26-2695

DATE 7 November 2006

Y.REF

O.REF ICC/Acc/2006/11-02

Dear Human Rights Defender,

In my capacity as Chairperson of the International Coordinating Committee of National Institutions for the Promotion and Protection of Human Rights (ICC), I am writing to inform you of the results of your accreditation application to the ICC. Please be informed that the members of the ICC endorsed the recommendations made by the Sub-Committee on Accreditation[1] during the 18th session of the ICC on 27th October 2006. The report and recommendations of the Sub-Committee on Accreditation are enclosed with this letter.

The ICC accepted the recommendation of the Sub-Committee that the Human Rights Defender's Office of Armenia be accredited status A.

The National Institutions Unit of the Office of the United Nations High Commissioner for Human Rights in its capacity as Secretariat to the ICC, as well as I, stand ready to provide you any necessary additional information.

Please accept the assurance of my highest consideration.

Yours sincerely,

Morten Kjaerum
Chairperson, ICC

cc. Ms. Maureen Armstrong, Chairperson, Sub-Committee on Accreditation
Mr. O. Nowosad, Coordinator of the National Institutions Unit of the Office of the United Nations High Commissioner for Human Rights

---

[1] In accordance with the Rules of Procedure of the ICC, the Sub-Committee on Accreditation has the mandate to review and analyze accreditation applications and to make recommendations to ICC members on the compliance of applicants with the Paris Principles.

Հավելված 5

## ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի նամակը ՀՀ կառավարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Վարչապետ,

Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացման վերաբերյալ պետական կարիքների համար հողամասը և նրա վրա գտնվող անշարժ գույքը վերցնելու, դրա կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության 2001-2005թթ. ընդունած որոշումների հիմքում դրված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218-րդ և հողային օրենսգրքի 104-րդ հոդվածները: ՀՀ սահմանադրական դատարանի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 218-րդ, հողային օրենսգրքի 104-րդ, 106-րդ, 108-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2002թ. օգոստոսի 1-ին ընդունված «Երևանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին» թիվ 1151-Ն որոշման՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31-րդ հոդվածին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 18.04.2006թ. որոշմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածը և ՀՀ հողային օրենսգրքի 104-րդ, 106-րդ, 108-րդ հոդվածները, ՀՀ կառավարության թիվ 1151-Ն որոշումը ճանաչվել են հակասահմանադրական, ինչը հակասահմանադրական է դարձնում հիմքում իրավական այդ նորմերն ունեցող ՀՀ կառավարության բոլոր որոշումները:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի՝ «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն: Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին»:

Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության՝ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող

ճանաչված օրենքները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին հակասող ճանաչված իրավական ակտերն իրավաբանական ուժ չունեն»:

Համաձայն նույն օրենքի 74-րդ հոդվածի՝ սահմանադրական դատարանի կողմից իրավական ակտը Սահմանադրությանը հակասող ճանաչելու հանգամանքը հիմք է տվյալ իրավական ակտն անվավեր ճանաչելու համար: Նույն հոդվածով են սահմանվում Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավական ակտն անվավեր ճանաչելու, նման ակտերով անձանց խախտված իրավունքները վերականգնելու եղանակները:

Հետևաբար, ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ հակասահմանադրական ճանաչված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218-րդ, ՀՀ հողային օրենսգրքի 104-րդ, 106-րդ, 108-րդ հոդվածները, ՀՀ կառավարության 1151-Ն որոշումն իրավաբանական ուժ ունենալ չեն կարող և պետք է գործի տվյալ խնդրին վերաբերող սահմանադրական նորմը: Քննարկվող դեպքում գործում են Սահմանադրության 8-րդ և 31-րդ հոդվածները որպես անմիջականորեն գործող նորմեր, քանի դեռ ՀՀ սահմանադրական դատարանի հիշատակված որոշմամբ սահմանված կարգով Սահմանադրության 31-րդ հոդվածին համապատասխանող օրենք չի ընդունվել:

Այս պայմաններում, ըստ մեր ստացած բողոքների, Երևան քաղաքում քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքների և դրա վրա գտնվող անշարժ գույքի հարկադիր վերցնելը պետության կարիքների համար շարունակվում է նույն կարգով՝ հակասահմանադրական ճանաչված իրավական ակտերի հիման վրա, դարձյալ իրացնողի կողմից դատարան հայցեր են ներկայացվում առաջարկված գումարով պայմանագիր կնքելուն սեփականատիրոջը հարկադրելու և տարածքից վտարելու պահանջով:

Այսպիսի գործընթացը չի կարող օրինական համարվել, եթե գործընթացում քաղաքացին զրկված է՝

ա/ սեփականության հարկադիր օտարման հիմնավորվածությունը վիճարկելու իրավունքից,

բ/ գերակա հանրային շահի առկայության դեպքում՝ փոխհատուցման համարժեքությունը և նախնական լինելը վիճարկելու հնարավորությունից:

Որպես օրինակ կարող է ծառայել Երևան քաղաքի Աբովյան 3/2 հասցեում գտնվող տարածքի հետ կատարվածը՝ 23.05.2005թ. քանդվել են այդ տարածքում գտնվող շինությունները առանց սեփականատերերին կամ նրանց ներկայացուցիչներին տեղեկացնելու:

Բացի այդ վտարումը տեղի է ունեցել առանց սեփականատիրոջ հետ նախնական բանակցությունների, վերջինս հնարավորություն չի ունեցել վիճարկելու իր գույքի օտարման հիմնավորվածությունը:

Տարածքում եղած շինությունների սեփականատերերը վտարվել են և շինությունները քանդվել են իրացնողի սահմանած հատուցմամբ: Թե որքանով է այդ հատուցումը եղել համարժեք, բավարար է նշել, որ մոտ 303,6 քմ. մակերեսով հողամասը գնահատվել է 63 միլիոն դրամ:

Այսպիսի գործերը լիովին հակասում են Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով սահմանված սկզբունքներին, և նման գործերով Եվրոպական դատարանում բողոքների առկայության դեպքում, Հայաստանի Հանրապետությունը կարող է պարտվել:

Ելնելով Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացման գործընթացով քաղաքացիների իրավունքների հետագա խախտումները բացառելու, խախտված իրավունքները վերականգնելու անհրաժեշտությունից, առաջարկում եմ՝ ի կատարումն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի պահանջների՝

1. Կասեցնել քաղաքացիների սեփականությունը հանդիսացող գույքի հարկադիր օտարումը պետության կարիքների համար՝ մինչև նման գործնթացները կարգավորող օրենքի ընդունումը, կամ այն իրականացնել վերոհիշյալ կետերին համապատասխան:

2. Քննարկել նախկինում կնքված բոլոր պայմանագրերով սեփականատերերին, օգտագործողներին հաշվարկված գումարներից պահված 10 տոկոս եկամտահարկը վերադարձնելու հնարավորության հարցը:

Հարգանքով՝

Ա. Հարությունյան

Հավելված 6

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի նամակը Երևանի քաղաքապետին

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՊԱՐՈՆ Ե. ԶԱԽԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն քաղաքապետ,

Ինձ համար մնում է անհանգստացնող Երևանի կառուցապատման ծրագրերով գույքի օտարման գործընթացում քաղաքացիների գույքային իրավունքների ճանաչումը շատ դեպքերում միայն ձևական հիմքերով մերժելու հանգամանքը:

Հուսադրող էր այն, որ Պռոշյան փողոցի 1-ին նրբանցք /«Կոզեռն»/ կոչվող թաղամասի իրացման կապակցությամբ ստեղծվել է նախնական ուսումնասիրություն իրականացնող միջգերատեսչական հանձնաժողով: Ենթադրվում էր, որ հանձնաժողովը կուսումնասիրի թաղամասի խնդիրները և կառաջարկի այնպիսի լուծումներ, որոնք օրենքի շրջանակներում կապահովեն քաղաքացիների իրավունքների պաշտպանվածությունը: Մինչդեռ, ըստ թաղամասի բնակիչների, հանձնաժողովն իրեն խնդիրն է համարում միայն չափագրումներ կատարելը, ԾԻԳ-ի կառավարման խորհրդի առջև հարց չի բարձրացնում՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ և 188-րդ հոդվածներով սահմանված հիմքերի առկայության դեպքում օտարվող գույքը դիտել որպես այն տիրապետողի սեփականություն, ինչն առաջարկված է նաև Պռոշյան փողոցի 1-ին նրբանցքի բնակիչների բողոքի քննարկման արդյունքներով ընդունած Պաշտպանի 16.06.2006թ. որոշմամբ:

Մեր նման պնդումը բխում է այն հանգամանքից, որ օտարվող տարածքներում առկա են մեծ թվով բնակիչներ, որոնց սեփականությունը չի օրինականացված պետական մարմինների թողտվության, ձևական պատճառներով տրված մերժումների, օրենսդրական բացերի արդյունքում:

Հենց այն, որ «Ինքնակամ կառույցների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի գործողության ժամկետում այս անձանց տիրապետման տակ գտնվող տարածքները չեն օրինականացվել այն պատճառաբանությամբ, որ դրանք մինչև 2001թ. մայիսի 15-ը կադաստրում հաշվառված չեն եղել: Հարց է առաջանում, թե որ ինքնակամներն են հաշվառվել, եթե դեռևս 1930-1940-ական թվականներից առկա կառույցները, ապա զբաղեցրած հողատարածքները չեն հաշվառվել:

Այժմ, երբ առաջացել է նման կառույցների ու տարածքների օտարման խնդիր, երբ պետք է լուծվի նաև այդ բնակիչներին բնակարանով ապահովելու խնդիր, նման բացառիկ

հանգամանքների հաշվառմամբ է, որ պետք է ապահովել բնակիչների իրավունքների պաշտպանվածությունը:

ԾԻԳ-ի կողմից, ի պատասխան բնակիչների ՀՀ Նախագահին հասցեագրած բողոքի, որով պահանջել են ճանաչել տարիներով իրենց կողմից տիրապետվող շինությունների ու տարածքների նկատմամբ իրենց սեփականության իրավունքը, 21.07.2006թ. պատասխանվել է. «Համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության`անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման համար Դուք պետք է դիմեք դատարան»:

Նման պատասխանն ինքնին վկայում է, որ հիմք ունի բնակիչների այն անհանգստությունը, որ ուսումնասիրող հանձնաժողովի չափագրումներին անմիջապես հաջորդելու է տարածքից իրենց` միայն որպես օգտագործողի վտարման պահանջը, որ իրենց իրավունքների լիարժեք իրականացումն ապահովված չի լինելու:

Չի կարելի համաձայնվել այն մեկնաբանման հետ, թե սեփականության իրավունքը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ և 188-րդ հոդվածների ուժով պետք է ճանաչել միայն դատական կարգով:

Մեր կարծիքով, հարցի դատական կարգով լուծման անհրաժեշտություն առաջանում է այն դեպքում միայն, երբ կողմերի միջև կա անհամաձայնություն: Տվյալ դեպքում, եթե քաղաքապետը, որպես լիազոր մարմին, որպես շահագրգիռ կողմ, տեսնում է, որ առկա են օրենքով սահմանված հիմքերը, իրավասու է ճանաչել հայցողի սեփականության իրավունքը, նրա այդ իրավունքը ՀՀ քաղաքացիական օրենսգրքով չի սահմանափակված:

«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ»ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 05.05.06թ. թիվ 86 արձանագրային որոշումը` միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին, հանձնաժողովի խնդիրը, կապված սեփականության իրավունքի ճանաչման վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու հետ, չի որոշակիացված, ինչը և տեղիք է տալիս հանձնաժողովի նկատմամբ բնակիչների անվստահության:

Այս ամենից ելնելով, կրկին առաջարկում ենք` Պռոշյան փողոցի 1-ին նրբացքի բնակիչների անշարժ գույքի օտարման գործընթացն սկսելուց առաջ, լուծել նրանց սեփականության իրավունքի ճանաչման հետ կապված խնդիրները, և այդ նպատակով ԾԻԳ-ի կառավարման խորհրդի հիշյալ որոշման մեջ կատարել լրացում և ուղղակի նշել, որ հանձնաժողովն իր ուսումնասիրության արդյունքներով, եզրակացություն է տալիս գույքի նկատմաբ դրա տիրապետողի սեփականության իրավունքը ճանաչելու հիմքերի մասին:

Հարգանքով` Ա. Հարությունյան

Հավելված 7

**Պաշտպանի կարծիքը՝«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ**

Կ Ա Ր Ծ Ի Ք

«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքի նախագծի կապակցությամբ

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածով թույլատրելի է համարված սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ:

Նման օրենքի ընդունման անհրաժեշտությունը կարևորվում է նրանով, որ դրանում պետք է հստակ ամրագրվեն այն հանգամանքներն ու պայմանները, որոնց առկայության դեպքում է միայն, որ կարող է թույլատրելի համարվել սեփականության օտարումը՝ հասարակության և պետության կարիքների համար, բացահայտվեն և հստակեցվեն՝ «պետության և հասարակության կարիք», «բացառիկ՝ գերակա հանրային շահ» հասկացությունների իմաստն ու բովանդակությունը:

Մեր կարծիքով, քննարկման դրված օրինագիծը չի բացահայտում այդ հասկացությունների իմաստն ու բովանդակությունը, իսկ դրանով առաջարկվող դրույթները չեն կարող համարվել նման գործընթացներում բացահայտված իրավունքի խախտումներ ծնող հանգամանքները բացառող նորմեր:

Այդ առումով առաջարկում ենք նախատեսել և հստակեցնել հետևյալ հասկացությունները.

1. Սահմանել՝ ինչ ասել է հասարակության և պետության կարիք, և երբ կարող են այդ կարիքները դիտվել որպես բացառիկ այնպիսի շահ, որի բավարարման անհրաժեշտության թելադրանքով թույլատրելի կարող է համարվել սեփականության օտարումը:

Այդպիսի սահմանումները պետք է հիմնվեն ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով հռչակված սկզբունքների վրա, մասնավորապես, որ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են»:

Հետևաբար, օրենքը պետք է նշի, թե հանրային այդ որ շահն է, որ առավել գերակա կարող է համարվել մարդու բարձրագույն արժեք հռչակված իրավունքից՝ սեփականության իրավունքից:

Մեր կարծիքով, սահմանումը կարող է պարունակել՝ բավարարում պահանջող կարիքի ակնհայտ հանրային լինելը, դրա բավարարումը հանրության համար կենսական անհրաժեշտություն լինելը, չբավարարման դեպքում՝ հանրության համար անցանկալի հետևանքների առաջացումը, սեփականության օտարումից բացի՝ այլ ճանապարհով բավարարելու անհնարինությունը:

Օրինագծի 4-րդ հոդվածը կարող է իմաստավորվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահի սահմանում ամրագրելու դեպքում: Այսպիսի սահմանում չունենալու դեպքում, անառարկայական է դառնում սեփականության օտարման մասին կառավարության որոշումը դատարան բողոքարկելու սեփականատիրոջ իրավունքը: Դատարանն ինքը չի կարող չափանիշներ ընտրել, դատարանը պետք է ելնի օրենքի սահմանած չափանիշներից:

2. Հասարակության և պետության կարիքի կրողը բոլոր դեպքերում պետությունն է: Հետևաբար, այդ կարիքը բավարարելու նպատակով սեփականությունն օտարվել կարող է միայն պետությանը, այլ ձեռք բերող լինել չի կարող: Անընդունելի է քննարկվող օրինագծով «ձեռքբերող» հասկացության ներմուծումը, և որպես այդպիսին համայնքը և նույնիսկ կազմակերպությունը դիտելը:

Պետությունը կարող է նպատակի իրականացումը հանձնարարել կազմակերպության և նույնիսկ ֆիզիկական անձի, որոնք սակայն չեն կարող հանդես գալ որպես սեփականության օտարման գործընթացի մասնակիցներ, օտարվող գույքի սեփականատիրոջ և այլ գույքային իրավունք ունեցողների իրավունքները չեն կարող լիարժեք պաշտպանված լինել, եթե օտարման պայմանագրի կողմը պետությունը չէ:

Մեր կարծիքով, «ձեռքբերող» հասկացությունն օրինագծից պետք է հանել ընդհանրապես:

3. Օտարվող սեփականության հատուցման գնի սահմանումը գործընթացի այն հիմնական տեղն է, որը տեղիք է տալիս դժգոհությունների, առաջ է բերում անհամաձայնություն:

Օրինագծով նախատեսվում է օտարվող գույքի շուկայական արժեքը որպես հատուցման հիմնական չափանիշ: Անտեսվում է այն հանգամանքը, որ անշարժ գույքի օտարման գոտիներում բաց շուկայական արժեք ձևավորվել չի կարող: Եթե դա որոշելը թողնվում է դատարանին, ծառանում է այն խնդիրը, թե ինչ չափանիշներով պետք է

ղեկավարվի դատարանը: Արդարացի չի կարելի համարել շուկայական արժեք սահմանելը, քանի որ այս դեպքում հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ օտարումը կատարվում է սեփականատիրոջ կամքին հակառակ, օտարվող գույքը սեփականատիրոջ համար ավելի արժեքավոր է, քան այն գնահատում է շուկան: Հետևաբար օտարվող սեփականության հատուցման չափը որոշելիս շուկայական արժեքին զուգահեռ անհրաժեշտ է կիրառել նաև այլ չափանիշներ՝ օրինակ սեփականատիրոջ համար նույնանման պայմաններ այլ վայրում ապահովելու հնարավորությունը:

Եթե օտարվող սեփականությունը բնակարան է, ինչու չնախատեսել սեփականատիրոջը և բնակության իրավունք ունեցողներին մեկ այլ բարեկարգ բնակարան կամ տուն կառուցելու համար հողամաս հատկացնելու հանգամանք: Այդ ամենին զուգահեռ, շուկայական արժեքի որոշման կարգն ու պայմանները պետք է նախատեսել առանձին հոդվածով: Քանի որ բոլոր դեպքերում անշարժ գույքի գնահատումը կատարվելու է լիցենզավորված գնահատողի միջոցով, իսկ լիցենզավորում է կատարել պետական մարմինը, ինչու գնահատողին հրավիրելու իրավունքը չվերապահել օտարվող անշարժ գույքի սեփականատիրոջը՝ գնահատման ծախսերը թողնելով պետության վրա:

4. Օրինագծով ընդունված է օտարվող սեփականության նախնական ուսումնասիրության գաղափարը, սակայն այն հանգեցվել է ձեռքբերողի նպատակներին՝ կազմել գույքի նկարագիրը, որը հիմք կհանդիսանա հետագա բարելավումների համար սեփականատիրոջը վճարում չկատարելուն:

Իրականում օտարման ենթակա գույքի նախնական ուսումնասիրությունը պետք է նպատակ ունենա ոչ միայն արձանագրելու գույքի նկարագիրը, այլև պարզել դրա նկատմամբ բոլոր գույքային իրավունք ունեցողներին, գույքի չհաշվառված պատկանելիքները և դրանց օրինականացման հնարավորությունները, հետապնդվող նպատակն իրականացնելու համար սեփականության օտարման հանգամանքը շրջանցելու հնարավուրությունները:

Մեր կարծիքով, սեփականության նախնական ուսումնասիրությունը պետք է նախորդի հասարակության և պետության կարիքների համար սեփականությունն օտարելու մասին որոշման կայացմանը:

5. Օրենքի խնդիրն է նաև նպաստել նույն նպատակներով արդեն իսկ իրականացված գործընթացներով խախտված իրավունքների վերականգնմանը: Մինչդեռ օրինագծի 18-րդ հոդվածով փորձ է արվում օրինականացնել նախորդ գործընթացն ամբողջապես՝ անտեսելով նաև տվյալ հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի հայտնի որոշումը: Մեր կարծիքով, օրինագծի 18-րդ հոդվածը պետք է հանել, դրա փոխարեն

սահմանել հոդված, որով կարելի է հետադարձ ուժ տալ ընդունվող օրենքի այն հոդվածներին, որոնք բարենպաստ են օտարվող գույքի սեփականատերերի և այլ գույքային իրավունք ունեցողների համար:

6. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 160-րդ հոդվածն արգելում է Կառավարության որոշումները ընդհանուր իրավասության դատարան բողոքարկելը: Հետևաբար, սույն օրինագծի ընդհանուր փաթեթով անհրաժեշտ է ներկայացնել նաև Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածում փոփոխություններ կատարելու մասին օրինագիծ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան

Ա. Հարությունյան

Երևան

18.10.2006

Հավելված 8

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումը ՀՀ սահմանադրական դատարան

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

ԴԻՄՈՂ՝ ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ք. Երևան, Պռոշյան փողոց 12

ԴԻՄՈՒՄ

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի (03 հուլիսի 2002 թվականի, ՀՕ-410-Ն ) 31-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի՝ ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի 2-րդ մասին և 43-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանվել են կուսակցության լուծարման հետևյալ հիմքերը. կուսակցությունը ենթակա է լուծարման, եթե Ազգային ժողովի իրար հաջորդող ցանկացած երկու ընտրություններից յուրաքանչյուրում ստացել է քվեարկությանը մասնակցած բոլոր կուսակցությունների ընտրական ցուցակների օգտին կողմ տրված ձայների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի մեկ տոկոսից պակաս ձայն, ինչպես նաև չի մասնակցել Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով մեկ ընտրության, իսկ դրան նախորդող կամ հաջորդող ընտրության ժամանակ ստացել է քվեարկությանը մասնակցած բոլոր կուսակցությունների ընտրական ցուցակների օգտին կողմ տրված ձայների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի մեկ տոկոսից պակաս ձայն:

Գտնում ենք, որ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերը չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի 2-րդ մասին և 43-րդ հոդվածի 1-ին մասին հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված է յուրաքանչյուր քաղաքացու՝ այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքը: Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին

մասը նախատեսում է, որ Սահմանադրությամբ ամրագրված որոշ հիմնական իրավունքներ և ազատություններ (այդ թվում՝ 28-րդ հոդվածով ամրագրված իրավունքը) կարող են սահմանափակվել օրենքով՝ այդ հոդվածով սահմանված նպատակներին հասնելու համար: Սակայն ընտրություններում անհրաժեշտ քանակությամբ ձայներ չհավաքելու հիմքով կուսակցության լուծարումը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման նպատակներին:

Հարկ է ընդգծել, որ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթները հակասում են նաև ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածի 2-րդ մասին, որի համաձայն՝ կուսակցությունները կազմավորվում են ազատորեն, նպաստում ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը: Ակնհայտ է, որ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթների իմաստով խորհրդարանական ընտրություններում հաջողության չհասած կուսակցությունը, գործունեությունը շարունակելու պարագայում, նույնպես կարող է նպաստել ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով և 101-րդ հոդվածի 8-րդ կետով՝ խնդրում եմ որոշել «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի՝ ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի 2-րդ մասին և 43-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանության հարցը:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան՝

Ա. Հարությունյան

Հավելված 9

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումը ՀՀ սահմանադրական դատարան

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

ԴԻՄՈՂ՝ ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ք. Երևան, Պռոշյան փողոց 12

ՊԱՏԱՍԽԱՆՈՂՆԵՐ՝ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ,
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԴԻՄՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 104, 106 և 108 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2002թ. օգոստոսի 1-ին ընդունված «Երևանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին» թիվ 1151-Ն որոշման՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31-րդ հոդվածին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից 17 հունիսի 1998թ. ընդունված օրենքով գործողության մեջ է դրվել Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգիրքը, իսկ 2001թ. մայիսի 2-ին ընդունվել է ՀՀ Հողային օրենսգիրքը:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2002թ. օգոստոսի 1-ին ընդունվել է «Երևանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին» թիվ 1151-Ն որոշումը:

Գտնում եմ, որ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածը, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 104, 106 և 108 հոդվածները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2002թ. օգոստոսի 1-ին ընդունված՝ «Երևանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում

կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին» թիվ 1151-Ն որոշումը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասին և 31 հոդվածին, քանի որ դրանցում բացակայում են «բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքեր»-ի հիմնավորումները, որոնց առկայության պայմաններում միայն սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է համարվել ՀՀ Սահմանադրության պահանջներին համապատասխան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով և 101 հոդվածի 8-րդ կետով, խնդրում եմ որոշել Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 104, 106 և 108 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2002թ. օգոստոսի 1-ին ընդունված «Երևանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին» թիվ 1151-Ն որոշման՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31-րդ հոդվածին համապատասխանության հարցը:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան

Ա. Հարությունյան